Հ-20

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. С. АМБАРЯН

АГРАРНЫЕ ОТНОШЕНИЯ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ (1856—1914)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

33 (47.925)
Հ - 20

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԱԴՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1856—1914)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1965

Секция Востоковедения АН СССР
БИБЛИОТЕКА
ГРАДАРАН

Սույն աշխատության մեջ հետազոտված են Արևմտյան Հայաստանի ագրարային հարաբերությունները ու նրանց առանձնահատկությունները XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին։ Բնութագրվում են ֆեոդալական գաղակարգերի փոխհարաբերությունները, հատկապես գյուղացիների շահագործման ու հարկադրահարկման եղանակները պետության, ազատների ու հոգևորականության կողմից։ Միաժամանակ ցույց է տրվում թուրքական կառավարության և իմպերիալիստական պետությունների վարած բազմակողմանիության բացասական դերն Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում։

Գեղարվեստական խմբագիր Վ. Հ. ԱՌՋՈՒՆԻ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՈՒ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ագրարային հարաբերությունների ուսումնասիրությունը բնդհանրապես պատմական գիտության դժվարին պրոբլեմներից մեկն է։ Արևելքի երկրներում, այդ թվում նաև Թուրքիայում, որի տիրապետության տակ է Արևմտյան Հայաստանը սկսած XVI դարից (1555 թ.), այդ դժվարանում է նրանով, որ այստեղ չի եղել գիտական հիմունքներով կազմված վիճակագրություն։ Բավական է նշել, որ գյուղատնտեսական առաջին հաշվեհամարը Թուրքիայում կատարվել է 1927 թ., այն էլ օտարերկրյա մասնագետների օգնությամբ։ Ճիշտ է, մինչև այդ լույս էին տեսնում «սալնամեները» (տարեցույցները), որտեղ հրատարակվում էին տվյալներ ինչպես կայսրության այլ շրջանների, նույնպես և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության, գյուղատնտեսական մթերքների արտադրության, անասունների գլխաքանակի, հարկերի և մի շարք այլ հարցերի մասին, սակայն նրանք չունեին պարբերական բնույթ և, որ գլխավորն է, պաշտոնական հրատարակություններ էին, որոնցում թուրքական իշխանություններ, ինչպես ցույց կտրվի ստորև, բազմաթիվ ու ֆինանսական նկատառումներով շատ հաճախ կեղծում էին իրական փաստերը։

Եվրոպական պաշտոնական աղբյուրները, որոնք պարունակում են Արևմտյան Հայաստանի մասին զգալի քանակությամբ վիճակագրական և այլ բնույթի տեղեկություններ, նույնպես տառապում են միակողմանիությամբ։ Նրանց հեղինակները, զեկուցագրելով իրենց պետությունների արտաքին քաղաքականության համար, հաճախ են խոսում թուրքական կառավարության մասին և իրենք ճշմարտությունն վկայակոչում նրա անարժանահավատ տվյալները արևմտահայության վերաբերյալ։ Ավելին. եվրոպական

պաշտոնական որոշ անձինք զրպարտում ու վարկաբեկում են հայ ժողովրդին, ասելով, թե նա իբր սովորել է տանել օտարի լուծը։ Այսպես, անգլիական պատմագիրը անգամ Կաղայլ Մակ Գեհանը 1870-ական թվականներին նշում էր, որ հայերը «զրկված են հետապական ոգուց և նվիրված միայն հարբասիրության»[1]։

Ֆրանսիացի հեղինակ Վիտալ Քինեն, որը մոտ 12 տարի ապրել ու շրջագայել է Թուրքիայում, առաջինը կազմեց 1886—1890 թվականների Թուրքիայի ասիական մասի ու Արևմտյան Հայաստանի վիլայեթների գյուղատնտեսության ու արդյունաբերության ամբողջական վիճակագրությունը։ Բայց նրա ուսումնասիրությունը վստահության չի ներշնչում, քանի որ հիմնված է թուրքական պաշտոնական տվյալների վրա և զրկում է մեզ երկրի տնտեսական էվոլյուցիան ցույց տալու հնարավորություններից[2]։

Որոշ չափով այլ են ռուսական պաշտոնական տպագրությունները։ Սրանք մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը հատուկ չունեին հակահայկական բնույթ։ Բայց այդ պատերազմից հետո, երբ ցարիզմը հայկական շարժումների նկատմամբ բռնեց բացասական գիրք, Արևմտյան Հայաստանում գտնվող ռուսական հյուպատոսներն ու փոխհյուպատոսները նույնպես սկսեցին հայերին վերագրել բացասական գնահատական հատկանիշներ և արդարացնել թուրքական կառավարության գործադրած անօրենություններ։ Գնդապետներ ու փոխգնդապետներ Ա. Մ. Կոլյուբակինը, Վ. Տ. Մանակինը, Ա. Ի. Գրիգորևը, Ֆ. Ֆ. Բրյուհովը, Պ. Ի. Ավերյանովը, Պ. Ա. Տամիլովը, Կ. Ն. Ամիրխանովը, Ա. Կ. Բոլսանակինը, Կարցևը, Պուտյատը և ուրիշներ Կովկասի ռազմական շարքի հետախուզությամբ լույս ընծայեցին մի շարք հետազոտություններ, որոնց, վկայակոչելով թուրքական պաշտոնական տեղեկությունները և Վիտալ Քինեի վերոհիշյալ աշխատությունը՝ «որպես կատարելության հասած մի գործ», ձգտում էին ապացուցել Արևմտյան Հայաստանի տպագրակությունը տեղաբաշխումն ու քանակական փոխհարաբերությունը, գյուղատնտե-

[1] Карлайль Мак Коан. Наш новый протекторат. Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии, М., 1884, стр. 103.

[2] Տե՛ս „La Turquie d'Asie. Géographie administrative, statistique, déscriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure; par Vital Cuinet, Paris, 1892.

Վիտալ Քինեի այդ աշխատության առանձին հատվածները Մ. Զուլալյանի և Մ. Մինասյանի հաքերեն թարգմանությամբ, ձեռագիր վիճակում, պահվում են ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվում։

...սության և անանձնապահովության ոչնչացման պատկերը և այլն։ Ինչպես նրանք, ինչպես ցույց կտրվի ստորև, շատ հետացան իրականությունից։ Ինորոշ է, որ արևմտաեվրոպական ու ռուսական պաշտոնական անձինք, կողմնակից լինելով Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող ֆեոդալական արտադրահարաբերությունների պահպանմանը, գործնական առաջարկություն չէին անում հողային հարցի լուծման ուղղությամբ։

Այնուամենայնիվ, այդ հեղինակ... ստատությունների մեջ կան մի շարք արժեքավոր տեղեկու... նական Հայաստանի սոցիալ-տնտեսական հարց... Ինչպես գնահատելի են Յա. Դ. Մալամայի... Վ. Տ. Մանակին[5], Պ. Ա. Տամիլովի[6], ...ստատությունները։ Յա. Դ. Մալա... ստամի), Ա. Մ. Կոլյուբակինի՝ ...կին՝ Վանի, Պ. Ա. Տ... Դիպիտար՝ Սեր... լիսի) վիլայե... վել Հաս... աշխա...

[3] Ф. Ф. Гризнов. ...обзор передового театра в Азиатской Турции, СПб, 1895—1897, ч. ...

[4] ...едства ...но-восточ... Эрзерум и ...меры Эрзерум... ...ско... ...стического обозрения Азиатск...

[5] В. ... ...но-статистическое описание, Тифлис, 190...

[6] П. А. То... Азиатской Турции, Тифлис, 1907, ч. I, II; Военный ...кого театра Азиатской Турции, СПб, 1913.

պաշտոնական որոշ անձինք զրպարտում ու վարկաբեկում են հայ ժողովրդին, ասելով, թե նա իբր ապրելով է տանել օտարի լուծը։ Այսպես, անգլիական պատմաբանի անդամ Կադոյլ Մակ Կոանը 1870-ական թվականներին նշում էր, որ հայերը «զրկված են հերացական որևէ և նվիրված միայն շաքարնային»[1]։

Ցրտնախացի հեղինակ Վիտալ Քինեն, որը մոտ 12 տարի ապրել ու շրջագայել է Թուրքիայում, առաջինը կազմեց 1886—1890 թվականների Թուրքիայի ասիական մասի ու Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների գյուղատնտեսության ու արդյունաբերության ամբողջական վիճակագրություններ։ Բայց նրա ուսումնասիրությունը վատահության չի ներշնչում, քանի որ հիմնված է թուրքական պաշտոնական ապյալների վրա և գրկում է մեզ երկրի անտեսական էվոլյուցիան ցույց տալու հետևողականությունից[2]։

Որոշ չափով այլ են ռուսական պաշտոնական ապրյուրները։ Սրանք մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը համարյա չունեին հայագիտական բնույթ։ Բայց այդ պատերազմից հետո, երբ ցարիզմը հայկական շարժումների նկատմամբ բռնեց բացասական դիրք, Արևմտյան Հայաստանում զանվող ռուսական հյուպատոսները ու փոխհյուպատոսները նույնպես սկսեցին հավքերին վերապրել բացասական զանազան հատկություններ և արդարացնել Թուրքական կառավարության գործադրած անօրինականները։ Դեղապետներ ու փոխդեղապետներ Ա. Մ. Կոլյուբակինը, Վ. Տ. Մանակինն, Ա. Ի. Գիպիուսը, Յ. Յ. Գրյազնովը, Պ. Ի. Ավերյանովը, Պ. Ա. Տոմիլովը, Կ. Ն. Ամիրեովը, Ա. Ֆ. Քումանինկին, Կարցևը, Պուլյատը և ուրիշներ Կովկասի ռազմական շտաբի հրատարակությամբ լույս ընծայեցին մի շարք հետազոտություններ, որոնց, վկայակոչելով Թուրքական պաշտոնական տեղեկագրերը և Վիտալ Քինեի վերոհիշյալ աշխատությունը՝ շատ կատարելության հասած մի գործ, ձգտում էին տալ Արևմտյան Հայաստանի ագգարնակչության տեղաբաշխումն ու բանակական փոխհարաբերությունը, գյուղատնտեսության և անասնապահության «ռեսուրս» պատկերը և այլն։ Մինչդեռ նրանք, ինչպես ցույց կտրվի ստորև, շատ հետացան իրականությունից։ Բնորոշ է, որ արևմտաեվրոպական ու ռուսական պաշտոնական անձինք, կողմնակից լինելով Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող ֆեոդալական արտադրահարաբերությունների պահպանմանը, գործնական առաջարկություններ չէին անում հողային հարցի լուծման ուղղությամբ։

Այնուամենայնիվ, այդ հեղինակների աշխատություններում կան մի շարք արժեքավոր տեղեկություններ Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերի մասին։ Առանձնապես գնահատելի են Յա. Դ. Մալամայի[3], Ա. Մ. Կոլյուբակինի[4], Վ. Տ. Մանակու[5], Պ. Ա. Տոմիլովի[6], Ֆ. Ֆ. Գրյազնովի և այլոց աշխատությունները։ Յա. Դ. Մալաման ուսումնասիրել է Կարնո (Էրզրումի), Ա. Մ. Կոլյուբակինը՝ գլխավորապես Խարբերդի, Վ. Տ. Մանակինն՝ Վանի, Պ. Ա. Տոմիլովը՝ Տիգրանակերտի (Դիարբեքիրի), Ա. Ի. Գիպիուսը՝ Սեբաստիայի (Սվասի), Ի. Ի. Տևրմենը՝ Բաղեշի (Բիթլիսի) վիլայեթները և այլն։ Իսկ Ֆ. Ֆ. Գրյազնովը երկու մեծածավալ հատորներով ընդհանրացրեց այդ և մի շարք այլ հեղինակների աշխատությունները[7]։

Ռուսական հյուպատոսների և փոխհյուպատոսների ուսումնասիրությունների ու զեկուցագրերի մի մասը հրատարակված է, իսկ մյուս մասը ձեռագիր և մեքենագրված վիճակում պահվում է ՍՍՌՄ պահպանման արխիվներում։ Դրանք պահվում են Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (ՌԱՔԱ) «Դեսպանություններ Կոստանդնուպոլսում», «Քաղաքական», «Գլխավոր արխիվ V—Աշ» և այլ ֆոնդերում, Լենինգրադի կենտրոնական պետական պատմական արխիվում (ԼԿՊՊԱ)՝ «Վիճակագրների տուհան» (№ 1276), «Ֆինանս-

[1] Կարլայլ Մակ Կոան. Наш новый протекторат. Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии, М., 1884, стр. 103.

[2] Տե՛ս „La Turquie d'Asie. Géographie administrative, statistique, déscriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure; par Vital Cuinet, Paris, 1892.

Վիտալ Քինեի այդ աշխատության առանձին հատվածները Մ. Ջուլալյանի և Մ. Մինասյանի հայերեն թարգմանությամբ, ձեռագիր վիճակում, պահվում են ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվում։

[3] Я. Д. Малама. Описание Эрзерумского вилайета, СПб, 1874; Средства продовольственные, фуражные, перевозочные и денежные северо-восточной части азиатских владений Оттоманской порты (вилайет Эрзерум и часть вилайета Трапезукда), Тифлис, 1876; Деньги, весы и меры Эрзерумского вилайета, Тифлис, 1876.

[4] А. М. Колюбакин. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, 1888—1894, тт. I—VIII.

[5] В. Т. Маевский. Ванский вилайет, военно-статистическое описание, Тифлис, 1901.

[6] П. А. Томилов. Отчет о поездке по Азиатской Турции, Тифлис, 1907, ч. I, II; Военный обзор причерноморского театра Азиатской Турции, СПб, 1913.

[7] Ф. Ф. Гразнов. Военный обзор передового театра в Азиатской Турции, СПб, 1895—1897, ч. I, II.

ների միմիսարի գրառենյակ» (№ 560), ինչպես և բարաբանի №№ 20—23, 229, 1263, 1284, 1329 ֆոնդերում, Վրացական կենտրոնական պետական պատմական արխիվում (Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ)[7] «Կովկասի ռազմական օկրուգի շտաբ» (№ 521), «Կովկասի ռազմական օկրուգի ռազմա-պատմական բաժին» (№ 1087), «Կովկասա-Թուրքական սահմանի վրա գործող զորամասերի շտաբ» (№ 588), «Կովկասի հնագրական հանձնաժողով» (№ 416), «Կովկասի ռազմա-ժողովրդական կոռավարչություն» (№ 545), «Մաքսային հիմնարկություններ» (№№ 378, 379, 380), «Կովկասի կառավարչապետի գլխավոր վարչության կից ճանապարհաշինության կոմիտե» (№ 203), «Բանակի զորամասերի շտաբներ» (№ 549—551) և այլ ֆոնդերում։

Հակառակ իմպերիալիստական շովինիստական շրջանների, արևմտաեվրոպական և ռուսական դեմոկրատները պատմական հարուստ նյութերով ցույց են տվել հայ ժողովրդի արժանիքները, մերկացրել խոշոր պետությունների գաղութակալական քաղաքականությունը և հատկապես Թուրքիան կառավարության հայատյաց ռեժիմը։ Այդ տեսակետից անհրաժեշտ է նշել բնիկացի Մ. Պ. Ռոլլեն Ժեկմենին, անգլուցի Կան Մեկկոլ Մակքոլին, ռուս հասնանիաններ Յու. Վեսելովսկուն, Մ. Կովալևսկուն և ուրիշներ։ Նրանք ազգաբային հարցի լուծումը Արևմտյան Հայաստանում կապում էին ազգային հարցի լուծման հետ և միանգամայն արդար էին համարում հայ ժողովրդի պայքարն իր ազատության համար։ Կան Մեկկոլ Մակքոլը գրում էր. «Հայերը ո՛չ միայն իրավացի են, այլև պարտավոր են, եթե ունեն հաջողության որևէ հույս, ապստամբվել և տապալել դժոխային կառավարությունը, որը նրանց գտատապարտում է ամենաստոր ացուցիչ, դաժան և անհնարին տարեկության, որի մասին պատմում է միայն մարդկային քշվառությունների տարեգրություններում։ Եղակի իրավունքը, որով սուլթանը իշխում է հայերի վրա, դա—սրի իրավունքն է... Սուլթանի գոհերը պարտավոր չեն ցուցարերել նրան նվիրվածության»[8]։

Մ. Պ. Ռոլլեն Ժեկմենի[9], Կան Մեկկոլ Մակքոլի[10], է. Դիլոնի[11], Ե. Գ. Գրինի[12] և Գ. Ա. Դիևի[13] հրապարակախոսական աշխատությունները, որոնք գրված են փաստական հարուստ նյութերի, հատկապես անգլիական «Կապույտ գրքերի», հիման վրա, թարգմանված են ուշադրեն և կցված Մ. Պ. Ռոլլեն Ժեկմենի աշխատություններ (այս պատճառով նրանց տեսությունները օգտագործելիս, պետք է վկայակոչենք միայն Ռոլլեն Ժեկմենի գիրքը)։

* * *

Արևմտյան Հայաստանի ազգաբային հարաբերությունների մասին համեմատաբար շատ տեղեկություններ են տալիս հայկական աղբյուրները, որոնց հեղինակները իրենց սոցիալական ու քաղաքական հայացքներով, ազգաբային հարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքով բաժանվում են կղերա-ազգական, լիբերալ-բուրժուական, ազգային-պահպանողական և հեղափոխական-դեմոկրատական խմբերի։

Հայ կղերա-ազգական, պաշտոնական հրատարակություններից պետք է հիշատակել Կ. Պոլսի պատրիարքարանի նյութերը, առաջին հերթին՝ «Տեղեկագիր գավառական հարաբերությանց», որը լույս է տեսել ինչպես առանձին գրքույկով՝ Կ. Պոլսում 1876 թ., նույնպես և «Ամենայնագրության ազգային ժողով» 1860—1870 թթ. հատորում։ Այդ «Տեղեկագիրը» կազմվել է Կ. Պոլսի հայոց պատրիարքի նախաձեռնությամբ և նիկոմիդիայի առաջնորդ Ներսես եպիսկոպոսի, Երուսաղեմի միաբան Միմոնի, Բաղեշի, Մուշի և Խարբերդի առաջնորդ Եղիայիայի, «Մասիս» թերթի խմբագիր Կարապետ Յուրեաձյանի, առձնագիր Սահակյան Փափազյանի և ուրիշների մասնակցությամբ։ Սրանք «Տեղեկագրի» նյութերը հավաքել են ինչպես Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի արձանագրություններից, նույնպես և գավառական առաջնորդարաններից։

1908 թ. Թուրքական հեղափոխությունից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ստեղծեց նոր հանձնաժողով՝ Ն. Տաշճյանի, Հ. Պեղեշյանի, Ռ. Փափազյանի, Ա. Հալաճյանի և Գ. Տեր-Կարապետյանի մասնակցությամբ, որին հանձնարարեց ուսումնասիրել գավառահայ բնակչության հողերի հափշտակումների հարցը։

[8] **Кан Мелкольм Макколь.** Ответственность Англии перед Арменией (см. **М. П. Роллен Жекмен,** Армения, армяне и трактаты, перевод с французского о-ха, М., 1896, стр. 157).

[9] **М. П. Роллен Жекмен.** Армения, армяне и трактаты, перевод с французского о-ха, М., 1896.

[10] **Кан Мелкольм Макколь.** Указанное сочинение.

[11] **Э. Диллон.** Положение дел в Турецкой Армении.

[12] **Ф. Б. Грин.** Армянский кризис и владычество турок (Сасунская резня).

[13] **Г. А. Диев.** Армянский вопрос в Турции.

1910 թ. մարտին Հանձնաժողովն ավարտեց իր աշխատանքները և նյութերը ներկայացրեց պատրիարքարան։ Նույն թվականին Կ. Պոլսում հրատարակվեցին այդ նյութերը՝ «Տեղեկագիր Հոգևոր գրավոճանց Հանձնաժողովու» վերնագրով։

«Տեղեկագիրը» բաղկացած է չորս մեծ հատորից։ Նրանցից առաջինում նշվում են Հայոց վանքերի ու եկեղեցիների, երկրորդում և երրորդում՝ գյուղացիների, իսկ չորրորդում՝ հատկապես 1890-ական թվականներից հետո տեղի ունեցած հողերի բռնագրավումների փաստերը։

Իհարկե, «Տեղեկագիրը», ինչպես նշում է Գ. Տեր-Կարապետյանը, «սերտավական և ոչ լիակատար էր»[14], որովհետև Հանձնաժողովն ուսումնասիրել է 32 նահանգ, միայն Հայ գյուղացիների հողերի բռնագրավումը և դրանց մեջ չի մտցրել 100 դյոնումից քիչ տարածություն ունեցող հողակտորները։ Այդուհանդերձ այն հանդիսանում է մի կարևոր աղբյուր Արևմտյան Հայաստանում հողային հարցն ուսումնասիրելու համար։

Պատրիարքարանի հրատարակություններից արժեքավոր է նաև «Ընդարձակ օրացույց ազգային հիմնադրամների, տոմար, դանազան գիտելիքներ, վիճակագրական տեղեկություններ» անբրան, որը սկսեց լույս տեսնել 1900 թ. Կ. Պոլսում։ Այն մինչև 1903 թ. հրատարակվում էր այդ անունով, իսկ այնուհետև «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիմնադրամների Հայոց, օրացույց և տոմարական գիտելիքներ ժամանակագրականք և աշխարհագրականք պետական վիճակագրություն, Հայ եկեղեցվո և պատրիարքարանի տեղեկություն գործնական բաժին» վերնագրով։

«Օրացույցը» լույս էր տեսնում տարին մեկ անգամ և հրատարակում պետական, պաշտոնական, կրոնական, եկեղեցական և այլ բնույթի նյութեր, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը, կառավարումը, իմանալու թուրքական տոլիաննների, մինիստրների, վալիների, մութասարրիֆների, անգամ մյուդիրների, Հայոց կաթողիկոսների, պատրիարքների, գավառական հոգևոր առաջնորդների տեղեկությունները և նրանց կառավարման տարիները։ Բացի դրանից, «Օրացույցը» հրապարակում էր արժեքավոր տեղեկություններ նաև Թուրքիայի հարկային սիստեմի, բնական հարստությունների օգտագործման, հայոց վանքերի ու վանական-եկեղեցական հողատիրության, գյուղատնտեսության և արդյունաբերության առանձին ճյուղերի, գործող շոփերի ու կշիռների և բազմաթիվ այլ հարցերի մասին։

Հայոց ազգային ժողովի արձանագրությունները, որոնք հրատարակված են Կ. Պոլսում 1860—1914 թվականներին «Ներքին գրություն ազգային ժողովոյ» վերնագրով, պարունակում են նյութեր գլխավորապես ազգային սահմանադրության, ազգային ժողովի եկամուտների ու ծախսերի, վանքերի, հիվանդանոցների, դպրոցների և մասամբ ազգային հարաբերությունների ու ազգային ազատագրական շարժումների մասին։

Ռուս-Թուրքական պատերազմից հետո, երբ Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության առարկա, պատրիարքարանը մի շարք հոգևորականների՝ Գ. Սրվանձտյանցին, Մ. Մխիթարյանին, Պ. Նաթանյանին և ուրիշների ուղարկեց Արևմտյան Հայաստան՝ գավառահայության վիճակն ուսումնասիրելու համար։

Գ. Սրվանձտյանցը հրմշյան Հայրիկի տանեցից էր (ստորել է ս. Վարագա վանքում), սակայն 1860-ական թվականներին թղթակցում էր «Արծվի Վասպուրականի»-ին, իսկ 1870-ական թվականներին հրատարակեց «Հնոց և նորոց պատմություն վասն Դավթի և Մովսեսի Խորենացվո» (Կ. Պոլիս, 1874), «Գրոց ու թրոց և Մասունցի Դավիթ կամ Մհերի գուռ» (Կ. Պոլիս, 1874), «Մանանա» (Կ. Պոլիս, 1876) ուսումնասիրությունները։ Նա 1878 թ. գարնանը գործուղվեց Արևմտյան Հայաստան, ուսումնասիրեց Սեբաստիայի, Ակնի, Արաբկիրի, Չարսանջակի, Չմշկածագի, Բալուի, Տիգրանակերտի, Խարբերդի, Քղեջուշի, Տարոնի, Մասունի ու Վասպուրականի մի շարք շրջանները և իր ուսումնասիրությունները հրատարակեց առանձին աշխատություններով[15]։

Մ. Մխիթարյանը ուսումնասիրեց Վանի, Բաղեշի, Կարնո վիլայեթների մի շարք շրջանները և ավելց արժեքավոր տեղեկություններ ազգաբնակչության, արհեստների, գյուղատնտեսության, պանդուխտների, քրդերի, վանական տնտեսության ու մի շարք այլ հարցերի մասին[16]։ Իսկ Պողոս Նաթանյանն ուսումնասիրեց Բալուի, Խարբերդի, Չարսանջակի, Շապաղբուրի և Երզնկայի շրջանները, նկա-

---

14 «Տեղեկագիր հոգևոր գրավոճանց Հանձնաժողովու», Կ. Պոլիս, 1910, տետր Ա, էջ 2։

15 Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Բարձ ազգաբ Հայաստանի համարօգ, Կ. Պոլիս, 1879, մ. Ա, 1884, մ. Բ, «Ճամփ Հառաջ», Կ. Պոլիս, 1884 և այլն։

16 Տե՛ս Մ. Մխիթարյան, Նկարագրական ուղեորություն ի հայաբնակ գավառս Արեւելյան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1884, մ. Ա, Բ, Գ։

բագրեւով Թուրքական պաշտոնեաների, այսպէսի ու բեկերի կողմից կատարված հարստահարութիւնները[17]։

Ամենայն Հայոց կաթողիկոս Երիմեան Հայրիկը 1890-ական թվականների ջարդերից հետո գործուղեց Գեղամ քահանա Ազանյանցին Կ. Պոլիս—արևմտահայության մասին նյութեր հավաքելու։ Ազանյանցը լինելով այնտեղ՝ երկու տարվա ընթացքում (1896—1898) հավաքեց հետաքրքիր նյութեր, որոնք հրատարակեց 1915 թ. Թիֆլիսում՝ «Թիվան Հայոց պատմության» XIII հատորում։ Նա գրում էր, որ նրա այդ հատորյակների «նախորդ գրքերը հայ ժողովրդի խաղաղ քաղաքակրթության նկարագիրն էին տալիս կամ պատմում էին նրա փոթորկալից կյանքի մասնակի վշտերը, այս հատորը (այսինքն՝ XIII—Ա. Հ.) ոչ միայն է Հայաստանի ավերակների վրա, տաճկական Հայաստանի, հայ ժողովրդի ֆիզիկական, անտեսական, բնականական և բարոյական ավերածության վրա»[18]։

Բացի պաշտոնական հանձնարարություններից, կրթա-ազգային հոսանքին պատկանող որոշ հեղինակներ ուսումնասիրել են Արևմտյան Հայաստանը նաև սեփական նախաձեռնությամբ։ Այսպես՝ քահանա Ռ. Բեկտուլեանը 1914 թ. ամռանը եղավ Վանում, Մուշում, Կարինում և տեղեկություններ հավաքեց հողային հարաբերությունների, գաֆթության, մարթարայության, վանքերի, կառավարության ազգային ու ազգարարին քաղաքականության և այլ հարցերի մասին[19]։ Գ. Շերենցը հավաքեց ու հրատարակեց հետաքրքրքիր տեղեկություններ վանքերի ու եկեղեցիների[20], իսկ Ս. Հայկունին՝ Բագրեւանդի մասին[21]։

Հայկական ՍՍՌ կենտրոնական պատմական արխիվում է գտնվում «Ամենայն Հայոց կաթողիկոսի դիւանական» ֆոնդը, որտեղ կան հետաքրքիր նյութեր Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության վերաբերյալ։ Նրանցից առանձնապես արժեքավոր են Կարնո վիլայեթի մի շարք գյուղերի բնակիչների ցուցակները, որոնցում արձանագրված են յուրաքանչյուր տնտեսության

17 *Տե՛ս* Գեղամ Նազարեանց, Արտօսր Հայաստանեաց կամ տեղեկագիր Բալուայ, Քաբերդի, Չարսանճագի, Հոգագոյրի և Նրգեկոյի, Կ. Պոլիս, 1883։

18 «Թիվան Հայոց պատմության», գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 1։

19 *Տե՛ս* Р. Бекгульянц. По Турецкой Армении, впечатления от поездки летом 1914 года, Ростов н/Д, 1914.

20 *Տե՛ս* Գ. Շերենց, Մրբավայրեր, տեղագրություն վասպուրականի, Վանի նահանգի գլխավոր նկնգեցուց, վանօրից և ուսումնասիրություն, Թիֆլիս, 1902։

21 *Տե՛ս* Ս. Հայկունի, Բագրեւանդ. Քաղաքին գավառ, էջմիածին, 1894, ժ. Ա։

ունեցած հողատարածքի չափը, անասնատեսակներն ու նրանց գլխաքանակը, վճարած հարկերն ու տուրքերը և այլն։ Այդ ցուցակների հիման վրա մենք կազմեցինք գյուղացիության ունեցվածքային շերտավորման վերաբերյալ աղյուսակ, որը բերվում է աշխատության համապատասխան բաժնում։

Իսկ Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի քանդարանում պահվում են Թորոս Ազատյանի և Գ. Սրվանձտյանցի արխիվային նյութերն ու ձեռագրերը, որոնք նույնպես հետաքրքիր տեղեկություններ են տալիս Արևմտյան Հայաստանի տնտեսության, առևտրի, քաղաքական ու սոցիալական զանազան անցուդարձերի մասին՝ դիրազանգատիս XIX դարի վերջին քառորդում։

Լիբերալ-բուրժուական և ազգային-պահպանողական հոսանքներին պատկանող հեղինակներից Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերի մասին նյութեր են հրապարակել և ուսումնասիրություններ գրել Գ. Արծրունին, Ա. Երիցյանը, Լեոն (Առաքել Բաբախանյանը) և ուրիշներ։

Գ. Արծրունին «Մշակ»-ի էջերում զանազան քղեհակգրություններ էր տպագրում Արևմտյան Հայաստանի իրականության մասին, իսկ 1879 թ. մարտի 11-ին Թիֆլիսում հանդես եկավ «Թուրքաց հայերի անտեսական դրութիւնը» հրապարակային դասախոսությամբ, որը հետագայում հրապարկվեց հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով։ Այդ դասախոսության նյութը նա հավաքել էր պատրիարքարանի կողմից հրատարակված վիճակագրական «Տեղեկագիր գաւառական հարստահարութեանց» գրքույկից ու «Մշակում» լույս ընծայած զանազան հոդվածներից։ Հավանական է, որ նա օգտվել է նաև Յա. Դ. Մայամայի Կարնո վիլայեթի մասին ռուսերեն աշխատությունից, որի մասին տրվեն ավելի վերևում։

Գ. Արծրունին չափազանցնում էր Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության զարգացման մակարդակը, երբ գրում էր, թե այն «շատ ծաղկած դրության մէջ է... ծաղկում է... այգեգործութիւնը, դիննգործութիւնը, պարտիզպանութիւնը, շերամապահութիւնը, մեղվապահութիւնը և այլն... Վանի նահանգը և Այրարատի գաւառները... հաց են հայթայթում ամբողջ Թուրքիային»[22]։ Այդուհանդերձ նրա գրքույկը տալիս է մի շարք տեղեկություններ մեզ հետաքրքրող հարցերի մասին։

22 Գ. Աբծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրութիւնը, Թիֆլիս, 1894, էջ 14։

Ա. Երիցյանը, 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, լինելով Խոռխ-Մկլիքովի և Շեկովնիկովի մոտ առանձին հանձնարարությունների կազմից, կազմեց Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության վիճակագրությունը և հերքից թուրքական կառավարության պաշտոնական հայտարարությունը հայերի փոքրաթվության մասին[23]։ Նա ցույց տվից, որ հայերն Արևմտյան Հայաստանում քանակապես ավելի շատ են, քան Արևելյան Հայաստանում, բայց տիրապետող տնտեսական ու քաղաքական պայմանների հետևանքով նրանք առաջ ընում արագորեն նվազում են, իսկ երկրորդում՝ աճում։ Երիցյանը «Փորձ» ամսագրում հրատարակեց պատերազմի տարիներին կազմած իր օրագիրը, որը հետաքրքիր տեղեկություններ է տալիս արևմտահայերի քաղաքական վիճակի և նրանց առևտրական օրինականացիայի մասին։

Ս. Ա. Եղիազարյանն ավելի քան 12 տարի շարունակ ապրելով Եղիդի քրդերի մեջ, մտերիմ ծանոթացավ նրանց նիստ ու կացին և հրատարակեց չափազանց արժեքավոր տեղեկություններ կիսաքոչվորների ու թոշվորների ցեղային կառույցվածքի, համայնքների ու պատրոնիմիաների, հողատիրության ու հողօգտագործման եղանակների և բազմաթիվ այլ հարցերի մասին[24]։

Ճիշտ է, Ս. Ա. Եղիազարյանի ուսումնասիրությունը վերաբերում է Արևելյան Հայաստանի քրդերին, բայց այն հնարավորություն է տալիս հասկանալու նաև Արևմտյան Հայաստանի քրդերի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, քանի որ Արևելյան Հայաստանի քրդերի մի մասը եկել էր Արևմտյան Հայաստանից և իրենց հետ բերել այնտեղի բարքերը[25]։

Արևմտյան Հայաստանի մահմեդական քրդերի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին որոշ տեղեկություններ է տալիս Մելա Մահմուդ Բայազիդին, որի աշխատությունը երկար ժամանակ պահպանվում էր ձեռագիր վիճակում և միայն վերջերս Բարիմանվից ու հրատարակվեց ուսաերեն լեզվով[26]։

23 **Ա. Դ. Երիցов**, Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881; Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном правлении России, Тифлис, 1883.

24 *Տե՛ս* **Ս. Ա. Егиазаров**, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1884.

25 Այսպես, գիլեզկների մի մասը գտնվում էր Երևանի, իսկ մյուսը՝ Կարեռ նահանգներում, շամշադինովների ցեղի մի մասը գտնվում էր Սուրմալուի գավառում, իսկ մյուսը՝ Վանի վիլայեթում (*տե՛ս, Լենինգրադի պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 1276, օպ. 19, գ. 450—452, քք. 8—14*)։

26 *Տե՛ս* **Мела Махмуд Баязиди**, Нравы и обычаи курдов, М., 1963 г.

Համեմատությունը ցույց է տալիս, որ եղիդի քրդերը ինչպես իրենց հասարակական կառուցվածքով, նույնպես և հողատիրության ու հողօգտագործման եղանակներով համարյա չէին տարբերվում մահմեդական քրդերից։

Բացի նշված հեղինակներից, քրդերի պատմակարգային ու ազգային հարաբերությունների մասին ուղղակի և անուղղակի տեղեկություններ են տալիս նաև Կ. Խաչատրյանը[27], Ա. Առաքելյանը[28], Օ. Վիլչևսկին[29] և ուրիշներ։

Դեղապետ Հ. Դ. Լազարը, 1894 թ. շրջագայելով Արևմտյան Հայաստանում, հետաքրքիր տեղեկություններ հավաքեց գյուղապետների հողերի բռնագրավումների, նրանց հարկային հարաստահարումների ու մի շարք այլ հարցերի մասին և այդ տեղեկությունները հրատարակեց ուսերեն[30]։

Հետ նախասովետական և սովետական իշխանության տարիներին հրատարակեց բազմաթիվ մեծ ու փոքր ծավալի աշխատություններ, որոնցում անդրադարձավ հայ ազգային ազատագրական շարժումներին, հասարակական-քաղաքական, հոգևորական հարաբերություններին և այլ հարցերի։ Նա իրավացի կերպով քննադատեց թուրքական հակաժողովրդական օրինքները[31], ինչպես նաև այն սխալ կարծիքը, որ Թուրքիայում հորատատիրություն չի եղել[32]։ Բայց բնակավ այլ ծայրահեղության մեջ, չտեսնելով Արևմտյան Հայաստանում բացի հորատատիրությունից դյուղացիության նաև ուրիշ կատեգորիաներ[33]։

Հետ Սարդարյանը 1888 թ. գործուղվեց Արևմտյան Հայաստան և այնտեղ մնաց մոտ երկու ամիս (սեպտեմբեր—նոյեմբեր)։ Նա փոքր-ինչ ծանոթացավ Կարինին և Տրապիզոնին ու իր տպավորությունները լույս ընծայեց սկզբում «Մուրճ» ամսագրում, իսկ հետո

27 *Տե՛ս* **К. Хачатуров**, Курды, черты их характера и быта («Сборник по описанию местностей и племен Кавказа»), Тифлис, 1894, вып. XX.

28 *Տե՛ս* **А. Аракелян**, Курды в Персии («Известия кавказского отдела императорского русского географического общества», Тифлис, 1904, т. XVII).

29 *Տե՛ս* **О. Вильчевский**, Мукринские курды («Переднеазиатский этнографический сборник), М., 1958, т. 1.

30 *Տե՛ս* **Полк. Як. Д. Лазарев**, Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1895.

31 *Տե՛ս* **Նա**, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1934, հ. II, էջ 39։*

32 *Նույն տեղում, էջ 38։*

33 *Նույն տեղում։*

1890 թ.՝ առանձին գրքով[34]։ Լ. Սարգսյանը, անշուշտ տալիս է որոշ տեղեկություններ Արևմտյան Հայաստանի դյուղի, վարչական կառավարման և այլ հարցերի մասին, բայց Հայաստում է այն սխալ կարծիքը, թե Կարնո վիլայեթում «Հայ գյուղացին... չի գանգատվում հողի պակասության վրա», թե «ով ինչքան միջոց ունի, այնքան էլ հող կարող է ունենալ»[35]։ Մինչդեռ ինչպես ցույց կտրվի ստորև, Կարնո վիլայեթի գյուղացին հողի այնպիսի սուր կարիք ուներ, ինչպես Արևմտյան Հայաստանի մնացած վիլայեթների գյուղացիները։

Հայկական բարեգործական ընկերությունը 1914—1917 թթ. հրատարակում էր ամենամյա հաշվետվություն Արևմտյան Հայաստանից, հատկապես Վանի, Կարնո և Բագեշի վիլայեթներից, Անդրկովկաս և Արևելյան Հայաստան գաղթած հայերի մասին, որոնցում նշվում էր գաղթականների թիվը, նրանց դրացմունքի բնույթը պատերազմից առաջ և այլն։ Ընկերությունը փորձում էր դիֆենցնել գաղթականներին՝ բան նախագահությունն ունեցվածքի, բաժանելով նրանց առաջին, երկրորդ և հրորդ կատեգորիաների, բայց հրատարակած ավյալները հնարավորություն չեն տալիս հանգելու դիտական որոշակի եզրակացության[36]։

* * *

Մեր թեմայի մասին առանձնապես հարուստ նյութ են տալիս դեմոկրատական հոսանքին պատկանող հեղինակները։ Նրանցից պետք է հիշատակել Բաֆֆուն (Հակոբ Մելիք-Հակոբյանին)։ Ճիշտ է, իր քաղաքական հայացքներով նա առաջնորդում էր լիբերալիզմի և դեմոկրատիզմի միջև, բայց գեղարվեստական ստեղծագործություններով կանգնած էր ժողովրդի կողմը։ Բաֆֆին իրավացիորեն նկատեց, որ Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերը միանգամայն անբավարար են ուսումնասիրված։ «Մենք դեռ չունենք ոչ մի օրինավոր շարադրության Տանկական Հայաստանի մասին,— գրում է նա,—մի քանի հատուկոտոր, չնչին, անիմաստ հոդվածներ ի՞նչ լույս կարող էին ձգել նրանց կյանքի վրա։ Մեզ պետք են կատարյալ ժողովրդագրական (էթնոգրաֆիական) տեղեկություններ, հիմնված փաստերի վրա ոչ միայն հայերի կյանքն ուսումնասիրելու համար, այլ թուրքերի, քուրդերի, չերքեզների և բոլոր ցեղերի, որ այժմ Հայաստանում բնակված են։ Մեզ պետք են կատարյալ աշխարհագրական տեղեկություններ Հայաստանի ազգաբնակության, արդյունաբերության, տեզագրության, ճանապարհների հաղորդակցության և նրա մի թնական և մի քաղաքական կյանքը մասին։ Մեզ պետք են ճիշտ վիճակագրական և տնտեսագիտական տեղեկություններ հայոց ազգաբնակության մասին առանձնապես և օտար ցեղերի մասին ընդհանրապես։ Մեզ պետք են մինչև անգամ գիտենալ Հայաստանում բնակվող ժողովուրդների մեջ սիրված ոգին, նրանց բնավորությունները, սոցիալիզմը, ձգտումները, կրոնական և բարոյական զգացմունքները մի խոսքով, նրանց բոլոր մասնավոր և հոգեբանական կողմը»[37]։

Եվ գրողն այդ բացերը մասամբ լրացրեց իր բազմաթիվ հոդվածներով ու վեպերով։ Անձամբ լինելով Արևմտյան Հայաստանում, նա մոտիկից ուսումնասիրեց հայերի, թուրքերի քրդերի և այլ ժողովուրդների բարքերը, նրանց հագուդ հարցերը և այդ ամենը հրապարակորեն ու գեղարվեստորեն արտացոլեց իր «Ծաճկահայեր», «Կայծերը», «Ջալալեդդին», «Խեներ», «Պանդուխտ մշեցին» ու այլ գրվածքներում։ Նրա այդ և այլ գործերը հաճախ իրական պատկերացումներ են տալիս Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին։ Ի տարբերություն Արծրունու, Բաֆֆին իրավացիորեն նշում է, որ Արևմտյան Հայաստանի հիրքարդծությունը գանվում է հետամնաց վիճակում։

Հայ դեմոկրատներից արժեքավոր են նաև վ. Փափազյանի հաղորդած տեղեկությունները։ Նա ծնվել ու մեծացել է Վանում և ամառանոց եղել հայ աշխատավորության կրած կրկնակի ճնշումներին ու տառապանքներին, գրել է մի շարք պատմվածքներ ու նովելներ, որոնցում մերկացնում է թուրքական պաշտոնյաներին, քրդական ցեղապետերին ու աղաներին, ինչպես նաև հայ առևտրականներին, վաշխառուներին և հոգևորականներին։ Սակայն մեզ համար ավելի արժեքավոր են նրա «Նամակներ թուրքաց Հայաստանից», որոնք գրվել են հիմնականում 1880-ական թվականներին և առաջին անգամ հրապարակվել «Մշակում»։

վ. Փափազյանը, շրջելով Արևմտյան Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, անհայտ բարեկամին հեռագրած իր նամակնե-

---

34 Տե՛ս Լ. Սարգսյան, Այց Թուրքաց Հայաստանին, Թիֆլիս, 1890։

35 Նույն տեղում, էջ 71—72։

36 Տե՛ս «Обзор деятельности состоящих при Кавказском армянском благотворительном обществе Армянского центрального комитета и Отдела по снабжению продовольствием беженцев Кавказского фронта». Тифлис. 1917.

37 Բաֆֆի, Երկեր, հ. 9, [illegible]

Архив Востоковедения АН Арм.ССР
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

թում նկարագրում էր այդ քաղաքների ու գյուղերի բնակիչների վիճաձեր, արհեստները, արդյունաբերությունը, նրանց ուժերը, կուլտուրա-լուսավորչական կյանքը և այլն։ Ի տարբերություն Բաֆֆու, որը նկարագրում էր գյուղական բնակչության կյանքը, Վ. Փափազյանը նկարագրում էր գերազանցապես քաղաքային կենցաղը։

Դեմոկրատ-հեղինակներից պետք է հիշատակել նաև Աբովն Թոխմախյանին, որը տակավին 1870-ական թվականներին խնդիր էր դնում «առանձին ուշադրություն դարձնել, ուսումնասիրել ամեն կողմից ազգությանց արմատ հանդիսացող գյուղացու կյանքը, ճանաչել նորան, ճանաչել նորա բնական աշխարհը, որին հայելենիք են ասում»[38] Ա. Թոխմախյանը ուսումնասիրից գյուղացիների դրությունը Վանի վիլայեթում, տեղեկություններ հավաքելով նրանց հարկային հարաբերությունների, զբաղմունքի, սովորությունների և այլ խնդիրների մասին։ Նա իր հավաքած նյութերը հրապարակեց առանձին գրքույկներով Թիֆլիսում՝ 1881—1882 թվականներին[39]։

Ուշադրության արժանի են նաև Ա. Կ. Ջիվելեգովի (Ջիվելեգով) աշխատությունները։ Նա առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայկական հարցի մասին հանդես եկավ մի շարք զեկուցումներով[40], իսկ 1916 թ. Մոսկվայում Ի. Տ. Ամիրովի հետ միասին հրատարակեց հատուկ ամսագիր[41], ուր տպագրում էր պանդուխտ հոդվածներ ու հաղորդումներ ինչպես Ռուսաստանում, նույնպես և Թուրքիայում, Պարսկաստանում և աշխարհի այլ երկրներում ապրող հայերի մասին։ Ամսագրում հատուկ տեղ էր հատկացնում արևմտահայ դաղթականությանը։

Առանձնապես պետք է նշել Ա-դոյին (Հովհաննես Տեր-Մարտիրոսյանին, որը 1909 թ. հուլիս—օգոստոս ամիսներին լինելով Արևմտյան Հայաստանում, 1912 թ. հրատարակեց «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» խորագիրը կրող աշխատությունը։ Այդ աշխատության նյութերի մի մասը նա հավաքել է առաջնորդարաններից ու վերցրել գյուղական քահանաներից, իսկ մյուսը՝ լրացրել անձնական դիտումներով։ Ա-դոն բավականին արժեքավոր

38 Ա. Թոխմախյան, *Հայրենիքի պահանջներ և հայ գյուղացին*, Թիֆլիս, *1881, էջ 11։*

39 *Տե՛ս նաև* Ա. Թոխմախյան, *Մասիս լեռան հարավային սարահարները*, Թիֆլիս, *1882։*

40 *Տե՛ս* А. К. Дживелегов. Армяне в России, 1906; Будущее Турецкой Армении, 1911.

41 *Տե՛ս* «Армянский вестник», М., 1916.

տեղեկություններ է տալիս Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ երեք վիլայեթների բնական հարաբերությունների, գյուղատնտեսության, արհեստների վաճառական, կալվածատիրական ու գյուղացիական տնտեսությունների, ֆեոդալական հարաբերությունների, հարդրդակցության միջոցների և այլ հարցերի մասին։ Սակայն նրա կազմած վիճակագրությունը տղտմարնակչության վերաբերյալ սակավարժեք է ու սխալ, նախ՝ որ թերի է (վերաբերվում է երեք վիլայեթներին ու դերազանցապես հայերին), ապա հայերի թիվը իրականից քիչ է ցույց տալիս։

Արևմտյան Հայաստանի ազգաբարյին հարաբերությունների վերաբերյալ հարուստ նյութ է տալիս հայ մամուլը։ Մենք օգտագործել ենք «Մասիս», «Մշակ», «Արեւելք», «Բյուզանդիոն», «Արծամանը», «Բազմավեպ», «Փորձ», «Ակաւամատոյա», «Հառիգոն», «Աբարատ», «Մուրճ», «Երկրի ձայն», «Արծվի Վասպուրականի», «Վան-Տոսպ», «Արեւելյան մամուլ», «Լումա», և այլ թերթեր ու ամսագրեր, որոնք լույս են տեսել XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին[42]։

Այդ թերթերն ու ամսագրերը պատկանում են հասարակական տարբեր ուղղություններու։ Այսպես. «Մասիսը», «Մշակը», «Արեւելքը», «Բյուզանդիոնը» և «Մուրճը» հանդիսանում են հայ առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի օրգաններ, «Բազմավեպը», «Աբարատը»՝ կղերա-ազգայական, «Փորձն» ու «Արծամանքը»՝ ազգային-պահպանողական, «Երկրի ձայնը» դեմոկրատական ուղղության օրգաններ։ Նրանց մի մասը Արևմտյան Հայաստանի ազգարարյին հարցերին ավելի շատ է անդրադառնում («Մասիս»-ը մինչև 1882—83 թթ., «Բյուզանդիոնը», «Մշակը», «Արեւելքը», «Ակաւամատոյա», «Հառիգոնը» և այլն), քան մյուսը («Բազմավեպը», «Աբարատը», «Արեւելյան մամուլը» և այլն), բայց և այնպես նրանք լրացնում են իրար և ստեղծում հնարավորություն լուծելու մեզ զբաղեցրած խնդիրները։

Բացի նշված աղբյուրներից ու մամուլից, նյութեր ենք քաղել նաև սփյուռքահայ մտավորականների հուշերից, որոնք լույս են տեսել արտասահմանում՝ տարբեր ժամանակներում։ Նրանցից կարելի է հիշատակել Մ. Չիրմիճյանին[43], Գ. Երեանյանին[44], Վ. Հայկին[45],

42 *Կանգնեա տարեթվերը և հրատարակության վայրերը տե՛ս* Գ. Ալթոյան, *Հայոց պարբերական մամուլը, Երեան, 1934։*

43 *Տե՛ս նրա «Տարբերքը և իր գավակները», Պալֆորնիա, 1955։*

44 *Տե՛ս նրա «Պատմություն Չարսանճագի Հայոց», Պեյրութ, 1956։*

45 *Տե՛ս նրա «Տարբերքը և անոր սակեռն գաշտ», Հաշտամատյան պատմական մշակութային և ազգագրական», աշխատասիրեց և կազմեց Վահե-Հայկ, Նյու-Յորք, 1959։*

Հայրության քահանա Սարգսյանին (Ալեորին)[46] և ութիշներին։ Նրանք ծնվել ու ապրել են Արևմտյան Հայաստանի զանազան գյուղերում ու քաղաքներում, իսկ 1915 թ. թուրքական չաթեդանից ազատվելով փախել են արտասահման, օտարազգիների ով որտեղ կարողացել է և իրենց հայրենասիրական պարտքն են համարել գրել իրենց ծննդավայրի պատմությունը։

Սակայն այդ հեղինակներից ոմանք երբեմն իդեալականացնում են անցյալը, երբ ժխտում կամ աբողում են գյուղում եղած ունեզվածքային շերտավորումը և դասակարգային պայքարի փաստերը։ Այսպես, Մ. Նորաղյանը գրում է, որ Խոբերդի վիլայեթի Չորս «գյուղին մեջ կարտա կամ ազրատ բնականները չկային»[47]։ Իսկ Հովհաննիսյանը ցույց տվեց, որ թուրքական բռնապետական կարգերը, անձի և գույքի անապահովությունը, հազորդակցության միջոցների անմշակությունը վիճակը ոչ միայն արգելակում էին Արևմտյան Հայաստանի տնտեսության զարգացումը, այլև տանում էին այն դեպի բացարձակ աղքատություն։

Մ. Գ. Ներսիսյանը, համեմատելով Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացման մակարդակը XIX դարի երկրորդ կեսում Արևմտյան Հայաստանի հետ, մատնանշեց, որ նրանցից երկրորդը գտնվում էր «տնտեսական-հասարակական զարգացման անհամեմատ ցածր մակարդակի վրա»[51], որ արևմտահայ գյուղացիները անընդհատ տնտեսական ու քաղաքական ոտնձգությունների հետևանքով «ապրում էին խիստ քայքայման և ազգաոչնչացման պրոցես»[52], որ «Հարտական իրավունքը տիրում էր Արևմտյան Հայաստանի ոչ բոլոր մասերում»[53] և այլն։

Ե. Ղ. Սարգսյանը մանրազնին ուսումնասիրեց թուրքական կառավարության ագրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին և մատնանշեց գյուղացիների, հատկապես հայ գյուղացիների հողերի մասսայական բռնագրավումը, նրանց հարկային ահռելի հարատևությունն ու ֆիզիկական բնաջնջումը թուրքական կառավարության կողմից[54]։ Նա

---

46 Տե՛ս նրա «Պատմ. իր ժողովրդի», երկրորդ ու իններորդ դասարան, Գահիրե, 1932։

47 Վահե Հայկ. Հարբերդը և անոր ոսկեգնդե գաղթ., էջ 932։

48 Համբարձում Եւոմյան. Հուշագիրս, Ալեքսանդրիա, 1929, հ. Ա, էջ 26։

49 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 4, էջ 42։

* * *

Մամիսոնյան կարգերի հաստատումից հետո պատմաբանները, գլխավոր մարքս-լենինյան առաջնորդ թեորիայով, սկսեցին գիտականորեն վերլուծել XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի Արևմտյան Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները։ Այսպես, Աշոտ Հովհաննիսյանը ցույց տվեց, որ թուրքական բռնապետական կարգերը, անձի և գույքի անապահովությունը, հազորդակցության միջոցների անմշակությունը վիճակը ոչ միայն արգելակում էին Արևմտյան Հայաստանի տնտեսության զարգացումը, այլև տանում էին այն դեպի բացարձակ աղքատություն[50]։

Մ. Գ. Ներսիսյանը, համեմատելով Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացման մակարդակը XIX դարի երկրորդ կեսում Արևմտյան Հայաստանի հետ, մատնանշեց, որ նրանցից երկրորդը գտնվում էր «տնտեսական-հասարակական զարգացման անհամեմատ ցածր մակարդակի վրա»[51], որ արևմտահայ գյուղացիները անընդհատ տնտեսական ու քաղաքական ոտնձգությունների հետևանքով «ապրում էին խիստ քայքայման և ազգաոչնչացման պրոցես»[52], որ «Հարտական իրավունքը տիրում էր Արևմտյան Հայաստանի ոչ բոլոր մասերում»[53] և այլն։

Ե. Ղ. Սարգսյանը մանրազնին ուսումնասիրեց թուրքական կառավարության ագրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին և մատնանշեց գյուղացիների, հատկապես հայ գյուղացիների հողերի մասսայական բռնագրավումը, նրանց հարկային ահռելի հարատևությունն ու ֆիզիկական բնաջնջումը թուրքական կառավարության կողմից[54]։ Նա

---

50 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Մ. Նալբանդյան, «Անտիպ երկեր», Երևան, 1935 (համեմատեք՝ «Նալբանդյանը և նրա ժամանակը», Երևան, 1955, գիրք առաջին, էջ 338—358)։

51 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Երևան, 1955, էջ 47։

52 Նույն տեղում, էջ 64։

53 Մ. Գ. Ներսիսյան, Հայաստանի տնտեսական և քաղաքական գրությունը 1860—1880 թթ. (տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1946, № 10, էջ 42)։

54 Տե՛ս Е. К. Саркисян, Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957.

այնուհետև ցույց տվեց թուրք գաղթականությունն Անդրկովկասում 1914—1920 թթ. և Անդրկովկասի ժողովուրդների, հատկապես հայերի ցուցաբերած հերոսական դիմադրությունը[55]։ Ե. Մարգոյանը և Ռ. Սահակյանը հրատարակեցին հատուկ գրքույկ՝ մերկացնելով պատմության ժամանակակից թուրք կեղծարարներին[56]։

Ա. Գ. Գուլանյանը, հայ տնտեսագիտական մտքի պատմությունը շարադրելիս, անդրադարձավ նաև Արևմտյան Հայաստանի տնտեսության հարցերին և մասնավորեց, որ թուրքական տիրապետությունն բուռ էության ոչնչով չէր տարբերվում պարսկական տիրապետություններից։ Ի տարբերություն նշված հեղինակների, Ա. Գ. Գուլանյանը փորր-ինչ կանգ առավ նաև Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության հիմունքների բնութագրման վրա[57]։

Ըստ հեղինակներից մասնագիտորեն ոչ որ չի զբաղվել Արևմտյան Հայաստանի կամ արևմտահայերի քաղաքագիտական ու տնտեսական պատմությամբ։ Սակայն նրանցից ոմանք զբաղվել են Թուրքիայի պատմությամբ և այդ կապակցությամբ ավելի կամ պակաս չափով խոսել նաև արևմտահայերի մասին։ Այսպես, Ա. Գ. Նովիչևը բավականին հանգամանորեն ուսումնասիրել է Թուրքիայի նախապատերազմյան (խոսքն առաջին համաշխարհային պատերազմի մասին է) տնտեսությունը և ցույց տվել նրա քայքայումն ու վերածումը եվրոպական պետությունների կիսագաղութի։ Նա աշխատության վերջում է արժեքավոր ալյուսակներ, որոնցից երկուսը հնարավորություն են տալիս մեզ պարզելու Արևմտյան Հայաստանի գյուղացիների հողակտորների չափերը և նրանց միջև եղած ունեցվածքային չհրատավորումը[58]։

Ա. Ֆ. Միլլերը իր հրատարակած մի շարք աշխատություններում, ցույց տալով Թուրքիայի առաջադիմական խավերի պայքարը ընդդեմ ռեակցիայի, 1908 թ. հեղափոխության շարժիչ ու դեկավար ուժերը, նրա բնույթն ու պատմական նշանակությունը, անդրադարձավ նաև Թուրքիայի տնտեսության պատմության մի շարք հարցերին[59]։

Բացի Ա. Գ. Նովիչևից և Ա. Ֆ. Միլլերից, Թուրքիայի քաղաքական ու տնտեսության պատմությամբ զբաղվել են ու շարունակում են զբաղվել նաև Բ. Ալիմովը, Բ. Դանցիգը[60], Մ. Մ. Լազարևը, Ն. Ա. Նաֆիևը, Յու. Գևորգյանը և ուրիշներ[61]։

Սակայն ամփոփական հեղինակներից ոմանք Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերը լուսաբանելիս քիչ են տվել սխալներ։ Այսպես. Արտ. Կարինյանը դեռ 1926 թ. հրատարակած իր «Հին Թուրքիան և Թուրքահայերը» հոդվածաշարում պաշտպանում է այն միտքը, թե Արևմտյան Հայաստանում «հայ գյուղացիությունը... եղել է տնտեսապես ավելի ուժեղ, քան գյուղացիական մնացյալ հատվածները»[62], այսինքն՝ թուրքերը, քրդերը, ասորիները և ուրիշներ, թե «հայերի կարողությունը հին Թուրքիայում եղել է համենայն դեպս ոչ ավելի վատ, քան ռուսահայերի կացությունը ցարական տիրապետության ներքո»[63]։

Իր այդ դրույթները հաստատելու համար Արտ. Կարինյանը միակողմանի է օգտագործում աղբյուրները, բերում է ոչ բնորոշ ու անհամեմատ օրինակներ, մասնավորապես Արևմտյան Հայաստանում գտնվող հայկական վանքերը, եկեղեցիները, դպրոցները, հիվանդանոցները, առևտրական կրպակները, որոնք ազգային հարստության համարվելով հանդերձ, ծառայում էին հայ շահագործող վերնախավի շահերին և, որ գլխավորն է, չէին կազմում հայ գյուղացիների տնտեսության բաղկացուցիչ մասը։ Հեղինակը նրա արևմտահայ գյուղացու ունեցվածքը համեմատում Արևմտյան Հայաստանի մահմեդական գյուղացու կամ Արևելյան Հայաստանի գյուղացու ունեցվածքի հետ, նրանց հարկային հարաբերությունը, ազգային ու կրոնական հալածանքները միմյանց հետ (մի բան, որը

---

55 Տե՛ս Е. К. Саркисян. Экспансионистическая политика Османского правительства в Закавказье накануне и в годы первой мировой войны. Ереван, 1962.

56 Տե՛ս Ե. Ղ. Մարգոյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր չրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963։

57 Տե՛ս Ա. Գ. Գուլանյան, Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության, Երևան, 1959, էջ 20—21, 41—43։

58 А. Д. Новичев. Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937.

59 А. Ф. Миллер. Краткая история Турции, М.—Л., 1948; Очерки новейшей истории Турции, М.—Л., 1948; 50-летие младотурецкой революции, М., 1958.

60 Б. Данциг. Турция. М., 1949.

61 Ю. А. Петросян. «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958.

62 «Ծոյք», 1926, գիրք առաջին, էջ 160։

63 Նույն տեղում, էջ 166։

կլիներ հարցի լուծման միակ և ճշմարիտ ուղին), ապա կհանդեր իր ասածին միանգամայն հակառակ եզրակացությանն։

Որոշ սխալներ թույլ է տվել նաև Ա. Ֆ. Միլլերը։ Այսպես, խոսելով XIX դարի առաջին կեսի թուրքական բարենորոգումների մասին, նա գրում է, որ զրանք «ձեև զուրս էին գալիս ֆեոդալների դասակարգից, նպատակ ունեին՝ ճանապարհ մարդել կապիտալիստական հարաբերությունների զարգացման առաջ, բայց նրանց իրագործման համար բացակայում էր գլխավորը—ուժեղ բուրժուազիայի առկայությունը, որը կարողանար պաշտպանել կառավարության ձեռնարկումները»[64]։ Այս շարադրանքից երևում է, որ Թուրքիայի տնտեսական ու քաղաքական հետամնացության գործում մեղավոր ոչ թե սուլթաններն էին իրենց բացակայությամբ, այլ ուժեղ բուրժուազիան, որ զեռ գոյություն չուներ։ Հաստատ է, որ Թուրքիայում ուժեղ բուրժուազիան բացակայում էր ամենից առաջ դաժան բռնապետության պատճառով։ Թուրքական սուլթաններր թեև հրապարակեցին բուրժուական բնույթի մի շարք օրենքներ, բայց զրանք մեծ մասամբ թղթերին թղթի վրա, քանի որ ներկայացնում և պաշտպանում էին ֆեոդալական վերնախավի շահերը, զեմ էին երկրի կապիտալիստական զարգացմանը և նպատակ ունեին խոչել ժողովրդական մասսաների[65]։

Բոլորովին վերջերս ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտը հրատարակեց Մ. Ս. Լազարեվի «Քրդստանը և քրդական պրոբլեմը» խորագիրը կրող աշխատությունը[66]։ Հետևնակը, անշուշտ ի հայտ է բերել բազմաթիվ հրատարակված ու արխիվային նյութեր, որոնց հիման վրա հանգել է որոշ իրավացի եզրակացությունների։ Նա ճիշտ է, երբ գրում է, որ Արևելյան Անատոլիայում XIX դարի վերջին և XX դարի սկզբին քրդական որոշ ցեղեր պահպանում էին իրենց անկախությունն ու կիսանկախությունը, որ Թուրքական կառավարությունը հավանություն էր ցնդում պետություններին ու համայնքապետներին, որի շնորհիվ «ծագիում էր հարստատիրական իրավունքն իր ամենածանր, միջնադարյան ձևերով»[66], որ աշխատավորական զանգվածների սոցիալական ու ազգային ազատագրական շարժումները սերտորեն միահյուսված էին միմյանց հետ և այլն։

Բայց, այդուհանդերձ, Մ. Ս. Լազարեվը թույլ է տվել մի շարք

64 А. Ф. Миллер. 50-летие младотурецкой революции. М., 1958, стр. 5.
65 Տե՛ս M. С. Лазарев. Курдистан и курдская проблема. М., 1964.
66 Նույն տեղում, էջ 33։

յալ սխալներ, որոնց վրա հարկ ենք համարում փորր-ինչ կանգ առնել։ Օգտագործելով միստումնավոր տեղեկություններ, նա գալիս է այն ոչ ճիշտ եզրակացության, թե Արևելյան Անատոլիայի վեց վիլայեթներում քրդերը կազմում էին բնակչության մեծամասնություն, թե համիդական գնդերի ստեղծումը չամրապնդեց Թուրքական կառավարող շրջանների դիրքերը, թե քրդական մի շարք ցեղապետեր հանդիսացել են ինչպես թուրք, նույնպես և հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի դեմ ուղղված գործերի և այլն։ Նա նկատի ունի Քոռ Հյուսեին փաշային, շեյխ Սեիդ Ալիին, Մուսա բեյին, Ծմկոյին, Բշարե Զաթոյին և այլոց։ Բայց սրանք երկար տարիներ հանդիսացել են Արդուլ-Համիդի հանցավոր քաղաքականության կիրառողները և հռչակվել են իրենց բռնակալական ու չարագործական գործունեությամբ։

Հյուսեին փաշան Արդուլ-Համիդի կառավարման տարիներին բանադրավեց հայ և քուրդ գյուղացիների հոդերը և նրանց կիսադրացրեց ու ձորտացրեց։ 1908 թ. հեղափոխությունից հետո հայ գյուղացիները մասսայաբար բողոքեցին նրա չարագործությունների դեմ, իսկ քուրդ գյուղացիները դանում էին, որ «հայրենիքի փրկության համար պետք է կախել Քոռ Հյուսեին փաշան»[67]։

Սեիդ Ալին հայանի հայակեր շեյխ Ջալալեդդինի որդին էր։ Նա շարունակեց իր հոր հայահնչած քաղաքականությունը, մահմեդականացնելով բազմաթիվ հայ բնտանիքներ և միայն 3—4 տարվա ընթացքում (1908—1912) կոտորելով ավելի քան 200 հայ[68]։ Բոլշևիկյան Իրաղեկր գրում էր, որ Սեիդ Ալին «բանի՜ անմեղ հայերու վրին փորձեր է իր դաշույն ու խանչալի արուիյուններ»[69]։

Շեյխ Սեիդ Ալին իր ոճրագործություններր կատարում էր մի շարք դինակիցների, այդ թվում նաև Մուսա բեյի միջոցով[70]։ Ուշագրավ է, որ Կարճկանում 1913 թ. գյուղացիները սպանեցին Մուսա բեյին, իսկ կառավարությունը դրա համար պատժեց նրանց[71]։

Տեղի ստուգումը հնարավորություն չի տալիս փաստեր բերելու նաև քրդական մյուս «ազատատար» բեյերի ոճրագործությունների մասին։

Ճիշտ է, 1908 թ. հետո այդ բեյերը ի թիվս այլոց, ակտիվ և

67 «Բյուզանդիոն», 1909, հունիսի 26։
68 «Մշակ», 1914, № 75։
69 «Մշակ», 1914, № 110։
70 «Բյուզանդիոն», 1909, մայիսի 7։
71 «Մշակ», 1913, № 226։

պատասխ եղանակներով բմբռնաւոյան երիտասարդ թուրքերի դեմ (որը գուցե հիմք է տվել Մ. Ս. Լազարևին նրանց շարժումը համապետու առաջադիմական)։ Բայց նրանք այդ կատարեցին ոչ թե աշխատավոր գյուղացիության սոցիալական կամ ազգային ազատագրման, այլ իրենց ձեռք բերած ընդարձակ կալվածքների և առևտրական հարստության պաշտպանման նպատակով։

Մ. Ս. Լազարևը, անտեղյակ լինելով պատմական Հայաստանի և Քրդստանի սահմաններին, Քրդստանի մեջ է մտցնում ամբողջ Արևմտյան Հայաստանը և այդպիսով Քրդստանի սահմանները հասցնում Ուրմիայից մինչև Մալաթիա, Հալեպից Համադան մինչև Երևան[72]։ Փաստորեն նա քննագատական մոտեցում չի ունեցել թուրքական կառավարության և իմպերիալիստական պետությունների Հայաստանը Քրդստան վերանվանելու քաղաքականության նկատմամբ։

Դժբախտաբար, Մ. Ս. Լազարևի վերոհիշյալ սխալները ավելի կամ պակաս չափով տեղ են գտել նաև նույն ինստիտուտի աշխատակից Ն. Ա. Խալֆինի աշխատության մեջ[73]։ Նրա այդ սխալները քննադատված են Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի աշխատակիցների կողմից[74]։

Այնուամենայնիվ, մարքսիստական պատմագիտությանն արդեն ձեռնարկել է Արևմտյան Հայաստանի քաղաքագիտական ու տնտեսության պատմության մշակումը։

Ներկա աշխատության մեջ առաջին փորձն ենք կատարում բնութագրել Արևմտյան Հայաստանի ագրարային հարաբերությունները՝ նրանց կրած փոփոխություններով հանդերձ և ցույց տալ գյուղատնտեսության ու արդյունաբերության տնտեսարժեքի հիմնական տենդենցները Արևելյան պատերազմից մինչև առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանը։

Քանի որ մենք ուսումնասիրել ենք նաև Արևելյան Հայաստանի անտեսության պատմությունը[75], ուստի հարկ համարեցինք այդ գրքի վերջում մեր հանել Հայաստանի երկու հատվածների միջև եղած նմանությունները ու տարբերությունները։

72 Մ. Ս. Լազարև, նշված աշխատությունը, էջ 19—20։

73 Н. А. Халфин. Борьба за Курдистан. Курдский вопрос в международных отношениях XIX века. Изд. Восточной литературы, М., 1963.

74 Տե՛ս Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), 1964, № 5, էջ 91—94։

75 Տե՛ս А. С. Амбарян. Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920). Ереван, 1959.

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՈՒ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՑ

Թուրքերի նախնիները՝ քոչվոր օղուզների ցեղերը XI դարում Միջին Ասիայից ներխուժելուց հետո Փոքր Ասիա։ XII դարում այդ ցեղերի միավորումներից առաջացավ Իկոնիական սուլթանությունը, որը XIII դարում մոնղոլական արշավանքների հետևանքով թալքայվեց և բաժանվեց առանձին իշխանությունների։ XIV դարում Օսման բեյն սկսեց նվաճել այդ մասնատված իշխանությունները և հիմք դնել ուժեղ պետության։ Հետագայում այդ պետությունը նրա հիմնադրած դինաստիայի անունով կոչվեց Օսմանյան։

Օսմանի հետնորդները շարունակեցին նրա նվաճողական քաղաքականությունը և XIV—XVII դարերում տիրեցին Հունաստանը, Բալկաններին, Սերբիան, Հունգարիան, Ալբանիան, Մակեդոնիան, Բուլղարիան, Մոլդովիան, Վալախիան, Սև ծովի հյուսիսային ափերը՝ ընդհուպ մինչև Կուբանը, Հարավային Վրաստանը, Արևմտյան Հայաստանը, ամբողջ Փոքր Ասիան, Լիբանանը, Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, Արաբիան, Քրդստանը, Տրիպոլիտանիան, Եգիպտոսը, Այժիբը և Թունիսը։ Այդպիսով թուրքական կայսրության սահմանները տարածվեցին Հայաստանից մինչև Աուստրալիայի օվկիանոս և Բուլպեչոից մինչև Աստրախան։

Թուրքական կայսրությունն իրենից ներկայացնում էր ռազմաֆեոդալական տիպիկ բռնապետություն։ Նրա գլուխ կանգնած էր

սուլթանը, որի կամքը ամեն ինչ էր։ Սուլթանը կառավարում էր երկիրը մեծ վեզիրի և շեյխ-ուլ-իսլամի օգնությամբ, որոնցից առաջինը հետևում էր աշխարհին, իսկ երկրորդը՝ հոգևոր գործերին։ Երկիրը բաժանված էր առանձին վարչական միավորների, որոնք կոչվում էին էյալեթներ և լիվաներ. էյալեթների կառավարումը հանձնարարված էր բեյլերբեյներին կամ միրմիրաններին, իսկ լիվաների կառավարումը՝ սանջակբեյներին կամ միրլիվաներին։ Նրանք բոլորը հանդիսանում էին թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական պաշտոնյաներ[1]։

Թուրքական պետությունն ուներ թևկոպաիկ բնույթ, կրոնը չէր անջատված պետությունից, և հոգևորականները մեծ դեր էին խաղում երկրի կառավարման գործում։ Առանց շեյխ-ուլ-իսլամի համաձայնության ոչ մի սուլթանի չէր կարելի համարել օտապատված։ Յուրաքանչյուր աշխարհիկ պաշտոնյային կից կային մահմեդական հոգևորականներ, որոնք հսկում էին, որպեսզի գործերի սկզբունքները ճիշտ կենսագործվեն, վարում էին բրևան հանցագործների գործ ու դատաստանը, ապրածում մահմեդականության և այլն։ Նրանք կրոնով մեղադրում էին հպատակների գիտակցությունը և իշխանության սերմանում աշխատավորության մեջ մահմեդական հոգևորականության դեմ էր ամեն մի առաջադիմության, պաշպանում էր «Քոդ ամեն ինչ գնա հնով» գեվիզը, իսկ կյանքում պատահած հաջողություններն ու անհաջողությունները մեկնաբանում ճակատագրով[2]։

Թուրքական բռնապետությունն իր ամբողջ ծանրությամբ բնկած էր աշխատավոր մասսաների վրա։ Դյուզգիններր հարկադրված էին վճարելու բազմաթիվ տուրքեր ինչպես կառավարության, նույնպես և ֆեոդալներին ու կրոնական հաստատություններին։ Առանձնապես ծանր էր քրիստոնյաների դրությունը, որոնք բացի սոցիալական ճնշումներից, ենթարկվում էին նաև ազգային ու կրոնական հալածանքների։ Թուրք բռնակալները քրիստոնյաներին դիտում էին որպես կենդով նվաճված ստրկացած հպատակների, տալիս ռայա անուն, ճգնում էին մահմեդականացնել նրանց։

1 Տե՛ս Ա. Խ. Սոֆրաստյան, Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դարում («Արևելագիտական ժողովածու», Երևան, 1960, էջ 285—286)։

2 Տե՛ս «Народы Турции, двадцать лет пребывания среди болгар, греков, турок, албанцев и армян дочери и жены консула, перевод с английского», СПб, 1879, т. 2, стр. 160.

Սակայն շնորհիվ քրիստոնյա ժողովուրդների ցուցաբերած համառ դիմադրության, նրանք չկարողացան հասնել իրենց նպատակներին։ Թուրքական բնակչության քիչ մի շատ կոմպակտ զանգվածներ ձևակերպվեցին միայն Կենտրոնական Անատոլիայում և Թրակիայի մի մասում. կայսրության մնացած շրջաններում պահպանվեցին քրիստոնյա ժողովուրդները և նույնիսկ ոչ մեծ մահմեդական ցեղերն ու ցեղային միավորումները։

Օսմանյան կայսրությունն իր զարգացման կուլմինացիան կնային հասավ XVI դարում, որից հետո արտադրողական ուժերի լրացման ու քայքայման, ճնշված ժողովուրդների ազգային ու սոցիալական շարժումների, ֆեոդալական կենտրոնախույս ուժերի ակտիվացման, առևտրական ճանապարհների տեղափոխման և հարևան պետությունների հզորացման շնորհիվ սկսեց քայքայվել։

XVIII—XIX դարերում սուլթանները բարենորոգումներ մտցնելու ճանապարհով փորձեցին կանխել այդ քայքայումը։ Այսպես, Մահմուդ II-ը 1826 թ. ոչնչացրեց Ենիչերիների կազմակերպությունը, ստեղծեց նոր բանակ։ Նա ամուր հենակետ ունենալու համար ձգտում էր ամրապնդել նահանգներում զինվորականների փոխարեն նշանակեց քաղաքացիական կառավարիչներ, ստեղծեց միներտություններ, որոշ քայլեր կատարեց երկրի կալսուրան ու կենցաղը վերափոխելու ուղղությամբ և այլն։

Մահմուդ II-ի բազմաթիվ ձեռնարկները շարունակեց նրա հաջորդ սուլթան Աբդուլ-Մեջիդը (1839—1861)։ Նա 1839 թ. հրապարակեց մանիֆեստ («Գյուլխանեյի հատուկ շերիֆը»), որով բաց արեց Թուրքիայի պատմության մեջ Թանզիմաթի շրջանը։ Սուլթանն այդ մանիֆեստով ազդարարում էր կայսրության բոլոր հպատակների անձի անձեռնմխելիության, գույքի պաշտպանության, հարկերի արդարացի բաշխման, զինվորական ծառայության կրճատման, բազմաթիվ քաղաքացիական, ֆինանսական և ռազմական գերատեսչությունների անջատման և այլն[3]։

1856 թ., այսինքն՝ Ղրիմի պատերազմից հետո սուլթանը հրապարակեց նոր մանիֆեստ, որը հայտնի է «Հատաթի հումայուն» անունով։ Այդ մանիֆեստով կայսրության բոլոր քաղաքացիներին, անկախ լեզվից, ազգությունից ու կրոնից, նա իրավահավասար էր հանդիսում պետության առաջ, իրավունք էր տալիս նրանց բնդուն-

3 Д. Т. Розен. История Турции от победы и реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году, СПб, 1872, ч. 2, стр. 19.

վելու պետական ու զինվորական ծառայության, սոսկալու ուսումնական հաստատություններում, մայրենի լեզվով հանդես գալու դատարաններում, խոստանում էր կարգավորել հարկային սիստեմը, պատժել կաշառակերներին, կայսրության բրիտանական շրջաններում անցկացնել բարենորոգումներ, արգելում էր օգտագործել բրիտանացիների նկատմամբ գյավուր, իսկ հրեաների նկատմամբ՝ ջհուտ արհամարհական արտահայտությունները և այլն[5]։

Սակայն այդ ամենը մեծ մասամբ մնաց թղթի վրա։ Ընդհակառակը՝ թուրք կառավարիչները XIX դարի երկրորդ կեսից, մասնավորապես նրա վերջին քառորդից, սկսեցին ավելի ուժեղացնել իրենց հալածանքերի, հատկապես բրիտանական մասսաների, ճնշումն ու կեղեքումը։ Նրանք սանձազերծին ահաբեկման գանազան ուժեր և հենվելով դրանց վրա՝ դաժան գաղտապատ տևան ազգային ու աղգային ազատագրական շարժումների հետ։ Այդ գործում առանձնապես աչքի ընկավ սուլթան Աբդուլ-Համիդը, որն իշխանության գլուխ անցավ 1876 թ. մայիսի 30-ին երկրում տեղի ունեցած հեղաշրջման հետևանքով։ Սուլթանն սկզբում՝ 1876 թ. դեկտեմբերի 23-ին թուրքական միմոկրատական ուժերի ազդեցության տակ հրապարակեց սահմանադրություն, որն ընդօրինակված էր եվրոպական պետությունների, առավելապես Բելգիայի սահմանադրությունից։ Նա սահմանադրությամբ երաշխավորում էր կայսրության անթաժանելիությունը, բոլոր հպատակների իրավահավասարությունը, խոսքի, մամուլի և խղճի ազատությունը, անձի ու ունեցվածքի ապահովությունը, հարկերի հավասար բաշխում, կառավարման երկպալատային ձևի՝ սենատի ու դեպուտատների պալատի առեղծում և այլն[6]։

Սակայն ամրապնդելով իր իշխանությունը, սուլթանը ոչ միայն չհնազանդեցրեց սահմանադրությունը, այլև սկսեց հետապնդել նրա կողմնակիցներին, ոմանց աքսորեց, իսկ մյուսներին՝ մահապատժի ենթարկեց։ Նա անգամ կարգադրեց գործածությունից հանել «ազատություն», «հավասարություն», «հեղափոխություն», «սահմանադրություն», «ազատադիմություն» և մի շարք այլ բառեր, որոնց իմաստը վիրավորում էր նրա լսելիքը։ Իր գործադրած բռնություններով ու դաժանություններով նա գերազանցեց իր նախորդներին

[4] «Հաճախ հումայուն-ի հայերին թագդմանությունը տե՛ս պրոֆ. Կ. Բուժայան, «Պատմություն արևելյան խնդրո և ասպետող հայկական հարցին», Լոնդոն, 1905, հ. Բ, էջ 613—623։

[5] Б. Данциг. Турция. М., 1949, стр. 21—28.

և ստացավ «արյունարբուն» մականունը։ Վ. Ի. Լենինը Աբդուլ-Համիդին համեմատում էր Նիկոլայ II-ի հետ և անվանում նրան Թուրքական Նիկոլայ II[6]։ Աբդուլ-Համիդի կառավարման տարիները Թուրքիայի պատմության մեջ մնան որպես «զգուշության տարիներ»։

Արյունարբու սուլթանը ավելի դաժան վարվեց ոչ թուրք ժողովուրդների, հատկապես հայերի հետ։ Նա նպատակ դրեց ֆիզիկապես բնաջնջել հայերին և այդ հանցագործ նպատակին իրագործելու համար սկզբում խոստացրեց նրանց հալածանքները։ Այսպես, 1881 թ. կարգադրեց Արևմտյան Հայաստանի վիլայեթների կառավարիչներին. արգելել հայերի ազգային ժողովներն ու միտինգները, հայ ժողովրդի պատմության դասավանդումը, «Մայր Հայաստան» նկարի տարածումը, խոստացնել գրաքննություններ, փոխարինել բրիտանյա պաշտոնյաներին մահմեդականներով, հանձնարարել վերջիններիս սովորելու հայոց լեզուն, որպեսզի կարողանան կարդալ ու հասկանալ նրանց գրագրությունները, դաժան կերպով ճնշել ապստամբության ամեն մի փորձ և այլն[7]։

Եվ վիլայեթների կառավարիչները, իրագործելով սուլթանի այդ կարգադրությունը, սկսեցին ուժեղացնել հայկական հալածանքները, ձերբակալել կասկածելիներին, սպանել նրանցից շատերին և այլն։ 1888 թ. դեկտեմբերի 15-ին Կարնո ռուսական գլխավոր հյուպատոս Դեննեսեն Կ. Պոլսի ռուսական դեսպանին ուղարկած իր զեկուցագրում նշում էր. «Հրեաները ամենուրեք հետևում են բրիտանյա բնակչությանը, ամեն կերպ՝ խոսքերով ևս հարաբերություններով, ձգտում են իմանալ նրանց դաղտնիքը։ Հաճախ կասկածավորներին ամրոցը ամիսներով պահում են բանտերում»[8]։

Աբդուլ-Համիդն այնուհետև օգտագործեց քրդական շարժումները, տալով նրանց հակահայկական ուղղություն։ Այդ տեսակետից բնորոշ էր Ուրեյդ-Ուլյայի շարժումը, որն սկսվեց վաստուրականում ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո։ 1880 թ. նոյեմբերի 20-ին Վանի ռուսական փոխհյուպատոսի պաշտոնակատարը Կ. Պոլսի ռուսական դեսպանին գրում էր. «Ինձ հասած բոլոր տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ թուրքական կառավարությունը որոշել է գաղտնի կերպով զինավարել Ուրեյդ-Ուլյայի ապստամբությունը, տալով նրան Թուրքիայի շահերին համապա-

[6] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 216։

[7] Տե՛ս Թուրսասանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Քաղարխիվ», 1881—1884, գ. 1625, թ. 3։

[8] ԴՔՔԱ, ֆ. «Քաղաքխիվ», 1888, գ. 1629, թ. 88։

ասախանող ուղղություն։ Իսկ նրա շահն Անատոլիայում... հանդիսանում է... քրիստոնյաների ճնշումը, հատկապես հայկական հարցի արմատական լուծելու»[9]։ Հրավիրելով գեներալի ուշադրությունն այն բանի վրա, որ սուլթանն արդեն պարզաբանել է չեխերին շքանշանով, ծխախոտի տուփով, նշանակել է թոշակ, ուզարկել է հատուկ մարդիկ Հերյուրի՝ այնտեղի բրդերին նրա շուրջը համախմբելու նպատակով և դեռ է բաժանում, փոխհատուցատուր նպրատակում էր, որ սուլթանը «խրախուսում է բրդերի մեջ երևան եկած նեգատիվ շարժումը»[10]։

Սակայն Արդուլ-Համիդը Արևմտյան Հայաստանում իր հայածչինչ քաղաքականության իրագործման ամենակարևոր միջոցներից մեկը տեսավ բրդական ցեղապետերի դեկավարությամբ «Համիդիեական գնդեր» (կրճատ՝ «Համիդիե») կազմակերպելու մեջ։ Նա այդ իրեան առաջ քաշեց տակավին 1880-ական թվականների բակրզրներին, բայց քաղաքական որոշ նկատառումներով՝ այն կենսագործեց 1890-ական թվականների սկզբներին։ Սուլթանը «Համիդիեական գնդերի» ստեղծման գործը հանձնարարեց Բուրքական բանակի IV կորպուսի հրամանատար Զաքրի փաշային (ազգությամբ չերքեզ), որին 1890 թ. ամռանը գործուղեց Արևմտյան Հայաստանի բրդաբնակ շրջաններ։ Զաքրի փաշան լինելով այդ վայրերում, բացատրեց աշիրեթապետերին կամ ցեղապետերին կառավարության նպատակները և հայտարարեց, որ բոլոր նրանք, ովքեր կմտնեն «Համիդիեի» մեջ, կատանան պաշտոն, պարգև, սոճիկ, թոշակ, կազատվեն մի շարք հարկերից ու տուրքերից, բանակում ծառայելու պարտականությունից, կազատվեն միայն զինվորական դատարանով, այն էլ՝ ռազմական պետի թույլատվությամբ և այլն[11]։

Եվ բրդական ցեղապետերը շտապեցին ցուցակագրվել «Համիդիեական գնդերում»։ Միայն Կարնո վիլայեթում ցուցակագրվեցին սիփկանի, դիլանի, կարափափախի-ատաջլի, կարափափախի-թաջանի, չամազանցի, ադամանի, հայդարանցի, հասանանցի և այլ ցեղերի առաջնորդները՝ իրենց զինակիցներով հանդերձ[12]։

1892—1894 թթ. Զաքրի փաշան կազմակերպեց «Համիդիեական գնդեր» նաև Տիգրանակերտի ու Խարբերդի վիլայեթներում,

9 ԲԱՔՊ, ֆ. «Դրասնություն», 1881, գ. 33, թ. 13։

10 Նույն տեղում, թ. 14։

11 Տե՛ս Р. И. Термен. Отчет о поездке в санджак Хеккиари Ванского вилайета в 1906 году, Тифлис, 1910, стр. 173.

12 Տե՛ս А. М. Пржевальский. Вилайет Эрзерум, Тифлис, 1904, ч. I, стр. 54.

հաղթելով նրանց թիվը 35-ի կամ 12.000—15.000 ձիավորների։ Նա «Համիդիեական գնդերը» պլանավոր հրամանատար նշանակեց 70-ամյա Իբրահիմ փաշային (կարափափախ ցեղից), իսկ պլանավոր շտաբը տեղավորեց Մանազկերտում[13]։

Արդուլ-Համիդը հայ ժողովրդի նկատմամբ վարում էր նաև ասիմիլյացիայի քաղաքականություն։ Այդ նպատակով նա մի կողմից՝ ստիպում էր հայերին ընդունել մահմեդականություն, իր կամակատարների միջոցով սպառնալով նրանց՝ «Թալամ եղեք, գազուրներ, եթե ոչ բոլորիդ պիտի չնչենք»[14], իսկ մյուս կողմից՝ հայերի գյուղերում բնակեցնում էր Բուրքերին, քրդերին, չեչեններին և մահմեդական այլ տարրերի։ Միայն երեք տարվա ընթացքում (1879—1882) նա Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերում բնակեցրեց ավելի քան 78.645 Բուրք[15]։

Արդուլ-Համիդի վարած այդ քաղաքականության հետևանքով հայ և մահմեդական աշխատավորների միջև առաջանում էր սուր թշնամություն, որը հաճախ ազգամիջյան բնդհարումների պատճառ էր դառնում։

Թուրքական սուլթանների կիրառած ազգային հալածանքները կայսրության համարյա բոլոր շրջաններում առաջ բերեցին մասսայական հուզումներ ու ապստամբություններ։ Այսպես. 1857—1860 թթ. Լիբանանում տեղի ունեցան գյուղացիական շարժումներ, որոնք սոցիալական խնդիրների հետ միասին՝ ձգտում էին լուծել նաև ազգային ազատագրության հարցերը։ 1866 թ. Կրետե կղզում բռնկվեց հույների ապստամբությունը։ 1875 թ. ապստամբվեցին Բոսնիան ու Հերցեգովինան, իսկ 1876 թ.՝ Բուլղարիան[16]։ Համարյա այդ նույն ժամանակաշրջանում հուզումներ առաջացան Լիբանում, Դամասկոսում, Սալոնիում, Տրիպոլիում և այլուր։ Ֆրանսիական մի ճանապարհորդ, խոսելով այդ հուզումների մասին, նշում էր. «Բուրքական տեսի ճնշումը ոչնչացնելու համար տարրերն բնդդիմված են համատեղ պայքարի անհրաժեշտության գաղափարներով[17]»։

13 Տե՛ս «Военный сборник», 1896, № 4, стр. 358—359.

14 «Մշակ», 1897, մարտի 1։

15 Վրացական ՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 545, ոպ. 1, գ. 2070, թ. 1, «Մասիս», 1880, սեպտեմբերի 8։

16 С. А. Никитин. Революционная борьба в Болгарии и Апрельское восстание («Освобождение Болгарии от турецкого ига», М., 1953).

17 Е. К. Саркисян. Экспансионистическая политика Османской империи в Закавказье, Ереван, 1962, стр. 42.

Թուրքական բռնակալության դեմ պայքարի գործս եկավ նաև հայ ժողովուրդը։ Դեռևս 1862 թ. Կիլիկիայում Զեյթունի հայերը, որոնք զանվում էին կիսաանկախ վիճակում, հրաժարվեցին կատարվարությանը հարկ վճարելուց։ Ազիզ փաշան մեծ զորքով պաշարեց նրանց և պահանջեց հնազանդվել։ Սակայն զեյթունցիները ոչ միայն չհնազանդվեցին, այլև արիաբար հետ մղեցին նրա գրոհները։ Զեյթունցիների հերոսական օրինակը երկար տարիներ ոգեշնչում էր հայ ժողովրդին և մղում նրան ազատագրական պայքարի։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ արևմտահայերը, հավատացած լինելով, որ Ռուսաստանի օգնությամբ կկարողանան բոթատել թուրքական լուծը, նորից սկսեցին պայքարել իրենց ազատության համար։ Նրանք ակտիվորեն մասնակցեցին թուրքերի դեմ մղվող մարտերին, չխնայելով ոչ իրենց կյանքը և ոչ էլ նյութական միջոցները։ Արևմտահայերը կազմեցին կամավորական ջոկատներ, ինչպես նաև թիկունքում ծավալեցին պարտիզանական կռիվներ և այդպիսով օգնեցին ռուսների առաջխաղացմանը։ Պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի ազատագրված մի շարք շրջաններից կազմվեց Կարսի մարզը և միացվեց Ռուսաստանին։ Միջազգային դիվանագիտությունը - խանգարեց Արևմտյան Հայաստանի նաև մնացած հողերի ազատագրմանը Ռուսաստանի օգնությամբ։ Բայց այդ հանգամանքը չընկճեց արևմտահայերի կամքը։ Նրանք շարունակեցին իրենց ազգային-ազատագրական պայքարը նաև ռուս-թուրքական պատերազմից հետո։ 1880-ական թվականներին բմբոստացան Վասպուրականի, Զեյթունի, Ալաշկերտի, իսկ 1890-ական թվականներին՝ Թուրքիայի հայաբնակ համարյա բոլոր շրջանների բնակիչները։ Արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ 1890-ական թվականների շարժումները հանդիսանում էին ամենահոյակը։ Նրանց շարժումն սկսվեց Սասունից 1894 թվականին և ավարտվեց Կոստանդնուպոլսում, 1896 թվականին։ Այդ երկու տարվա ընթացքում հայ ժողովուրդը ցուցաբերեց հերոսական պայքարի օրինակ և իր վրա հրավիրեց համաշխարհային ուշադրություն։ Վ. Ի. Լենինը ի թիվս առաջադիմական, ազատագրական այլ շարժումների, որոնք ուղղված էին ֆեոդալական բռնապետական կարգերի դեմ, նշում էր նաև 1890-ական թվականների հայկական շարժումները։ Նա գրում էր. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870 թվականների, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատե-

բազմի և հայկական հուզումների) ժամանակ, պատմական հերվոյինների հիմնական օբյեկտիվ բովանդակությունն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության ջղաձգումները»[18]։

Արդուլ-Համիդն անասելի դաժանությամբ ճնշեց հայկական շարժումները։ Նա կոտորում էր ապստամբներին, կտրում նրանց գլուխները, հանում աչքերը, կախում ծառերից ու ժայռերից, այրում կրակի վրա, կոտորում էր ամանակի սեռի ու հասակի խտրություն, թալանում հայերի ունեցվածքը։ Միայն 1890-ական թվականներին նա Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում բնաջնջեց շուրջ 300.000 հայ[19]։

Արդուլ-Համիդը չարդերից հետո Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում (Բագրեւանդում, Կարաքիլիսե գյուղում, Ուշքիլիսե վանքի մոտ, Մուշի ս. Կարապետ վանքում, Սասունի շատ գյուղերում և այլուր) հիմնեց զորանոցներ, պատրաստեց նրանց հետևել հայկական շարժումներին և խստությամբ ճնշել ըմբոստացման ամեն մի փորձ[20]։

Իմպերիալիստական պետությունները, որոնց հետ այնքան հույսեր էին կապել Թուրքիայի տիրապետության տակ բնակած ոչ թուրք ազգությունների բուրժուական կուսակցությունները, հատկապես դաշնակցական ավանտյուրիստները, ոչ միայն չխանգարեցին, այլև օգնեցին Արդուլ-Համիդին ազգային-ազատագրական շարժումները ճնշելու գործում։ Այսպես, 1866—1868 թթ., երբ Թուրքական դահիճներն արյան մեջ էին խեղդում Կրետե կղզու հույների ապստամբությունը, նրանց հետ միասին բնդդեմ հույների գործում էին անգլիական ռազմա-ծովային սպաները։ 1877—1878 թթ., երբ պատերազմ էր գնում Բուլղարիայի ազատագրման համար, Անգլիան բոնց Թուրքիային օգնելու և բուլղար ժողովրդի ազատագրումը խափանելու բացարձակ ուսակցիոն դիրք։ Անգլիական յորս առաջնակարգ զրահանավ մտան Նեղուցները և գործնական օգնություն ցույց տվին թուրքական ռազմա-ծովային ուժերին, իսկ

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 175։

19 Տե՛ս W. Totomjanz und E. Topschjan. Die Sozial-ökonomische Türkei. Berlin, 1901, էջ 211

20 Տե՛ս Ս. Հայկունի, Բագրեւանդ, Զրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894, մ. Ա, էջ 254։

Ամերիկայի Միացյալ Նահանգները մեծ բանակութեամբ գենք ու դինամիները մատակարարեցին Թուրքերին՝ բոլշևիկների դեմ կռվելու համար[21]։

Իմպերիալիստական պետությունները ոտնկոխեն դիրք բռնեցին նաև հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ։ Այսպես, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո, երբ Ռուսաստանի ու Թուրքիայի ներկայացուցիչները քննում էին Սան-Ստեֆանոյում հայկական պայմանագիր կնքելու հարցը, Գ. Գոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը դիմեց նրանց, պայմանագրում մտցնել համապատասխան կետ՝ Արևմտյան Հայաստանում ինքնավար իշխանության ստեղծելու մասին։ Ռուսաստանը բնդունեց պատրիարքի այդ առաջարկությունը, բայց Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան և եվրոպական մյուսած պետությունները բշնամաբար վերաբերվեցին։ Ավելին, նրանք պահանջեցին վերանայել Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և 1878 թ. հունիսի 13-ին Բեռլինում Բիսմարկի նախագահությամբ հրավիրված կոնգրեսում վերանայեցին այդ։ Այդ փոփոխությունները շատ բանով զրկեցին Ռուսաստանին նրա հաղթանակի պտուղներից, իսկ հայկական հարցը վերջին կոնկրետ հնարավորության տակ և այդպիսով փակեցին նրա լուծման ռեալ հնարավորություններ։ Նրանք փաստորեն հայ ժողովրդին զոհաբերեցին իրենց քաղաքական նպատակների համար։

Իմպերիալիստական պետությունները բշնամական դիրք բռնեցին նաև հայ ժողովրդի 1890-ական թվականների ազատագրական շարժումների նկատմամբ։ Ճիշտ է, խոսքով քաղաքական ու պետական որոշ գործիչներ (հատկապես անգլիական լորդերը) արտահայտվում էին հայերի օգտին, անգամ պատասխանում մարգարտյական ձևով, բայց գործով օգնում էին Թուրքերին՝ հայկական շարժումները ճնշելու գործում։ Հանրահայտ է, որ Արևմտյան Հայաստանի քաղաքներում նստած անգլիական ու ֆրանսիական հյուպատոսներից ոմանք դեկավարում էին Թուրքերի ինդնոսպանչական ամբոխահոսմներն ընդդեմ ինքնապաշտպանության դիմած հայերի[22]։ Իսկ գերմանական իմպերիալիստները, նպատակ ունենալով Թուրքիան դուրս բերել Անգլիայի ու Ռուսաստանի ազդեցությունից և վերցնել իր ազդեցության տակ, հայկական կոտորածների ժամանակ բացահայտորեն կանգնեցին Աբդուլ-Համիդի կողմը։ Նրանք այդ կոտորածների մեղքը բարդում էին հենց հայերի վրա։

1890-ական թվականների հայկական ազատագրական շարժումների նկատմամբ բշնամական դիրք բռնեց նաև Ռուսաստանը։ Ռուսական պետական ու դիվանագիտական որոշ անձինք այդ շարժումները համարում էին միապետության հեղափոխության մի մասը և պահում էին, որ դրանք անհրաժեշտ է ճնշել իրենց սրզանդում[23]։

* * *

Թուրքական սուլթանները, վարելով հայատյաց և հայաջինջ բազաքականություն, XIX դարի երկրորդ կեսին փոփոխեցին Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը մի քանի անգամ և ամեն անգամ այն նպատակով, որ մահմեդականներն համարյա ամենուրեք կազմեն մեծամասնություն։ Այսպես, 1860-ական թվականներին Արևմտյան Հայաստանի մեծ մասը մտնում էր Կարնո, իսկ մնացած մասերը՝ Սերաստիայի և Տիգրանակերտի վիլայեթների մեջ[24]։

1876 թ. Կարնո վիլայեթների ընդարձակ տերիտորիան բաժանվեց Կարնո, Վանի, Հեքյարիի, Բաղեշի, Դերսիմի, Կարսի և Զրլղրի վիլայեթների։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսն ու Զրլղրն անցան Ռուսաստանին, իսկ մնացած տերիտորիան բաժանվեց Կարնո, Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզի), Դերսիմի, Բաղեշի, Վանի, Հեքյարիի, Սերաստիայի և Տիգրանակերտի վիլայեթների[25]։

Թուրքական կառավարությունը 1880 թ. Դերսիմը միացրեց Խարբերդի վիլայեթին, իսկ 1888 թ. Հեքյարին՝ Վանի վիլայեթին։ 1897 թ. նա Արևմտյան Հայաստանի վարչական բաժանման մեջ նորից մտցրեց որոշ փոփոխություններ (մի վիլայեթից որոշ կազաներ ու նահիներ անջատեց և միացրեց հարևան վիլայեթին կամ կազա-

---

21 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 299, 328։

22 Նույն տեղում, էջ 319—320։

23 **Е. К. Саркисян.** Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957, стр. 113—127.

24 *Տե՛ս*, ԻԱՔՌ, ֆ. Կղեմավոր արխիվ, V—Ա շ., 1874, գ. 1086, քք. 22—23։

25 *Տե՛ս* **А. И. Гиппиус.** Статистические таблицы вилайетов Турецкой империи, прилежащих к Закавказью, Тифлис, 1889, стр. 11—14.

Վիլայեթներ	Տարածությունը (քմ.)	Բնակչությունը (երկու սեռ)	Առանձնահատկությունները	Կազմավորությունները
Վ ա ն	39.300	379.800	Վան Հեքյարի	Վան, Կոշկիան, Գավաշ, Բերկրի, Մակո, Մամռավորի, Շատախ, Ադիլջևազ և Արճեշ Հեքյարի, Բերկ-ուշ-Շատապատ, Զուլամերկ, Գավաս, Շամգինան, Մամռավորի-ուշ-Չամիրք
Բաբերդ	49.700	645.700	Բաբերդ Երզնկա Բայազետ	Բաբերդ, Բաբերդ, Բասեն, Բրզի, Ինչիան, Կիսկիմ, Թորթում, Սպեր, Նաժրվան և Քեսուն Երզնկա, Կամախ, Ինֆիլիկ, Ջանասչայ և Բայմեր Բայազետ, Թիգրին, Կաթաբերիան, Ալաշկերտ, Ալշիման
Բագիշ	27.100	398.700	Բագիշ Մուշ Սպերդ Գինջ	Բագիշ, Ռեզան (Ախլաթ), Արզան և Մահկան Մուշ, Մանազկերտ, Բուլանըխ, Չապրտ և Մասուն Սպերդ, Էրզեն, Բերդավեր, Խարզան և Շերվան Ճապաղջուր և Ռուֆի
Սեբաստիա	83.700	900.000	Սեբաստիա Ամասիա Կարահիսար (Կարահիսար շարկի) Թոքաթ կամ Եվզոնիա	Ագիսին, Սեբաստիա, Բյուրնանա-Համիդիե, Թոնուս, Հաֆիր, Գունկիրի, Տիվրիկի, Տաբնաուե, Կոտըրին և Ույղուլի Ամասիա, Ամասիա, Վեզիր-Քյոփրիվ, Մերզիֆոն-յուկարի, Լաուկի, Հավզա, և Խուժուր-Համիդ, Սամանդրակ Մուշխեր, Համիդիե, Կոյուլհիսար, Ավմենբե, Շապին-Կարահիսար Արդա, Զիլե, Թոքաթ, Նիքսար Արտակիր, Կապան-Մագնեսիա, Էնին
Տարբերդ	32.900	575.200	Տարբերդ Մալաթիա (Մելիտենե) Դիադին	Տարբերդ և Բեհեսնի Հյուսեյն-Մանսուր, Մալաթիա, Պեհեսնի, Ադյա-Խոզ Քաթիե Մանազկերտ, Ռոշտա, Զարանդ-ջակ, Զմշկածագ, Ղզըլ-Քիլիսե և Օվաջըզ
Ջեյրան-Նախիջևան	37.500	471.500	Ջեյրանախիջևան Մարգին Ալզոի-Մագեն	Սեվերեկ, Սիլվան, Լիճե, Ջերիք, Բեշիրի և Ջեյրանախիջևան Մարգին (Նիսիպին), Զնգերե, Մերզիման, Ամիե, Մարգին Բալու, Զեբմուկ Ալզոնի

յին[26], որից հետո XIX և XX դարերի սահմանագլխին նրա վարչական բաժանումը հետևյալ պատկերն էր ներկայացնում[27]։

Այս ամփոփակը ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանը կազմում էր 260.200 քառ. կմ.։ Եթե դրանից հանենք 60.200 քառ. կմ. (պայմանականորեն ընդունելով, որ այն հանդիպանում էր պատմական Հայաստանի մեջ չմտնող Ամասիայի և Թոքաթի սանջակները, Մծբինի և Զեզիրեի կազմերը, ինչպես նաև Հեքյարի սանջակի հարավ-արևելյան մասերը), ապա կմնա մոտ 200.000 քառ. կմ., որը ավելի բնդարձակ է, քան Անդրկովկասը և մոտ յոթ անգամ մեծ, քան այժմյան Հայաստանը[28]։

Բերված ամփոփակը այնուհետև ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանում մեկ քառ. կմ.-ի վրա ապրում էր միջին հաշվով 14,9 մարդ, մինչդեռ՝ Կ. Պոլսի վիլայեթում՝ 22 մարդ, Բաղդադի վիլայեթում՝ 7 մարդ, Մոսուլի վիլայեթում՝ 4 մարդ, Բասրայի վիլայեթում՝ 3 մարդ, Սիրիայում՝ 8 մարդ և այլն։ Այդ նշանակում է, որ Արևմտյան Հայաստանի բնակչության խտությունը Թուրքիայի հպրոցական մասի համեմատությամբ նոսր էր (նոսր էր հատկապես նրա լեռնային շրջաններում), իսկ հարավ-արևելյան մասի համեմատությամբ՝ խիտ։ Ուրեմն նա բնակչության խտությամբ կայսրության մեջ գրավում էր միջին տեղերից մեկը։

Աղյուսակը, վերջապես, ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանի վիլայեթները բաժանված էին սանջակների, սանջակները՝ կազաների, իսկ կազաները՝ նահիեների, որոնց անունները տեղ ազգության պատճառով չենք թվարկում։

Արևմտյան Հայաստանի վարչական այդ բաժանման համաձայն էլ սահմանված էր նրա կառավարումը։ Վիլայեթը կառավարում էր վալին կամ գեներալ-նահանգապետը, սանջակը ղեկավարում էր մութասարիֆը (գավառապետը), կազան՝ կայմակամը (գավառակապետը), նահիեն՝ մյուդիրը (տեղամասի պետը), իսկ գյուղը՝ մուխթարը կամ ռեսը (գյուղապետը)։ Այդ կառավարիչներից յուրաքանչյուրն իր տրամադրության տակ ուներ զանազան պաշտոնյաներ, որոնցից մեկը հանդիսանում էր մահմեդական շարիաթի դատա-

---

28 *Տե՛ս* А. М. Пржевальский. Вилайет Эрзерум, Тифлис, 1904, ч. 1, стр. 6—9.

27 *Տե՛ս «Ընդարձակ տեղեկություն ս. Էջմիածնի հիմնադրության հարց 1903 թ.», Կ. Պոլիս, էջ 187—190.*

28 *Սովետական Հայաստանի տերիտորիան կազմում է 29.800 քառ. կմ. (տե՛ս «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ատլաս», Երևան—Մոսկվա, 1961, էջ 2)։*

բանի նախագահը (կադին կամ նայիբը), մյուսը՝ ֆինանսական մասի վարիչը (դեֆթեդարը), երրորդը՝ դրամագլխի պահոց (մեՒրթաբե-ջին), չորրորդը՝ շարիաթի մենկնաբանը (մուֆթին). հինգերորդը՝ ատոիկանական ու մանդատմական բաժնի պետը, վեցերորդը՝ հո-դային բաժնի պետը, յոթերորդը՝ անձնագրային բաժնի պետը և այլն։ Բացի դրանից, կային նաև վարչական խորհուրդներ (մեջլիս իդարեի), որոնք բնտրվում էին բնակչության կողմից և քննում պե-տական հարկերի ու տուրքերի, եկամուտների ու ծախսերի, հան-քերի ու առևտրի, երկրագործության ու անասունների, բնակչության առողջության ու կրթության, անդորրի ու հավատափոխության վի-ճարկելյալ հարցերը։ Այդ խորհուրդները բաղկացած էին 4 հոգուց, երկուսը մահմեդականներից, իսկ երկուսը՝ քրիստոնյաներից և ընտրվում էին տարին կամ երկու տարին մեկ անգամ՝ հարուստ և ազդեցիկ մարդկանցից[29]։

Թուրքական բյուրոկրատական այդ ապարատն իր սուր ծայրով ուղղված էր աշխատավոր մասսաների դեմ։ Դրանում համոզվելու համար բավական չի պատկերել միայն կառավարման ապարատը, անհրաժեշտ է գիտենալ նաև թե ովքեր, ինչ ճանապարհներով էին զբաղեցնում այն և ինչպես էին աշխատում։

Սուլթանները թանգիմաթով թեև հայտարարեցին բոլոր ազ-գությունների իրավահավասարություն, բայց գլխավոր պաշտոն-ներում առաջվա նման շարունակում էին նշանակել մահմեդական-ներին։ 1881 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Շատ անգամ Մշո մուտեսարիֆության կոչված անձն անհարմար և զեղծ պաշտոնա-տար մը կը լինի. նա միշտ իսլամ կրոնն է. քուրդ ալ հաճախ կա-ռավարական բարձր պաշտոններու կը կոչվին։ Հայը չեն կոչվիր այս կարգի պաշտոններու, թեև իրենց մեջ հարմարագույն մարդիկ կը գտնվին»[30]։

Նույնիսկ մյուրիրը, որը, բստ 1880 թ. օրենքի, պետք է ըն-տրվեր ավյալ նահիյում գերակշռող ազգությունից, դարձյալ նշա-նակվում էր մահմեդականներից։

Կ. Պոլսի բարձր ատեհանավորները պաշտոնները ուղղակի դարձրել էին իրենց համար եկամտի աղբյուր, սակիկուլյացիայի առարկա նրանք համարյա բոլոր պաշտոններում նշանակում էին

[29] Վարչական կառավարման մասին մանրամասն տե՛ս ԻԱՔԱ, ֆ. «Դիվանավոր արխիվ V—Ա», 1874, գ. 1086, քք. 24—27, А. М. Пржевальский, Указанное сочинение, стр. 11—28.

[30] «Մասիս», 1881, օգոստոսի 12։

այն անձանց, ովքեր շատ էին տալիս կաշառք, ոտնահարելով ան-գամ իրենց կողմից սահմանված որոշ բնաբույթյունները։ 1880 թ. նոյեմբերի 11-ին Վանի ռուսական փոխհյուպատոսի ժամանակա-վոր պաշտոնակատարը հաղորդում էր, որ բստ օրենքի մյուդիրները պետք է պատկանեն նոր սահմանված վարչական միավորման մեջ գերակշռող ազգությանը։ Բստ Քնդրեայի այդ միջոցառումը պետք է պաշտպանի այստեղի քրիստոնյա բնակչությանը՝ թուրքական ոտնձգությունների հետևանքով չարաշահումներից և քրդերի թալանից։ Բայց պետք է լինել զգուշավոր՝ հետևում, որպեսզի համոզվել, որ բարեփոխումը դառն նշված միջոցառումը... ոչ միայն չի բարելա-վում տեղացի հայերի վիճակը, այլ ընդհակառակը՝ ավելի է վա-տացնում այն... Թուրքերը գործադրում են ամեն մի ջանք, որպեսզի մյուդիրները նշանակվեն մահմեդականներից որքան հնարավոր է շատ։ Այդ վերակառուցումը (ազսոնքն՝ մյուդիրի պաշտոնի ոտնձա-նումն ու նրա նշանակումը — Ա. Հ.) առաջ բերեց բացարձակ ոտե-ատ՝ մի կողմից տեղական ազդեցիկ մարդկանց ու տրմինհոտար-յուների, իսկ մյուս կողմից՝ մյուդիրի պաշտոնը ձեռք բերողների միջեւ։ Այդ առևտուրը տեսի է ունենում այնպես բացահայտ, որ չի կարելի չհամեմատել այստեղի բնաբական արարողությունը ա-ճուրդի հետ։ Դրա հետևանքով մյուդիրի պաշտոնում նշանակվել են մեծ մասամբ անընդունակ կամ բարոյապես անարժան անձինք»[31]։

Իշխանությունները բստ նշված հատկանիշների էին նշանակում նաև մուխթարին, որը օրենքով նույնպես ընտրվելի էր[32]։

Օսմանյան տրմինհոտարցիայում և պատասխանատու բա-ցարձակապես իշխում էին բռնությունն ու կամայականությունը, կա-շառակերությունն ու խարդախությունը, թուրքական պլանդակ շովինիզմը։ Դատարանը չէր ընդունում քրիստոնյայի տված վկայությունը, եթե մեզադրվողը մահմեդական էր, բայց հա-կառակ դեպքում ընդունում էր, եթե մահմեդականը նույնիսկ զբո-պատիր[33]։ Համարյա յուրաքանչյուր քաղաքում կային հատուկ

[31] ԻԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1880, գ. 1566, թ. 28։

[32] Է. Մագդասյանը գրում էր, որ բստ օրենքի «մուխթարին տպաք է քնե-րեն իրանք գյուղացիք իրանց միջից, բայց այդ տպաք է»-ն նշանակություն է. և մուխթարը նշանակվում է մյուդիրից (տե՛ս նրա «Հյ բյուրքաց Հայաստա-նեն», Թիֆլիս, 1890, էջ 77)։

[33] Մի հաղորդման մեջ ասվում էր. «Մահմեդական մը կրնա գրպարտել ոչ մահմեդական մը և վկաներու ունկնդրությամբ դատը գատապարտել ասոր, եթե քրիստոնյան ատյճ մահմեդականեն տանկոնց մահմեդականը չեն երթար վկա-յելու, ոչ մահմեդականին վկայությունն ալ չընդունիր, զատ ինքնին կը նսրսվի» («Մասիս», 1871, հոկտեմբերի 30)։

մահմեդականներ, որոնք փողով վկայության էին տալիս։ Նրանք պատրաստ էին վկայելու ո՛չ միայն չտեսածի այլ նաև լսածի մասին։ Այդ մարդիկ հանդիսացած էին բոլորին, նույնիսկ դատավորին։ Բայց չնայած դրան, դատավորները նրանց տված ցուցմունքներն ընդունում էին որպես ճշմարտություն։

Դատարաններում փաստերին գործի ելքը կախված էր այն բանից, թե ո՛վ կկարողանար ներգործել դատավորի վրա, ով ում էր մեղադրում, ով էր շատ կաշառք տալիս պաշտոնյաներին և դատավորներին։ Հոդվածը գրում էր. «Ինձ թվում է, որ դատարանների հեղինակությունը երբեք այնպես ընկած չի եղել և դատական պաշտոնյաները այնպես վաճառված ու ապականված չեն եղել, ինչպես այժմ (իմա՝ 1880—1890-ական թվականներին — Ա. Հ.)։ Կաշառակերությունը բացահայտ ու ամոթի թագավորում է վերից մինչև ներքև... շատ տեղերում բանտարկյալն ազատում է ամբաստանողը... հասարակ հրամանը կարող է անմեղին բանտարկել մի քանի ամսով, հանցագործները, ամեն տեսակ ճնշումը և անպատժելիությունը մնում են անպատիժ»[34]։

Ուշագրավ է, որ բնակիչները՝ թե՛ մահմեդականները և թե՛ բրիստոնյաները, տեսնելով դատարանների կեղծիքներն ու խարդախությունները, գերագասում էին իրենց միջև եղած վեճերը լուծել գյուղի ծերերի կամ արդարադատ հարևանների օգնությամբ։ Կարսի նահանգապետը, անդրադառնալով դատարանների գործունեությանը մարզում Թուրքիայի տիրապետության տարիներին, գրում էր, որ նրանք «չեն օգտվել ժողովրդի համակրանքից, որի հետևանքով առանձնապես քաղաքացիական գործերի հսկայական մասը երբեք չի հասել թուրքական պաշտոնական դատարաններին, այլ վճռվել է մասնավոր մարդկանց կողմից, որոնք հայտնի են եղել ժողովրդի մեջ իրենց ազնվությամբ ու բարեխղճությամբ»[35]։

* * *

Արևմտյան Հայաստանը բազմազգ երկիր էր, որտեղ բացի հայերից ապրում էին նաև քրդեր, թուրքեր, ասորիներ, հույներ, պարսիկներ, չեչեններ, չերքեզներ, արաբներ, հրեաներ և այլն։ Հայերն

[34] **М. П. Роллен Жекмен.** Армения, армяне и трактаты, перевод с французского, о-ха, М., 1896, стр. 80.

[35] Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1888 г., Карс, 1890, стр. 94.

ու ասորիները հանդիսանում էին երկրի ամենահին բնակիչները, պարսիկներն ու հույները եկել էին դեռ հին և միջին դարերում. երբ Հայաստանը ընկել էր Բյուզանդիայի ու Պարսկաստանի տիրապետության տակ, քրդերը հաստատվեցին X—XI դարերում, հատկապես XIX դարում ու XX դարի սկզբին, թուրքերը՝ XIII—XIV դարերում, իսկ չերքեզներն ու չեչենները՝ XIX դարի երկրորդ կեսին, Արևելյան պատերազմից հետո։

Այն հարցին, թե որքան էր այդ ժողովուրդներից յուրաքանչյուրի թիվը, հնարավոր չէ տալ ճշգրիտ պատասխան, քանի որ Թուրքիայում, ինչպես ասվեց, չի տարվել գիտական հիմունքներով կազմված մարդահամար։ Սակայն աղբյուրներում և գրականության մեջ կան երեք կարգի վիճակագրական տեղեկություններ՝ թուրքական պաշտոնական, հայոց պատրիարքարանի և եվրոպական հեղինակների։

Համաձայն թուրքական պաշտոնական տվյալների 1870-ական թվականներին, այսինքն՝ ռուս-թուրքական պատերազմի նախօրեին Ասիական Թուրքիայում (ոչ միայն Արևմտյան Հայաստանում) կար 17.216.000 մարդ, որից 3.600.000-ը՝ հայեր[36]։

Պաշտոնական այս տվյալները, չհամարելին, որ 1880 թ., այսինքն՝ ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո, երբ միջազգային գիվանագիտության մեջ քննության առարկա դարձավ հայկական հարցը, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրությունը հայտարարեր, թե Արևմտյան Հայաստանում կա ընդամենը 780.800 հայ, որոնք կազմում են ամբողջ ազգաբնակչության 17%-ը[37]։

Թուրքական տվյալներից օգտվելով, ֆրանսիացի հեղինակ Վիտալ Քինեն դուրս էր տալիս նույնիսկ, որ 1880-ական թվականների վերջերին Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում կար ընդամենը 666.435 հայ[38]։

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի բերած ոչ լրիվ տվյալների համաձայն, 1878 թ. Թուրքիայում կար 2.660.000 հայ, որից

[36] Ի գեպ՝ Մկրտիչ-բեյ Դադյանը, որն իր տվյալները վերցրել էր նույնպես «տեղեկություններից», նշում էր, որ Թուրքիայում 1860-ական թվականներին կար 3.400.000 հայ (տե՛ս Мкртич-бей Дадиан. Армяне Оттоманской империи, Тифлис, 1878, стр. 8).

[37] **М. П. Роллен Жекмен.** Указанное сочинение, стр. 94, 101.

[38] **А. А. Аракелян.** Статистика армянского населения Малой Азии («Известия Кавказского отдела императорского русского географического общества»), Тифлис, 1914, т. 22, вып. 2-й, стр. 123.

1.630.000-ը Արեւմտյան Հայաստանում, իսկ մնացածը՝ կայսրության այլ վայրերում։ Հայերը Արեւմտյան Հայաստանի վիլայեթներում տեղաբաշխվում էին հետեւյալ կերպ[39].

Տիգրանակերտի վիլայեթում	-	150.000	մարդ
Վանի	»	- - - 400.000	»
Բագեշի	»	- - - 250.000	»
Կարնո	»	- - - 280.000	»
Խարբերդի	»	- - - 270.000	»
Սեբաստիայի	»	- - - 280.000	»
Ընդամենը	-	1.630.000	մարդ

Ինչ վերաբերում է ռուսական հյուպատոսներին և փոխհյուպատոսներին, ապա նրանք Արեւմտյան Հայաստանի ազգաբնակչության մասին խոսելիս, ինչպես ասվեց, վերցնում էին լեհհանրապետ Վ. Քինեի և մասամբ՝ թուրքական պաշտոնական «սալնամեների» տեղեկություններից։

Վերլուծելով բերված այդ տվյալները, ամենից առաջ պետք է նշել, որ դրանք բոլորը միատեսակ են։ Թուրքական կառավարությունը ռուս-թուրքական պատերազմից առաջ արհեստականորեն մեծացնում էր հայերի թիվը՝ նրանցից շատ հարկեր ու տուրքեր հավաքելու, իսկ հետո՝ աշխատում էր փոքրացնել այն՝ հայկական հարցը միջազգային դիվանագիտության քննությունից հանելու նպատակով։

Վեհաղ Քինեն իր տվյալները վերցրել էր հիմնականում թուրքական «սալնամեներից» և ուղղակի թե անուղղակի կերպով արտահայտում էր թուրքական կառավարության միտումնավորությունը։ Իսկ ռուսական հյուպատոսները և փոխհյուպատոսները, կառչելով Վ. Քինեի տվյալներից, աշխատում էին ապացուցել, որ հայերն Արեւմտյան Հայաստանում կազմում են շնչին փոքրամասնություն և Թուրքիայի նման ձգտում էին հայկական հարցը հանել միջազգային դիվանագիտության։ Փոխգնդապետներ Զելենը, Միռոնեը և կարցեր Քինեի տվյալների հիման վրա 1895 թվականին գծեցին Արեւմտյան Հայաստանի ազգաբնակչության քարտեզը, որով ցույց էին տալիս, որ մահմեդականները, մանավանդ սելջուկները կազմում են բնակչության ճնշող մեծամասնություն, հա-

[39] Տե՛ս «Արարատ», 1914, էջ 136։

յերը՝ աննշան փոքրամասնություն[40]։ Իսկ ռուսական մյուս հյուպատոսներն ու փոխհյուպատոսները, զեկուցագրերով ցարիզմի գաղութային ու շովինիստական քաղաքականությանը, ուղարկում էին բարեհաճ վրաչք ջնջել Հայաստան անունը և փոխարինել այն Քրդստանով։ Կարնո ռուսական գլխավոր հյուպատոս Պ. Ի. Ավերյանովը գրում էր. «Հայաստան» անունը այդ շրջանի բնակչության ցեղային կազմով չի արդարացնում իրեն։ Այն ազգագրական մեծ հիմքով կարելի է անվանել «Քրդստան»[41]։

Ինչ վերաբերում է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի բերած տվյալներին, ապա պետք է նշել, որ դրանք թերի են, նախ այն պատճառով, որ պատրիարքարանի կողմից գործուղված անձինք ուսումնասիրել են հայկական վիլայեթների ոչ բոլոր շրջանները և ապա հայ գյուղացիներն ու քաղաքացիները, վախենալով, թե կառավարությունը կարող է բարձրացնել հարկերն ու տուրքերը, թիչ են ցույց տվել իրենց բնաանիքների անձնակազմը[42]։

Նման հանգամանքներում Արեւմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմը կարելի է որոշել միայն մոտավորապես։ Բայց դրա համար, կարծում ենք, պետք է վերցնել մինչև 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմով նոած տվյալները, երբ հայկական հարցը տակավին չէր առացել քաղաքական սուր բնույթ և շահագրգռված կողմերը, հատկապես թուրքական կառավարող շրջանները, տրամադրված չէին այդ տեսանկյունից կեղծելու հայերի թիվը։ Իսկ համաձայն այդ տվյալների, ինչպես արդեն ցույց տրվեց, Թուրքիայում 1860—1870-ական թվականներին կար 3.400.000—3.500.000 հայ, որից մոտ 3.000.000-ը՝ Արեւմտյան Հայաստանում։

Նկատի ունենալով այն փաստը, որ իշխանությունները այդ տարիներին ֆիսկալ նպատակներով արհեստականորեն մեծացրել են հայերի թիվը և պայմանականորեն բնդունելով, որ նրանք մեծացրել են այն մոտ կես միլիոնով, կարելի է ենթադրել, որ 1860-ական թվականներին Թուրքիայում կար մոտ 3.000.000 հայ[43], որից 2.500.000-ը՝ Արեւմտյան Հայաստանում։

[40] «Записки кавказского отдела императорского русского географического общества», книжка 18, Тифлис, 1896, приложение.

[41] П. И. Аверьянов. Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи. СПб. 1912, 1912, стр. 17.

[42] Կարնո վիլայեթի 1907 թ. նյութ էր. տանջալու տարի անցկացրած մարդահամարից պարզվեց, որ հայերը գոյի տակտով թաքցրել են հոգիների թիվը (ՕԱՔՔ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1907, գ. 2615 բ, թ. 33)։

[43] Տե՛ս «Մշակ» 1867, հոկտեմբերի 14։

Հայերը հաստատված 1860—1870-ական թվականներին կազմում էին Արևմտյան Հայաստանի բնակչության մեծամասնությունը, նրանցից հետո զգալի թիվ էին կազմում քրդերը, իսկ այնուհետև Թուրքերը։ Անգամ Կաուլլ Մակ Կոանը 1870-ական թվականներին նշում էր, որ հայկական վիլայեթներում հայերը «պահպանում են իրենց թվական գերազանցությունը Թուրքերի և Թուրքմենների նկատմամբ»[44]։

Ինչ վերաբերում է մյուս ազգություններին, ապա նրանք խիստ փոքրաթիվ էին. բավական է նշել, որ ասորիները, որոնք ավելի շատ էին, քան հույները, պարսիկները, չերքեզները, հրեաները ու այլոները միասին վերցրած, 1903 թ. կազմում էին մոտ 90.000 մարդ[45]։

Սակայն Աբդուլ-Համիդի վարած թալանչական քաղաքականության հետևանքով հայերի թիվը Արևմտյան Հայաստանում հետագա տասնամյակներում, այսինքն՝ ռուս-Թուրքական պատերազմից հետո սկսեց արագորեն նվազել։

Հայ ժողովուրդը, չդիմանալով Համիդի ահեղիմին, ստիպված Թողնում էր հայրենիքը և գաղթում Ռուսաստան, Ամերիկա, Ֆրանսիա, Գերմանիա, Ռումինիա, Բուլղարիա, Հունգարիա, Լեհաստան և այլ երկրներ։ Հայերն ուղղակի փախչում էին Թուրքական գերությունից, փախչում էին իրենց գոյությունը փրկելու և մարդկային արժանապատվությունը պաշտպանելու համար։ Նրանց արտագաղթի հետևանքով գատարկվում էին ո՛չ միայն գյուղերը, այլև գավառակները։ Այսպես, Աղլխվազի 18 գյուղերում 1895—1896 ԹԹ. կոտորածներից առաջ կար 645, իսկ 1898 թ. մնաց 335 տնտեսություն։ Արճեշի 20 գյուղերում կոտորածներից առաջ կար 919, իսկ 1898 թ. մնաց 291 տնտեսություն։ Այդ կաղանների որոշ գյուղերը բոլորովին ամայացան[46]։

Հայերի բախտը վիճակվեց նաև ասորիներին, որոնք ստիպված Թողնում էին իրենց հայրենիքը և նույնպես արտագաղթում։

Թուրքական կառավարությունը արտագաղթած ու արտաքսված հայերի ու ասորիների փոխարեն բնակեցնում էր Թուրքերին, քրդերին, չեչեններին և չերքեզներին։

---

44 Կարլայլ Մակ-Կոան. Наш новый протекторат. Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии, М., 1884, стр. 103.

45 Տե՛ս «Մուրճ», 1904, № 4, էջ 35։

46 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1898, գ. 1584, թթ. 33—33, 37—38։

Ա-դան 1909 թ. արձանագրում էր. Վանի վիլայեթի Խոշաբ և Ոստան գավառներում սկես զար առաջ ապրում էին բանական թվով հայեր, այժմ... նրանց տեղը բռնել են... քուրդ տարրերը»։

Հայոց ձորում, «Քրդերը սկան հաստատվելուն զուգահեռ 1896 թ. կատարածներից հետո»[47]։

Բագեշի վիլայեթի Բուլանըխ կազատից «հայերը շարունակ գաղթել են, իսկ նրանց տեղը սկիզ բռնել են քրդերը»[48]։ Մուշի գավառի 21 գյուղերում 1889 թ. կար 117, իսկ 1909 թ.՝ արդեն 554 քրդական տնտեսություն[49]։

Կարնո վիլայեթի Խնուս տանջակը կոտորածներից առաջ «բազմահազ գավառներից մեկն էր... այժմ... քանի-քանի հայ տուն կրող... վայրերի մոտով գալիս ու անցնում եք առանց հայի երես տեսնելու։ Անցնում եք այդ ամայի գավառներով, տեսնում հին-հին հիշատակներ և ձեղ թվում է, որ մի հնձող ձեռք անվերջ հնձում է այդ աշխարհը։ Եվ իսկապես, կյանքը այնտեղ հնձվում է. Հանապարհի կողքերին հաճախ պատահում եք քարակույտերի... [որոնցից] յուրաքանչյուրը վկայում է մի տպավորության, մի եղեռնագործության մասին, տեսնում եք այդ բոլորը և ամրաստված շտապում եք ժամ առաջ հեռանալ այդտեղից։ Այդպիսի բոպեներ ահա դուք ապրում եք անվերջ այդ երկրի ճանապարհորդության միջոցին»[50]։

Թուրքական սուլթանների վարած ազգային քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում ոչ միայն պահպանցնում էր հայերի թիվը և մեծացնում մահմեդականների քանակը, այլև արդելակում էր ազգային հարաբերությունների զարգացումը և բարձրացնում երկրի արտադրողական ուժերը։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԵՈԴԱԼՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես մուսուլմանական արևելքի մի շարք երկրներում, նույնպես և Թուրքիայում հողը իրավաբանորեն պատկանում էր աստծուն, իսկ երկրում՝ նրան փոխարինող սուլթանին։ Կ. Մարքսը նշում

---

47 Ա-դո, Վանի, Բիթլիսի և Հրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 15, 54։

48 Նույն տեղում, էջ 145։

49 Նույն տեղում, էջ 104—106։

50 Նույն տեղում, էջ 183։

էր, որ Արևելքում հողի գերագույն սեփականատերը պետությունն է, «Երիշխանությունն այստեղ ազատային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականություն էր։ Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականություն չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրումն ու օգտագործումը»[1]։

Սուլթանը տակավին միջնադարում նվաճած հողերի մի մասը պարձնում էր իաս, որը պահում էր իր և իր ընտանիքի համար կամ տալիս պետական ու զինվորական բարձր աստիճանավորներին՝ նրանց ծառայության դիմաց։ Խասը ֆեոդալական բենեֆիցիայի տիպին պատկանող հողային տիրույթ էր, ընդ որում խոշոր հողային տիրույթ, նրա տարեկան եկամուտը բարձր էր 100 հազ. ակչայից[2]։ Այն ազատ էր պետական հարկերից ու տուրքերից։ Եթե որևէ մեկը դառնում էր սուլթանին ծառայելուց, ապա խասը վերցվում էր ու տրվում ուրիշին։

Սուլթանը նվաճած հողերի մյուս մասը զեամեթի և թիմարի[3] իրավունքով տալիս էր սիփահիներին, այսինքն՝ զինվորականներին։ Այդ երկու տիրույթներն իրարից տարբերվում էին իրենց մեծությամբ ու եկամտաբերությամբ. թիմարի տարեկան եկամուտը հասնում էր 3—20 հազար, իսկ զեամեթները՝ 20—100 հազար ակչայի[4]։ Ի տարբերություն խասի, զեամեթն ու թիմարը հարկվում էին։ Նրանց տերերը պարտավոր էին կատարելու զինվորական ծառայություն, հավաքելու պետական հարկերն ու տուրքերը, սուլթանի աշխարհազորի համար տալու որոշակի թվով զինվորներ և այլն։

Սիփահիները կարող էին ժառանգել իրենց տիրույթները, բայց եթե նրանց որդիներն անընդունակ էին լինում զինվորական ծառայության, տիրույթները տրվում էին ուրիշների[5]։

Սկզբում օրենքով սիփահիներին չէր թույլատրվում ունենալ մեկ լենից ավելին, բայց հետագայում, սկսած մանավանդ XVI—XVII դարերից, նրանք ձեռք են բերում այդ իրավունքը և սի-

1 Կ. Մարքս, Կապիտալ, հրեան, 1949, հ. 3, մ. 2, էջ 329։

2 Ակչա-գրամական միավոր էր, որը XVII դարում=6—7 կոպեկի։

3 Զեամեթ և թիմարի բրամներ Թուրքիայում նույն էր, ինչ չեխի իրավիճքը նվիրագործում։

4 Տե՛ս «Большая советская энциклопедия», т. 42, 2-е издание, стр. 428.

5 Տե՛ս Д. Бакрадзе. Исторический очерк туренкой системы земледадения. Тифлис, 1889, стр. 8.

րանում երկու-երեք և ավելի լեներ։ Բնորոշ է, որ սիփահիները, դառնալով խոշոր հողատերեր, իրենց հերթին պահում էին վասալներ և լենի սեփականքով նրանց տիրույթներ տալիս։ Ուստի լենը, ինչպես միջնադարի շատ երկրներում, նույնպես և Թուրքիայում, հանդիսանում էր մի կարևոր էտապ ֆեոդալական հարաբերությունների կազմավորման պրոցեսում։ Նրա շնորհիվ ֆեոդալների դասակարգի ներսում ձևավորվում էին հողային հարաբերությունները և առնչվում էր հողային սեփականության հիերարխիկ կառուցվածքը։

Ի վերջո սուլթանը նվաճած հողերի երրորդ մասը տալիս էր մահմեդական կրոնական հաստատություններին, որի հետևանքով պետական ու ռազմա-լենային հողատիրության կողքին առաջ էր գալիս ու կազմավորվում ֆեոդալական հողատիրության մի այլ ձև՝ վակուֆային հողատիրությունը։ Այս հողատիրությունը, զանազան ձանապարհներով ընդարձակվելով, XVII—XVIII դարերում ընդգրկեց Թուրքիայի հողերի զգալի մասը[6]։

1834 թ. Մահմուդ II-ը վերացրեց ռազմա-լենային հողատիրությունը կամ դերեբեյությունը[7] և առնչվեց կալվածատիրական կամ չիֆթլիքային հողատիրությունն։ Ի տարբերություն առաջինի, որն ուներ պայմանական բնույթ, երկրորդն ուներ սեփականատիրական բնույթ։ Չիֆթլիքչին կարող էր վաճառել իր կալվածքը, ժառանգության տալ, գրավ դնել, նվիրել ում ցանկանար, առանց որևէ մեկի կամքն հարցնելու։ Չիֆթլիքային հողատիրությունը շատ բնորոշ նմանություն ուներ ռուսական վոտչինայի հետ։ Ֆ. Էնգելսը, բան երեույթին, նկատի ուներ հենց այդ հողատիրությունը, երբ Դյուրինգի հետ բանավիճելիս նշում էր. «Արևելքում միայն Թուրքիան առաջին անգամ մտցրեց մի տեսակ կալվածատիրական ֆեոդալիզմ իրենց նվաճած երկրներում»[8]։

Սուլթանը փորձեց լիկվիդացնել նաև վակուֆային հողատիրությունը և ձուլել այն պետական հողատիրության հետ, բայց հանդիպելով մահմեդական ռեակցիոն հողևորականության համառ դիմադրությանը, հրաժարվեց այդ մտքից։

6 Տե՛ս «Народы Турции, двадцать лет пребывания среди болгар, греков, турок, албанцев и армян дочери и жены консула, перевод с английского», СПб, 1879, т. I, стр. 115.

7 Վ. Ա. Գորդլևսկին նշում է, որ ֆեոդալական այդ ինստիտուտն առաջացավ XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին՝ համապատասխանելիք Թուրքիայի ն ռազմական, ն եվրոպական, ն աֆրիկական մասում» (В. А. Гордлевский. Избранные сочинения, М., 1962, т. III, стр. 21).

8 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, հրեան, 1952, էջ 225։

364—4

Մահմուդ II-ի հաջորդ Աբդուլ-Մեջիդը, շարունակելով նրա քաղաքականությունը, 1830—1840-ական թվականներին ջարգից պետերիններին՝ հատկապես Արևմտյան Հայաստանում, նրա հրամանով, օրինակ, Օսման փաշան բնաջնջեց Սպարկերտում Յուսուֆ և Միքոյաթաֆ ագուներին, Խիզանում՝ Մուհամեդ և Յաֆար բեկերին, Ջաղեշում՝ Շարիֆ բեյին, Սալիհ փաշան բնաջնջեց Սղերդի ռաշբան ցեղի ցեղապետներին, իսկ Իսմայիլ փաշան՝ Զուլամերիկի, Գավաշի և Անձաց տրբակալ Նուրուլլահ բեյին և այլն[9]:

Այդ միջոցառումների հետևանքով 1830—1850-ական թվականներին զգալի չափով մեծացավ ֆեոդալական կախումից ազատ գյուղացիների թիվը: Ե. Արծրյանը, անդրադառնալով այդ գնպերին, գրում էր. «Քրիստոնյաները, հատկապես հայ դժբախտ ժողովուրդը և նեստաորականները նրանց (իմա՝ քրդական դերբեյների— Ա. Հ.) ստրուկներն էին բառիս բուն իմաստով... Սակայն վերջին ժամանակները այդ բոլոր չարագործություններն ու ստրատներն բարեբախտաբար վերացել են շնորհիվ թուրքական կազմակերպված գինվորական իշխանության, հատկապես շնորհիվ թուրք հերոս Խուշիդ-փաշայի, որ նրանցից հազարավորներ ազնվացրեց»[10]:

Աբդուլ-Մեջիդը 1858 թ. ապրիլի 21-ին հրապարակեց հողային օրենք, որով երկրի բոլոր հողերը բաժանում էր հինգ կատեգորիայի՝ արազի-մեքուուֆ, արազի-մեվաթ, արազի-միրիե, վակուֆային և մուլկային կամ մյուլկային: Այդ հողերից առաջին երեքը պատկանում էին պետությանը, վակուֆը՝ կրոնական հաստատություններին, իսկ մուլքը՝ առանձին անհատներին կամ անհատներին:

Արազի-մեքրուքի մեջ մտնում էին ամառային ու ձմեռային արոտավայրերը (յայլաներն ու կըշլաները), անտառները, ոռոգվածահատոցները, շուկաները, փողոցները, քարհանքերը, արտաքաղերը և այլն: Այս հողերից կարող էին օգտվել բոլորը, բայց ոչ ոք իրավունք չուներ սեփականացնել դրանք:

9 Տե՛ս «Մասիս», 1882, հոկտեմբեր 24, փետրվարի 14, ապրիլի 13, հուլիսի 11, 1883, ապրիլի 16, «Արծվի Վասպուրականի», 1864, էջ 22, Մ. Միրախորյան, Նկարագրական ուշադրություն ի հայրական գավառս Արևելյան Տաճկաստանի, Ս. Պոլիս, 1884, մ. Բ, էջ 108, 123, Як. Д. Лазарев. Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1895, стр. 1—2.

10 Ե. Արծրյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1958, հ. 8, էջ 248.

Արազի-միվաթ հողերի մեջ հաշվվում էին գյուղից կես ժամ հեռավորության վրա գտնվող լեռները, ժայռերը, մացառուտները ու ճահիճները: Այս հողերը, ի տարբերություն արազի-մեքրուքի, կարող էին անցնել անհատական օգտագործման տակ: Եթե մեկը մարում էր քարերը կամ չորացնում ճահիճները և այդպիսով մեկուսի հողամասը գարձնում պիտանի, իրավունք ուներ մեկ, իսկ նրա շատ աշխատանք էր թափել, նաև երկու տարի օգտվելու նրանից, առանց պետությանը որևէ տուրք վճարելու: Այնուհետև յուրացված հողն անցնում էր արազի-միրիե հողերի շարքը և փոխանցվում սրանց համար որոշված պայմաններով:

Արազի-միրիեն բաղկացած էր գերազանցապես վարելահողերից ու մարգագետիններից և տրվում էր բնակչության բոլոր խավերին, եթե մեկը ցանկանում էր հող ձեռք բերել, դիմում էր կայմականին, տուժաարբիֆին կամ վալուն, որոնք հանձնաժողով էին իրենց ներկա պաշտոնյաներին՝ չափել հողամասը, որոշել նրա սահմանները, գնահատել այն և կատարել անհրաժեշտ գրառումներ: Այնուհետև առաջարկվում էր դիմողին՝ մուծել պետական գրամարկղ սահմանված գումարը, որից հետո նրան տոքիա էին կոչում:

Կոչանը պայմանագրի նախնական ձևն էր. այն կազմվում էր երեք օրինակից, որոնցից մեկը տրվում էր դիմողին, երկրորդը մնում էր սանջակի մեջլիսում, իսկ երրորդը՝ ուղարկվում կատասանդուպին և հաստատվում կամ մերժվում բարձրագույն իշխանությունների կողմից:

Հաստատման գեպքում դիմողին տրվում էր թապու, որը հանձնում էր պայմանագրի արդեն ավարտված ձևը:

Թափուի մեջ նշվում էր հողամասի ստացողի անունն ու ազգանունը, հողամասի սահմաններն ու չափերը, արժեքը, ձեռք բերման եղանակը (արդյոք այն ժառանգվա՞ծ է, գնվա՞ծ, նվիրվա՞ծ, գրա՞վ է տրված, թե՞ տրվում է վաղեմության իրավունքով): Այնուհետև թափուի մեջ նշվում էր այն գումարը, որը ստացողը մուծում էր պետական գրամարկղ: Թափուն հանձնվում էր ակտով, որը պահվում էր մեջլիսի գործերում համապատասխան համարի տակ[11]:

Օրենքը սահմանում էր վաղեմության իրավունքը, այսինքն՝

11 Տե՛ս, Վրացական ԱՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 543, ց. 2411, քք. 3—6, ֆ. 1087, ոպ. 1, ց. 1014, քք. 4—8, 27, ֆ. 521, ոպ. 9, ց. 67, թ. 4.

նրան մնկը, սկսած օրենքի հրապարակման օրից, տասը տարի անընդհատ օգտվում է արադի-միրին կատեգորիային պատկանող ազատ հողերից, կարող է առանց վճարումների թափու պահանջել։ Բայց նրան նա հողամասին տիրացել էր ապօրինի, ապա թափուի հետևանքով պետք է վճարեր, հակառակ դեպքում իշխանությունները կարող էին վերցնել այն և տալ ուրիշի[12]։

Թափու ձևը բերողն իրավունք ուներ օգտվելու հողամասից ոչ միայն ցմահ, այլև ժառանգաբար։ Ավելին. նա կարող էր բաժանել այն իր հարազատների և որդիների միջև, նվիրել, գրավ դնել, վաճառել, նրա վրա շինքեր կառուցել, գցել այդիներ, տնկել ծառեր և այլն։ Փաստորեն Ա. Բենեդիկտովի իրավամբ նշում էր. «Միրի հողի մը առաջացումը առանց անոր սեփականատիրոջ բլլալու կվայելե սեփականատիրոջ մը ամեն իրավունքները»[13]։

Սակայն ինչպես արադի-մեքրութ կամ արադի-մելքի, նույնպես և արադի-միրին հողերի գերագույն սեփականատերը պետությունն էր։ Թափուի տերը կարող էր վերոհիշյալ գործարքները կատարել միայն այն դեպքում, եթե նախօրոք ստանում էր համապատասխան իշխանությունների համաձայնությունը։ Պետությունը կարող էր որոշ հատուցումներով վերցնել թափուով հատատված հողամասը՝ եթե այն իրեն պետք էր, եթե գյուղացին երեք տարուց ավել թողնում էր անմշակ, կամ չէր վճարում հարկերն ու տուրքերը։ Հետևաբար, գյուղացիները, ինչպես և շատ բեյեր ու պաշաներ, իրավապես հանդիսանում էին պետական հողերի մշտական կամ ժամանակավոր տիրոջներն ու օգտվողները։

Մուլքային հողերը հանդիսանում էին ասպետների անհատների մասնավոր սեփականությունը։ Նրանց տերերը, առանց որևէ մեկի կամքը հարցնելու, կարող էին վաճառել, գրավ դնել, ժառանգության տալ, նվիրել, խոշ ու խոպան դարձնել և այլն։ Օրենքը, սակայն որոշ սահմանափակումներ էր մտցնում նրանցից օգտվելու հարցերի մեջ. օրինակ՝ արդելում էր բրինձ ցանել, եթե նրա դաշտերը կարող էին մոծակի բուն դառնալ և հետևաբար վտանգավոր լինել շրջապատի բնակչության համար, արդելում էր ամեն արարք որ ուրիշի մը իրավունքը ծանրապես կվնասե։ Այսպես ամեն ոք կրնա կարել տալ դրացու ծառին հյուղերն, որք իր պարտեզը կմտնեն»[14]։

12 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1087, օպ. 1, գ. 1014, քք. 40—41։
13 «Իրատեսական», 1905, հունիսի 12։
14 Նույն տեղում։

Մուլքային հողերը կարող էին անցնել արադի-միրին հողերի շարքը, եթե նրանց տերերը մեռնում էին անժառանգ, բայց արադի-միրին հողերն էլ իրենց հերթին կարող էին անցնել մուլքային հողերի շարքը, եթե նրանց տիրողները, իշխանությունների թույլտվությամբ կատարում էին շենքեր կամ գցում այդիներ։ Մուլքային հողերը լինում էին ինչպես մեծ, նույնպես և փոքր տարածություններով, ինչպես գյուղերում, նույնպես և քաղաքներում։ Նրանք կենտրոնացված էին գերազանցապես ֆեոդալական վերնախավի ձեռքը, բեև շատ գյուղացիներ ու քաղաքացիներ փոքր տարածություններով նույնպես ունեին դրանք[15]։

Վակուֆային հողերը, որոնք գանվում էին Լվկաչ կոչվող մինիստրության տնօրինության տակ, տրվում էին գյուղացիներին կիսարտոյքով, իսկ եկամուտը ծառայեցվում էր կրոնական հաստատությունների պահպան նպատակներին։ Գյուղացիները վերցնում էին վակուֆային հողերը թափուով ճիշտ այնպես, ինչպես արադի-միրին հողերը։ Սակայն ի տարբերություն արադի-միրինից, վակուֆը չէր կարող լինել գյուղացիների մասնավոր սեփականություն։ Նա մահմեդական ջամաաթի անձեռնմխելի ունեցվածքն էր։ Նրան տիրողը կարող էր միայն ժառանգության տալ, բայց ոչ վաճառել կամ գրավ դնել։ Մի հաղորդման մեջ ասվում է, որ վակուֆային հողերը «չեն կրնար առնվիլ, տրվիլ և միայն որդվոց որդի ժառանգության կը մնան»[16]։

Այսպիսով, 1858 թ. ապրիլի 21-ի հողային օրենքը անխախտ թողեց Թուրքիայում գոյություն ունեցող պետական, կալվածատիրական ու կրոնական հողատիրության ձևերը, իսկ աշխատավոր գյուղացիությանը շրավարարեց հողով։ Ավելին. այն հնարավորություն ստեղծեց հողատերերի համար բռնագրավելու գյուղացիների հանգակները։ Եվ հողատերերը, ինչպես ցույց կտրվի ստորև, զանազան պատրվակներով հափշտակեցին նրանց հանգակները։

Բայց, այնուամենայնիվ, 1858 թ. ապրիլի 21-ի հողային օրենքի բուրժուական բովանդակությունն ակնհայտ էր. այն փաստորեն ի չիք դարձրեց պետության ունեցած գերագույն իրավունքը հողի նկատմամբ, երբ հասատատեց, իրավապես ճանաչեց կալվածատերերի չիֆթլիքային ու գյուղացիների ծխային հողատիրությունը և

15 Տե՛ս Լենինգրադի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 560, օպ. 28, գ. 1145, թ. 8—12։
16 «Մշակ», 1866, մայիսի 28։

Քուլլ ավելց նրանց վաճառել ու գնել իրենց հանդակները օրական մասնավոր սեփականության։

1867 թ. մայիսի 21-ին սուլթան Աբդուլ-Ազիզը հրապարակեց հողային մի այլ օրենք, որով գյուղացիներին պարտադրից ձևակերպել իրենց հողակտորները թափուով, այսինքն՝ փրկանվել դրանք, վճարելով տարեկան եկամտի 15%-ը։ Համաքայս մեկ ամիս անց՝ հունիսի 18-ին նա թուլլատրեց նույնիսկ օտարերկրացիներին՝ հողային սարածքություններ գնել Թուրքիայում և օգտվել նրանցից այնպես, ինչպես Թուրքիայի քաղաքացիները[17]։

1873 թ. սուլթանը կարգադրեց անցկացնել թափուների սուսերում և չունեզոզներին հարկադրել ձևք բերել այն[18]։

Հաջկով, Աբդուլ-Ազիզի այդ օրենքները հետապնդում էին ֆիսկալ նպատակներ, որքանով, ինչպես իրավացիորեն նշում էր Ֆ. Ֆ. Քրյազնովը, պետության «համար նոր, խոշոր եկամտի ազբյուր էին բացում»[19]։ Բայց նրանք նույնպես ունեին բուրժուական բովանդակություն, քանի որ ամրապնդում էին գյուղացիների ծանր հողատիրություն։ Այդ օրենքների հրապարակումից հետո գյուղացիների մի մասը՝ սկսած 1870-ական թվականներից, փրկագնեց իր հանդակները։ Այսպես. «Վանի սանջակում գյուղացիական հողերը մեծ մասամբ թափու եղած և հայոց ձևքին են»[20]։

Մուշի դաշտում «գյուղացիական հողերը հայոց ձևքին են թափուած»[21]։ Բաղեշի սանջակում «հողերը գրեթե ամենն ալ թափու են եղած»[22]։ Սգերդի սանջակում հողերն «բնդհանրապես թափու եղած են»[23] և այլն։

Սակայն գյուղացիության մյուս մասը բնդհուպ մինչև 1915 թվականը չկարողացավ փրկագնել իր հողահանգանակները։ Կ. Պոլսի Ազգային ժողովի երեսփոխաններից մեկը 1910 թ. նշում էր, որ

17 *Տե՛ս* «Турецкая империя (из военно-статистического сборника на 1868)», стр. 252.

18 *Տե՛ս* Я. Д. Малама. Описание Эрзерумского вилайета, СПб, 1874, стр. 107.

19 *Տե՛ս* Ф. Грязнов. Военный обзор передового театра в Азиатской Турции, ч. 2, стр. 117.

20 *Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության ու արվեստի թանգարան, Բորա Ագաջանի արխիվ, գ. 40, թ. 1։*

21 *Նույն տեղում, գ. 49, թ. 5։*

22 *Նույն տեղում, գ. 55, թ. 6։*

23 *Նույն տեղում, գ. 57, թ. 88։*

Արևմտյան Հայաստանում «հողեր կան, որոնց տերերին ոմանք թափու ունին և ոմանք չունին»[24]։

Ինչ վերաբերում է հողատերերին, ապա նրանց մի մասը ձևք բերեց թափու, իսկ մյուսը՝ ոչ, բա հրեությին, գանելով, որ այն ավելորդ է։

Սուլթան Աբդուլ-Համիդը, որքան մեզ հայտնի է, չհրապարակեց բուրժուական բովանդակությամբ էական նշանակություն ունեցող ազգարային օրենքներ (և հազիվ թե հրապարակեր, քանի որ նրա ներքին քաղաքականության ամբողջ ուզն ու ծուծը հողատիրական կարգերի պահպանումը և ազիալական ու ազգային շարժումների ճնշումն էր)։ Նա հանդիսանում էր առաջին խոշոր հողատերը երկրում, ուներ 37.000.000 դյոնում կամ 3.457.944 դեսյատին հող (սեհիէ), որից տարեկան ստանում էր 4—5 միլիոն լիրայի եկամուտ։ Նրա հողերը գտնվում էին Բաղդադի, Բասրայի, Մոսուլի, Հալեպի, Դամասկոսի, Ադանայի, Բեյրութի և Երուսաղեմի վիլայեթների ամենաարգավանդ շրջաններում[25]։

Սուլթանից հետո հողային ընդարձակ սիրուլիներ ունեին պետական խորհրդի անդամները, մինիստրները և մեռցած երևելի պաշտոնյաները։ Նրանք բոլորը ֆեոդալների հետ միասին կազմում էին բնակչության 5%-ը և իրենց ձևքերում էին կենտրոնացրել Թուրքիայի ամբողջ հողերի 65,5%-ը, իսկ գյուղացիությունը, որ կազմում էր բնակչության 87%-ը, սիրում էր այդ հողերի միայն 31,4%-ը։ Գյուղացիության 8%-ը բոլորովին հող չուներ[26]։

Աբդուլ-Համիդը ինչպես կայսրության այլ շրջաններում, նույնպես և Արևմտյան Հայաստանում ամեն կերպ պաշտպանում և ամրապնդում էր ֆեոդալական հողատիրությունը, քանի որ այդ հողատիրությունը հանդիսանում էր իր հուսալի հենարանը տեղական

24 *«Ամենազգությունք Ազգային ժողովս», 1910, մարտի 28, էջ 260։ Տահվին 1870—1880-ական թվականներին Գ. Սրվանձտյանը գրում էր, որ Տիգրանակերտի վիլայեթում «բիչ հողեր կան թափու եղած ժողովրդյան վրա» (տե՛ս նրա «Բորոտ ազգար», մ. Բ, էջ 191), իսկ Զարսանջակում «մեայն Մեծկերա և Սրգենի գեղերու հայր՝ և շիլին մաս մ'ալ բերդակցիք իրենց վրա թափու ունին» (նույն տեղում, էջ 141)։ Թափու չունեին նաև Կարսի մարզի, Ալաշկերտի և այլ շրջանների բազմաթիվ գյուղացիներ (տե՛ս* «Всеподданейший отчет о состоянии Карсской области за 1888 год», стр. 45—46).

25 *Տե՛ս ՀՍՍՌ ԿԳՊԱ. ֆ. 71, գ. 51, թ. 4։*

26 А. Д. Новичев. Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 54.

ժողովուրդների սոցիալական ու ազգային շարժումների դեմ կռվելու համար։

Սուլթանի այդ քաղաքականության արտահայտություններից մեկն այն էր, որ նա հողատերերին, որոնք Արևմտյան Հայաստանում կրում էին աղա, բեյ, բեկ, էլբեկ, էլաղասի, դերեբեյ, չելեբի և այլ անուններ, նշանակում էր նահանգական ու գավառական պաշտոններ։ Այսպես, Ալի աղան նշանակված էր Մոտկանի կայմակամ, Քոռ Սրյոն՝ Սասունի խան Նահիթի մյուդիր, Հյուսեին բեկը՝ Մազկերտի գաուազը, Հասան աղան՝ Վասպուրականի պր-սար-դար, Կոտ բեկը՝ Շատախ ագնամի հարկահան և այլն։

Սուլթանը այնտեղ, որտեղ չէր կարողացել հողատերերին կամ, ինչպես նրանց այսուհետև պետք է անվաններ, աղաներին ու բեյերին, նշանակել պաշտոնի, ամեն էր նրանց լայն հնարավորություն՝ պաշտոնյաներին պահելու իրենց ձեռքերում և անգամ փոխելու, եթե նրանք չհատուցեին իրենց կամքը։ 1870-ական թվականների սկզբներին գավառական հարաստահարություններն ուսումնասիրող հանձնաժողովն արձանագրում էր , որ ժողովուրդն բնդհանրապես գանգատվում է, «Քե գավառից կառավարության պաշտոնյայք բատմեծի մասին տեղացի բնիկ մեծատունց ազդեցության ներքև են»[27]։

Իսկ Ա. Մ. Կոլյուբակինը հիշատակում էր, որ Քղիի կայմակամ Ալի-Մեհմեդ-բեյը հանվեց պաշտոնից, որովհետև ազնիվ էր աշխատում, չէր կատարում աղաների կամքը և «փոխարինվեց տեղական հարուստների ու գոփղների հայտնի կողմնակիցով»[28]։

Ուշագրավ է, որ երկրի այն շրջաններում, որտեղ աղաներն ու բեյերը մեծ ազդեցություն ունեին, իշխանությունները պաշտոնյաներին նշանակում էին միայն նրանց դիտությամբ։

* * *

Արևմտյան Հայաստանում ֆեոդալական վերնախավը բաղկացած էր մեծ մասամբ քրդերից, հետո թուրքերից, իսկ այնուհետև հայերից ու ասորիներից։ Ինչ վերաբերում է չեչեններին ու չերքեզներին, ապա նրանց թիվը աննշան էր։

Քուրդ հողատերերը հատատված էին Արևմտյան Հայաստանի բոլոր վիլայեթներում, թուրքերը՝ գերազանցապես Սեբաստիայի, Խարբերդի, Կարնո, ինչպես և մասամբ մյուս վիլայեթներում, ասորիները՝ Վանի վիլայեթի Հեքյարի սանջակում, իսկ հայերը՝ Խարբերդի, Վանի և Տիգրանակերտի վիլայեթների որոշ կազաներում[29]։ Համաձայն է, որ հայ ֆեոդալներ լինեին նաև մյուս վիլայեթներում, սակայն նրանք փոքրաթիվ էին և երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում էական դեր չէին խաղում։ Օտարերկրյա հետազոտողները սակավին միշնադարում էին բնաջնջել հայ ֆեոդալական տները, իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում նրանցները տապալել էին առևտրա-վաշխառուական ճամարտարհոմ։ Ա. Մ. Կոլյուբակինը 1886 թ. նշում էր, որ Խարբերդի կազայում տասից 15—20 տարի առաջ հայերից հողային սեփականություն ունեին միայն վանքերն ու գյուղական համայնքները, իսկ քաղաքացիները ունեին անշարժ ունեցվածք միայն քաղաքներում, քանի որ չէին համարձակվում ձեռք բերել հող և զբաղվել երկրագործությամբ ու անասնապահությամբ։ Բայց «այժմ մենք գիտենք 30 գյուղ, որտեղ քաղաքի հայերը, թվով 43 բնտանիք, տիրում են... գրանք տարածություններ վարելահողերի ու մարգագետինների»[30]։ Նա այնուհետև ցույց էր տալիս, որ հայերը հող են ձեռք բերել նաև Բալուում և Վանի սանջակում[31]։

Քուրդ հողատերերը, կապվելով ֆեոդալների դասակարգի մեծամասնությունը, իրենց ձեռքերում էին կենտրոնացրել Արևմտյան Հայաստանի կուլտուրատնտեսական հողերի մեծ մասը։ Սակայն երկրի

---

27 «Մասիս», 1871, հոկտեմբերի 30։

28 **А. М. Колюбакин.** Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1891, т. III, ч. 1, отд. 2, стр. 53—54.

29 Խարբերդի վիլայեթում հայ ֆեոդալների գոյության մասին Գ. Արվանդյանցը 1879 թ. գրում էր. «Այսոյհն Մեզրե բնակյալ Ակնցի հայր և քաղաքին ամենքը, որ բամենայն հողերու տեր էին հազ, և մատչելի ունէին (տե՛ս նրա «Քաղաքական տարեգրություն», մ. Բ, էջ 81), իսկ Ագնի գյուղի տեղերը Խարբերդ բնակող ակնցի քանի մի հայոց սեփականության էին» (նույն տեղում, էջ 106)։ Նույն հեղինակը այնուհետև նշում էր, որ երբ ինքը եղել է Խարբերդում, տեսել է շեղ հագնված մի խումբ ձիավարներ, որոնք «Զորամասնագրի կառավարության տաճիկ և հայ ազանեերն էին... որք բոլորած լինելով իրենց գոյմագործին վրա, կանգնած էին ի Խարբերդ, գասվիլուս (նույն տեղում, էջ 125)։

Մ. Ծիրմանյանը և Վ. Հայկն իրենց հուշերում գրում էին, որ Մեզրեհում հողային փեշ քե շատ ընդարձակ տիրույթներ ունեին՝ Մխիթյան և Կամպուրյան եղբայրները, Խուտ գյուղում՝ Նահիկյանները, Մարտերոս ագա Փաշիկյանը, Մանուկ ագան, Տեր-Գողոսյանը, Տեր-Կարապետյանը, Թումամանյանը, Գոհար խանումը և ուրիշներ (տե՛ս Մ. Ծիրմանյան, Խարբերդը և իր գավառները, Կաիֆորնիա, 1955, էջ 77, Վահե Հայկ. Խարբերդը և նրա ոսկեղեն գաշտը. Հուշամատյան պատմական, մշակութային և ազգագրական, Նյու-Յորք, 1959, էջ 856)։

Վանի վիլայեթում հայ հողատերերի գոյության մասին վկայում է Վ. Փափազյանը (տե՛ս նրա երկեր, հ. 5, էջ 422—423)։

30 **А. М. Колюбакин.** Материалы..., т. III, ч. 1, отд. 2, стр. 335.

31 Նույն տեղում, հ. 1, մ. 1, էջ 126—127։

որոշ շրջաններում գերակշռում էին թուրք, հայ և ասորի հոգատեր։ Այսպես. Հեքյարի սանջակի ասորաբնակ վայրերում կալվածատիրական հողերը պատկանում էին առավելապես ասորի մելիք-ներին, իսկ Ամբերդի կազայում՝ թուրք ազաներին ու բեյերին։ 1886 թ. այդ կազայում կար 196 հոգատեր, որոնցից թուրքեր՝ 119, հայեր՝ 43, իսկ քրդեր՝ 34 հոգի։ Նրանք բոլորը միասին ունեին 14.700 դես. հող., որի մեծ մասը պատկանում էր թուրքերին։ Բնորոշ է, որ այստեղ թուրք հոգատերերի կալվածքներն ավելի ընդարձակ էին, քան հայերինը։ Եթե թուրքերից յուրաքանչյուրն ուներ 50—500 դես., ապա հայերից յուրաքանչյուրը՝ միջին հաշվով 50 դես. վարելահող[32]։

Հողատերերի անհավասարությունը գոնվում էր ֆեոդալական գաբգացման տարբեր աստիճանի վրա։ Նրանց մի մասի տիրույթներում ամակավին չէին առանձնացված բնդհանուր անփականատիրությունից, իսկ հոտերը արածում էին կախյալ-գյուղացիների հոտերի հետ միասին՝ միևնույն արոտավայրերում ու մարգագետիններում։ Դրանք քրդական բոլորը, մասամբ նաև կիսաբոլոր ցեղապետերն ու համայնքապետերն էին, ինչպես նաև ասորի մելիքները։ Ազաների ու բեյերի մյուս մասն իր հողային տիրույթները բաժանել էր երկու բաժնի. մեկը, ընդ որում լավագույնը, վերցրել էր իրեն, իսկ մյուսը՝ տվել գյուղացիներին։ Ազաների ու բեյերի երրորդ մասը, չվարելով անփական անտեսություն, իր բոլոր հանդակները տալիս էր գյուղացիներին կիսաբաժնությամբ։ Վերջապես, նրանց չորրորդ մասը մասամբ վարում էր անփական անտեսություն։ Եթե առաջին կարգի ազաների ու բեյերի անտեսությունները հիշեցնում էին ֆեոդալիզմի կազմավորման նախնական, երկրորդը՝ զարգացած, ապա երրորդ և չորրորդ կարգի ազաների տնտեսությունները հիշեցնում էին նրա վերջնական տեսքին։

Դժբախտաբար, վիճակագրական տվյալներ չկան պարզելու այն հարցը, թե նշված կատեգորիաներից որն էր գերիշխողը, սակայն աղբյուրներին մոտիկից ծանոթանալը հիմք է տալիս ենթադրելու, որ գերիշխողը երկրորդ և երրորդ կատեգորիայի ֆեոդալական տնտեսություններն էին։

Ազաներն ու բեյերը ապրում էին քաղաքներում և գյուղերում։ Քաղաքներում սովորաբար ապրում էին նրանք, որոնց կալվածքները գտնվում էին քաղաքամերձ շրջաններում, կամ տալիս էին

[32] Նույն տեղում, հ. III, մ. 1, բաժ. 2-րդ, էջ 376—377, 382—383։

գրանք կիսաբաժնությամբ, իսկ գյուղերում՝ նրանք, որոնք զբաղվում էին քոչվոր ու կիսաքոչվոր անասնապահությամբ կամ որոնց կալվածքներն հեռու էին բնակած քաղաքներից։ Օրինակ՝ Չաբասնջակում միայն Օսման բեյն էր ապրում մերթ Ամբերդում, մերթ Բեհյում, իսկ մյուս բեյերը բնակվում էին «Մինձուր գետի այ և ձախ կողմի գյուղերուն մեջ»[33]։

Ազաներն ու բեյերը ունեին զղյակներ, որոնք ծառայում էին նրանց համար թե իբրև ապրելատեղ և թե իբրև վարչական կենտրոն։ Նրանցից շատերն ունեին մի քանի գյուղ՝ ասորեր տեղերում, հարեմով, ոստասավորներով ու ագախիններով։ Ոմանց գյուղակներն հիշեցնում էին միջնադարյան ֆեոդալական դաստակերտներին։ Այդ տեսակետից կարելի է նշել Խոշմադյանների ագարակը, որը գտնվում էր Բալուից 5,5 վերստ հեռավորության վրա։ Ա. Մ. Գոլյուբակինը գրում էր, թե այն «իր բարեկեցությամբ և նույնիսկ արտաքին տեսքով կենդանի կերպով հիշեցնում է ռուսական միջակ կալվածատիրոջ դաստակերտը և շատ հազվագյուտ երևույթ է այդ հիսավայրենի երկրում։ Խոշմադյաններն ունեն բարև մեծ տուն՝ ապահեստատ պատշգամբով, մեծ պարտեզ, շատրվան, հսկայական այգի և տնտեսական այլ կառույցներ»[34]։

Ազաներն ու բեյերը կառավարում էին իրենց կալվածքներն ու գյուղերը կամ անձամբ, կամ կառավարիչների միջոցով։ Առաջինների թվին էին պատկանում այն ազաներ, որոնք զբաղվում էին քոչվորական անասնապահությամբ կամ որոնց կալվածքները փոքր էին։ Իսկ երկրորդների թվին էին պատկանում այն ազաները, որոնք ապրում էին քաղաքներում և իրենց հանդակները տալիս էին կիսաբաժնությամբ։

Բայց ազաների մի ուժեղ մասը կառավարում էր իր հողերն ու գյուղերը ավագանու կամ դինակիցների միջոցով։ Նրանք ապրում էին համայնքապետերին ու դինակիցներին մի գեպքում յուրաքանչյուրին մեկ, մի այլ գեպքում՝ ավելի, երրորդ դեպքում՝ մի քանիսին մեկ գյուղ և հանձնաբարում՝ հետևել սահմանված ժամկետ ու կանոններին։ Այսպես, բեհրջինների ցեղապետ նադիր աղան Սասունի Բանաշեն գավառակում ուներ 11 գյուղ, իսկ յուրաքանչյուր գյուղի մեջ՝ իր գործակատար փոքրիկ ազան։

[33] Աճեմեանի, Տեղեկ, համապարհորդության և տեղագրության, Թիֆլիս, 1900, էջ, 136։

[34] А. М. Колюбакин, Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 174.

Գ. Արվանձտյանցը գրում էր, որ երկրի մի շարք շրջաններում աղաները «բաժանյալ էին ամենայն տունք և գյուխք հպատակաց ի զորականս զորականաց, ի զօրագիսս զօրագիսաց, և ի գիսս գիսոց ամերայից, յաղայից և ի շեխերէ՝ բռնակալացս։ Տիարք և ատոդք բաժինս անվանեալին խաֆիր»[35]։

Համարյա նույն բանն էր հաստատում նաև Ռ. Բեկգուլյանցը. «խաշոր բեկերը,— գրում էր նա,— ունեին իրենց ենթական փոքր բեկեր, իսկ սրանք ավելի փոքր բեկեր»[36]։

Արևմտյան Հայաստանում ֆեոդալների համար բնորոշ էր այն, որ աղաների ու բեյերի մի մասը (գլխավորապես հայերը) չունեին, իսկ մյուս մասը (առավելապես քրդերը) ունին զինված խմբեր, որոնց հաշվաքարտում էին համարյա բացառապես մահմեդականներից և կոչում զուլամներ։ Նրանց զուլամների մասին որոշ պատկերացում տալու համար բերենք 1913 թ. Դիարբեքիրում ռուսական հետախուզական օրգանների կողմից հավաքած հետևյալ տվյալները[37].

Աշիրաթի կամ ցեղի անունը	Աշիրաթապետի կամ ցեղապետի անունը	Զուլամների քիվը
Բեյլոնլի	Հաջի ագա	2000
Մուբ-ուշագի	Քեմիբ ագա	1000
Ճուտուֆանլի	Ճուտու ֆ ագա	1000
Քուրքիշանլի	Ալի-Հաճո	600
Խեմանլի	Կոտան-Խա	500
Ալանլի	Ալի-Շամանլի	200
Հայդաթանլի	Ալի-Ամեկ-օղլի	400
Ահլի	Ցեղակություն չկա	2000
Կաուանլի	Փոքրիկն-ագա-օղլի	1500
Կամօրլի	Ցեղակություն չկա	300
Քեմանլի	Ահոան-ագա-օղլի	800
Ալիանլի	Մահմեդ-Ալեևիր	300
Հոնյանլի	Խուբաուն-ագա-օղլի	400

Այդ տվյալները ցույց են տալիս, որ աղաները ունեին զգալի զինվորական ուժ, որն օգտագործում էին ոչ միայն գյուղացիներին զսպելու և հարևանների հարձակումներից պաշտպանվելու, այլև նրանց հողեր ու գյուղեր բռնագրավելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կենտրոնական իշխանության ծառայելու կամ նրան ընդդիմանալու համար։

Հոգի հրատարակած վավերագրերից մեկում կարդում ենք. «Աշիրեթի էլ-ագասին, իբրև վճհապետական, իրավամբ ունի պինյալ հերոսներ, որք նորա հավատարիմ պերճներն են կամ կույր գործիքները, քե հրամայե զարնել, կը զարնեն, կողոպտել՝ կը կողոպտեն, սպանել՝ կսպանեն և այլն։ Սոքա գրեթե ոչ բնավ երկրագործութեամբ և արհեստով կը զբաղին, և ոչ իսկ շատ տեղեր հասատաս բնակութեան ունին, այլ կեն ի ձեռին կը շրջին ամենուրեք, մանավանդ լեռներու և ձորերու մեջ, ազատ համարձակ կը հափշտակեն երկրագործ հայ ժողովրդյան պարենը, կը գողնան նոցա գուարը, կաշխեն նոցա ցորենի օրաննները և խոտի դեզերը, և կը բռնաբարեն նոցա պատիվն ու կյանքը։ Սոցա առջև ո՛չ խիզճ և ո՛չ պետական իշխանութեան նշանակութեան ունի, այլ միայն էլ-ագասին, որս կամքն ու հաճույքը կը համարձակիմք ըսել՝ քե ամենայն ինչ է»[38]։

Պետք է նշել, որ բացի ցեղապետերից, որոշ թվով զուլամներ ունեին նաև նրանց շրջապատող ավագները՝ համայնքապետերն ու բանապետերը։ Օրինակ՝ Սասունում բանաքցիների ցեղի մեջ մտնող գամկա բարի ավագ Հաջի Էոմեր ագան ուներ 150, բաբիր բարի ավագ Հաջի Ծերոն՝ 150, նասրիկ բարի ավագ Սալիմ ագան՝ 100, չիլո բարի ավագ շեյխ Մկոան՝ 200, բյալ բարի ավագ Սեյիմ ագան՝ 100, յաղուր բարի ավագ Ջաֆեռն՝ 120 զուլամ և այլն։ Ինչպես ավագները, նույնպես և նրանց զուլամները ենթարկվում էին ցեղապետին և շարժվում նրա հրամաններով։

Ցեղապետը անհրաժեշտության դեպքում մոբիլիզացնում էր նաև իր հպատակ հավատակիցներին, որոնք, ենթծծված լինելով մահմեդական բունատիզմով, հաճախ գնում էին մեռնելու նրա փառքի ու պատվի համար։ «Բյուլուճդիճոն»-ի Ազիզիկեը գրում էր. «Քուրդ ոայայի գործն է մշանջենական օլում, զինված շալամներ ձրի պահել և կերակրել, նույնպես նաև իր աղայի դուար ու ոչխարը։ Եվ հետո բուռն աշիրաթական կռիվներուն իրենք ալ պարտավոր են երթալ և մեռնել ի հարկին»[39]։

Աղաներն ու բեյերը իրենց զուլամներով ու ցեղակիցներով կազմակերպում էին բանդիտական արշավանքներ ու վարում մեծ

---

35 Գ. Սրվանձտյանց. Հոց և նորց, հ. Գալիս, 1874, էջ 156—157։

36 **Р. Бекгульянц.** По Турецкой Армении. Впечатления от поездки летом 1914 г., Ростов н/Д, 1914, стр. 75.

37 ՎՈՍՒ, ԿԳԳԱ, ֆ. 71, գ. 95, թթ. 3—4.

38 Ակս. Հայոց հարցի վավերագրերը, Փարիս, 1915, էջ 143։

39 «Բյուլուճդիճոն», 1910, դեկտեմբերի 30։

ցեղային կոիվներ։ Նրանց կռիվները հաճախ բնդունում էին կատաղի բնույթ և չէին դադարում անգամ նահանգական իշխանությունների միջամտությամբ։ 1860-ական թվականներին Թեյլորը հիշատակում էր, որ Դերսիմի Օվաջլի հովտում կղզյաշական երկու ցեղերի միջև տեղի էր ունենում իսկական մարտ։ Նրանք կռվում էին ոչ թե փայտերով, այլ հրացաններով։ Կռվող կողմերից մեկը, ուհանելով Թեյլորին, խնդրում է հաշտեցնել։ Սակայն նա չի միջամտում, նպատակահարմար համարելով, որ կռիվը թեև սկսվել է մի հողամասի համար, բայց արդեն այնքան արյուն է թափվել, որ տուժող կողմը հագիվ թե բավարարվեր նույնիսկ այդ հողամասն առանալով[40]։

1880-ական թվականների վերջերին հայդարանցի թրդերից մեկը գողանում է չալալիներից մեկի կնկան ու ոչխարը։ Այդ հողի վրա հայդարանցիների առաջնորդ Միքրա բեկը և չալալիների առաջնորդ Ահմադբայրը, իրենց շուրջը համախմբելով 5—6 հազ. հոգի, որոշում են կռվել միմյանց հետ։ Ականատեսներից մեկը գրում էր. «Թեև պատերազմը չսկսած՝ տակավին երկու կողմերն էլ սպասում են իրանց հեռավոր կուսակիցների օգնության և երկու կողմերն էլ շարունակ ձևոր են բերում արագ գործող, վերջին տեսակի կատարելագործված հրացաններ»[41]։

1908 թ. հոկտեմբերին «Բյուզանդիոն»-ի թղթակիցը հաղորդում էր, որ Բալուում ավեց օրև ի վեր Սաքրատ գյուղի պետերու և Թելֆիդ պետի միջև արյունալի կռիվ կը մղվի Կյուլբեկների հողերուն համար. մինչև հիմա, մեր գիտցածը, սպանված են 2 գինվորներ և 10 մարդ. հրացանաձգությունն երկուսանք անընդհատ կը շարունակվի»[42]։

Միջցեղային կռիվները հաճախ վերջանում էին կամ պարտվող ցեղի լիակատար բնաջնջումով, կամ հաղթող գործնում էր նրան իր հպատակն ու հարկատուն։ Օրինակ՝ Տիգրանակերտի վիլայեթում Իբրահիմ աղան այդ կռիվների շնորհիվ իր իշխանությանը ենթարկեց բրդական խրդրկանլի, կամբինախաշա, շերքեա, ադլան, դոդիկյան, մանդյան, արաբխանա ցեղերին և արաբական մի շարք աշիրաթների[43], իսկ շար ցեղի առաջնորդը՝ բրդական ու արաբական ութ ցեղերի, որոնք միասին կազմում էին 8600 վրան կամ 51.600 հոգի։ Այդ պարտված ցեղերը շար ցեղի առաջնորդին հարկ էին վճարում «փոդով, հացահատիկով և անասուններով»[44]։

Միջցեղային կռիվների հետևանքով որոշ ցեղապետեր այնքան էին ուժեղանում, որ սկսում էին չճանաչել թուրքական կառավարությունը։ Նրանցից ոմանք հասնում էին կիսաանկախության, իսկ մյուսները՝ լիակատար անկախության։ Առաջինների հպատակությունը թուրքական պետությունից արտահայտվում էր նրանով, որ նրանք որոշ հարկ էին վճարում[45], իսկ երկրորդները՝ ոչինչ չէին վճարում, փոխանդապետ Տոմիլովի խոսքերով ասած՝ գտնում էին «պետության պետության մեջ»[46]։

Պետք նշել, որ Արևմտյան Հայաստանում կռիվներ տեղի էին ունենում ոչ միայն տարբեր ցեղերի, այլև միևնույն ցեղի առաջնորդի ու նրան շրջապատող ավագանու՝ վասալների միջև։ Այդ կռիվները ավարտվում էին ցեղապետի առապալումով, ինչպես այդ տեղի ունեցավ Բադրևանգում, երբ սիփան տոհմի դևկիսվաների վերջերին մանրցիններից ցեղապետությունը։ Բայց երբեմն էլ ուժերը հավասար էին դուրս գալիս, որի հետևանքով մի ցեղը տրոհվում էր առանձին մասերի, Վ. Տ. Մաեսկին գրում էր, որ Վանի վիլայեթում «հաճախ միևնույն աշիրաթի ներսում հանդես են գալիս երկու-երեք և ավելի անձինք, որոնք օգտվում են հավասար նշանակությամբ ու հեղինակությամբ։ Այդպիսի դեպքերում այդ անձանց յուրաքանչյուրի իշխանությունը տարածվում է աշիրաթի մի մասի վրա։ Որոշ աշիրաթների այդպիսի բաժանումը, շնորհիվ ավագ պետերի անխուսափելի մրցակցության, երբեմն նրանց մեջ առաջ է բերում ուսական գժտություններ ու երկպառակտումներ։ Դրան օրինակ կարող է ծառայել հայդարանցիների աշիրաթը։ Նրա այն մասը, որ գտնվում էր Արճեշում և Պաղնոսում բաժանված է երեք անձանց միջև՝ Հյուսեին-փաշայի, Էմին-փաշայի և Թեմիր-փաշայի։ Նրանցից առաջին երկուսը մի քանի տարի անընդհատ միմյանց նկատմամբ թշնամություն են ցուցաբերում, որն այդ ազգակիցների (հարազատ եղբայրների) միջև գնալով վերածվից արյունալի ընդհարումների»[47]։

[40] «Материалы для географии Азиатской Турции (приложение II к тому II «Известий Кавказского отдела императорского русского географического общества)», Тифлис, 1873, стр. 42.

[41] *«Մշակ», 1890, հուլիսի 24։*

[42] *«Բյուզանդիոն», 1908, հոկտեմբերի 14։*

[43] **Томилов.** Отчет о поездке по Азиатской Турции, СПб, 1907, ч. I, стр. 187.

[44] **В. Штреккер.** Очерки Верхней Армении, Тифлис, 1873, стр. 77.

[45] *ՏԼ'ա ՎՍՍՌ, կՊՊԱ, ֆ. 71, գ. 73, բ. 59։*

[46] **Томилов.** Указанное сочинение, стр. 186.

[47] **В. Т. Маевский.** Ванский вилайет. Военно-статистическое описание, Тифлис, 1901, стр. 205—206.

Միջցեղային և ներցեղային կռիվները չափազանց ծանր էին անդրադառնում աշխատավոր գյուղացիության վրա։ Հաղթողը, որպես կանոն, կողոպտում ու թալանում էր հակառակորդի գյուղացիներին, քանդում նրանց տունն ու տեղը, ավերում ցանքատարածությունները ու այդիները։ Այդ կռիվներից առանձնապես տուժում էին հայ գյուղացիները։ Ցեղապետը հաճախ քշում էր նրանց ճակատամարտի առաջին գծի վրա, որ հակառակորդը նրանց կոտորելով թուլանա։ Հաճախ գյուղացիները, նախօրոք իմանալով իրենց ապագա վանդի մասին, թողնում էին ամեն ինչ, փախչում և ապաստան որոնում երկրի դանդաղ շրջաններում։ Բաֆֆին գրում էր. «Պատերազմի ժամանակ, յուրաքանչյուր հակառակ կողմերի, թե հաղթության և թե հաղթվելու միջոցին, բնակիչների վիճակը ապրափելի էր։ Օրինակ՝ մի ցեղ կամենում էր խլել մյուս ցեղի ձեռքից երկրի այս կամ այն մասը, նա կամ հաղթելով տիրում է, կամ ավար առնելով, թալանելով ամեն հանդիպածը, եւ է դառնում։ Այսպիսի դեպքերում ժողովուրդը թողնում է իր տունը, տեղը, մշակության դաշտերը և իր գլուխը միայն ազատելու համար, պատսպարվում է լեռների անմատչելի տեղերում։ Կռիվը տևում է երկար։ Անասունները, տնաեր մնալով, թշնամին կողոպտում է. հունձքը, անխնամ մնալով, չորանում է, ոչնչանում է, և կռիվներից հետո վրա է հասնում մի նոր ամենասարսափելի թշնամի—սովը... կռիվները, ժողովրդի անդադար անցնելը մեկ տիրապետողից դեպի մյուսը, սպառում էին բնակիչների կյանքը սրով, կրակով և սովով»[48]։

Միջցեղային ու ներցեղային կռիվները խիստ բացասաբար էին անդրադառնում նաև երկրի արտադրողական ուժերի վրա, քայքայում էին նրա տնտեսությունը, այդ բառի իսկական իմաստով։ Այն, ինչ ձեռք էր բերված երկար ու ծիր տարիների ընթացքում, կորչում գնում էր ակնթարթում։ Այդ կռիվների ժամանակ ոչնչացվում էին նյութական ու գրավոր կուլտուրայի բազմաթիվ հուշարձաններ։ Նման կացություն ունեին աչքի առաջ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, երբ նշում էին. «Բավական են հասարակ պատահականություններ, ինչպես, օրինակ՝ բարբարոսական ժողովուրդների ներխուժումները և նույնիսկ սովորական կռիվները, որպեսզի արտադրողական ուժերով և պահանջմունքներով գարգացած որևէ երկիր հասներ մինչև ամեն ինչ նորից սկսելու անհրաժեշտություն»[49]։

[48] Բաֆֆի, Երկեր, հ. 4, էջ 377—378։

[49] К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 3, стр. 54.

* * *

Արևմտյան Հայաստանում ֆեոդալական հողատիրության ձևերից մեկն էր հանդիսանում նաև վակուֆային ու վանական-եկեղեցական հողատիրությունը։ Վակուֆային հողատիրությունը ավելի կամ պակաս չափերով գոյություն ուներ դիմավորապես Սեբաստիայի ու Տիգրանակերտի վիլայեթներում։ Գ. Որմանձեանցը գրում էր. «Ամբողջ Բալուն 460 գեղ է, որմե 30-ն վաղքի է, անոնց հողն ու ոստանները հաստատեալ է շեյխերու կամ Համիտներուն»[50]։

Իսկ հայ վանական-եկեղեցական հողատիրությունը տարածված էր համարյա ամենուրեք։ 1903 թ. Արևմտյան Հայաստանում կար 119 վանք և 1037 եկեղեցի, որոնք ըստ վիլայեթների ու սանջակների տեղաբաշխում էին հետևյալ կերպ[51]։

Վիլայեթները և սանջակները	Վանք. թիվը	եկեղց. թիվը	Վիլայեթները և սանջակները	Վանքերի թիվը	եկեղց. թիվը
Դարձո վիլայեթում	29	276	Տարսերգի վիլայեթում	15	190
Խերջանի սանջակում	2		Էլխեձի սանջակում	5	72
Բասենի »	1	133	Տարսերգի »	5	10
Կարնո »	3				
Երզնկայի »	11	33	Աթաբեկիի »	—	19
Բաբերդի »	2	30			
Ջրգիի »	4	47	Չմշկածագում	5	89
Բեմոնի »	5	11	Տիգր. վիլայեթում	10	79
Այաշկերտի »	1	32	Տիգր. սանջակում	5	25
Բագեշի վիլ.	20	234	Բալու-Արգնի-Շընգաւշում	5	54
Բագեշի սանջ.	11	100	Մեբաստիայի վիլայեթում	12	120
Մուշի »	9	102	Ամասիա. սանջ.	6	46
Սղերդի »	—	32	Թոքաթի »	2	17
Վանի վիլայեթ.	33	138	Ամասիայի »	1	25
Վանի սանջ.	25	114	Կարահիսարի սանջ.	3	32
Լիճ-Գաուձի շրջանում	8	24			
			Ընդամենը	119	1037

[50] Գ. Սրվանձտյանց. Բերթ ազգաբ, մ., բ., էջ 170—171։

[51] Տե՛ս «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», 1903, Կ. Պոլիս, էջ 320—346, աղյուսակը կազմված է մեր կողմից։

Այդ ժամանակներ ցույց են տալիս, որ վանքերի ու եկեղեցիների մեծ մասը գտնվում էր Վանի, Կարնո և Բաղեշի վիլայեթներում։

Հայոց վանքերի անշարժ ու շարժական ունեցվածքի մասին կարելի է գաղափար հետևյալ տեղեկություններից։ Վանի վիլայեթի ս. Խաչ վանքն ուներ 12 արտ, որտեղ ցանվում էր 8 թիլե սերմ, մեկ այգի, մեկ ԹԹի և մեկ հատ էլ բարդու պարտեզ[52]։ Վանքի «հողերը,— գրում էր Մ. Մխիթարյանը,— բնագրածակ են, ինչպես և մեծագույն մասամբ անջրդի»[53]։

Ս. Վարդան վանքն ուներ 150 գիշյաներն վարելահող, բնագրածակ արտաավայրեր, ամենքն քան 1000 ոչխար, մի քանի հարյուր գոմեշ, կով, եղ և ձի[54]։ Ականատեսներից մեկը գրում էր, որ նա «լավ պահպանված և հարուստ վանքերից մեկն է»[55]։

Ս. Նաբեկա վանքն ուներ բարերներ հոգևոր, որոնց տարածությունը հասնում էր 360 չափի[56]։

Ս. Բարդուղիմեոսի Առաքելոց վանքն ուներ վարելահողեր, այգիներ ու անտառներ։ Մ. Մխիթարյանը նշում էր, որ այս վանքի հողային տարածությունները շրջանցելու համար հարկավոր է 4 ժամ՝ ձիու միջակ քայլերով[57]։ վանքը բացի հողերից ուներ նաև զգալի քանակությամբ ոչխար, լծկան, կովեր և գոմեշներ։

Ս. Կարապետի վանքն ուներ տասնյակ հազարավոր դեսյատին վարելահող, շինության ու վառելու փայտ հայթայթող բնագրածակ անտառներ և տասնյակ հազար անտառների բավականության տվող արտաավարգեր։ Բացի այդ, վանքն ուներ նաև 1000 ոչխար ու այծ, մոտ 100 կով ու մատակ, 50 ձի, եղ և էշ[58]։

Ս. Հովհաննեսի վանքն ուներ արտեր, այգիներ, արտաավայրեր, անտառներ, 300 ոչխար, 25 կով, 20 արջառ, 36 եղ, 6 էշ, ախոռներ, ձիթհանքներ, ջրաղացներ և այլն[59]։

52 Տե՛ս «Արծվի Վասպուրական», 1859, էջ 87, «Դիվան հայոց պատմության», հ. 13, էջ 480։

53 Մ. Մխիթարյան, նշված աշխատություններ, մ. Գ., էջ 241։

54 Տե՛ս Ա–դր, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 23—24։

55 Նույն տեղում, էջ 23։

56 Տե՛ս «Բյուզանդիոն», 1897, նոյեմբերի 24, Ա–գր, նշված աշխատություններ, էջ 56։

57 Տե՛ս Մ. Մխիթարյան, նշված աշխատություններ, մ. Բ., էջ 84։

58 Տե՛ս Р. Бекгульянц. Указанное сочинение, стр. 43.

59 Տե՛ս «Մասիս», 1881, նոյեմբերի 3, «Բյուզանդիոն», 1897, նոյեմբերի 24, 1906, սեպտեմբերի 28։

Խարբերդի վիլայեթում ս. Աորսորու վանքն ուներ 81 արտ, ս. Թատեմի վանքը՝ մի քանի բնտիր այգիներ, ս. Զարդարիչի վանքը՝ արտեր, այգիներ ու պարտեզներ, ս. Ղուկե վանքը՝ 60 թիլե սերմնատուտ արտ, այգիներ, պարտեզներ, ոչխարներ ու կովեր, ս. Կարմիր վանքը՝ 200 թիլե սերմնատուտ արտ ու անասուններ և այլն[60]։

Կարնո վիլայեթում ս. Աստվածածնի Կարմիր վանքն ուներ վարելահող, արտաավայրեր և կենդանիներ, ս. Հովհաննեսի կամ Ուչբիլիսի վանքը՝ «սահագին քանակությամբ բերքի վաբելահողեր և խաշարքեր... չորս աշք ջրաղաց և բավականաչափ կենդանիներ»[61]։

Հայոց վանքերի ունեցվածքի մասին կարելի է բերել նաև բազմաթիվ այլ տեղեկություններ, բայց բավարարվենք այսքանով[62]։ Դրանք ցույց են տալիս, որ վանքերը ինև զրկված էին իրենց հոգային նրբերմի բնագրածակ տրբույթներից, բայց մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տակավին չէին կորցրել իրենց տնտեսական նշանակությունը։

Վանքերի ընդհանուր դեկավարությունը գտնվում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ձեռքում, սակայն նրանց անմիջական տերերն ու կառավարիչները հանդիսանում էին տեղի միաբաններն ու հոգևոր առաջնորդները, որոնք օգտվելով սուլթանի կողմից տահմանած կարգից, վանական հողերը ձեակերպում էին իրենց անունով ու սեփականացնում։

Ինչ վերաբերում է պետական հողատիրությանը, ապա այն շատ քիչ էր և իր քանակով ու որակով անհամեմատելի կալվածատիրական հողերի հետ։ Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Խարբերդի կաղայում պետական հողերը «բազմաթիվ ու բնագրածակ չինն»[63]։

Համարյա նույն բանն էր հաստատում նաև Հ. Մուրադյանը, որը գրում էր, թե Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում «պետական ագաա հողեր շատ քիչ կան, կարելի է ասել, թե բոլորովին չեն մնացել, որովհետև դրանց մեծ մասը օրինական

60 Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Բարձ ագրար, մ. Բ., էջ 87—89, 90, 152։

61 Ա–գր, նշված աշխատություններ, էջ 209։

62 Հայոց վանքերի և եկեղեցիների ունեցվածքի մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Շահնեց, Արբավայրեր, Բիթլիս, 1902, Ասկյան Համազասպ, Վասպուրականի վանք վանքերը, Վիեննա, 1940, մ. Ա, 1942, մ. Բ։

63 А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 382.

Ին տեսքին համապարհներով գանգատ թուրք ու չերքեզ բնակիր ու ազատների ձեռքն է անցել, նրանց սեփականությունը դարձել[64]:

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանում թուրք ազատներն ու բեյերը մյուս ազգությունների հողատերերի ու հոգևորականության հետ միասին, կազմում էին ֆեոդալական շահագործող վերնախավը և ոչնչանում հասարակ հնդեվրոպական հայկական վիլայեթներում: Հավանաբար վրվելով սուլթանի կողմից, ունենալով հողային ընդարձակ սիրուլիներ, մեծ թվով դուլումներ, հանդիսանալով պաշտոնյաներ, զբաղվելով ավազակությամբ ու, ինչպես ցույց կտրվի ստորև, առևտրա-վաշխառուական գործունեությամբ, ազատներն ու բեյերը հմտորեն օգտագործում էին դրանք և ամբարգնում իրենց իշխանությունների աշխատավոր գյուղացիների նկատմամբ:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ

Արևմտյան Հայաստանի գյուղացիներն իրենց սոցիալական դրությամբ բաժանվում էին տարբեր կատեգորիաների՝ ազատների, բատրակների, ֆեոդալական կախյալ գյուղացիների և սուրուկների:

Ազատ գյուղացիները հետու էին ֆեոդալական կախումից և հարկերն ու տուրքերը տալիս էին միայն պետությանն ու կրոնական հաստատություններին: Նրանց կարելի էր հանդիպել երկրի տարբեր շրջաններում, որի մասին վկայում են հետևյալ ուղղակի և անուղղակի տեղեկությունները. Բալանքեռում կային հայտ թուրք գյուղեր, որոնք տերությունից հողերը թափու արած են և հայոց նման սեփական կալվածքի տեր են[1]:

Արաբկիրում գրեթե հողը սեփական են գյուղացոց և ամատականությունն իսպառ անհետ եղած է[2]:

Արաքայի գաւառում 77 գյուղերից 15-ը ազատ հողատերեր են և այլն[3]:

64 «Մուրճ», 1899, № 10, էջ 1209:

1 «Բալանքեռ կամ Հարքի գավառ, հավաքեց Բենան, խմբագրեց և հրատարակեց Ն. Հայկյան», Բիֆլիա, 1901, էջ 34:

2 «Մասիս», 1885, փետրվարի 2, էջ 656:

3 Ա–գո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, Երևան, 1912, էջ 281:

Ազատ գյուղացիների քիվը գյուղացիության ընդհանուր քվի համեմատությամբ փոքր էր, բայց մինչև 1880-ական թվականները համեմատաբար մեծ էր: Այն մեծ էր Հատակապես Կարնո վիլայեթում, որը, ըստ երևույթին, պետք է բացատրել նրանով, որ Արևելյան և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ազատներից ու բհկերից ոմանք կատորվել էին, իսկ մյուսները՝ փախել: Սակայն հետագա տարիներին, կալվածատիրական հողատիրության բնագրծման հետևանքով, ինչպես ցույց կտրվի ստորև, ազատ գյուղացիների քիվը համարյա ամենուրեք սրագորեն նվազում է, իսկ որոշ տեղերում՝ իսպառ անհետանում:

Բատրակները, ինչպես ընդունված է ասել, գյուղական պրոլետարներն էին: Նրանք, չունենալով սպրուստի ուրիշ միջոց, ստիպված վաճառում էին իրենց աշխատուժը շնչին գնով: Այսպես, 1890-ական թվականներին Բալանքեռում նրանք ձմռանը վարձվում էին երեք ամսով և առանում 30—40 դուրուշ, շապիկ ու վարտիք, իսկ գարնանն ու ամռանը՝ մոտ վեց ամսով և առանում 10—12 բիլե ցորեն, շապիկ, վարտիք, մի մամի (գլխի փաթաթոց), մի ապա (կարճկիկ կապա) և մի զույգ գուլպա: Այն բատրակները, որոնք վարձվում էին սեզոնով (սովորաբար հնձից մինչև կալի ավարտումը) կոչվում էին քեսատա: Ուշագրավ է, որ դրամական տնտեսության թույլ զարգացման հետևանքով բատրակները ստանում էին իրենց աշխատավարձը առավելապես բնամթերքով[1]:

Բացի Բալանքեռից, բատրակներ կային նաև Կարնո և Երզնկայի սանջակներում, Բալուում, Խարբերդի գաշտում և այլ տեղերում: Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Խարբերդի կաղայում հողատուրկ հայերն իրենց բնատնիքներով վարձվում են հողատերերի մոտ, սամեննշնչին աշխատավարձով, որը հազիվ է բավարարում պարենամթերքներ գնելու և ուղղակի հարկերը վճարելու համար[2]:

Բատրակները հողատերերի մոտ ավելի շատ էին վարձվում, քան հարուստ գյուղացիներին: Բայց չնայած դրան, նրանց աշխատանքը ոչ մի տեղում ու ոչ մի տնտեսության մեջ չէր կազմում արտադրության հիմքը, այն ամենուրեք ուներ երկրորդական նշանակություն:

Ֆեոդալական կախյալ գյուղացիներից պետք է հիշատակել

4 Տե՛ս «Բալանքեռ կամ Հարքի գավառ», էջ 66:

5 **А. М. Колюбакин.** Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1891, т. III, ч. 1, отд. 2-й, стр. 391.

ամենից առաջ կիսաբարիներին կամ մարաբաններին։ Մարաբա[6] տերմինը ծագում է արարերեն մյուռաբաա բառից, որը Կարապետ Շեքիի բացատրությամբ նշանակում է ագարնան օրերուն համար պայմանագրություն կնքելով գործատուին բնելու[7]։ Սկզբնական շրջանում, ըստ երևույթին, այդ տերմինի տակ համապատասխան հասկացվել են պայմանավորվող երկու կողմերը[8]։ Բայց հետագայում, երբ հողագործ գյուղացիների թիվը սկսել է շատանալ և նրանք ավելի ու ավելի հաճախ են դիմել հողատերերին՝ հանդգնելով վարձակալելու համար և այդ հողի վրա առաջացել է հրամայողի ու ենթարկվողի հարաբերություն, մարաբա տերմինի տակ արդեն հասկացվել են համարյա բացառապես հողագործի գյուղացիները։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում կար երկու տիպի մարաբա։ Մեկը բոլորովին ընչազուրկ էր, իսկ մյուսը ուներ միայն բանող անասուններ ու երկրագործական գործիքներ[9]։ Ա-գոն հիշատակում էր. «Մարաբայությունը բաժանվում է երկուսի։ Դրանցից մեկն այն է, որ հողը պատկանում է ագային, իսկ լծկանն ու գործիքները՝ մարաբային...», մյուսն այն, որ մարաբան «զուրկ է ամեն ինչից՝ և հողից, և սերմից, և լծկանից և գործիքից»[10]։

Մարաբաները վարձակալում էին տերունական վարելահողերը։ մարգագետիններն ու արոտավայրերը քե գյուղերով, կամ ինչպես ընդունված էր ասել, դեղովի, և քե առանձին բնատնիրեներով (ով ինչքան կարող էր)՝ ումանք մեկ տարով, մյուսները՝ երկու, իսկ երբորդները՝ ավելի։

6 Ի դեպ՝ այդ տերմինը երկրի տարբեր շրջաններում արտասանվում էր տարբեր կերպ, իսկ տարբեր աղբյուրներում հետևյալ ձևերով տարբեր—մարաբա, մարապա, մերիպա, մերբա, միրպա, մերբա, մրիպա, մըրբրա, մըրբպա, մերբա, մերապա և այլն։

7 Տե՛ս, Մեծ բառարան սամանների հայերեն, Կ. Պոլիս, 1912, էջ 776։

8 Ուշագրավ է, որ անգամ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում որոշ հեղինակներ, ըստ երևույթին, դեկավարվելով կենցաղում դեռևս պահպանված հին համոզմունքով, շարունակում էին մարաբա անվանել ինչպես հողատիրոջը, նույնպես և հողագործ գյուղացուն։ Այսպես, Գեղամ Տեր-Գաբրիելյանը նշում էր. «Գերամ ամոզ և ամուրը միանգամայն միևնույն կը նշվին», տե՛ս նրա «Հողային հարցը Հայաստան հանգանքների մեջ», Կ. Պոլիս, 1911, էջ 291։

9 Չի կարելի անտեսել, որ մարաբաների շարքում, հանդիպում էին նաև այնպիսիները (ճիշտ է, թվով շատ քիչ), որոնք հողատեր ունեին (տե՛ս «Բուլանըխ համ Հարրի գավառ», էջ 49)։

10 Ա-գո, նշված աշխատությունը, էջ 228։

Այդ վարձակալումների հետևանքով հողատերերի և մարաբաների միջև ձևակերպվում էին կապալային բնույթի զանազան հարաբերություններ։ Այսպես, երբեմն հողատերը տալիս էր հողը, իսկ մարաբան՝ գործիքները, եզն ու աշխատանքը»[11]։

Երբեմն հողատերը բացի հողից տալիս էր նաև սերմնացուն, «իսկ մշակելու գործիքները, եզն ու ամեն աշխատանք մարաբայի պարտքն էր»[12]։

Երբեմն հողատերը տալիս էր սերմ, եզներ և երկրագործական գործիքներ, որոնցով սակավահող մարաբան մշակում էր իր արտը։ Վերջինս արբչի տարի որ ուզենա բնկեր մնալ, քաղաքացին (իմա՝ հողատեր-մշխատուն—Ա. Հ.) սերմ տալու միայն պարտավոր է, ուրիշ որևէ ծախքի կամ աշխատանքի չի խառնվիր. միայն գործին ավելի գյուտություն տալու համար՝ նրն որևէ գործիք մը պակսի, կը գնե պայմանով, որ ինչպես եղները՝ ան ալ իրեն պատկանի աշխատուխյունը ըմենալե հետու նրն գյուղացին չուզե՝ մերիքա մնալ և կամ քաղաքացին չուզե այլևս շարունակել մերիքայություն, իր եղները և գնած գործիքը (եթե կա) ետ կառնե»[13]։

Երբեմն հողատեր-մշխատուն պարտք էր տալիս մարաբաներին և ստիպում նրանց պարտքի կամ տոկոսի փոխարեն վարել ու ցանել, հնձել ու կալսել[14]։

Երբեմն հողատերերը տալիս էին մարաբաներին քե՛ հող, քե՛ սերմացու, քե՛ եղներ, քե՛ գյուղատնտեսական գործիքներ, մի խոսքով՝ ամեն ինչ, իսկ մարաբաները՝ միայն իրենց աշխատանքը։ Այդպես էր, օրինակ, Մարր-սու գավառակում։ Այստեղ, ըստ ականատես Աղպիրանց-արյունի վկայության, ամիրբրա կկոչվին անոնք, որոնք ագայի սեփական հողին վրա կցանեն ագայի տված սերմը, մշակելով ագայի եղներով, գութանով և այլն»[15]։

Կարելի է կապալային հարաբերությունների այդ ձևերի թիվն ավելացնել, բայց սահմանափակվենք բերածներով. նշենք միայն այն, որ կիսաբար-մարաբաններն այդ բոլոր դեպքերում կապվածատրական հողի մշակման հետ մեկտեղ կատարում էին նաև նրա տնային ու պաշտային համարյա բոլոր աշխատանքները։ Տարեվերի վարում ու ցանում էին ագայի կիսաբարությամբ չտված հողերը, տեղափոխում խոտն ու օրանը, հնձում ու կալսում հացահատիկը,

11 «Մշակ», 1889, նոյեմբերի 23։

12 «Մշակ», 1879, սեպտեմբերի 29։

13 «Մշակ», 1907, հոկտեմբերի 23։

14 Տե՛ս, «Մասիս», 1881, դեկտեմբերի 18։

15 «Մշակ», 1907, հոկտեմբերի 26։

կերակրում էին անասուններին և այլն։ Իսկ կանայք ու աղջիկները կարում ու կարկատում էին աղայի և նրա ընտանիքի անդամների շորերը, լվանում ու մաքրում դրանք, կթում կովն ու ոչխարը, պատրաստում յուղն ու պանիրը, յուղն ու չորթները, ձավարն ու չիրը, մի խոսքով՝ կատարում այն ամենը, ինչ հրամայում էր աները։

Արևմտյան Հայաստանում գյուղացիության ֆեոդալական կախվածության ձևերից էին նաև կրշլաղությունը, դաֆիությունը և նուռատաիրությունը։

Կրշլաղության էությունն այն էր, որ քրդական ցեղապետերից շատերն աշնանն իջնում էին ամրերից և իրենց ղուլամների, ցեղակիցների ու անասունների հետ միասին ձմեռում հայկական գյուղերում։ Բնակիչներն ամի ու սաթաափի տակ հարկադրված էին կերակրել նրանց բոլորին։ Այսպես, 1862 թ. Գ. Արմանճյանցը գրում էր. «Վրանաբնակ քյուրդեր աշնան եղանակներ կուգան հայոց գիւղերը ձմեռելու և հայիր ամեն տարի իրենց տուն ու անասնոց պետքերուն հետ կը հազան ու կը պատրաստեն նոցա համար ևս ամեն կերպ պիտուքն ու կարիքը»[16]։ Երբեմն ցեղապետերը ձմեռում էին նաև երկրագործ քրդերի գյուղերում[17]։

Կրշլաղությունը տարածված էր գերազանցապես Ազրակում, Մուշում, Վարդոյում, Խնուսում, Բալանըքում, Մանազկերտում և այլ տեղերում։

Դաֆիրության էությունն այն է, որ ազաները իրենց հայտարարում էին գյուղացիներին կոդմական հարձակումներից «պաշտպանողներ» և այդ «պաշտպանության» համար ստիպում նրանց, մշտապես վճարելու դանազան հարկեր ու տուրքեր, 1909 թ. Սասունի գյուղացիներից մեկն ասում էր. «Մեր գյուղը առաջ 30—40 ոսկի խաֆիրության տուրք կուտար Սասնո պեկիրուն, որոնք օրեբով հեռու մեզմե՝ իրբև թե մեր կյանքը պիտի պաշտպանեին այդ տուրքի փոխարենն»[18]։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում դաֆիրությունը հանդես էր գալիս արդեն երկու ձևով։ Դրանցից մեկի ժամանակ տակավին պահպանվել էր գյուղացիների ֆեոդալական կախյալ վիճակը, իսկ մյուսի ժամանակ նրանք արդեն դարձել էին աղաների ու բեյերի փաստացի ճորտերը։

16 «Արձագանք», 1862—1863, № 3, էջ 73։

17 Ես՝ Мела Махмуд Баязиди. Нравы и обычаи курдов. М., 1963, стр. 52.

18 Թաղիկ. Սասուն, Կ. Պոլիս, 1909, էջ 3։

Դաֆիրության ճորտատիրական ձևի մասին վկայում էր Գ. Ագվանյանը, որը 1872 թ. Մուշից գրում էր. «Մերազնյա դաս մը ժողովուրդ, որ ի Բոնաշեն, ի Խութ, ի Սասունք և ի Շատախ գավառներ, բյուրեղու հետ խառն կրնակին, նոցա գլխավորներուն, որ խաֆիր կսվին, ճորտ լինելով՝ ամենադառն կենաց վիճակված են։ Դաս դաս նոցա բաժին եղած՝ յուրաքանչյուրն իրբև հպատակ և սեփականության համարված, տարեկան տուրք կուտան խաֆիրներուն...։ Այն մարդակերպ-վայրենի գազան խաֆիրներ (ճորտատեր) ինքնագլուխ և ապատամբ վիճակի մեջ լինելով, իրենց ճորտ հայերը՝ կանայք և որդիովք, շարժական և անշարժ կալվածքներով իրարու ծախելու սովորություն ունին, և երբ իրարու դեմ կատաղին և քշնամանան, յուրաքանչյուրն՝ իրենց հպատակ հայերը բռնությամբ առնելին ձգելով, իրարու սահման կապատակեն, մանավանդ քե հայոց բնակած գնդերու վրա հարձակվելով կը կողոպտեն, կը բանդեն, կավրեն, կը վիրավորեն, կսպանեն և իր վերադառնան տեղերնին... Գերիներ խաֆիրներ, երբ մանչ ծնանելու լինին, հանձնելու ճորտի տունն՝ ոչխարով և գառամբ աչքուսի պիտի երթան, աղայի գեհասացու պիտի տանին, այնինչ հայոց մերկանդամ կանայք՝ ձեռքով իրենց կուրծքը ծածկելու ապրան վիճակի մեջ կգտնվին։ Երբ պատանեկության հասնի, դներ պիտի պատրաստեն անոր կին առնելու առներ, դալան (պաշլըխ) պիտի տան հարսնացուի ծնողաց, և հարսնյաց պիտուքը պիտի պատրաստեն։ Եթե մեռանիլ պատահի, ոչխար, յուղ, պանիր և այլ տանելով՝ կմխիթարեն վիճաբերներ։ Բայց ընդհանուր ազգության նախատիպն այն կետն է, որ նախապետացն հայոց պարկեշտության առագաստի հարսներ և սրբության բողի ներքև անած աղջիկներ, այսօր հոշոտի եղած, խաֆիրներու տան մեջ, իրբև հարճ օրերով ձավարը, կորկոտը շինելու, լաթը լվանալու և կարկատելու ապատարկության կրնեն՝ լոկ արտասվոտ և անոնց կրկրելի արտերը քաղհանելու շաբաթներով կաշխատին մերկ անձամբ և բոկ ոտամբ, արևակեղ և փշահար եղած...»[19]։

Դաֆիրությունը տարածված էր Մասունում, Խութում, Մուշում, Խիզանում Մոկսում, Շատախում, Բոնաշենում և այլ տեղերում[20]։

Ինչպես կրշլաղությունը, նույնպես և նախնական դաֆիրությունը հանդիսանում էին ֆեոդալական հարաբերությունների պրի-

19 «Մասիս», 1872, Մայիսի 18։

20 Գ. Սրվանձտյանց. Հնդ և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 156—157։

միախիլ ձևերը, որոնց ժամանակ գյուղացիները ազատ տեղափոխման իրավունք ունեին։

Բայց ճորտատիրության ժամանակ ազանների ու բեյերը, տիրելով հողին, գյուղացիներին ամրացրել էին դրան և զրկել նրանց տեղափոխման իրավունքից։ Սրն պատահում էր, որ գյուղացիները փախչում էին, ապա բռնությամբ նա էին վերադարձնում։ Այսպես, Սասունի Գեմ գյուղի բնակիչները, երբ որոշում են գաղթել, նրանց ազան Քոլլ չի տալիս, իսկ Ալաշկերտի 14 գյուղի բնակիչներ, թվով 980 հոգի, երբ փորձում են փախչել Պարսկաստան, նրանց տերերը՝ Ահմեդ և Մուհամեդ բեյերը ստիպում են վերադառնալ իրենց տեղերը[21]։

Ուշադրավ է, որ գյուղացիները փախչելու համար հաճախ կազմում էին խմբեր և վարձում վիկեղներ, որոնք սովորաբար լինում էին մահմեդականներից։

Գյուղացիների ամրացումը հողին և նրանց տեղափոխումների արգելափակումը, իհարկե, հանդիսանում էին ճորտատիրության ամենաակարևոր հատկանիշները։ Սակայն, դրանց հետ կապված էին ճորտատիրության նաև այլ հատկանիշներ՝ ֆեոդալի ունեցած վարչական, դատական և անձնական իրավունքները գյուղացիների նկատմամբ[22]։

Արևմտյան Հայաստանում ազաներն ու բեյերը իրենց ճորտերին արհամարհաբար անվանում էին ֆլա. «հանցանքների» մեջ մեղադրված ֆլաներին տանջում էին, ծեծում «խելացնոց բնելու չափ»[23], կապում էին ականջները, պոկում եղունգները, հանում աչքերը, նաև ոչնչում ցցին և այլն։

21 Թեւասաանի արտաքին բազարականության արխիվ, ֆ., «Քազարխիվ», 1882—1894, գ. 1630, թ. 9։

22 Այսպես, ազաներն ու բեյերը հաճախ իրենց էին ամուսնացնում իրենց ճորտերի աղջիկներին ու տղաներին, իսկ երբ ամուսնությունը կատարվում էր ազատ նրանց միության, ապա ամուսնացողը պատժվում էին։ Մուշեցի գյուղացիներից մեկը 1881 թ. պատմում էր. «7—8 տարի առաջ աղջիկ մը ունեի, հայ երիտասարդի հետ նշանեցի, տիրոջս հրամանը չհարցնելով, նշանն ալ օրշնել տվի, ի վերջո տերս լսեց, տասնիկ բարկությամբ գյուղ եկավ՝ ինձ նեղություններ տալն վերջը ի պատիժ իմ հանցագործության տաս հատ ոսկի, քանի մը հատ ոչխար, 3—4 զույգ նոր կոշիկ և այլն, տուցածը տանելով՝ նույն նշանն ալ բակից և աղջիկս ուրիշի տալ տվավ» («Մասիս», 1881, նոյեմբերի 17)։

Երկրի շատ շրջաններում ազաները ու բեյերը օգտվում էին առաջին գիշերվա իրավունքից։ «Մշակ»-ի թղթակիցը 1898 թ. գրում էր, որ Բալանքեխ Տոհրատ գյուղում Բաղր ազայի որդին «Տերտասան հարսի առաջատը... կնանն և ամենչքնաց կուսերին անմեղությամբ կառնակե» («Մշակ», 1898, մայիսի 13)։

23 «Ինքան Հայոց պատմության», հ. 13, էջ 201։

Ճորտատիրությունը՝ անձնական կախվածության այդ ամենածանր և սոսկալի ձևը տարածված էր գլխավորապես Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի վիլայեթներում և մնացած վիլայեթների մի շարք շրջաններում։

Գյուղացիների ճորտական վիճակը կարող է իրավացիորեն ձևակերպվել և չձևակերպվել։ Օրինակ՝ Ռումինիայում XIX դարի սկզբին ճորտատիրական հարաբերություններ գոյություն ունեին «միայն փաստորեն», բայց ոչ իրավաբանորեն[24], իսկ Գերմանիայում՝ էլբայի աջ ափին XVI դարում գյուղացիները ճորտացվեցին «սկզբում փաստորեն, իսկ հետո նաև իրավապես»[25]։

Արևմտյան Հայաստանում ճորտատիրությունը իրավապես ձևակերպված էր։ Բայց ի տարբերություն այլ երկրների, որտեղ գյուղացիներն ամրացված էին ճորտերջը, այստեղ նրանք ամրացված էին գյուղին կամ շրջանին[26]։

Սարկիսյանը Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում, գոյություն ուներ մինչև 1858 թ. սուլթան Աբդուլ-Մեջիդը հատուկ օրենք հրատարակեց նրա արգելման մասին, բայց այդ օրենքը մնաց սոսկ թղթի վրա։ Թուրքական մարդակերները առաջվա նման շարունակում էին Աֆրիկայում որսալ նեգրերին, իսկ Արևմտյան Հայաստանում՝ քրիստոնյաներին և վաճառել բարձրաստիճան պաշտոնյաներին կամ ազաներին ու բեյերին։ Բաֆֆին պատմում էր, որ Ջալալեդդինի արշավանքի ժամանակ քրդերը գերել էին հայ կանանց ու աղջիկներին և վաճառում էին «մարդ չկա,— ըրում էր նա,— որ մի քանի հատ բերած չլինի, շատերին վաճառում են... Շատ չժան է, մի աղջիկը մի արծաթ մեջիդիյով (1 ռուբլի 20 կոպեկ) կարելի է առնել»[27]։

1876 թ. դեկտեմբերի 1-ին անգլիական «Գերիների ազատություն» ընկերությունը դիմեց ռուսական ցարին, խնդրելով միջա-

24 Ն. Մարին, Կապիտալ, Երևան, 1954, հ. 1, էջ 249։

25 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 21, стр. 248.

26 Դեռ XV—XVII դդ. Թուրքական սուլթանների օրենսգրքերում սահմանվում էր. «Թիմարից փախած ռայաներին հավաքիր—օրենք էր։ Կամ՝ «Երե հողին կցված ռայան, թողնելով իր հողը, հեռանում է ապա նրան պետք է վերադարձնել իր նախկին անդր»։ «Аграрный строй Османской империи XV—XVII вв. Документы и материалы. Составление, перевод и комментарии А. С. Тверитиновой», М., 1963, стр. 35.

27 Բաֆֆի, հ. 3, էջ 65։ Տե՛ս նաև **М. П. Роллен Жекмен**, Армения, армяне и трактаты. Перевод с французского о-ха, М., 1896, стр. 66—67.

մոտ՝ Թուրքիայում մարզամաճառությունը վերացնելու գործին։ Նա ցույց էր տալիս, որ Թուրքերը յուրաքանչյուր տարի նկզիր որպիս Աֆրիկայում ոչնչացնում են 4000—5000 ուսմորդ[28]։

Մեզ անհայտ է, թե ինչ է պատասխանել ցարը, սակայն գիտենք, որ 1889 թ. Թուրքական սուլթանը նոր օրենք հրատարակեց այն ապրուկների ապաուելության մասին, որոնց սերերը չէին կարող ապացուցել իրենց օրինական իրավունքները նրանց նկատմամբ։ Չնայած դրան, Թուրքիայում ստրկությունը շարունակում է իր գոյությունը նաև հետագա տարիներին։ Սորուկները, որոնք երկրի որոշ շրջաններում (օրինակ Տիգրանակերտի վիլայեթում) կոչվում էին զար զուլի[29], այնտեղ ոսկով գնված ծառաներ, աշխատում էին համարյա բացառապես ստրկատերերի տներում, հանդիսանալով նրանց ծառաները, ապաուավրները և այլն։ Գուլբենկյանն գրում էր. «Թուրքական պրովինցիաներում ստրկական աշխատանքը գյուղատնտեսության և տնտեսական արդյունաբերության մեջ համարյա չի կիրառվում։ Սակայն տնային պայմաններում բավականաչափ բան է օգտագործվում այնտեղ»[30]։

Գյուղացիության նշված կատեգորիաներից ամենաթափոնամարդը ֆեոդալական կախյալ գյուղացիներն էին (այսինքն՝ կիսաթափները, հարկատուները ու ձորտերը), ապա ազատները, իսկ բատրակները և մանավանդ ստրուկները շատ քիչ էին։

* * *

Անդրադառնալով գյուղացիների ունեցվածքի բնութագրմանը, ամենից առաջ պետք է նշել, որ չկան առանձին տվյալներ նրանց տարբեր կատեգորիաների մասին։ Բայց կան բնորոշ տեղեկություններ, որոնց համաձայն գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն 1909—1910 թթ. ուներ հետևյալ տարածությամբ հողակտոր[31]։

Սերատաֆի վիլայեթում	2,4 հեկ.	վարելահող
Խորթերդի »	1,9 հեկ.	»
Կարս »	1,5 հեկ.	»
Վանի »	3,3 հեկ.	»
Տիգրանակերտի »	4,0 հեկ.	»
Բագեշի »	8,3 հեկ.	»

Համ միջին հաշվով՝ 3,5 հեկ. վարելահող։ Այդ նշանակում է, որ գյուղացիները տառապում էին սակավահողությունից։ Ամենատափահող հայերն էին, ապա՝ քրդերն ու թուրքերը։ Այսպես. Խորթերդի կազայում հայ չուներ հայ գյուղացիության 74,1%-ը, իսկ թուրք գյուղացիության՝ 23,2%-ը[32]։ Յուրաքանչյուր հայ գյուղացի ուներ միջին հաշվով 4 դես., իսկ թուրք գյուղացին՝ 5—8 դես. վարելահող[33]։ Գյուղացիների սակավահողությունը պայմանավորված էր ոչ թե հողային ֆոնդի սահմանափակությամբ, այլ կալվածատիրական հողատիրության առկայությամբ։ Բնչերն ու աղանները գերազանում էին իրենց հողերը ծառայեցնել հատերի բազմացման նպատակին, քան տալ գյուղացիներին՝ նկատի ունենալով իրավունքով, իսկ այն, ինչ տալիս էին գյուղացիներին, տալիս էին նրանց հողին ամրացնելու և շահագործելու, բայց ոչ երբեք ազատվելու համար։

Գյուղացին սակավահողության հետ մեկտեղ նեղվում էր նաև իր հողամասի շերտերնդիվիզիայնությունից, որը թեև ոչ մի անգամ այնպես տարածված չէր, ինչպես Արևմտյան Հայաստանում։ Արթիվային մի փաստաթղթում կարդում ենք. «Յուրաքանչյուր առանձին անհատի հանդակները երբեք չեն կազմել անընդմեջ հողամաս, այլ փոքր շերտերնդմիջյա կտորներով գրված են եղել գյուղի հանգի տարբեր տեղերում։ Յուրաքանչյուր այդպիսի կտորի համար գոյություն ունի առանձին փաստաթուղթ, որի մեջ նշված են նրա տարածությունն ու սահմանները»[34]։

Արևմտյան Հայաստանի գյուղացիների ունեցած անասունների պիտաքանակի մասին կարելի է գաղափար կազմել 1896—1899 թթ. Կարնո վիլայեթի ներքոհիշյալ կազաններին վերաբերող հետևյալ տվյալներից[35]։

28 ՌԱՔԱ, ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա», 1876, գ. 551, թթ. 94—95։

29 Ի դեպ՝ որոշ ազբյուրներում այդ տերմինն ազատագված կերպով գրված է վերխաուլի (տե՛ս **В. Штреккер**. Очерки Верхней Армении, Тифлис, 1873, стр. 71—72), իսկ որոշ ազբյուրներում էլ՝ վեր-կաուրի (տե՛ս **Х. Ф. Б. Линч**. Армения, т. II, стр. 554)։

30 **И. И. Голобородько**. Турция, М., 1912, стр. 14.

31 Տե՛ս **А. Д. Новичев**. Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 268.

32 Տե՛ս **А. М. Колюбакин**. Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 376—377.

33 Նույն տեղում, էջ 380։

34 Վրաստանի ՍՍՌ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 345, գ. 2070, թթ. 27—28։

35 Տե՛ս **А. М. Пржевальский**. Вилайет Эрзерум ч. I (ազատագրված եղվելված է մեր կողմից. երա մեջ չի մտցված ձիերի, ջորիների, էշերի, ուղտերի և խոզերի չնչին թիվը)։

Գաղաններ	Տնտեսությունների թիվը	Ընդհանուր անասունների քանակը	Մանր եղջ. անասունների քանակը	Մեկ անտեսությանը գալիս է	
				խոշոր եղջ. անասուն	մանր եղջ. անասուն
Բաբերդի	9402	43582	132865	4,6	14,1
Բասենի	8402	31355	205335	3,7	24,4
Բրդկի	7970	42778	152314	5,3	19,1
Դեբջանի	6141	43390	102087	7,0	16,6
Մալերի	5301	7439	61741	1,4	11,6
Տեսկիսի	6098	12287	62874	2,0	10,4
Թոքմաուի	4088	21618	72087	5,2	17,6
Նաժրվանի	3490	8997	50808	2,6	14,6

Այդ աղյուսակը ցույց է տալիս, որ Երկրի անասնապահական շրջաններում գյուղացիները շատ ունեին անասուններ, իսկ ոչ անասնապահական շրջաններում՝ քիչ։ Բայց ընդհանուր առմամբ նրանց անասունների պահպանակը քիչ էր։ Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր տնտեսություն միջին հաշվով ուներ 3—4 խոշոր և 15—16 մանր եղջերավոր անասուն (անգամ ուշադրություն չդարձնելով, որ միջին տվյալները, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը «իրականությունն ավելի լավ գույներով են ներկայացնում, քան նա կա»[36]) և եթե ընդունենք, որ խոշոր եղջերավոր անասունների մատ կեսը բանող էր, իսկ կեսը՝ կաթնատու, ապա դժվար չի համոզվել, որ այդ թիվը անբավարար էր թիչ թե շատ կանոնավոր տնտեսություն վարելու և բնականից պահելու համար։

Երկրի հացահատիկային շրջաններում գյուղացիների ունեցած անասունների պահպանակն ավելի քիչ էր։ Օրինակ՝ Ախրերդի դաշտում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն ուներ միջին հաշվով 3 գլուխ խոշոր և 2—5 գլուխ մանր եղջերավոր անասուն[37]։

Ուշագրավ է, որ տարբեր ազգությունների գյուղացիների միջև հողատիրության բնագավառում եղած տարբերությունը արտահայտվում էր նաև անասնապահության մեջ. Բուրթ և քուրդ գյուղացիներն ավելի շատ անասուն ունեին, քան հայերը։ Նույն Ախրերդի կազայում 1880-ական թվականների կեսերին անասնագլուխ էր հայ գյուղացիության 74,1%-ը, իսկ թուրք գյուղացիության՝ 23,2%-ը։ Եթե յուրաքանչյուր թուրք տնտեսություն ուներ միջին հաշվով 2—5 գլուխ, ապա հայ տնտեսություն՝ 2—4 գլուխ մանր եղջերավոր անասուն[38]։ Դրությունը համարյա այդպիսին էր նաև Երկրի մյուս շրջաններում։

Գյուղացիության զգալի մասը զուրկ էր աշխատանքի գործիքներից։ Շատերը նույնիսկ դուիանի մասին անգամ պատկերացում չունեին[39]։ Նրանց համար հողի մշակման միակ միջոցը հանդիսանում էր արորը։ Իսկ սայլ ունեին ոչ բոլորը։ Այսպես. Կարնո վիլայեթի նիքոհիշյալ կազաներում 1888 թ. գյուղացիական տնտեսությունները ունեին հետևյալ քանակությամբ սայլ[40].

Կազաները	Տնտեսությունների քանակը	Սայլերի քանակը
Բասենի	6496	4549
Բայազետի	2458	143
Դիադինի	1583	206
Կաթաքիսենի	1664	629
Ալաշկերտի	2647	963
Ալաշկերտի	2244	912
Հոգամները՝	17086	7402

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ 17086 տնտեսություններից միայն 7402-ը կամ 43,3%-ն ուներ սայլ։

Երկրի այլ շրջաններում սայլ չունեցող գյուղացիների տոկոսն ավելի բարձր էր։

Աշխատանքի գործիքներ չունենալու պատճառով գյուղացիները հաճախ ստիպված էին ուղղակի փորփրել հողը, իսկ բեռները տեղափոխել անասուններով կամ պարզապես շալակով։ Այսպես՝ Մոկսում գյուղային «հեռավոր լեռների ու ձորերի լանջերում ընկած փոքրիկ արտերից ցորենն ու գարին կրում է շալակով և ծնծում, վրան կենդանիներ պատեցնելով. կալսելու գործիքներ այստեղ գոյություն չունեն»[41]։

[36] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 170։

[37] **А. М. Колюбакин.** Материалы..., т. III, ч. 1, отд. 2, стр. 425, 431.

[38] **А. М. Колюбакин.** Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 425, 431.

[39] Նույն տեղում, էջ 389։

[40] **А. М. Колюбакин.** Материалы... т. II, ч. II, стр. 100—101, 234—235, 280—281, 316—317, 360—361, 400—401.

[41] Ա-դս, նշված աշխատությունը, էջ 72։

Իսկ Մուշի դաշտում շատ գյուղացիներ ապրի փոխարեն զործ էին ածում պալիտը անունով մի գործիք, որը սահնակի մի պրիմիտիվ ձևն էր և որը թարշ էին տալիս երկու լծարիկ եղումներ։

Ճիշտ է, XIX դարի վերջին և հատկապես XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանում, ինչպես ցույց կարելի տարբեր, սկսեցին մուծվել այն ժամանակվա համար կատարելագործված գյուղատնտեսական գործիքներ, բայց տիրապետող տնտեսական ու քաղաքական պայմանների հետևանքով լայն տարածում չստացան։ Նրանց դեղերին ու օգտագործողները գերազանցապես հողատերերն ու հարուստ գյուղացիներն էին։

Արևմտյան Հայաստանի գյուղացիները բնդհանրապես չքավոր կյանք էին վարում։ Նրանք ի վիճակի չէին ունենալու ոչ միայն կատարելագործված, շատ հաճախ անգամ իր զարն ապրած գործիքներ և այդ պատճառով իրենց տնտեսությունը վարում էին պապենական եղանակներով։

Բայց այդուհանդերձ, XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին գյուղացիների մոտ արդեն առկա էր ունեցվածքային շերտավորումը։ Այդ բանը կարելի է տեսնել, նայե վերցնենք նրանց վարելահողերի մասին եղած ամփոփները։ Վ. Ի. Լենինը նշում է. «Հողը, անկասկած, արտադրության գլխավոր միջոց է գյուղատնտեսության մեջ. ուստի և հողի քանակությամբ կարելի է ամենից ավելի ճիշտ կերպով դատել տնտեսության չափերի, հետևաբար նաև նրա տիպի մասին, այսինքն՝ օրինակ, այն մասին, թե արդյոք խոսքը վերաբերում է մանր, միջակ, խոշոր կապիտալիստական, թե վարձու աշխատանք չկիրառող տնտեսության[42]։

Ճիշտ է, երկրի տարբեր շրջաններում միևնույն կամ տարբեր ազգության պատկանող գյուղացիների մոտ հարուստ կամ աղքատ հանգամանքները տարբեր էր, բայց գյուղացիության շերտավորումը ցույց տալու և փաստերն ընդհանրացնելու համար անհրաժեշտ է վերանալ այդ տարբերություններից։

1909—1910 թթ. երկրի ներքոհիշյալ շրջաններում գյուղացիության տնտեսական տարբեր շերտերը տոհմային հարաբերությամբ հետևյալ պատկերն էին ներկայացնում[43]։

42 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 16, էջ 562։

43 А. Д. Новичев. Указанное сочинение, стр. 268. *(Աղյուսակը կազմված է մեր կողմից)։*

Վիլայեթները	Մինչև 1 հեկտար վարելահող ունեցող տնտեսությունների տոկոսը	1—5 հեկտար վարելահող ունեցող տնտեսությունների տոկոսը	5 հեկտարից բարձր վարելահող ունեցող տնտեսությունների տոկոսը
Բագեշի	21	41	38
Բաբերդի	27	45	28
Կարնո	45	40	15
Վանի	36	37	27
Տիգրանակերտի	17	36	47
Ակնատեսի	32	46	22
Ընդամենը՝	30	41	29

Եթե մինչև 1 հեկտար վարելահող ունեցող տնտեսությունները համարենք չքավորներ, 1—5 հեկտար ունեցողները՝ միջակներ և 5 հեկտարից ավելի ունեցողներին՝ հարուստներ, ապա կստանանք՝

չքավորներ	30%
միջակներ	41%
հարուստներ	29%

Բացի վարելահողերից, գյուղացիության շերտավորումը կարելի է ցուցադրել նաև անասունների գլխաքանակով։ Այսպես. 1912 թ. Կարնո վիլայեթի Դերջանի կազայի ներքոհիշյալ գյուղերի տնտեսություններն ունեին հետևյալ քանակով բանող անասուն[44],

Գյուղերի անունները	Տնտեսությունների քանակը	Բանող անասունների քանակը	Անասուն չունեցող տնտ. քանակը	Բանող անասուն ունեցող տնտ. քիվը				
				1 գլ.	2 գլ.	3—4 գլ.	5—6 գլ.	7—8 գլ.
1	2	3	4	5	6	7	8	9
Դըմիկ	26	96	7	—	4	9	1	5
Վիման	19	40	7	1	3	7	1	—
Քագոզ (Դերջին)	22	73	7	1	4	5	1	4
Քագոզ (վերին)	9	49	2	—	1	1	2	3
Փիրիչ	120	236	58	—	29	18	11	4
Եղնդերի	31	66	12	—	11	5	2	1
Բագռանց	130	260	61	1	31	22	5	10
Ծղրնդա խոպան	11	22	7	—	—	1	3	—
Ձրջնդա	25	108	9	—	5	4	1	6
Քաչ	24	74	9	—	6	4	2	3
Բուլը	81	248	17	1	27	25	3	8
Գառնաբերդակ	14	92	2	—	—	4	2	6
Չոպեվերը	23	53	7	1	7	5	3	—
Հեթանի	7	18	2	—	1	1	2	—
Ագարակ	6	48	1	—	—	1	—	4

44 Տե՛ս Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 57, գ. 733։ Աղյուսակը կազմված է մեր կողմից։ Այդ գործի մեջ նշված են անուն-

1	2	3	4	5	6	7	8	9
Ջամուր-գերդ	12	34	4	—	3	2	2	1
Հոգեք	30	89	11	—	7	3	2	5
Սարի գալա	22	130	3	—	3	3	6	7
Գալիեք	47	170	13	—	13	8	2	2
Ազրանք	23	107	7	1	1	5	3	7
Ծագկաբի	27	61	15	2	3	3	—	4
Ընդամենը[1]	705	2074	261	8	159	136	54	87

Նրա անասնագլուխ և մեկ բանող անասուն ունեցող տնտեսությունների համարները չքավորներ, 2—4 գլուխ ունեցողներին՝ միջակներ և 5—16 գլուխ ունեցողներին՝ հարուստներ, ապա կատանանք հետևյալ աղյուսակը։

Տնտեսությունների տիպերը	Տնտեսությունների քանակը	Հարաբերական չափը %
Չքավորներ	269	38,1
Միջակներ	295	41,9
Հարուստներ	141	20,0
Ընդամենը	705	100,0

Այդպիսով, գյուղացիության շերտավորումը բավ վարիանտների և բանող անասունների գլխաքանակի համարյա համընկնում է։ Անշուշտ, անասունների գլխաքանակի վերաբերյալ մեր ունեցած ավյալները թերի են, բայց, բավ երևույթին, նրանք բնորոշ են ամբողջ երկրի համար։ Դրա համար հիմք կարող է ծառայել մասամբ այն փաստը, որ նրա կարևոր վիլայեթի վերոհիշյալ գյուղերում բանող անասուն չունեցողները կազմում էին բոլոր տնտեսությունների մոտ 37 %-ը, ապա խարբերդի կազայում՝ 48,6 %-ը[45], իսկ Մուշի դաշտում՝ 30—40%-ը[46]։ Ինչպես տեսնում ենք տարբերությունը մեծ չէ։

առաջերի անուն-ազգանուններ. Նրանց ունեցած ցանքատարածությունների չափերը, բոլոր անասունների գլխաքանակը առանձին-առանձին, վճարած հարկերը և այլն։ Մենք հարկ համարեցինք ավյուսակի մեջ չմտցնել այն տնտեսությունները, որոնք ունեն 15-ից ավելի բանող անասուն, ենթադրելով, որ դրանք կապիտալիստական տնտեսությունների են։ Դրանց թիվը 22 է։

[45] **А. М. Колюбакин.** Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 376. *(Քրխտոսկյանների և մահմեդականների վերաբերյալ եզած առանձին ավյուսները մենք քննհատոցրել ենք և հանել միջին։*

[46] *Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, մայիսի 23։*

* * *

Արևմտյան Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին ֆեոդալական հարաբերությունների հետ միասին պահպանվել էին նաև նահապետական հարաբերությունների բազմաթիվ մնացորդներ։ Քանի որ այդ մնացորդները բոլորից շատ պահպանվել էին քրդերի մոտ, համառոտակի բնութագրենք դրանց էությունը ամենից առաջ քրդական կենցաղում։

Քրդերը, գլխավորապես կիսաքոչվոր ու քոչվոր քրդերը, ապրում էին ցեղերով։ Նրանցից յուրաքանչյուրը բաժանվում էր առանձին համայնքների, համայնքները՝ բակերի կամ թաղիքների, իսկ վերջիններս՝ ընտանիքների։ Այսպես. Վասպուրականում հայդարանցիների ցեղը 1860-ական թվականներին բաղկացած էր զորավանի և ադիլամանի համայնքներից։ Սրանք բաժանվում էին մուբայլի, չամսիկանցի, կասիկանցի, բազոյանցի, խամղիկանցի, բաշխմանցի բաների, որոնք իրենց հերթին՝ ավելի փոքր միավորների[47]։

Իսկ Սասունում բալաբցիների ցեղը 1890—1900-ական թվականներին բաղկացած էր երկու, այսպես կոչված, գլխավոր ամից՝ բարցի կամ բալաբցի և աշկոզի տունքա։ Նրանցից առաջինը բաժանվում էր դասակա, բարիր, նաարիկ, չիլո, բլալ, յաղուբ և դեմո, իսկ երկրորդը՝ հարշո, խթիլա, բաքո, չաղան, բրաշիմ, ալամբո և այլ ամներ։

Քրդական ցեղերի առանձնահատկություններից մեկն այն էր, որ նրանք բաղկացած էին ոչ միայն արնակցական, այլ նաև օտար, դրսից եկած բարերից, ընտանիքներից և նույնիսկ առանձին անհատներից։ Ա. Մ. Կոլյուբակինը ցույց էր տալիս, որ յուրաքանչյուր ցեղի մեջ միշտ գոյություն ունի երկու տարր. հիմնական ու ակվորը։ Վերջինիս մեջ մտնում են կամ ուրիշ ցեղերի ու տոհմերի մնացորդները, որոնք կորցրել են իրենց տոհմական կառուցվածքը, կամ ոչ ցեղային քրդերը՝ ամիրայնակ կամ բնանիքներով, որոնք փախել են Պարսկաստանից, Ռուսաստանից, բանակից և այլ տեղերից ու անցել ավյալ ցեղի հավանավորության տակ[48]։ Եկվորները որպես կանոն ենթարկվում էին հյուրընկալող ցեղի «կարգ ու կանոնին» և կրում նրա անունը։

Ցեղն ուներ իր առաջնորդը՝ շեյխը, էյրեկր կամ էյաղասին, որը

[47] *Տե՛ս* **М. Лихутин.** Русские в Азиатской Турции в 1854—1855 годах, СПб, 1863, стр. 143.

[48] *Տե՛ս* **А. М. Колюбакин.** Материалы..., т. I, ч. I, стр. 73.

միավորում էր իր մեջ թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր ֆունկցիաները։ Բայց երբեմն նա տալիս էր հոգևոր ֆունկցիաները իր մերձավորներից որևէ մեկին՝ աշխարհիկ գործերով ավելի շատ զբաղվելու համար։

Ցեղի մեջ մտած յուրաքանչյուր միավոր՝ փոքրից-մեծը, ուներ իր ավագը, որը կենագործում էր ցեղապետի հրամաններն ու կարգադրություններ, լուծում իր գյուղացիների միջև ծագած վեճերը և այլն։ Առաջնորդը կապակցվում էր ցեղը ավագների խորհրդի միջոցով, որը կազմված էր համայնքների ու բարերի պատերից։ Բայց երբեմն խորհրդակցում էր նաև փոքրամարդ ու հմուտ ծերերի հետ։

Ցեղապետի իշխանությունն բացարձակ էր։ Նրա հրամաններն ու կարգադրությունները պիտի կատարվեին ամենայն արագությամբ ու ճշտությամբ։ Եվ մեկը չկատարեր, ապա, ինչպես գրում էր մի քրիստիկ, «էր խոշտանգվի, շարաչար կը մնասվի, նույնիսկ մահով կը պատժվի»[49]։

Առանձնապես ուժեղ էր քրդական այն ցեղապետի իշխանությունը, որը հանդիսանում էր իր ցեղի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր առաջնորդը։ Նա հայտնակների մեջ առնծել էր իր անձի պաշտամունքը՝ այդ բանի իսկական իմաստով։ Այսպես, 1891 թ. Տ. Փիրումյանը գրում էր. «Իշխանում շեյխ Ջալալեդդինը և նրա որդի Սեիդ-Ալին ստույածացրել էին իրենց անձը «Ներանց ամեն մի խոսք օրենք է, ամեն մի ցանկություն՝ աստվածային ներշնչում։ Նրանց չէ կարելի բամբասել քննել և հակառակել... ցավագարները դիմում են շեյխի օգնությանը, որը բուժում է իր քթով, երեսի, ձեռքի, ոտքի և շորի լվացքաշրով»[50]։

Քրդերի մոտ բացի ցեղերից, պահպանվել են նաև ինքնուրույն կիսաքոչվոր կամ քոչվոր համայնքներ, որոնք ի տարբերություն ցեղերի, ունեին քիչ թվով՝ մեկ կամ մի քանի բարեր[51]։ Նրանք կամ

49 «Բուլղաղիոն», 1911, դեկտեմբերի 28։

50 «Մուշ», 1891, № 2, էջ 230։

51 Այդ համայնքների գոյության մասին կարելի է իմանալ հետևյալ անուշադրի վկայություններից. 1836 թ. Ա. Մ. Կալյաուգինը նշում էր. «Հիշյալներեն իրենց մեծությամբ բազմագան են. կան այնպիսիները, որոնք ունեն մի քանի հազար վրաններ, օրինակ՝ Վանի վիլայեթում հայկապանդիները, բայց կան նաև այնպիսիները, որոնք ունեն 100—50 և ավելի քիչ վրաններ և հաճախ բաղկացած են սոսկ մեկ տոհմից։ Այդպիսիների թիվը քիչ չի Տավրոսյան լեռներում և Հնդկաստան» (А. М. Колюбакин, Материалы... т. I, ч. I, стр. 74); 1897 թ. Կարգեր գրում էր. «Քրդերը բաժանվում են շատ անհավասար մեծության ցեղերի կամ աշիրաթների, նրանցից ամենը հարվում են հազարավոր, իսկ մյուսները՝ հազիվ հարյուրավոր տնեերով (բնակիչներով)։ («Записки кавказского отдела императорского русского географического общества», кн. XIX, стр. 365).

բաժանվել էին որևէ ցեղից, կամ մնացել այն ցեղից, որը պատռվել ու քանդվել էր միջցեղային կռիվների ժամանակ։ Համայնքները ենթարկվում էին համապետական կամ բարեպետներին, իսկ նրանք բաղկացած էին մեկից ավելի բարերից, ապա՝ ավելի սղոցների բարեպետներից։

Քրդական կիսաքոչվոր ու քոչվոր համայնքները որոշ բաներով հիշեցնում էին նախնադարյան տոհմական համայնքը, բայց շատ բաներով էլ տարբերվում էին նրանից։ Նրանք նախնադարյան տոհմական համայնքի անդամներն իրար հետ միացած էին բացարձակապես արնակցական կապերով, արտադրությունն ու բաշխումը էին ընդհանուր կարգով, արտադրությունն ու յուրացումն ընդհանուր էր, ապա քրդական համայնքում, բացի արշտակիցներից, կային նաև օտարներ, նրանք բոլորն անասուններին սիրում էին մանանավոր կարգով, որի հետևանքով արտադրությունն ու յուրացումը ուներ մանանավոր բնույթ։

Քրդական համայնքն իր էությամբ համարյա համընկնում էր գյուղական համայնքին։ Երկուսին էլ հատուկ էր այն գուլիկիզմը, որի մասին Կ. Մարքսը գրում է. «Գուլիկիզմը, որը հատուկ է «հողագործական համայնքին», նրա համար կարող է ծառայել կենսական մեծ ուժի աղբյուր, որովհետև, մի կողմից ընդհանուր անկախանությունը և նրանով պայմանավորված հասարակական հարաբերությունները ամրապնդում են նրա հիմքերը, այն ժամանակ, երբ մասնավոր տուներ, վարելահողի պարբերական վերաբաշխումը և նրա արդյունքների մասնավոր յուրացումը թուլացնում են անհատականության զարգացում, որն անհամատեղելի է ամեն հին համայնքների պայմանների հետ։ Բայց ոչ պակաս ակնհայտ է նաև այն, որ այդ նույն գուլիկիզմը ժամանակի ընթացքում կարող է գառնալ բացասման աղբյուր։ Մի կողմ թողնելով բշնամական միջավայրի ոչ սղոցնությունը, միայն շարժական ունեցվածքի ասիմանական կուտակումը, որն սկսում է անասունների կուտակումով... և բազմաթիվ այլ հանգամանքներ, որոնք անբաժան են այդ կուտակումից... այդ բոլորը ներգործում է որպես բացթողել տարբ անհավասարության վրա և հենց իր՝ համայնքի

բնակբերում ծնում շահերի բախում, որի հետևանքով առաջանում է սկզբում վարելահողերի, իսկ հետո անտառների, արոտավայրերի, ամբշակ հողերի և այլնի մասնավոր սեփականություն»[52]:

Հետևաբար, թրքական համայնքը գյուղական համայնքի նման հանդիսանում էր անցողիկ մի շրջան՝ համայնական սեփականությունից դեպի մասնավոր սեփականություն: Սակայն ի տարբերություն գյուղական համայնքի, որտեղ գոյություն ուներ վարելահողերի վերաբաժանում, թրքական համայնքը չուներ արոտավայրերի վերաբաժանում:

Քրդերը արոտավայրերից օգտվում էին հետևյալ կերպ. հարուստ և ազդեցիկ տեռեսատերերը՝ օբաբաշիները համայնքին պատկանող արոտավայրերը բաժանում էին իրար միջև[53] *և թույլ չէին տալիս ուրիշներին օգտվելու իրենց սիրույրներից, որոնք կոչվում էին «վար» (բանակատեղ): Յուրաքանչյուր օբաբաշու բանակատեղը կոչվում է նրա անունով և անցնում ժառանգաբար*[54]: *Այն կարող էր անցնել ուրիշների ձեռքը միայն այն ժամանակ, եթե տերն այրատանում էր: Ուշագրավ է, որ օբաբաշին հարստանալիս կրկին պահանջում էր իր բանակատեղը, բայց որոշհետ նոր տերը սովորաբար չէր վերադարձնում, ուստի առաջանում էր կռիվ, որը լուծվում էր կամ ցեղապետի միջամտությամբ, կամ կռվողներից մեկի պարտությամբ:*

Օբաբաշին թույլ էր տալիս համայնքի շարքային անդամներին, որոնք կոչվում էին ջոլեր, օգտվելու իր բանակատեղից, բայց դրա համար նրանցից վերցնում էր ոչխար (սովորաբար 100-ից 4—5 գլուխ) և պարտադրում կատարելու որոշ պարհակներ: Օբաբաշու գլխավորությամբ և ջոլերի մասնակցությամբ ատաջացած այդ միավորումը կոչվում էր գոմա կամ օբա[55]:

Ջոլան ժամանակավոր միավորում էր: կազմվում էր վաղ գարնանը և ցրվում ուշ աշնանը: Եթե օբաբաշին ուներ ձմեռային բանակատեղ, ապա այն շարունակում էր իր գոյությունը նաև ձմռանը:

---

52 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 19, стр. 404.

53 *Ս. Եղիազարյանը գրում էր. «Բանակատեղի սահմանները ճիշտ որոշված են, դրացի հասարակություններից ոչ մեկը իրավունք չունեը արածացնելու յուր հատերը որևէ բանակատեղի սահմանների մեջ («Արձագանք», 1884, № 20, էջ 306):*

54 *Ս. Եղիազարյանը նշում էր, որ օբաբաշու վարը կամ բանակատեղը «հայտարարվում էր նորա կալվածքըս (նույն տեղում):*

55 Мела Махмуд Баязиди. Нравы и обычаи курдов. М., 1963, стр. 13.

Ջոլայի մեջ մտած բնակիչների թիվը տատանվում էր 8—20-ի սահմաններում. օբաբաշին ձգտում էր հավաքել այնքան անասություն, որ բոլորի ունեցած ոչխարների կլիաթանակը չանցներ 1000-ից. օրավհետև մեծ հարը գժվարությամբ կկարողանար կեր գտնել[56]: *Նա ընդունում էր իր գոմայի մեջ նրանց, ում ուզում էր և որտեղում, ով դուր չէր գալիս՝ իրավական տեսակետից չորերը նույնպես ունեին համարյա այդպիսի իրավունք. կարող էին մտնել այն մարդու գոման, ով համակրելի էր և հետևյալ, եթե նա զգացում էր այդպիսին լինելուց: Սակայն արոտավայրերի տահմանափակվածությունը հարկադրում էր նրանց հաճախ չհետևյալ նույնիսկ ամենատատանելի օբաբաշուց:*

Քրդերի մոտ բացի ցեղերից ու համայնքներից պահպանվել էին հարևանական հարաբերությունների նաև այլ մնացորդներ՝ տոհմիզմը, արյան վրիժառուությունը, բազմակնությունը, կնոջ առևտրությունը, դայրը կամ գլխագիրը և այլն, որոնց վրա մենք հարկ չենք համարում կանգ առնել, քանի որ դրանք ազգագրական ուսումնասիրության խնդիրներ են: Բացի քրդերից, նահապետական հարաբերությունների մնացորդները ավելի կամ պակաս չափերով պահպանվել էին նաև ասորիների, թուրքերի և նույնիսկ հայերի մոտ:

Հայերի մոտ նահապետական հարաբերությունների մնացորդներից մեկը գերդաստանն էր: Անձի և գույքի անապահովությունը և երկրի հողակլիմայական պայմանները ստիպում էին հարազատներին համախմբված մնալ: Այդ պատճառով էլ հաճախ պատերն ու տատերը, թոռներն ու ծոռները ապրում էին մի հարկի տակ:

Բաֆֆին հետևյալ կերպ էր նկարագրում նահապետական գերդաստանը. «Տեսի բնտանիքը մեծ էր, մեծ էր որպես նրա բնդարձակ բնակարանը: Այստեղ ապրում էին մի քանի սերունդ միասին՝ մեծ պապը, նրա որդիները, նրա թոռները, և նրա ծոռնյայրը: Տան սրահում քանիդ ավելի օրորոցներ էին ձոճվում: Հարսներով, տղիկներով, երեխասարդներով ու պատանիներով լի էր տունը: Երեխաները թիվ ու համար չունեին: Ոնսը իր տատն և մեկ եղբայրների միջնակն էր... Բոլոր եղբայրներն ապրում էին անբաժան, միասին ու նույն հարկի տակ, կրասերը խոնարհվում էր ավագին: Իսկ բոլորի վրա իշխում էր մեծ պապը—գերդաստանի հայրապետը: Նայելով այդ բնտանիքին, ես մտաբերում էի մեր Հայկ նահապետի գերդաստանը, որը բաղկացած է երեք հարյուր հոգուց: Այստեղ թևև

---

56 «Արձագանք», 1884, № 20, էջ 305:

այն թիվը չկար, բայց իր սպառավորներով, ազախիններով և բնակիչներով նրա երդորդ մասը, անպատճառ կլիներ»[57]։

Գերդաստանի ներսում, նրա անդամների միջև կային իշխողի և ենթարկվողի հարաբերություններ, գույքային անհավասարություն, բայց շնայած դրան այն տակավին պահպանվում էր։

Բացի գերդաստաններից, հայերի, ինչպես և թուրքերի ու ասորիների մոտ հատկապես կարևոր հարաբերություններին միացավ էր հանդիսանում նաև արոտավայրերից ու մարդագետիններից համատեղ օգտվելը։

Երկրի որոշ շրջաններում հայերն ու թուրքերը արոտավայրից օգտվում էին համարյա այն հերթակով, ինչ երբերը։ Այսպես, Բուլանդրիում յուրաքանչյուր գյուղ բաժանվում էր 1—6 խմբերի, որոնք կոչվում էին ելյուղներ։ Գյուղի բաժանումը ձյուղերի կատարում էր ոչ թե կամ հատուկ ոչխարատերը։ Նրանք այդ բաժանումը կատարում էին այնպես, որ յուրաքանչյուր ձյուղի ունեցած ոչխարների գլխաքանակը չանցներ 500-ից կամ՝ 1000-ից։ Ձյուղը կոչվում էր սովորաբար այն անասունների անունով, ով բոլորից շատ ուներ ոչխար։ Այս անասունները կոչվում էր եղջյուրն կամ բրդերին տարջալ։ Նրանցից քիչ ոչխար ունեցող անասուններ կոչվում էին թև, սրանցից քիչ ունեցողները՝ բնաւոր կամ բրդերին՝ բրձջոյ, ամենից քիչ ունեցողները՝ ջոլ, իսկ ամենաքիչ ունեցողները՝ պաշիկ։

Այնուհետև յուրաքանչյուր ձյուղ հանգամանքներ էր իր վրանը, որը կոչվում էր գոմ։ Ձղկտիով վարձում էր հովիվներ։ Ձյուղի անասուններն արածացնելու համար և վճարում նրան՝ 20 ոչխարից 1 գառ, 10 ոչխարից՝ 1 բուրդ, 1/2 սրբյունի կով կամ եղն և 1 գույր տրեխ։ Իսկ ինքն ստանում էր ձյուղի անասուններից իր վճարածից շատ ոչխար, գառ, բուրդ, յուղ, պանիր և այլ մթերքներ։ Գոմը գոմայի կամ օթայի նման կազմվում էր նույնպես գարնանը և ցրվում ուշ աշնանը[58]։

Մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն տալիս որոշելու այն հարցը, որ արոտավայրերից օգտվելու այդ եղանակը հատուկ է եղել հայերին, թե նրանց հրամցվել է քրդական տիրապետող վերնախավի կողմից։ Բայց հայտնի է, որ քան Բուլանդրեցից, հայ գյուղացիները արոտավայրերից համարյա նույն կերպով էին օգտվում նաև երկրի այլ շրջաններում, այն տարբերությամբ ա-

57 Բաֆֆի, երկեր, հ. 5, էջ 340—341։

58 Տե՛ս «Բուլանդրե կամ Հարքի գավառ», էջ 82—84։

կայն, որ այստեղ ձյուղը կոչվում էր գոմա։ Մ. Միրաքյանն արձանագրում էր, որ Վասպուրականի որոշ շրջաններում «գյուղացիներին ոչխար շատ ունեցողներն դնում են 4—5 ժամ հեռավորությամբ մի խոտավետ, լեռնադաշտ կամ հարմար ձորամիջ մի կրնորեն յուրացից համար և հեռ կը պատրաստեն վրաններ, մի քանի տուն այսպես ի միասին կը բնակին և անդ կը կթեն գոչխարս, անդ կը պատրաստեն սեր և կարագ, յուղ և պանիր, ժամերկ և չորթան, գյուղացոց այս սովորությունը գոմաս անուն կը տան, որ 2—3 ամիս կը տևե և քրտց մեջ ավելի բնդհանուր է»[59]։

Արևմտյան Հայաստանում հատկապետական հարաբերությունների բազմաթիվ մնացորդների պահպանումը պայմանավորված էր՝ մի կողմից ապրանքային արտադրության թույլ զարգացմամբ, իսկ մյուս կողմից՝ թուրքական կառավարության քաղաքականությամբ և ագանների ու բեյերի շահագրգռվածությամբ։ Կառավարությունը հատկապետական հարաբերությունների պահպանմամբ հեշտացնում էր իր գործը աշխատավորներին հնազանդության մեջ պահելու համար, իսկ ագաները ու բեյերը դրանցով արդում էին իրենց կողմից նրանց նկատմամբ վարած հարատահարումն ու շահագործումը։

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԿԵՐ ՈՒ ԹԵՆՏԱՆ

Ագաները ու բեյերը, տիրելով հողին և ունենալով ռազմական ուժ, գյուղացիներից հավաքում էին հարկ կամ, ինչպես ասում են, բարթարատական հարկ ու ֆեոդալական ռենտա։ Նրանք հավաքում էին դրանք ոչ այլ կերպ, քան արատատնտեսական հարկադրանքի օգնությամբ։ Վ. Ի. Լենինը, նորատիրական տնտեսություն բնութագրելիս, նշում էր. «Մեծ կալվածատերն անմիջական իշխանության չունենալ գյուղացու անձի վրա, ապա նա չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և անկախ տնտեսություն է վարում։ Հետևաբար, անհրաժեշտ է «արատատնտեսական հարկադրանք», ինչպես ասում է Մարքսն այս տնտեսական ռեժիմը (այսինքն՝ ֆեոդալիզմը—Ա. Հ.) բնորոշելիս»[1]։

59 Մ. Միրաքյան, Նկարագրական տեղեկություն ի հայրենակ գավառս Արեւելյան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1884, մ. Գ, էջ 193—194։

1 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 3, էջ 224։

Ագաներն ու բեյերը հարկը հավաքում էին ամենից առաջ քաղաքացիական արշավանքներ կազմակերպելու միջոցով։ Օգտվելով բնակիչների անձի ու գույքի անապահովությունից, նրանք իրենց դուրսմատնում էին նրանց վրա և հափշտակում այն, ինչ հանդիպում էր, կամ ինչ կարողանում էին։ Այսպես, 1873 թ. բրդական մի խումբ ցեղապետեր Մուհամի ներքոհիշյալ գյուղից հափշտակել են[2].

Գյուղերը	Ոչխար (գլուխ)	Կով (թուփ)	Գլուխ (գուր.)	Հաղուստ (կոտոր)	Արժատեղէն և ուտելիս (բաժման)
Մեսթո	30	28	3000	—	—
Գյանդր	56	63	5850	—	400
Բաշագ	100	30	4000	20	250
Էսենքուշաթ	50	40	7000	30	300
Ջոր	15	15	2000	—	250
Մեքհասագ	13	15	1300	13	150
Գազոթ	15	15	4500	—	100
Հոթաբնկ	12	25	2500	10	100
Մեղոզ	25	15	3500	10	200
Բերուքկ	15	—	1500	8	—
Քաթր	—	—	2000	—	200
Դորֆա	115	—	11260	30	—

Ագաների բարբարոսական ավարառուիւթիւնների պատկերը համարյա այդպիսին էր Արեմտյան Հայաստանի նաև մյուս շրջաններում։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ ոչ միայն շաբաթ, այլ նույնիսկ օր չէր անցնում, որ նրանք չթալաններին խաղաղ բնակչութիւնը[3]։

Ագաները ու բեյերը հարկը հավաքում էին նաև կրշլաղության միջոցով։ Նրանք կրշլաղության մի ձևի ժամանակ միայն իրենց ա-

2 «Առանձգրութիւններ ազգային ժողովոյ, 1878, էջ 218։

3 1880 թ. մի թղթակից հաղորդում էր, որ Վանի վիլայեթում «վերջին երեք ամիսների միջոցին կրնամ ըսել, թե օր չանցավ առանց նոր հարստահարութիւններ, սպանութիւններ և բռնութիւններ ի գործ դրվելու լրտեաց և ծուլքաց կողմե հայոց վրա» (մշախաս, 1880, հոկտեմբերի 30)։ Իսկ 1913 թ. Վանի ուսական փոխհյուպատոսը գրում էր, որ աղաների բարբարոսական արշավանքների հետևանքով երբոր կոզմերից գալիս են աշատանգով չուներ, որ նրանց արշավանքներից տառապում են ոչ միայն հայերը, այլ նաև մահմեդական բնակչութիւնը» (տե՛ս ՎՈՒՈ ԿԳԳԱ, ֆ. 71 գ. 118, մմ. 203—204 գ. 76, թ. 5)։

նասուններին էին տալիս գյուղացիներին՝ ձմռանը պահելու համար։ Այսպես, Շատախում Մահմուդ աղան Հաճեան գյուղի բնակիչներին տալիս էր պահելու 150 ոչխար, իսկ Ալի և Ավդի աղաները՝ Կապզ գյուղի բնակիչներին իրենց հատերի զգալի մասը։ Նրանք պարտադրում էին գյուղացիներին խնամքով պահել ոչխարները և լիրցնել, «հակառակ դեպքում,— գրում էր «Մշակի» թղթակիցը,— գյուղացին պարտավոր էր իր ամենալավ ոչխարը հասուցանել փոխարինքն[5]։

Ագաներն ու բեյերը կրշլաղության մյուս ձևի ժամանակ, ինչպես ասվեց, հարկադրում էին գյուղացիներին պահելու ձմռանը քիչ իրենց և քիչ իրենց զինակիցներին ու անասուններին։ Նրանք ամբողջ ձմեռվա ընթացքում ապրում էին գյուղացիների աներում, սնվում նրանց հաշվին, ուտիպում գոներ վառել, հաց թխել, չուր բերել լվացք անել և խնամել անասուններին։ Այդ բոլոր պարտականները գյուղացիները պարտավոր էին կատարել, այլապես կարող էին ղրկվել ոչ միայն իրենց ունեցվածքից, այլև կյանքից։

Բաֆֆին գրում էր. «Ծանրութիւններ և նեղութիւններ, որ կրում են հայերը այդ ինքնակոչ հյուրերից, հասնում է վերին աստիճանի անախորժութեան։ Թողնենք այն, որ ամենիրոջ կացարանն իր համառ և նեղ է և անբավական է, ուր մնաց, որ նա ամենորդ մարդիկ բնդունելո յուր խրճիթի մեջ։ Բայց անասնելին այն է, որ շատ անգամ ձմեռը տեսում է ավելի երկար, քան ինչ սովորականը, քուրդը սպասում է իր պաշարը, այն ժամանակ հյուրընկալը պարտավոր է խնամել նորան և նրա անասուններին, մինչև սարերից ձյունը բարձրանա, խոտերը բուսնեն, և նա կարողանա այնուհետև ապրել աստուծո անդանից։ Տանտիրոջ մի փոքր բնդդիմադրութիւնը կարող է նրա կյանքը վտանգի մեջ ղնել հյուրի կողմից, որի զինքերը մաքմընի անբաժան մասերն են կազմում, և նրանց իր կրքերին համաձայն գործածելը՝ չէ արգիլում ոչ մի օրենք և ոչ մի իրավունք[6]։

Ագաներն ու բեյերը հարկը հավաքում էին նաև գաֆիրության նախնական ձևի ժամանակ։ Նրանք սարեկան մեկ կամ երկու անդամ գյուղացիներից վճարում էին անդամքերը ու հատուատուն՝ իրենց անձնական սպառման համար։ Դրանով համոզվելու համար բավական է թվարկել այն առարկաները, որոնք գաֆիրատու բեյերը վերցնում էին իրենց ենթակա գյուղերից։ 1870-ական թվականների սկզբներին Խուլիսում Թելլո աղան յուրաքանչյուր սարի, ան-

4 Տե՛ս «Մշախաս», 1872, հոկտեմբերի 9։

5 «Մշակ», 1895, մայիսի 11։

6 Բաֆֆի, Երկեր. հ. 4, էջ 318—319։

վորպեսզի աշխատի, հավաքում էր ամեն մի գյուղից 20-ական ոչխար, 20 աման սեր, 20 գույդ գուլպա, 30 պարան, վեց լուծ, ութ շերեփ, 60 թիակ, 15 հավ, 40 տրեխի քեչ, վեց քաղիք, ութ սկյա բուդի[7], 15 շալվար, 40 կապ՝ անասուններ կապելու համար և այլն[8]։

Աղաները ու բեյերը, ինչպես ասվեց, վերցնում էին պաֆիրության տուրքերը գյուղացիներին կոզմնակի հարձակումներից պաշտպանելու համար, սակայն երբեմն նրանք կամ չէին դիմադրում հարձակվողներին կամ պատռուքյան էին կրում, և հաղթող ազաները իրենց հերթին նույնպես սահմանում էին հարկեր ու տուրքեր։ Այդպիսի դեպքերում գյուղացիները հարկադրված էին վճարել իրենց թե՛ հին և թե՛ նոր տերերին։ Օրինակ՝ Մռականի Քրխա գյուղի յուրաքանչյուր ընտանիք վճարում էր թաղրկցի Պատ ազային 20 կոտ ցորեն, իսկ Պատենց ազային՝ 1 ոչխար, 1 լիտր յուղ, 1 շալվար, 1 կորկ (բրդյա ոչ մեծ գործվածք) և 3 կոտ կորեկ։

Սատունի Շեխտա գյուղի բնակիչները 1910 թ. հարկ էին տալիս յոթ ազայի, այդ թվում՝ Ծաշից ազային՝ 15 թիւն, Քեմբո ազային՝ 10 թիւն, Յուսուֆ Տաշազային՝ 12 թիւն, Քամբո ազային՝ 6 թիւն, Մուրադ բեկին՝ 12 թիւն միայն հացահատիկ, չհաշված այլ հարկերը, պարհանները ու «նվերները»։

Աղաներն ու բեյերը գյուղացիներից բարեբարոքական հարկ էին հավաքում նաև այլ ձանապարհներով։ Կ. Մարքսը, խոսելով ֆեոդալների մասին, գրում էր. «Ֆեոդալը, նայած տեղին և տարբեր հանգամանքներին, լինում է բանվոր, գյուղացի-վարձակալ, մաքսհոդային սեփականատեր, վաճառական, ֆեոդալական հողատեր, որը կանգնած է ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական ասպիճանի վրա»[9]։

Աղաներն ու բեյերը, բացի հարկից, ինչպես ասվից, գյուղացիներից հավաքում էին նաև ֆեոդալական rենաան։ Նրանք այդ rենաան առանում էին այն ժամանակ, երբ իրացնում էին իրենց հողային սեփականությունը՝ անմիջական արտադրողներին շահագործելու ճանապարհով։ Կ. Մարքսը ցույց է տալիս, որ rենաան հանդիսանում է հողային սեփականության անտնտական իրացումը[10], իսկ այդ իրացումը տեղի էր ունենում հողի ֆեոդալական սեփակա-

7 Ծկան=3 ֆունտ 12 ժոթալի, իսկ 1 ֆունտ=1 գրվանքայի կամ 400,5 գրամի։

8 Տե՛ս «Մասիս», 1873, մարտի 22։

9 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 9, стр. 6.

10 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մ. 2, էջ 178։

նության հաստատումից հետո։ Արտատնտեսական հարկադրանքի այն բազմաթիվ ձևերից մեկը, որի օգնությամբ հարստահարող վերնախավը առանում էր ֆեոդալական rենաա, ճորտատիրությունն էր։ Աղաներն ու բեյերը երկրի տարբեր շրջաններում առանում էին տարբեր չափի ու բնույթի ֆեոդալական rենաաներ։ Այդ մասին մեր ձեռքի տակ կան հետաքրքիր նյութեր։ Բերենք դրանցից մի քանիսը։

Սասունում, Բանաչինում և Շատախում աղաները բաժանելով իրենց ճորտերին հարուստ, միջակ և աղքատ կատեգորիաների, 1860-ական թվականներին հարուստ տնտեսություններից վերցնում էին՝ 7 բեռ ցորեն, 1 պաճար (անասուն, արջառ), 5 ոչխար, 2 լիտր յուղ, 2 լիտր ծխախոտ, 1 լիտր շորթան, 4 լիտր աղ, 1 շալվար, 1 գույդ զանգակաձև, 1 գույդ գուլպա, 1 գույդ խոնջան (վարտիքի կամ շալվարի կապ), 1 գույդ գոդնոցի ժապավեն, 2 ունկի վառոդ, 2 ունկի կապար, 2 ունկի կանեփ, 5 ունկի ձեթ, 5 հատ պուտուկ, 2 շերեփ, 30 գդալ, 4 թիւ, 2 կոդով, 6 ցախավել, 1 դահուկ, 4 հավ, 2 աքաղաղ, 10 սաթակ (մշակ, աշխատող), 6 արոր, 12 գութան և ոչխարի կաշի՝ սաթին երկու անգամ։ Միջակ տնտեսությունից նրանք վերցնում էին այդ տուրքերի $^2/_3$-ը, իսկ աղքատ տնտեսություններից՝ $^1/_3$-մասը։ Գյուղացիները, բացի դրանից, պարտավոր էին վարել ու ցանել աղայի արտերը, նրա ցանքերը մաքրել քարերից ու մոլախոտերից, տեղափոխել ու կալսել օրանը, տուն տանել ու ամբարել բերքը և կատարել բազմաթիվ այլ աշխատանքներ, «նվերներ»՝ ուրախության ու տխրության զանազան առիթներով[11]։

Մռականում աղաները իրենց գյուղացիներից վերցնում էին ոչ միայն մեղրընկեր, այլև նրանց նոր շորը կամ կոշիկը, ասելով՝ «Քու հայ (ֆյա) ես, այդ բանը քեզ չի վայլիր, մեմիայն ինձի կը հարմարի, որ քո տերդ եմ»[12]։

Արճեշի Կարաժորլո գյուղում Ալի աղան հայ գյուղացիներին սահմանում էր շինել իր համար տուն, դուռ և սխոռ, հնձել իր մարգագետինները, կամ տեղափոխել խոտը, վառելափայտը, աղբիկ կամ ուրա ամառանոցները վճարել գայն-աղա, «հակառակ պարագային, խռովացյալ կլինի ուրիշ գեղն մը նույն գյուղը բերելու կարգին»[13]։ Ուշագրավ է, որ Ալի աղան

11 Տե՛ս «Մասիս», 1872, մայիսի 18։

12 «Մասիս», 1881, նոյեմբեր 17։

13 «Արշալույս», 1909, փետրվարի 23։

«գայլ-ագա» տուրքը վերցնում էր ինչպես հայ, նույնպես և քուրդ գյուղացիներից։

Վարգոյում աղաներից մեկը տեխում էր Պաղքան գյուղի բնակիչներին վճարել հացահատիկ, ոչխար, եղ, խոտ և այլ մթերքներ։ Բացի դրանից, նա պարտադրում էր գյուղացիներին նաև օթամ անել, այսինքն՝ ձրի վարել ու ցանել ագայի արտերը, տեղափոխել բերքը, կալսել ու ամբարել այն և այլն։ Ագայի մարդիկ՝ ինչ 10—12 հոգով, սովորաբար խառնում էին գյուղացիներին ձեռքի առաջ, քշում աշխատելու, տեխում էին նրանց բանել վաղ առավոտից մինչև ուշ երեկո. հաճախ արդելելով անգամ ճաշելը[14]։

Երզնկայի սանջակի Զաղուճան կազայում Հյուսեին աղան չարաշար աշխատեցնում էր գյուղացիներին և նրանցից հավաքում պանապան մթերքներ։ Բացի դրանից, նա իր համար կթում էր գյուղացիների ոչխարները, իսկ դիմադրողին սպառնում սպանությամբ։ Գյուղացիները 1871 թ. իրենց բողոքագրում գրում էին . «Գիշեր ցերեկ օրին մեջ մի վայրկյան հանգիստ չունինք, գիշերը դողերու երկյուղին... ցերեկն ալ խիստ գաժանելի աշխատանաց մասին, զի ոչած առեն գմեզ՝ ծեր, երիտասարդ, կին, մանուկ օրևրով անվարձ կաշխատեցներ... վերջապես գորն առեմք, կամ գորն՝ խոստովանիմք՝ զի անձիվ են հալածանք մեր»[15]։

Գյուղացիության շահագործման պատկերը համարյա այդպիսին էր նաև Արևմտյան Հայաստանի Հորտաարիական մյուս շրջաններում, չհաշված անձի այն անարգումն ու անպատվումը, որոնց մասին արդեն ասվից տեղեկություն։

Աղաներն ու բեյերը ֆեոդալական ռենտա էին առնում նաև կիսաբարության մնացորդն։ Նրանք մի տեղում առանում էին հավաքած բերքի 10-ից մեկը, մյուսում՝ 10-ից 5-ը, երրորդում՝ 10-ից 6-ը, 7-ը, նույնիսկ 8-ը և այլն։ Ահա փաստեր. Մուշի սանջակի Մանազքուռ գավառակում աղան վերցնում էր բերքի կեսը[16], Բալուում՝ մեկուկեսը[17], Սարը-ոռ գավառակում՝ ինչքան ուզենար[18], իսկ Խարբերդի գաշտում՝ 20%—60%-ով ավելի, քան Բալուում կամ Մուշի և Վանի սանջակներում[19]։

14 Տե՛ս «Հին հայոց պատմություն», հ. 13, էջ 91։
15 «Մասիս», 1871, մայիսի 4։
16 Տե՛ս «Հին հայոց պատմություն», հ. 13, էջ 125։
17 Գ. Սեվանձտյանց. Թուրս ապրաք, մ. Բ, էջ 170։
18 «Մշակ», 1907. հոկտեմբերի 26։
19 **А. М. Колюбакин.** Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. III, ч. 1, отд. 2-й, стр. 386.

Պետք է նշել, որ կիսաբարության ժամանակ գյուղացիներին հարատահարելու գործում թուրք ու քուրդ աղանների հետ չէին մնում նաև հայերը։ Որոշ տեղերում նրանք նույնիսկ ավելի խիստ էին հարատահարում գյուղացիներին, այդ թվում նաև հայ գյուղացիներին, քան թուրք ու քուրդ աղաները։ Օրինակ՝ Բալուում վերհիշյալ հոշմադյանը վերցնում էր բերքի մինչև 70%-ը, այն դեպքում, երբ թուրք աղաները վերցնում էին միայն 30%-ը[20]։

Այդ տարբերությունը պայմանավորված էր ոչ թե կալվածատիրոջ բնավորությամբ, ինչպես այդ բացատրում էր Ա. Մ. Կոլյուբակինը[21], այլ հողատիրոջ գյուղացուն տրամադրած միջոցներով, ինչպես նաև կալվածատիրական տնտեսության շուկայի հետ ունեցած կապով։

Երկրի բազմաթիվ շրջաններում աղաներն ու բեյերը տեխում էին կիսաբարներին իրենց փախարեն վճարելու տաներդն ու մյուս հարկերը։ Այդ բոլորից հետո կիսաբարներին մնում էր շատ շնչին բաժին կամ՝ ոչինչ։ Այսպես, Խարբերդի կազայում կիսաբարն իր հավաքած բերքի 11,75%-ը տալիս էր պետությանը որպես աշար, 55—65%-ը՝ աղային որպես հողի վարձակալության գին, իսկ 9—10%-ը՝ որպես սերմացու։ Դրանից հետո իրեն մնում էր 14%-ը—25%-ը, որը սովորաբար հավշտակվում էր հարկահանների կողմից՝ տուրքերի ու պարհակների փոխարեն[22]։

Ականատեսներից մեկը գրում էր, որ Ագլեվազում «երկու գյուղացի տեսա, որոնցմե մեկը 140 չափ ցորեն հանից, բայց ոչինչ չտարավ տուն (պարտքերը հավիվ գոցից), իսկ մեկն ալ, իրեն ոչինչ բաժին չմնալուն հետո, 10—12 չափ դեռ պարտքի տակ մնաց»[23]։

Աղաներն ու բեյերը, գործադրելով գյուղացիների նկատմամբ արատաստեղական հարկադրանքի տարբեր ձևեր, հավաքում էին նրանցից այնքան ռենտա ու հարկ, որքան ցանկանում էին, կամ որքան կարողանում էին, քանի որ պետության կողմից չկար սահմանված որոշակի նորմա։ Այդ տեսակետից իրավացի էր Բաֆֆին, երբ գրում էր. «գայլի հարաբերություններ... ասյալի (հպատակի) հետ ամեն տեղ միակերպ չէին։ Յուրաքանչյուր գյուղ ուներ իր առանձին օրենքները և պայմանները»[24], որ գյուղացու «երկրա-

20 Նույն տեղում, էջ 135։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, էջ 387—388։
23 «Մշակ», 1907, հոկտեմբերի 23։
24 Բաֆֆի. Երկեր, հ. 4, էջ 386։

գործության բերքը և նրա վաստակը մեծ մասամբ վայելում է կալվածատերը, մշակի համար մնում է այնքան, որով չի կարողանում բուն կենսական ամենաանհրաժեշտ պիտույքներին անգամ բավականություն տալ»[25].

* * *

Այժմ հարց է ծագում. ունտաչի երեք տեսակներից ո՞րն էր գիրիշտաղը՝ աշխատավճա՞րը, արդյունավճա՞րը, թե՞ դրամավճարը։ Մենք դժբախտաբար, չունենք մասնավորական վիճակագրական ամփոփներ այդ հարցին պատասխանելու համար, բայց ակներև է, որ քաշվող կամ կիսաքաշվող հողատերերի մոտ սերտակցող արդյունավճար ունտան էր Աչպահա՝ Սասունում նաիբ ագան իր 11 գյուղերից (267 տնտեսությամբ) տարեկան հավաքում էր.

Աչխոր, բուրգ, յուղ և մեղր	160.200 գուրուշի
Հացահատիկ	26.700 գուրուշի
Սարսակ կամ աշխատող	3.350 գուրուշի
Ընդամենը՝	200.250 գուրուշ

Հետևաբար, նաիբ ագան ստանում էր 186.900 գուրուշի արդյունավճար (93,3%) և 3.350 գուրուշի աշխատավճար (6,7%) ունտաս, իսկ դրամավճար ունտա չէր ստանում։

Արդյունավճար ունտան սերտակցող էր նաև այն ագաների մոտ, որոնք չէին վարում սեփական տնտեսություն։ Ք. Քիլյանը 1880-ական թվականների սկզբներին գրում էր, որ Կարնո, Վանի, Բազկի, Մուշի, Թերթմի և Տիրանակերտի հողատերերը գերադասում էին հող տալ մշակության ամման, հետևյալ պայմանով՝ մշակն իր ցորենի 1/10-ը տալիս էր հողատիրոջ, 1/10-ը՝ հողի հարկի համար, 1/10-ը՝ սերմացուի համար, 1/10-ը՝ ցանքսի ծախսերի համար, 1/10-ը՝ ոչխարների համար, 1/10-ը՝ ձիերի համար, 1/10-ը՝ ցորենի ծղոտի համար, 1/10-ը՝ ցորենի հատիկի համար, 1/10-ը՝ ցորենի ծղոտի համար, 1/10-ը՝ ցորենի հատիկի համար։ Ընդամենը՝ 10/10։

Սակայն սեփական տնտեսություն վարող ագաների մոտ աշխատավճար ունտան կազմում էր ամբողջ ունտայի գրեթե տասնորդական վերլուծում էր[27].

25 Նույն տեղում, էջ 336։

26 «Մասիս», 1884, գնահատների 8, էջ 456։

27 Տե՛ս Ա–դր. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում, էջ 302։

Բույսերի անունները	Բրամ (ագեր)	Ցանքն (չափ)	Սարսակ կամ բանվոր	Աճեցում էր պահել երեսից խոտ ու գոմաղբ	
				ոչխար	ձի
Սրտենա	—	3	30	45	1
Հաճիայան	—	4	39	20	1
Նորապր	—	2	21	15	—
Չիլերքեն	—	5	44	30	—
Նոպան	—	2	52	26	—
Հերեան	—	1	6	—	—
Գագասպի Սրտենա	—	3	24	—	—
Վերին Համաբատ	—	1,5	18	10	—
Մոսթասեն	—	1	12	18	1
Ալգ	5	6	32	32	1
Բագանա	—	3	30	30	1
Մաթմանան	—	5	90	60	—
Մաքուչ	—	20	14	—	—
Փերբագայան	—	20	200	—	—
Ընդամենը՝	5	76,5	612	286	5

Նրա Շաքիր ագայի տապած արդյունավճար ու աշխատավճար ունտան վերածվում էր գյուղացիներից 3040 գուրուշի միայն ցորենի[28] և 3060 գուրուշի սարսակի[29]։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նա գյուղացիներից վերցնում էր նաև 9 խոյ, 10 նոխազ (արու այծ), 2000 ձու և 20 գլուխ շաքար[30], որոնց արժեքը կազմում էր ավելի քան 1000 գուրուշ[31]։ Հետևաբար, Շաքիր ագայի վերցրած արդյունավճար ունտան կազմում էր 4040 գուրուշ, աշխատավճար ունտան՝ 3060 գուրուշ, իսկ դրամավճար ունտան՝ 500 գուրուշ[32]։ Ինչ վերաբերվում է նրա ոչխարներն ու ձիերը գյուղացիների հաշվին կերակրելուն, ապա այդ հանգամանքը մի կողմ ենք թողնում, որովհետև այստեղ արդյունավճարն ու աշխատավճարը այնպես են միահյուսված իրար, որ անհնարին է զատել միմյանցից և հաշվել առանձին-առանձին։

28 1 չափ ցորենը=է 4 փթի (տե՛ս Ա–դր, հղված աշխատությանը, էջ 24) կամ կես փթիկ, իսկ կես փթի ցորենը արժեր 10 գուրուշ։

29 1 բանվորական օրը=է 5 գուրուշ։

30 Տե՛ս Ա–դր. հղված աշխատությանը, էջ 302։

31 Մեկ աշխարն արժեր 85—94 գուրուշ (Я. Д. Малама. Средства продовольственные, перевозочные, фуражные и денежные северо-восточной части азиатских владений Оттоманской империи (вилайеты Эрзерум и Трабезунд), стр. 33.

32 Հաշվի առնելով, որ 1 ագին = 100 գուրուշի։

Բաղիշի տանջահում Յուսուֆ աղան 1910 թ. Կորվու դյուղից վերցնում էր.

800 կամ ցորեն . .	12.000 դուրուշ
1000 բանջակ տավարա	5.000 դուրուշ
Մշակ. ներքնակ և այլն	15.000 դուրուշ
Ընդամենը՝	32.000 դուրուշ

Հետևաբար, Յուսուֆ աղայի վերցրած արդյունավճար ռենտան կազմում էր ավելի քան 17.000, իսկ աշխատավճար ռենտան՝ 15.000 դուրուշ։ Այս աղան չէր առանում դրամավճար ռենտա։

Եվ վերջապես Սասունում Բիլալի աղան 1910 թ. վերցնում էր Թազավանք դյուղի Հարությա բնակիչ Ս. Օ-ից։

Դարձանացանի սերմացու	160 դուրուշ
2 մասցու ոչխար	180 դուրուշ
1 լծար յուղ	50 դուրուշ
1 քթ, 1 շերեփ և 10 գդալ	8 դուրուշ
2 գուլդ տրեխ և 2 գուլդա գուլպա	15 դուրուշ
2 նուկի կանեփ	10 դուրուշ
Ընդամենը՝	423 դուրուշ

Բացի դրանից, աղան հարկադրում էր Ս. Օ-ին՝

Վարել	10—13 օր	50—65 դուրուշ
Հնձել (խոտ) . . .	10—12 օր	50—60 դուրուշ
Հնձել (հացահատիկ) .	15—20 օր	75—100 դուրուշ
Փայտ կտրել . . .	15—20 օր	75—100 դուրուշ
Անտառից փայտ բերել	25—30 օր	125—150 դուրուշ
Ընդամենը՝	375—475 դուրուշ	
կամ մեջքին հաշվով	425 դուրուշ	

Դյուղացին երեխա ունենալիս վճարում էր 35 դուրուշ
Տղա կամ աղջիկ պսակելիս՝ վճարում էր 1 ասկի
Իր հանգուցյալին թաղելիս՝ վճարում էր 1 եղ և այլն։

Եթե վերջին դեպքերը որպես պատահականություններ չհաշվենք, ապա նրա արդյունավճար ռենտան կազմում է 423 դուրուշ, իսկ աշխատավճարը՝ 425 դուրուշ։

Այս երեք փաստերն ամփոփելիս կստանանք հետևյալ ապյուսակը.

Ռենտան	Դուրուշ	Տոկոսային հարաբերությունը
Արդյունավճար . .	21.463	53.5
Աշխատավճար . .	18.485	45.3
Դրամավճար . . .	500	1.2
Ընդամենը՝	40448	100.0

Այսպիսով, անհատական անտեսություն վարող ազանների մեծ մասը արդյունավճար ռենտան կազմում էր 53,5%, աշխատավճարը՝ 45,3%-ը, իսկ դրամավճարը՝ 1,2%-ը[33]։

Դրամական ռենտայի աննշան զարգացումը պայմանավորված էր երկրում ապրանք-դրամական հարաբերությունների թույլ զարգացմամբ։ Կ. Մարքսը ցույց է տալիս, որ դրամավճար ռենտան ենթադրում է առևտրի, բաղաքային արդյունաբերության, բնդհանրապես ապրանքային արտադրության ու սրա հետ էլ փոդային շրջանառության արդեն նշանավոր զարգացում[34]։

* * *

Արևմտյան Հայաստանում բացի ազաներից ու բեյերից, ֆեոդալական ռենտա էին առնում նաև կրոնական հաստատությունները՝ վանքերը, եկեղեցիները և մզկիթները։ Նրանք ռենտա էին առնում այն ժամանակ, երբ իրացնում էին իրենց հողային սեփականությունները։ Հայոց վանքերն այդ իրացումը կատարում էին երկու եղանակով կամ տալիս էին իրենց հանդակները հոզագործի և ասկավահող դյուղացիներին կիսաբարությամբ, կամ պարտադրում էին իրենց հանդակների վրա ապրող դյուղացիներին՝ մշակել ազատ մնացած տարածություններ՝ կոոի կարգով։ Տվյալների բացակայության պատճառով մենք չենք կարող ցույց տալ, թե վանքերի տնտեսության մեջ ռենտայի այդ երկու ձևերից որն էր գերիշխողը, բայց հիմնվելով այն փաստերց, որ նրանց հանդակները մշակ-

33 Մի ուսումնասիրության մեջ նշված էր, որ Արևմտյան Հայաստանում բերը «շարկ են տվել մեծ մասամբ մթերքներով և ավելի քիչ՝ հետևն դրամով» (տՄասիս, 1899, № 4—5 էջ 442)։

34 Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, մ. 2, էջ 334։

ման էին մեծ մասամբ կիսագրագիտ, կարելի է ենթադրել, որ տիրապետողը սպրդումներ տեսնած էր։ Ինչ վերաբերվում է մահմեդական կրոնական հաստատություններին, ապա այդ մասին մենք չունենք տեղեկություններ։

Հայոց կրոնական հաստատությունները բացի անուսյալից, բնակիչներից հավաքում էին նաև բազմաթիվ հարկեր ու տուրքեր։

Այսպես, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը բոլոր վանքերից ու եկեղեցիներից առանում էր «մուկատաա» անունով տուրք՝ նրանց տարեկան եկամտի 10%—20% չափով[35]։

Պատրիարքարանը 1867 թ. հարց հարուցեց Ազգային ժողովի առաջ հայ բնակչության վրա նոր տուրք սահմանելու մասին։ Հրեսխոխանններից ոմանք առարկեցին, դանելով, որ դա կարող է գավառներում դժգոհություն և խռովություն առաջացնել, բայց մյուսները հավանություն տվին, հաշվի առնելով այն, որ նրա յուրաքանչյուր հոգի վճարի տարեկան 26,5 փարա, ապա «կենտրոնական պետական երկու միլիոն դուրչի դումար մը կը մտնի»։ Իսկ խռովությունների առաջն առնելու համար նրանք առաջարկում էին սահման պետք եղած միջոցները (խորհել) Բ. դրան հետ բանակցելով[36]։

Քաղաքական մի շարք նկատառումներով նոր հարկի սահմանումը որոշ ժամանակով հետաձգվեց։ Սակայն 1881 թ. Ազգային ժողովը կրկին անդրադարձավ դրան և որոշեց՝ եկամուտ ունեցող յուրաքանչյուր հոգուց տարեկան վերցնել ե. Պոլսում 20, իսկ գավառներում՝ 10 դուրչ[37]։

Հայոց վանքերը պարտադրում էին գյուղացիներին տարին մեկ անգամ իրենց բնատնիքներով աշխատելու վանքապատկան կալվածքներում, կամ դրա փոխարեն տալ դրամ, ձեթ գյուղը հետու էր գտնվում այդ կալվածքներից։ Բացի դրանից, նրանք հարկադրում էին գյուղացիներին տալ ցորեն, գարի, յուղ, պանիր, ձեթ, ձու, դառն, ոլ և այլն, ինչպես նաև տարվա մեջ մեկ օրվա ոչխարի կաթը։ Եթե գյուղը հետու էր գտնվում վանքից, ապա միաբանությունը ուղարկում էր հատուկ մարդ, որը հավաքում էր կաթը, պատրաստում պանիր ու յուղ և գյուղացիների միջոցներով տեղափոխում վանք[38]։

35 *Տե՛ս* Կոզն, Կարս բազարը. Մոսկվա, 1893, էջ 82, «Ընդարձակ օրացույց ազգային հիմնագանոցի», Կ. Պոլիս, 1900, էջ 197—199։

36 «Մասիս», 1867, հոկտեմբերի 14, հոկտեմբերի 24։

37 *Տե՛ս* «Մասիս», 1881, մարտի 8։

38 *Տե՛ս* Ա. Միսախյան, Նկարագրական ուշադրություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1884, մ. Բ., էջ 214—217։

Գյուղացիների աշխատավճարումները կոչվում էին գութարա, իսկ մկերթավճարումները՝ պոպի։ 1862 թ. Ս. Արվանձյանը նշում էր, որ գյուղացին «առարին քանի անգամ վանքին ձրի կաշխատի, յուր ոչխարը կը կթե, վանքին բաժին կը հանե, պանիր կուտա, եղ կուտա, տարեկան պոպի կուտա»[39], նա աշնունեան նշում էր, որ Խաչբերդի ս. Սորսորու վանքն իր 24 թեմական գյուղերից իրեն պոպի վերցնում էր 24 քիլե ցորեն ու գարի, 2000 դուրչի բամբակ, հատապտուղներ ու մրգեր[40], Իսկ Աղբակի ս. Առաքելոց վանքը վերցնում էր գյուղացիներից մշակներ[41], ինչպես նաև հացահատիկ, ոչխար, ալե, յուղ, պանիր և այլն[42]։

Ա-ոնն գրում էր. «Վանքերի վարդապետները շուտ-շուտ իջնում են դաշտ, մտնում են գյուղերը, հայտնվում կալատեղերը և առատորեն հավաքում վանքի պոպին, այն է՝ դառ, ոլ, յուղ, պանիր, ցորեն, գարի, գլխիկ և այլ մթերքներ»[43]։ Նա իրբե օրինակ նշում էր, որ Մուշի ս. Կարապետ վանքը գյուղացիներից տարեկան վերցնում էր՝ 40 քիլե հացահատիկ, 25 լիտր պանիր, 15 լիտր յուղ և ավելի քան 400 ոլ, գառ և ոչխար[44]։

Անհրաժեշտ է նշել, որ վանքերը, բացի գութարայից ու պոպից, գյուղացիներից վերցնում էին նաև պարտադիր «վճիռներ» ինչպես նաև մեռոնի հատուատեղին ու արծաթեղինը։

Հայոց վանքերի հետ մեկտեղ գյուղացիներին հարատահարում ու կեղեքում էին նաև քահանաները։ Նրանք վարձ էին առնում յուրաքանչյուր ծնունդի և կնունքի, օրհնանքի և պսակադրման, հիվանդության և թաղման, մի խոսքով բոլոր ծիսակատարությունների համար։ Այսպես. Վան քաղաքում և նրա շրջակայքում քահանան վերցնում էր.

Մանկան մկրտության համար	2—5	դուրուշ	կամ 16—40 կոպ.
Պսակի համար	10—20	դուրուշ	» 80—1,60 կոպ.
Նոջեկյալի թաղման համար	5—20	դուրուշ	» 40—1,60 կոպ.
Ծնօրհնեքի համար	20—40	փարա	» 6—8 կոպ.
Խեղկմանի օրհնելի համար	20—40	փարա	» 4—8 կոպ.
Քառասունքի տաքիվ	40—60	փարա	» 8—12 կոպ.
Գանձակի և հիշելի տաքիվ	5—10	փարա	» 1—2 կոպ.

39 «Արծվի Վասպուրական», 1862—1863, էջ 89։

40 *Տե՛ս* «Արեվելյան մամուլ», 1884, էջ 114—115։

41 *Տե՛ս* «Մասիս», 1885, ապրիլի 27, էջ 940։

42 **Р. Бекгульяни**. По Турецкой Армении. Впечатления от поездки летом 1914. Ростов н/Д, стр. 35.

43 Ա-ոն. Նրված աշխատություն. էջ 358։

44 Նույն տեղում. էջ 115։

Հոգևորականներից շատերը գործարքի մեջ էին մտնում ազատների ու պաշտոնյաների հետ և ավելի ստահակացնում գյուղացու հարստահարումը։ Օրինակ՝ 60—70-ական թվականներին Վանի Բեմի առաջնորդ սիրահոշակ Գողոս վարդապետը բնակչությանը հարստահարելու և իր հակառակորդներից վրեժ լուծելու համար կապված էր այնպիսի հանցագործների հետ, ինչպիսիք էին շամախցի Դյուլ-Մհմմեդ բեյը, որն ավերեց հայկական բազմաթիվ գյուղեր, Մակուի Ավդալ բեկը, որը թափեց հարյուրավոր հայերի արյունը, մութբրրցոց ցիկոպատ Մհմմեդ Ալին, որը պղծեց Մարմանի եկեղեցին և ոտատավորեց տասնյակ հայուհիների պատվովը, հայդարանցի Ալի ապան, որը թալանեց պարսկա-թուրքական սահմանամերձ գյուղերը և այլն։

Գողոս վարդապետը մտերմական կապեր էր հաստատել Բարձրադույն Դռան հետ և նրա միջոցով հանցագործներին ազատում էր ձերբակալություններից, իսկ անմեղներին ձերբակալում։ Նա գործել էր մի կատարյալ չարիք Վանի հատարակության համար։ Վ. Փափազյանը գրում էր, որ Գողոս վարդապետը «իր ձեռնհասությամբ, գործող լինելով և խորամանկ քաղաքականությամբ այնշափ լավ կարողացել է ազդեցություն ձեռք բերել Բ. Դռան մեջ, որ դողում է նրանից Վանի յուրաքանչյուր մի նոր կամ հին փաշա, յուրաքանչյուր կրոնավոր, նույնիսկ պատրիարքը... Երիվանը, ամեն տեսակ միջոցներ ի գործ դնելուց հետո՝ հաւասհատ գնչում է. «Գողոս վարդապետը փորձանք հասյ իմ և հայրենիքի գլխին, չգիտեմ ի՞նչ բնել ասոր հետ»[45]։

Գողոս վարդապետից իրենց գազրելի արարքներով ետ չէին մնում Մուշի ասատնորդ Մխիթար և Դիրջանի ասատնորդ Առաքել վարդապետները։ Նրանցից առաջինը, գյուղացիների խոսքերով ասած, «մեկ աղրիկը չորս տեղ նշանելու թույլ կուտա, մանավանդ թե ձեռք կուտա, և ամեն մեկին գան գան բասակ կառնե»[46]։ Նա արդարացնում և բանտերից ազատում էր հանցագործ ցեղապետերին ու նրանցից կաշառք վերցնում, զարթիններին հետ մաս էր դալիս գյուղերը և բնակիչներից ապօրինի տուրքեր հավաքում։

Իսկ երկրորդը, ինչպես գրում էր «Մասիսի» թղթակիցը, ասաջնորդ դառնալու առաջին իսկ օրից «բսկասվ կողոպտել, կեղեքել խեղճ ժողովուրդը, և բանալով անոնց վրա, ով ալ իրան հակառակ

45 Վ. Փափազյան, նրկեր, հ. 3, էջ 479—480։

46 «Ծիխան Հայոց պատմության», հ. 13, էջ 494։

երևնա՝ կատավարության ձևոքը կը մտանե և կամ պիչերով վրեժ կառնե»[47]։ Ընկերակցելով Դիրջանի պաշտոնյաների ու ազաների հետ, նա գործադրում էր ամեն մի բռնություն ու ապօրինություն գյուղացիների նկատմամբ, հարստահարում ու չարաշար պատժում էր նրանց, յուրացնում էր վանքերի ու կրոնական այլ հատատությունների միջոցները և դիզում մեծ հարստություն։

Առաքել վարդապետը հովիտատում էր գպրոցների համար նախատեսված նույնիսկ խղճուկ գումարները։ Իսկ երբ պահանջվում էր միջոցներ բաց թողնել լուսավորության գործի համար, նա կրկրուկ պատասխանում էր՝ չկա։ Վերոհիշյալ Բղիթաչիցը գյուղացիներից էր, բայց «դիզած հարյուրներով ոսկիներդ ուրկի՞ց է, բյուրբ-բյուրքի վրա հաղնիդ ուրկի՞ց է, ժողովուրդը փարա չիտար, բնիկ ձիերդ և հանգիստ ապրելիդ ուրկի՞ց է, հայրենական ժառանգություններն է,—ոշ, ոչ, գործյալ ազգատ ժողովրդին տուրքն է, նրանի քե քանակիդ համար կողոպտածնդ մաս մըն ալ գպրոցի համար կողոպտեիր»[48]։

Մենք, դժբախտաբար, բավականաչափ նյութեր չունենք մահմեդական հոգևորականների կատարած հարստահարությունների մասին, բայց հավանական է, որ նրանք հայերից հետ չէին մնում։ Այսպես, քրդական յուրաքանչյուր դումարամ կար մոլլա, որն օրհնում էր ծնվողներին ու թաղում մեռնողներին։ Նա այդ ու նման արարողությունների համար բնակիչներից վերցնում էր ոչխար, գառ, բուրդ, պանիր, հացահատիկ, ինչպես նաև տարեկան 2—3 հազար դուրուշ դրամ։ Չբավարարվելով դրանցով, մոլլան աշխատեցնում էր գյուղերին իր համար և առանում մեծաքոդի հագուստեղեն[49]։

Իհարկե, հոգևորականների կողոպուտները ոչ թե ֆեոդալական ռենտա էին, այլ բարբարոսական ավարառություն, որն քան էության համընկնում էր ազատների կողմից հավաքած հարկին։

Բայց ինչպես ազատների, նույնպես և հոգևորականների հավաքած հարկերի ու ֆեոդալական ռենտայի հիմքում բնկած էր հողի ֆեոդալական սեփականությունը, առանց որի նրանք չէին կարող ունենալ տնտեսական ու ռազմական ուժ և հարկել բնակչությանը։

Ազատներից շատերը դանվելով ֆեոդալիզմի զարգացման ցածր աստիճանի վրա, իրենց հողային տիրույթների տնտեսական իրաց-

47 «Մասիս», 1868, մայիսի 24։

48 Նույն տեղում։

49 *Ս. Մела Махмуд Баязиди*. Нравы и обычаи курдов. М., 1963, стр. 17.

ման ձևերը գուգակցում էին արտառանձնական հարկադրանքի բարբարոսական ձևերի հետ և հավաքում գյուղացիներից այնպիսի պրիմիտիվ առարկաներ, ինչպես շալվար, տրեխ, պարան, գուլպա և այլն։

Ի տարբերություն ֆեոդալական մի շարք երկրների, որտեղ կալվածատերերը բաժանել էին իրենց գյուղացիներին կառափն (աշխատավճարային), բարքային (արդյունավճարային) և դրամավճարային խմբերի, Արևմտյան Հայաստանում նրանք գյուղացիներին չէին ենթարկել այդպիսի բաժանման, այլ ցանկության դեպքում սահման էին կատարելու թե՛ կռո և թե՛ վճարելու բարքա ու դրամ։ Այդուհանդերձ Արևմտյան Հայաստանում ոչ միայն XIX դարի երկրորդ կեսին, այլև XX դարի սկզբին ֆեոդալական տնտեսության տնտեսներից տիրապետողը արդյունավճարայինն էր։ Տնտեսության այս տեսակն ինչպես Ասիայի մի շարք երկրներում, նույնպես և Արևմտյան Հայաստանում իր իսկ բնույթով դանդաղեցնում էր հասարակության զարգացումը։ Կ. Մարքսը, խոսելով տնտեսության այդ ձևի մասին, գրում էր. «Արդյունքներով տնտեսության ձևի շնորհիվ, որը զուգորդված է արդյունքի ու բուն իսկ արտադրության որոշ տեսակի հետ, գյուղատնտեսության ու այդ ժամանակ տնային արդյունաբերության անհրաժեշտ միացման շնորհիվ, գոնե հիմնական ինքնաբավության շնորհիվ, որ նրա տիրապետության պայմաններում ձևը է բերում գյուղացիական բնտանիքը, ազատ լինելով շուկայի ներգործումից, ինչպես և գյուղից գուցե գանվող հասարակության արտադրության փոփոխություններից ու այդ հասարակության պատմական շարժումից, կարճ՝ ընդհանրապես բնատրտնտեսության բնույթի շնորհիվ այս ձևը լիովին հարմար է պատմական ծառայելու հասարակական այն կազմությունների համար, որոնք լճացել, անշարժության են մատնվել, ինչպես այս տեսնում ենք, օրինակ, Ասիայում»[50]։

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԵՐՆ ՈՒ ՊԱՐՀԱՆՔԸ

Գյուղացիներր, բացի կալվածատերերից ու կրոնական հաստատություններից, հարկադրված էին կատարելու զանազան բնույթի պարտավորություններ և վճարելու բազմաթիվ հարկեր նաև

50 Կ. Մարքս. Կապիտալ, հ. III, մ. 2, էջ 334։

թուրքական պետությանը։ Նրանք վճարում էին հետևյալ ուղղակի և անուղղակի հարկերը.

Աշար— հավաքվում էր գյուղացիների ստացած բերքից, ինչպես նաև անասնակերից 10—12,5%։

Սալյանե— գանձվում էր գյուղացիների ունեցվածքից։ 1872 թ. այն փոխարինվեց էմլաճով և թեմեթուով։ Էմլաքը վերցվում էր գյուղացիների անշարժ գույքից՝ հողամասից, տնամերձից, կալից, անկ և այլ կառույցներից՝ հետևյալ չափերով. 1000 դուրուշ արժող մարիաննդից՝ 4, արտաքաղքից՝ 10, տնից՝ 5, խանութից՝ 10 դուրուշ[1]։ Իսկ թեմեթուն վերցվում էր գյուղացիների կոզմնակի եկամուտներից (այսինքն նրա նրանք հողագործության հետ զուգընթաց զբաղվում էին նաև առևտրով, արհեստով, տարածնացությամբ և այլն)՝ 3%-ից 5%-ի չափով[2]։

Ենամի-ազնաք— վերցվում էր գյուղացիների ոչխարներից ու այծերից՝ յուրաքանչյուր գլխից տարեկան 3—5 դուրուշ։

Բեդելի-ասկերի— հավաքվում էր միայն բրիստոնյաներից։ Կառավարությունը չէր զբաղվում նրանց, այլ պարտադրում էր բոլոր տղամարդկանց վճարել տարեկան 20—37,5 դուրուշ։

Նուֆուզ-թեսքերեսի— երկու ունեցվածք՝ 1,5 դուրուշ։

Ֆետաշ— հողի վաճառքից՝ 1000-ից 25 դուրուշ։

Ինքիհալ— հողը ժառանգությամբ ստանալիս՝ արժեքի 4—10%-ը։

Թափու— վերցվում էր հողամասի համար թափու վերցնելիս։

Դեղմատուրֆ— պաշտոնական թուղթ ստանալիս՝ գիմում գրելու կամ պաշմանագիր կնքելու համար։ Եթե որևէ ունեցվածքի վաճառքը արձանագրվում էր պաշտոնական թղթի վրա, ապա դրշմատուրքը վերցվում էր բան նրա արժեքի՝ 100 դուրուշ արժեքից՝ 10 փարա, 1000-ից՝ 20 փարա, 10.000-ից՝ 5 դուրուշ, 100.000-ից՝ 50 դուրուշ և այլն[3]։

Օրման ռևսմի— շինափայտի վաճառքից՝ արժեքի 10—15%-ը

1 Արտաավարքից շատ վերցնելը պատճառաբանվում էր նրանով, որ այն ազատ էր տասանորդից, իսկ խանութը շատ եկամուտ էր տալիս։

2 Հարկերի մասին տե՛ս Վրացական ՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 964, ց. 13, ԲԲ. 37—34, ֆ. 543, ց. 1866, Բ. 24, Թուաստանի սրտաբին բաղաքականության արխիվ, ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա», 1872, գ. 1033, ԲԲ. 17—30, А. М. Пржевальский. Вилайет Эрзерум, Тифлис, 1904, ч. 1, стр. 35—37.

3 Տե՛ս «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1900, էջ 245—246։

Ինքնաար— ձիու կամ խոշոր եղջերավոր անասունի վաճառքից՝ 1000-ից 25 դուրուշ։

Քիլե-փարասի— հայտահատիկի վաճառքից՝ յուրաքանչյուր քիլեից (կամ 1,5 փթից) 1 փարա։

Ջաբեին— քաղաքային սպանդանոցում անասուն մորթելիս՝ խոշոր եղջերավոր անասունից՝ 0,5 դուրուշ, իսկ մանր եղջերավոր անասունից՝ 1 փարա։

Էբեին— նոր շենքերի կառուցումից կամ հների վերանորոգումից՝ բան արժեքի։

Թանզիֆար-վերգյուսի— քաղաքներում անշարժ ունեցվածքի վաճառքից՝ 1000-ից 7—10 դուրուշ։

Թոփրակ-Բասան— քաղաքների փողոցներում ձիեր կամ սայլեր կանգնեցնելու համար։

Մադեն— հանքահորեր մշակելու համար։

Ռեսմի-մյասկիրատ— օղի թորելու համար։

Կառավարությունը հարկեր էր վերցնում նաև աղի ու ծխախոտի վաճառքի համար և այլն։

Այդ բոլոր հարկերից ամենածանրն աշարն էր, որը երևում է հետևյալ տվյալներից (դուրուշներով)[4].

Հարկերի անուններ	Կարգադրության 1896 թ. համաձայն է	Իրականում գանձվել է 1898 թ. համաձայն է
Աշար	11.251.842	676.960
Ռեսմի-ադեթ	4.471.865	—
Վերգի	3.858.930	183.050
Բեդելի-ասկերի	2.514.846	386.190
Թեմեթթու	816.223	15.573
Ընդամենը	22.913.706	1.261.773

Ինչպես տեսնում ենք, կառավարության եկամուտները աշարից կազմում էին համարյա այնքան, որքան տղյուսագում բերված մյուս պետական հարկերից միասին։

Թուրքական կառավարությունը հարկերը կամ հավաքում էր պետական պաշտոնյաների միջոցով, կամ տալիս էր կապալով։ Այսպես, աշարի հավաքման իրավունքը մեկ տարով նա հրապարակորեն վաճառում էր։ Ով շատ էր վճարում, նա էլ գնում էր այն։

[4] Տե՛ս W. Totomjanz und E. Topschjan. Die Sozial-ökonomische Türkei, Berlin, 1901, էջ 57.

Բնակիչները սովորաբար ապահովն ու բնչերն էին, որանց հետ ոչ ոք չէր համաձայնվում մրցման մեջ մտնել։ 1904 թ. «Մշակի» թղթակիցը գրում էր. «Երբ մոտենում է ամուրի ժամանակ, բոլոր կամ առնառուց լուր են տարածում, որ այնինչ բենն է դնելու աշարը, ով է գժվել, որ համաձակվի ամուրդին մասնակցել. մասնակցողի կյանքն ու գույքը վտանգի մեջ կլինի անպատճառ, բոլորը ետ են քաշվում, մնում են մի կամ մի քանի վաշխառու բնիկներ[5]։

Ապահովն ու բնիկները որպես խոշոր աշարառուներ՝ իրենց հերթին վաճառում էին աշարի հավաքման իրավունքը միջնակներին, սրանք էլ՝ փոքրերին, փոքրերն էլ՝ ավելի փոքրերին և այդպիսով կառավարության ու գյուղացիների միջև ստաջանում էր միջնորդների մի ամբողջ հիերարխիա։

Թուրքական կառավարությունը մինչև 1890-ական թվականները աճուրդով էր տալիս ամբողջ նահիևների, անգամ կազանների աշարի հավաքման իրավունքը[6], բայց այդ թվականներից հետո, երբ աշխատավոր գյուղացիների բնական ծանր աղքատության մեջ և սնանկին համատարած հրաժարվել հարկերից ու տուրքերից, նա արդեն հարկադրված էր աճուրդով տալ գիտպանդպուխ առանձին գյուղերի աշարի հավաքման իրավունքը[7]։ Գնողներ չգտնվելու դեպքում՝ աշարը հավաքում էին կառավարական հարկահանները։

Աշարի կապալառուները կոչվում էին մյուլթեզիմներ, իսկ նրանց օգնականները՝ չաուշներ[8]։ Նրանք պետք է լինեին օսմանահպատակ և ոչ պակաս քան 20 տարեկան։

Ռեսմի-ադեթի հավաքումը սկզբում նույնպես տրվում էր աճուրդով, բայց 1872 թ. կառավարությունը հանձնարարեց այն հատուկ պաշտոնյայի, որ կոչվում էր բանսիլղար կամ խամշուռ մեմուրի։ Սա վաղ գարնանն իր գրագրի կամ, ինչպես կոչվում էր, քաթիբի և մի զբիխեի հետ միասին շրջում էր գյուղերը և անհ օգնությամբ յուցակագրում գյուղացիների ոչխարները, այնուհետև մտնում էր նրանց տները և առուգում։ Եթե վերջիններս թաքցրել էին իրենց ոչխարների իսկական թիվը, ապա պատժի էին ենթարկ-

[5] «Մշակ», 1904, հունիսի 17։

[6] Я. Д. Малама. Описание Эрзерумского вилайета, СПб, 1874, стр. 29.

[7] А. М. Пржевальский. Указанное сочинение, стр. 31—33.

[8] Ч. Х. Գոբդևսկին նշում էր, որ թուրքական փաստաթղթերում մյուլթեզիմ կամ իլթիզամ տերմինը հանդիպում է XVI դարից։ Այն սկզբում նշանակում էր իր վրա օրհ պարտականության վերցնող մարդ (տե՛ս նրա «Избранные сочинения», М., 1962, т. III, стр. 245).

վում կամ տուգանվում, 1905 թ. կառավարությունը նշանակեց հատուկ պաշտոնյա խամշուռ մեմուրիի գործունեությունը հսկելու նպատակով։ Բայց այդ պաշտոնյան, ինչպես այդ բնորոշ էր Թուրքիայի իրականության համար, գործարքի մեջ էր մտնում նրա հետ և ստանում կողոպուտի որոշ բաժին[9]։

Էմլաքի չափերը որոշում էին ներքին գործերի մինիստրության ենթակա էմլակ-ռայիների հիմնարկության պաշտոնյաները։ Նրանք շրջում էին գյուղերը, գնահատում բնակիչների անշարժ ունեցվածքը, նշանակում հարկը և հանձնաժողովում ոտին՝ համաձայնու այն։

Բեկդիլի-ասկերին հավաքելու համար վիլայեթի իշխանությունները սկզբում ոտից ստանում էին գյուղի տղամարդկանց քնդհանուր թիվը, հետո սահմանում գյուղի հարկը և այնուհետև հանձնաժողովում նրան հավաքելու այն։ Իսկ ոտը հավաքում էր գյուղի հարուստ ու ազդեցիկ մարդկանց և նրանց հետ խորհրդակցելով, բաժանում հարկը գյուղացիների վրա։ Ոտը և ազդեցիկ հարուստները սովորաբար հարկերն այնպես էին բաժանում, որ նրանց ծանրությունը, ինչպես ցույց կարվի ստորև, ընկնում էր աշխատավոր գյուղացիության վրա։

* * *

Թուրքական կառավարությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արագորեն մեծացնում էր հարկերը։ Այսպես, եթե աշարը 1850-ական թվականներին վերցվում էր միայն հացահատիկից, ապա 1866 թ. սկսեց վերցվել նաև գյուղատնտեսական այլ արդյունքներից[10], այն էլ ոչ քիչ 10%-ի, այլ 12,5%-ի չափով։ Կարնո ռուսական հյուպատոսը նշում էր, որ աբրունքը 1865—1866 թթ. Կարնո վիլայեթից հավաքել էր 124.410, 1866—1867 թթ.՝ 152.900, 1867—1868 թթ.՝ 184.470, իսկ 1870—1871 թթ.՝ 195.000 լիրայի աշար[11]։

Կառավարությունը առա-թուրքական պատերազմից հետո մի կողմից՝ ավելի մեծացրեց աշարը, հավաքելով, օրինակ, Ալշկավասում բերքի $^1/_{14}$-ը, Ասատնում՝ $^1/_7$, այլ տեղերում՝ $^1/_6$-ը,[12] իսկ

9 Տե՛ս ՀՍՍՌ ԿԳՊԱ, ֆ. 521, ող. 2, գ. 402, թթ. 8—9։
10 «Մուրճ», 1899, № 4—5, էջ 444։
11 ԴԱՔԱ, ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա չ», 1872, գ. 1083, թթ. 18—19։
12 Տե՛ս «Ծիտակ», 1895, հունվարի 21, 1908, փետրվարի 2։

մյուս կողմից՝ սկսեց նրա մի մասը—խոտը, բանջարա-բոստանային մթերքները մրգերն ու հատապտուղները դանձել դրամով։ Ա-դան նշում էր, որ «տատասերդի տուրքը վերցվում է միմիայն հացահատիկներից, իսկ մնացյալ բերքերից, ինչպես են խոտը, առվույտը, ծառատպուղները, խաղողը, ծխախոտը և այլն, տատասերդը վերցնում են դրամով»[13]։

Անշուշտ, գյուղացու համար, նրա նա դրամ ուներ, ավելի հեշտ էր տալ տատասերդը փողով, քան մթերքներով, բայց քանի որ նա չուներ այն, ուստի ստիպված էր մթերքներն էժան վաճառել և վճարել պետական հարկը։

Կառավարությունը, բացի աշարից, բարձրացրեց նաև էմլաքն ու թեմեթուն։ Այսպես, եթե 1874 թ. նա որպես էմլաք վերցնում էր 1000 գուրուշ արժեքից 4 գուրուշ, ապա 1879 թ. սկսեց վերցնել 1000-ից՝ 8, իսկ 1886 թվից՝ 1000-ից 10 գուրուշ[14], այլ կերպ ասած՝ միայն 10—12 տարվա մեջ էմլաքը ժեծացրեց 2,5 անգամ։

Թեմամի-ադնամը մինչև 1868 թ. հավաքվում էր յուրաքանչյուր մանր եզդերավոր անասունից 1,5 գուրուշ (կամ 60 փարա), 1868 թ. սկսեց հավաքվել 2 գուրուշ, իսկ 1871 թվից՝ 3 գուրուշ (կամ 120 փարա)։ Կարնո ռուսական հյուպատոսը նշում էր, որ այդ տուրքը միայն Կարնո վիլայեթում կազմել է՝

1866—1867	թթ.	48.950 լիրա
1867—1868	»	52.030 »
1868—1869	»	55.000 »
1869—1870	»	77.077 »
1870—1871	»	73.875 »
1871—1872	»	94.875 »

Այլ կերպ ասած՝ վեց տարվա մեջ մոտ երկու անգամ ավելացել է այն[15]։

Կառավարությունը առա-թուրքական պատերազմից հետո ավելի բարձրացրեց ոհմի տղամարդ, հավաքելով յուրաքանչյուր ոչխարից 3,5—4, իսկ այծից՝ 5 գուրուշ։

Բեկդիլի-ասկերին նրը փոխարինեց նախկին խարաջին, հավաքելու էր 14—60 տարեկան հասակ ունեցող տղամարդկանցից՝

13 Ա-դա, վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 283։
14 Տե՛ս «Ընդհանուր տեղեկագիր ազգային հիմնադատության», 1900, էջ 229—230։
15 Տե՛ս ԴԱՔԱ, ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա չ», 1872, գ. 1083, թթ. 20—21։

Բայց 60-ական թվականներին սկսեց հավաքվել նաև նորաժիններից ու գառամյալ ծերերից[16], իսկ 80-ական թվականներին՝ յուրաքանչյուր աղամարդուց ոչ քիչ 20, այլ արդեն 37½ դուրուշ։ Մի հաղորդման մեջ նշվում էր, որ դինովրական տուրքը «շատ տեղերում մինչև իսկ կրկնապատկվեցավ»[17]։

1885 թ. սուլթան Կ. Գոլի պատրիարքի խնդրանքով, որն ուզում էր մարել Երուսաղեմի պարտքերը (60.000 ոսկի), կարգադրեց ամեցյաներից հավաքից պահվող դինովրական տուրքը 3 դուրուշով և հավաքել ոչ քիչ 37½, այլ 40¼ դուրուշ։ Այդ վերադիրը քիչ պահպանվելու էր մինչև 1887 թ., այսինքն՝ 3 տարի, բայց սուլթանը այնուհետև այն այդպես էլ թողեց, և չնայած ժողովրդի բազմաթիվ բողոքներին, ոչ մի կոպեկ չիջեցրեց[18]։

Թուրքական կառավարությունը շրջավարտվելով այդ ամենով, 1900թ. մարտի 1-ից գործյալ մեծացրեց (6%-ով) ինչպես ասեմ աղնամը, նույնպես և բեդելի տակերին ու քեմեիռան[19]։ Նա բացի ուղղակի հարկերից, բաժրացրեց նաև անուղղակի հարկերը։ Օրինակ՝ Կարնո վիլայեթում 1866—1871 թթ. ընթացքում ոտի տկղիցն ու մաքսատուրքը աճեցին հետևյալ չափերով[20]։

Տարիները	Ոտի տկղից	Մաքսատուրք
	Քուրբահան լիրա	
1866—1867	19800	14300
1867—1868	15400	14190
1868—1869	20020	14410
1869—1870	19140	17050
1870—1871	25300	17840

Համաբյա այդպիսի տեմպերով աճեցին նաև ծխախոտի ու սպիրտային խմիչքների վաճառքից գանձվող հարկերը։

Կառավարությունը, շրջավարվելով հին հարկերի աճով, սկսեց նորանոր հարկեր դնել բնակչության վրա։ Այսպես, 1868 թ. սահմանվեց մենաշնի ռումային սահմանը կամ հանրային օգտությանը տուրքը, պատասխանելով դյուղացիներին՝ մեկ զույգ եզ ունենալու դեպքում վճարել մեկ փութ հացահատիկ, իբրև քե նեղ օրերին կարիքավորներին բաժանելու համար[21]։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո սահմանվեց փամանգիփարասը կամ պահպանության հարկը, որը վերցվում էր յուրաքանչյուր անհատականությունից՝ սկսած 18—24 դուրուշի չափով, իբր քե նրանց ավազակներից ու զողերից պաշտպանելու համար[22]։

Կառավարությունը մինչև 1903 թ. հարկ էր վերցնում միայն մահը եղերավոր անասունների համար (նեն չհաշվենք այն հանգամանքը, որ արտաքաղաքներում ու մարզպետիններում արածացնելու դիմաց վերցնում էր՝ մահը եղերավոր անասուններից ¼, իսկ խաղոր եղերավոր անասուններից ½ դուրուշ), բայց 1903 թ. օրենք հրապարակեց նաև խաղոր եղերավոր անասուններից հարկ վերցնելու մասին՝ յուրաքանչյուր դլխից 10 դուրուշ[23] և այդպիսով կրկնակի հարկ սահմանեց գյուղացիների ինչպես մահը, նույնպես և խաղոր եղերավոր անասունների վրա։

Կառավարությունը նույն թվին հարկի տակ դրեց նաև այն կառույցները, որոնք ունեին օրենքով նախատեսված քանակից ավելի դուռ ու լուսամուտ[24], իսկ 1906 թ. բրիտանացիներից բացի, գլխահարկ սահմանեց նաև մահմեդականների վրա[25]։ Նա բացի այդ ամենից, զանազան պատրվակներով բնակչությունից հավաքում էր նաև խնեն կոչվոդյալ հարկը (սուլթանի արտասահմանյան ուղևորության, պատերազմի նախապատրաստման համար և այլն)։ Կառավարությունը միշտ հայտարարում էր, որ այն ժամանակավոր է, բայց նշանակելիս, այլևս չէր վերացնում, մինչև որ չէր հետում մի նոր պատճառ։ Օրինակ՝ 1867 թ., երբ սուլթանը նախապատրաստվում էր արտասահմանյան ուղևորության, իսկ

---

16 Տե՛ս «Турецкая империя (из военно-статистического сборника за 1868)». СПб, 1868, стр. 296.

17 «Մասիս», 1883, մայիսի 16։

18 Տե՛ս «Մուրճ», 1899, № 2—3, էջ 247։

19 Տե՛ս «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», 1901, էջ 309։

20 Տե՛ս ԲԱՔՄ, ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա₂», 1872, գ. 1083, թթ. 23—24։

21 Սակայն իշխանությունները օրգին կանան այդ հարկից գոյացած միջոցները լափում էին, համարյա ամեն չաուշ կարկավորներին։ 1870 թ. գյուղացիները բողոքում էին, թե այդ տուրքը «երկու տարի է որ կը ժողվվի... և երբեք ոչքան հաշվագրծի մը հատած չէ տրված և չենք ալ գիտեր, թե ժողովածները ո՛ւր կեն» («Ամանակագրություններ ազգային ժողովոյ», 1871, էջ 471)։

22 Տե՛ս «Մուրճ», 1899, № 1, էջ 84։

23 Տե՛ս ՀՄՄՄ կՊՊԱ, ֆ. 521, օպ. 2, գ. 315, թ. 304։

24 Նույն տեղում, թ. 178, գ. 403, թ. 9։

25 Նույն տեղում, ինչպես նաև «Երկերի ժողով», 1906, № 6, էջ 12։

տարի ժամանակով, բայց այն չվերացվեց, մինչև որ 1877—78 թթ. չսահմանվից նոր խան, այս վերջինն էլ չվերացվեց, մինչև որ 1896 թ. չսահմանվեց մի նոր խան՝ անհավատ հայերին կոտորելու համար։

Հարկային հարստահարման սաստկացման հետևանքով 30 տարվա ընթացքում (1860—1890-ական թվականներին) քրիստոնյա յուրաքանչյուր բնակիչի վճարած պետական տուրքերը մեծացան մոտ 4 անգամ՝ 188 դուրուշից հասնելով 734 դուրուշի կամ 10—41 ռուբ. 60 կոպ.[26]։

Գյուղացիների համար պետական հարկերի վճարումը դարձավ համարյա այնքան ծանր, որքան ֆեոդալական պարտավորությունների կատարումը (1911 թ. Սասունում բնակիչների ցեղապետ Նազիր աղան իր իշխանության տակ գտնվող յուրաքանչյուր միջակ գյուղացուց տարեկան վերցնում էր 690 դուրուշի աշխատավճար ու արդյունավճար ռենտա)։

Թուրքական կառավարությունը հարկերն անհավասար էր բաշխում բնակչության մեջ։ Այսպես՝ աղաներն ու բեյերը, տիրելով հրկրի պետական հողերի մեծ մասին, վճարում էին հարկերի աննշան բաժինը (իսկ շատ ուղերում նրանք ոչինչ չէին վճարում), մինչդեռ գյուղացիները, որոնց մեծ մասը հողազուրկ և սակավահող էր, վճարում էին հարկերի մեծ բաժինը. հարուստ գյուղացիները, իրենց տնտեսական կարողության համեմատությամբ, ավելի քիչ հարկեր էին վճարում, քան միջակ և չքավոր գյուղացիները, մահմեդական գյուղացիներն ավելի քիչ, քան քրիստոնյաները, կիսաքոչվոր ու քոչվոր մահմեդականներն ավելի քիչ՝ քան երկրագործ մահմեդականները։

Իմիևնք փաստերին։ Ա. Պ. Ավերյանովը նշում էր, որ Արևելյան Անատոլիայի մի շարք շրջաններում աղաները որպես կանոն «ոչ մի հարկ չեն վճարում»[27]։

Յա. Գ. Մալաման գրում էր, որ ահագին իշխանությունների կողմից գյուղացիների հարկումը կատարում է «միանգամայն

[26] *Տե՛ս* «Материалы для географии Азиатской Турции (приложение I к тому II Известий кавказского отдела императорского русского географического общества), Тифлис, 1873, стр. 81. «*Արձագանգ*», *1892, հուլիսի 10*։

[27] **А. П. Аверьянов.** Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб, 1912, стр. 14.

սխալ»[28]։ Նրանք «փորրացնում են հարուստ և ազդեցիկ մարդկանց ունեցվածքը և բարձրացնում աղքատի խրճիթի արժեքը»[29]։

Թևլլորը հիշատակում էր, որ Տիգրանակերտի վիլայեթում 1860-ական թվականներին մահմեդական բնակիչից տարեկան վերցվում էր 147 դուրուշ (8 ռուբ. արծաթով), իսկ քրիստոնյա բնակիչից՝ 188 դուրուշ (10 ռուբ. արծաթով)[30]։

Մայոր Թրոթթերը նշում էր, որ թափառաշրջիկ քրդերը վճարում են միայն ոչխարի հարկ (որոշ տեղերում նրանք նույնիսկ ոչինչ չեն վճարում կառավարությանը), իսկ նոտակյաց քրդերը մահմեդական մյուս բնակիչներին հավասար վճարում են նաև բոլոր հարկերն ու տուրքերը[31]։

Ուշագրավ է, որ կառավարությունը վարելով շովինիստական բազմաթվանություն, մահմեդական կրոնական հաստատություններ քիչ էր հարկում, իսկ քրիստոնեականը՝ շատ։ Երիմյանի զրդռումով՝ Վասպուրականի հայոց վանքերը տակավին 1860-ական թվականներին փորձեցին հրաժարվել պետական հարկերի վճարումներից, պատճառաբանելով, որ իրենք անցյալում երբեք չեն հարկվել, բայց նրանց փորձն ապարդյուն անցավ[32]։

Թուրքական կառավարությունը հարկելիս հաշվի չէր առնում գյուղացիների տնտեսական հնարավորություններ։ Դրա հետևանքով պետական հարկերը շատ հաճախ ավելի էին, քան գյուղացիների գալի մասը սպացած եկամուտները։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ իրերի նման պայմաններում գյուղացիների վրա պետի կուտակվին տպաոքներ։ Եվ դրանք ամենուրեք կուտակվում էին հսկայական չափերով։ Այսպես, 1897 թ. Կարնո սանջակի ներքոհիշյալ կազաների բնակիչները ունեին տպաոքներ[33]։

[28] **Я. Д. Малама.** Описание..., стр. 29.

[29] Նույն տեղում.

[30] «Материалы для географии Азиатской Турции (приложение I к тому II «Известий кавказского отдела императорского русского географического общества»), Тифлис, 1873, стр. 81.

[31] *Տե՛ս «Մասիս», 1881, հոկտեմբերի 13*։

[32] *Տե՛ս «Փիլսի հայոց պատմության», հ. IV, էջ 184*։

[33] *Տե՛ս* **А. М. Пржевальский,** Указанное сочинение, стр. 39.

364—8

Կարնո կազայում		1.432 հազ. դուրուշ
Կիսկիմի	»	61 հազ. դուրուշ
Նամբրմանի	»	165 հազ. դուրուշ
Թարթումի	»	139 հազ. դուրուշ
Բաանենի	»	459 հազ. դուրուշ
Բարկրի	»	633 հազ. դուրուշ
Մալբի	»	381 հազ. դուրուշ
Գնբշանի	»	1.486 հազ. դուրուշ
Քըպիի	»	1.928 հազ. դուրուշ
Քնուսի	»	1.815 հազ. դուրուշ
Ընդամենը՝		8.522 հազ. դուրուշ

Ահանց չափազանցության կարելի է ասել, որ Արևմտյան Հայաստանում չկար մի գյուղ, որն ունա իներ այդ հրեշավոր պարտքերից, իսկ պարտք չունեցող գյուղացիների թիվը քիչ էր։

Կառավարությունը, տեսնելով իրերի նման վիճակը, դիմում էր ոճրագործություններին. ձևականորեն հայտարարում էր ապարներ չեղյալ, բայց փաստորեն ցուցում էր տալիս տեղական իշխանություններին՝ հավաքել դրանք մինչև վերջին կոպեկը։ Այսպես, 1875 թ. սուլթանը հատուկ հրովարտակով չեղյալ համարեց համարյա բոլոր ապարները, բայց 1879 թ. կարգադրեց հավաքել դրանք[34]։

1896 թ. Արդուլ-Համիդը հայերին կոտորելուց հետո՝ նրանց ազատեց ոչ միայն ապարքներից, այլև որոշ հարկերից[35], բայց երկու տարի չանցած վերականգնեց նրանց նախկին հարկերը և հավաքեց տասնյակ տարիներ առաջ մնացած ապարքները։ 1902 թ. Կարնո ռուսական գլխավոր հյուպատոսը գրում էր, թե Բ. Դռան կարգադրությամբ՝ իշխանությունները Քղըիում հավաքում են նույնիսկ 15 տարվա ապարքները[36]։

* * *

Թուրքական կառավարություններ հարկերն ու ապարքները հավաքում էր ամենայն խստությամբ։ Մամուլի քղխակիցները երկրի տարբեր շրջաններից հաղորդում էին իշխանությունների գաժանությունների մասին։ Այսպես, Կարնո վիլայեթի Ալաշկերտ կազայում

34 ՌԱՔԱ, ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա», 1873, գ. 1625, թ. 60։
35 Նույն տեղում։
36 Նույն տեղում, ֆ. «Քաղաքական», 1902, գ. 1638, թթ. 20,61։

հարկերի համար՝ «հղիացած կանայք կը տեղան հայոց և թուրքաց, իսկ մանավանդ հայոց վրա առավել հանդգնաբար»[37]։

Վանի վիլայեթում «թե հին և թե նոր հարկերը հավաքում են ամենախիստ բռնություններով. չունեցողին գանահարում, ծեծում, բանտարկում են, այդու ծառերը կտրատում տանում, տնային պիտույքները՝ սրնձն տաք, տախտ, դահակ, գրոլ և այլն հափշտակում»[38]։

Մուշի տանջակում «ամեն մեկ գյուղի մեջ 5—10 ժանդարմ կա՝ գրամ քահրիլ բնելու (գանձելու)։ Եթե գյուղացոց վրա երբիք կասկածություն չէ մնացել, ուտելիք ալ չունեն։ Ծանգարմներ տասկալի չարչարանքներ կուտան, գյուղացիների օրման գալենք, մեկ հատիկ կաթ տվող կովը և լուծի կենդանիները ձեռքեն խլելով՝ ոչինչ գներով վաճառել կուտան»[39]։

Բշխանությունները այդպիսի գաժանությամբ էին հավաքում հարկերն ու տուրքերը նաև երկրի մնացած շրջաններում։ Նրանք հափշտակում էին գյուղացիների ունեցվածքը և վաճառում էժան գներով։ Այդ մասին որոշ պատկերացում տալու համար բերենք հետևյալ փաստը. 1907 թ. հարկահաններր Վանի վիլայեթի Շեմսուն գյուղի բնակիչներից հարկերի փոխարեն բռնագրավել ու վաճառել են[40].

	արժեքը	վաճառել են
70 ոչխար	4360 դուրուշ	2251 դուրուշով
31 կով	6110 դուրուշ	3834 դուրուշով
131 չամփ ցորեն	6120 դուրուշ	2660 դուրուշով
5914 ծառ	4430 դուրուշ	2209 դուրուշով
Ընդամենը	21.020 դուրուշ	10.954 դուրուշ

Ուրեմն 21.020 դուրուշ արժող ունեցվածքը նրանք վաճառել են 10.954 դուրուշով, այսինքն՝ կես գնով։

Թուրքական կառավարությունը, հատկապես XX դարի սկզբին, ամբողջ խստությամբ հարկահանության եղանակները՝ նա 1903 թ. ավազակներից ու գողերից, մարդասպաններից ու հասարակու-

37 «Մշակ», 1881, ապրիլի։
38 «Մշակ», 1895, մայիսի 11։
39 «Մշակ», 1895, սեպտեմբերի 9։
40 Տե՛ս «Երկրի ձայն», 1907, № 18, էջ 13։

քյան այլ տակնքներից տեղծեց առանձին հրատակամբեր, որոնց կոչեց ջաներգարներ և հանձնաժողովներ նրանց կոչել ոչ միայն հայկական ֆեդայիների դեմ, այլև գյուղացիներից հավաքել հարկեր ու տուրքեր։ Կառավարությունը որպես վարձատրություն ջանքերնրին տալիս էր ձի, հագուստեղեն, հանդերձանք, ուտելաս, ամսական 1,5 լիրա ու զանազան պարգևներ և չէր պատժում, եթե նրանք իրենց վրա դրված պարտականությունը կատարելիս կողոպտեին կամ սպանեին անզեն ու անպաշտպան բնակիչներին[41]։

Թուրքական կառավարության հարկային քաղաքականությունը պաշտոնյաներին ու կապալառուներին տալիս էր չարաշահումների լայն հնարավորություններ։ Եվ պաշտոնյաները, օգտագործելով այդ հնարավորությունը, ձգտում էին գոնել գյուղացիներից որքան կարելի է շատ բան։ Նրանք սովորաբար հաշվի չէին առնում գյուղացիների քանակական նվազումը[42], անասունների գլխաքանակի կրճատումը[43], բարձր էին գնահատում գյուղացիների ունեցվածքը, անդորրագիր չէին տալիս, աշխատեցնում էին ավելի, քան նախատեսված էր օրենքով, ամբողջ հարկահանության ընթացքում ապրում նրանց հաշվին և այլն։

Այդ գեռ բավական չէր. պաշտոնյաները արատավորում էին գյուղացիների պատիվը, բռնաբարելով նրանց կանանց, հարսներին ու աղջիկներին։ Անգլիացի Հենրի Լիլարդը գրում էր. «Թուրքական զինվորի կարմիր ֆեսը և քաջ ծանոթ կոստյումը բնդհանուր խուճապ է առաջացնում։ Կանայք թաքնվում են ամենագաղտնի

41 ՌԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1904, գ. 2672, թթ. 8—9։

42 Այսպես, 1869 թ. մի առաջնորդության մեջ ասված էր, որ Տիգրանակերտի վիլայեթի մի շարք շրջաններ 1840-ական թվականներին ունեին յուրաքանչյուրը մինչև 100-ական գյուղ, «այժմ ունեն հազիվ 80, այն էլ փոքրացել են ավելի քան կեսով շատ... Ջնայած դրան, վիրգին մնացել է նույնքան («Турция. Анатолийская область, отчет за 1869», стр. 36).

43 Անգլիական հյուպատոս Բրոքթերը արձանագրում էր. «Ամեհմչին (ոչխարի հարկահանը) փոխանակ ժամանակին գալու և հաշվելու կենդանիները՝ բավականանում է նախորդ տարվա ցուցակով, և միշտ գլխից էլ մի քանի բաներ ավելացնելով, պահանջում է հարկը՝ նա ոչ մի ուշադրություն չի դարձնում գյուղացու արդարացի բացատրություններին, որ քչությունը բոլոր տավարը ջնչել տարել են, որ ցավ է բնկել անասունների մեջ, և կեսից ավելին կատղվել են, որ վերջապես նա ծախել է և այլևս չի կամենում տավար պահել, այս բոլորը ասում է. անցյալ տարի նա ոչխար ուներ, հիմա կեսի մի քանի ոչխարներ կամ կովեր էլ ծնված կլինեն, հետևաբար, և թիվն էլ ավելացած կլինի» («Մշակ», 1880, հունվարի 18)։

տեղերում, որպեսզի ազատվեն անարգանքից»[44]։ Իսկ դ-ր Բեքերը ականատես է եղել, որ նրանք «ենթում էին իրենց Տիգրիսը, որպեսզի չանարգվեին»[45]։

Երբ տղամարդիկ փորձում էին պաշտպանել իրենց պատիվը, ենթարկվում էին ծեծի ու անգամ սպանության։ Բռնակալ երիցականության (պրեսբիտերականության) զնկավարն արձանագրում էր. «Հազիվ քե գոնվի գյուղ, որ չունենա իր ողբերգական պատմությունը, հազիվ քե գանվի քրիստոնյա ընտանիք, որ չունենա ասրսափելի հիշողություններ»[46]։

Պաշտոնյաները իրենց գործողության ընթացքում աջակցություն էին գտնում ոչ միայն կողմից, որն իր դիրքում հաստատ մնալու համար ձգտում էր ամեն կերպ բավարարել նրանց։ Հաճախ ոչ օգտագործում էր ուժը և պաշտոնյաների պատճառած ենթությունների ամբողջ ծանրությունը գցում իր հակառակորդների՝ բռնապանցության աշխատավոր գյուղացիների վրա։ 1880 թ. Ազգային ժողովի երեսփոխան Վահան վարդապետը իր ելույթներից մեկում ասում էր, ոչ «բացարձակ իշխանության տակն է ամբողջ գյուղը։ Սա արբունական տուրքը բան հաճույս կը թողնե... երբ ասոկան կամ հյուր գա ի գյուղն, ինքն կը հյուրընկալե, եթե ախնածության մը ունի, եթե չունի՝ իր չսիրած մարդուն կը հղե իբր ծանրության, շատ տեղ այս ոնար՝ չտարբերիր թուրդ բանավոր պետն մը, և մյուսերներու և զապիեներու հետ ինչ դեր կը խաղա, կը սոկամ բնթանա առնուլ»[47]։

Բայց պետք է ասել, որ չնայած ոչ նվիրվածության, պաշտոնյաները ջանկության դեպքում թաքնում էին նաև ոչնչն ու արատավորում նրա պատիվը[48]։ Դրանով է բացատրվում մասամբ

44 **М. П. Ролден Жекмен.** Армения, армяне и тракты. М., 1896, стр. 142.

45 Նույն տեղում։

46 Նույն տեղում, էջ 142։

47 «Անանդագրություններ ազգային ողովոյ, 1880, էջ 228։

48 Դ-ր Բեքերն ականատես է եղել, որ Բագնի վիլայեթի գյուղերից մեկում 1877 թ. պաշտոնյաներից մեկն առաջարկել է ոչխեն առաջնորդել իրան այն գյուղացու տունը, որն ուներ երկու չիրուն աղջիկ։ Ինչ պատահանել է, որ նրա տանն արգեն իշխանել են ուրիշները։ Պաշտոնյան զայրանալով ծեծել է ոչխեն, հանել իր ձիու սանձը, խփել նրա բերանը և նահանջով մեջքին առաջարկել տանել աղջիկ տունն։ Երբ ասոկ են հասել, պաշտոնյան իջել է ոչխի վրայից, կապել գոանը և հրամայել գյուղացիներից մեկին՝ խոտ գցել նրա առաջը։ Դ-ր Բեքերը եզրակացնում էր. «Տանուտերը գյուղում որոշ նշանակություն ունեցող մարդ է. կապա-

այն փաստը, որ ոչխար հաճախ ոչ միայն մասնակցում էր գյուղացիական շարժումներին, այլ երբեմն նաև գլխավորում էր դրանք։

* * *

Հարկահանության ժամանակ գյուղացիների կողոպտելու և բռնաբարելու գործում պաշտոնյաներից ետ չէին մնում, իսկ հաճախ նույնիսկ գերազանցում էին նաև մյուլթեզիմներն ու շահնաները։ Նրանք իրենց տրամադրության տակ գտնված զորքերի հետ միասին հարկահանության ամբողջ ժամանակ նույնպես ապրում էին գյուղացիների հաշվին։ Եթե գյուղացիները չէին կատարում կամ դժվարանում էին կատարել նրանց պահանջները, ապա պանդխտվում էին, բանաբերվում և նույնիսկ մահվան դատապարտվում։ Չէ՞ որ մյուլթեզիմները ցնդապետեր էին, հողատերեր, վաշխառուներ, հարուստ գրամատերեր, անձնական իշխանության ունեին գյուղացիների վրա և սերտորեն կապված էին իշխանությունների հետ։ Չէ՞ որ նրանք կարող էին գյուղացիների բերքը օրերով ու ամիսներով թողնել բաց երկնքի տակ (գյուղացիները իրավունք չունեին բերքը առն առնելու՝ առանց տասանորդը վճարելու), կամ պահանջել տասանորդը դրամով և այդպիսով բարձրացել նրանց տնտեսություններում և գրագրանության մեջ բազմաթիվ փաստեր կան մյուլթեզիմների ու շահնաների կատարած հարստահարությունների ու բռնությունների մասին։ Բերենք դրանցից մի երկուսը։

1862 թ. Գ. Արվանձյանցը գրում էր. «Արքունի տասանորդը ստացողը (շահնա) մի նոր կերպ սեր է գեղի մի մեջ, նկած օրեն մինչև գնաց ամեն օր եղ ու ձմածեց, փոխեղ ու գաթա, սեր ու կարագ, խորով ու խորոված իր սեղանի վրա, իր սենեկին մեջ լիր ու պատրաստ պիտի դռնեն։ Ապա քե ոչ փայտր ձնորը, գներ վրան, այսպես հանկարծ ու համարձակ կը հանդիպի, հայհոյանք, սպառնալիք, հարված կը թափե. մինչև իննկնա փաթաթվիս ոտները, ծաա դառնաս, հոգ դառնաս, շուն դառնաս, հագիվ տասն միջնորդով և մեկ ոշխարով կամ ուրիշ բանով քեզ հետ հաշտվի»[49]։

Արտիյտը հավասար է երեք հազարի տալերին միջին հաշվով շուրջ 200 հազ. գուրուշ հարկ, և չնայած դրան, նա երբեք չի համարձակվում բողոքել իրեն հասցրած վիրավորանքի դեմ, քանի որ ոչնչով չի փրկի նրան ոտաիվանի վրիժառությունից» (М. П. Роллен Жекмен. Указанное сочинение, стр. 143).

[49] «Արծիվ Վասպուրականա», 1862, էջ 78։

1909 թ. Ա-դոն գրում էր. «մուլթեզիմը ինքն բան ինչյան մի պապտիկ է, մի կճղնիկ, մի բանավոր, մի հրեշ, որի ներկայությունը միմիայն խաղաղ ժողովրդի վրա ապրատ է ազդում. ահա այդ հրեշը իր ձեռքով շափում վերցնում է ասասանորդը, համրում է խոսը և նշանակում դին յուրաքանչյուր խուրձի համար կրճնակի շափով. դնահատում է բասանը, ալգին, պարտեզը ինչպես իր քեֆն ու խրճճն է ըելագրում... բողոքել դրա դեմ անժամանելյան է. մուլթեզիմը կը կնքի և կգալում կը թողնի օրերով մաքրած ցորեն, թուլ չի տա տան բերելու գաշտում թափված խոտ, կը կանգնեցնի ալգու, պարտեզի և բոստանի բերքի հավաքումը և զրպարտելով բերքը գոյանալու և թաքցնելու մեջ, այնպիսի տուգանքների և ընշումների կը ենթարկի, որ բոլորովին հավիտյան չի մոռանա»[50]։

Մուլթեզիմներն ու շահնաները վերցնում էին գյուղացիների հավաքած բերքի ոչ քիչ $^1/_{10}$-ը կամ $^1/_{12}$-ը, ինչպես այդ նախատեսվում էր օրենքով, այլ շատ ավելի։ Այսպես, 1910 թ. իշխանությունները Ալաշկերտի 14 գյուղի ոշարը վաճառեցին 1472 օսմանյան ոսկով։ Իսկ մյուլթեզիմները հավաքեցին այդ գյուղերից 2899 սոմար կամ 1878 օսմանյան ոսկու արժեքությամբ միայն գորեն։ Սակայն բացի գորենից, նրանք հավաքեցին նաև 715 սոմար գարի, 72 սոմար կտավատ, 27 սոմար ոսպ, 416 խուրձ խոտ, 41 օսմանյան ոսկու արժեքությամբ բանջարեղեն և այլն։ Եթե այդ բոլորը վերածենք փողի, ապա այն մի քանի անգամ կգերազանցի նրանց վճարած գումարը։

Մյուլթեզիմներն ու շահնաները վերցնում էին ոշարը մեծ մասամբ բնաիճարով, բայց նրա գյուղատնտեսական մթերքները լավ չէին վաճառվում շուկայում, ապա այն վերցնում էին գրամով։ Նրանք կարող էին իսկույն ևեթ տանել հավաքած ոշարը հենց գյուղացիների միջոցներով, բայց կարող էին թողնել այն նաև նրանց մոտ, սպասելով շահավետ վաճառքի։ Եթե այդ չէր իրագործվում, ապա նրանք գյուղացիներից արդյունքի փոխարեն պահանջում էին դրամ։ Ներիմյանը 60-ական թվականներին գրում էր, որ Վանի վիլայեթում «վարձակալին իրավունքն այն է, որ հողագործին ցանած բերքիրեն, ինչ սերմ որ կլինի, յուրաքանչյուր տնտակին իր տասանորդն տասնա բերքերը շափած տանը քե հատեղեն և քե խոտ, բայց մշո երկրի համար այսպես չէ. տասանորդող վարձա-

[50] Ա-դո. Նշված աշխատությունը, էջ 298։

կալը խոտ կհամբե, իր բաժին տասանորդ չի վերցնիներ, այլ ինչ կուտա տիրոջ վրա մինչև ձմռան սկիզբն կամ վերջը, երբ խոտին գին կրկնապատիկ կստանա, հետո կուգա խոտին տեղը տակ դամ կը պահանջե»[51]։

Մյուղեզմանների ու շահնաների, շարաշահնով իրենց իրավունքները, բնակիչներից վերցնում էին նաև չահնալրի և օլչե-ճեպի կոչված հարկերը, որոնք կառավարության կողմից պաշտոնապես արգելված էին[52]։

Արևմտյան Հայաստանի գյուղացիները, վճարելով բազմաթիվ հարկեր ու տուրքեր, հարկադրված էին կատարելու նաև զանազան պարշահներ։ Նրանք կատարում էին պետական շենքեր, ճանապարհներ, կամուրջներ, զորանոցներ, տպասարկում էին պաշտոնյաներին, փոխադրելով նրանց իրենց փոխադրամիջոցներով տեղից տեղ և այլն։

Իշխանությունները այդ պարշահները կատարելու համար ստիպում էին գյուղացիներին բաղնել իրենց ցանքսն ու հունձը, կալ ու կուտալ նման անվճարձահոգությունների հետևանքով, ինչպես նշվում էր մի հաղորդման մեջ, «շատեր շատ վնասներ տեսած են, օրերով և ամիսներով իրենց մշակությունը հետևի վրա թողնելուն համար, մանավանդ գործի ատեններում»[53]։

Գյուղացիները պետական հարկերը վճարելու համար հաճախ դիմում էին վաշխառուներին ու վերցնում փող կամ գյուղատնտեսական մթերքներ[54], բայց չկարողանալով վերադարձնել[55], դառնում էին նրանց շահագործման մշտական առարկան։

51 «Գիման հայոց պատմություն», հ. 13, էջ 467։

52 Բախիի. նկներ, հ. 9, էջ 227։

53 «Մասիս», 1871, հոկտեմբերի 30։

54 Երբ գյուղացիները պարտավորվում էին տալ վերցրած գրամի դիմաց գյուղատնտեսական մթերքներ կամ ոչխար, գառ, ապա այդ գործարքը կոչվում էր տալաֆ, սրլեթ, կամ սևլեթ, իսկ նրան գրավ էին գնում իրենց հոգևորականները, ապա այդ գործարքը կոչվում էր մատուհա (տե՛ս Գ. Տեր-Դավթյան, Հոգային հարցը հայարնակ նահանգներում մեջ, էջ 29, «Մուրճ», 1904, № 4, էջ 30)։ Գ. Տեր-Մարտիրոսյանը գրում էր. «Սեպհի տասանորդը հոգևոր վրա ալ տեղի կունենա. այսինքն՝ տզրատ հոգևորդը չնչին գումարի մը փոխարեն արտ գրավ կը դնի... և երբ... չհատուցաներ փոխ գրամը՝ հողը կերթար (տե՛ս նույն հեղինակի աշխատությունը, էջ 29)։

55 Վաշխառուական տոկոսը 1887 թ. պետական օրենքով սահմանված էր տարին 100 զուրուշից 9 զուրուշ կամ 100-ից 9%-ը (տե՛ս «Ընդարձակ օրացույց ազգային հիմնադանդից», Կ. Պոլիս, 1900, էջ 225)։ Սակայն Արևմտյան Հայաստանի հեռավոր շրջաններում տոկոսը հասնում էր 100%-ի։

Վաշխառուները պարտքի ու տոկոսի փոխարեն սկզբում բռնագրավում էին գյուղացիների շարժական, իսկ այնուհետև անշարժ ունեցվածքը։ Սակայն հրապարակորեն դրանցով, նրանք սահմանում էին պարտապան գյուղացիներին մնացորդը հատուցել աշխատանքներով, տանում էին նրանց կանանց, երեխաներին և աշխատեցնում իրենց տնտեսության մեջ։ Այսպես, Է. Բիլոնը գրում էր, որ 1893 թ. վաշխառուն Բայազետի ամենգակում պարտքի փոխարեն տարել է մի գյուղացու կնոջը, իսկ Բասենի Կաստ գյուղում՝ մի այլ գյուղացու աղջկան։ Նա անհրաժեշտ էր համարում նշել, որ «Այդպիսի փաստերը չեն կարող համարվել բացառիկ երևույթներ... Հայաստանի տարբեր մասերում ես լսեցի նման ավելի քան 20 փաստ մասին»[56]։

Թուրքական կառավարության հարկային հարաճատարման ուժեղացման շնորհիվ վաշխառուական կապիտալը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արդեն տարածվել և իր ճանկերի մեջ էր վերցրել գյուղացիության ընդող մեծամասնությունը։ Այսպես՝ Կարնո գաշտի 35 հայաբնակ գյուղերից միայն մեկն էր ազատ պարտքերից[57]։

Մուշի դաշտի հայկական գյուղերում չկար մեկը, որ «պարտը չունենար»[58]։

Բուլանըխի 30 հայկական գյուղերից $^3/_4$-ը պարտապաններ էին[59]։ Վանի վիլայեթի «Հայ գյուղացիների մեծագույն մասը—մոտ 65%-ը ներկա պայմաններում պարտքով է ապրում» և այլն[60]։

Ովքե՞ր էին վաշխառուները։ Գրականության մեջ գոյություն ունի այն կարծիքը, որ նրանք գերազանցապես հայերն էին։ Այդ, իհարկե, ճիշտ է, բայց մասամբ, քանի որ հայ վաշխառուները բանակապես գերիշխող էին սակ աստանային շրջաններում։ Օրինակ՝ Վանի ամենգակում, ըստ Վերուկի (Ա. Գարրինյանի) վկայության, վաշխառուների «մեջ առաջին տեղը բռնում են քաղաքացի հայերը»[61]։

Հայաստանի համարյա ոչ մի մասում այդ օրենքը չէր պահպանվում։ Վաշխառուները վերցնում էին. Տարսնում 30—50%, Վանի վիլայեթի շատ շրջաններում՝ 80%, Բասենում՝ 100—150% և այլն։

56 **М. П. Роллен Жкмен.** Указанное сочинение, стр. 370: Այդ մասին տե՛ս նաև «Երբեմն Վասպուրական», 1862—1863, էջ 69—70, «Մշակ», 1907, դեկտեմբերի 14։

57 Տե՛ս «Մասիս», 1882, մարտի 31։

58 «Մշակ», 1889, հունիսի 22։

59 Տե՛ս «Երեմյանց», 1894, հունվարի 9։

60 «Մուրճ», 1904, № 4, էջ 30։

61 Նույն տեղում։

Բայց բնդհանուր առմամբ երկրում գերիշխում էին թուրք և քուրդ վաշխառուները[62]։ Եվ դա հասկանալի էր. սուլթանի վարած ազգային քաղաքականության հետևանքով, հատկապես XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայերից քչերն էին համարձակվում զբաղվել վաշխառությամբ։ Ահա թե ինչ էր գրում Բզնունիք Ճեմիլը 1906 թ. «Այսօր Փոքր Ասիայի մեջ չկա մի գյուղ, ուր կարևոր դեր չխաղա բնչերուն, ագանեբուն, էֆենդիներուն՝ այդ բոլոր հարստացած թուրքերուն՝ դրամագլուխը, իսկ բազմաթիվ են այնպիսի գյուղեր, որոնք գրեթե ամբողջովին մաս կը կազմեն հարուստ թուրքի դրամագլխին։ Իրերու այս դրության մեջ ո՛չ մի խելքը գլխին հայ դրամատեր չի համարձակիր ո՛չ միայն մահմեդական, այլ քրիստոնյա հայ գյուղերու վրա շահեցնել իր ստակը, քանի գնա կսիրե անապահովություն ու անիշխանություններ»[63]։

Նույն բանն էր հաստատում նաև Ռ. Ի. Տերմենը. «Համարյա բոլոր քահիլդարները,— գրում էր նա,— մահմեդականներն են... Հայերը համեմատաբար հազվադեպ են գնում ստանձնորդը, քանի որ նախ՝ նրանց համար դժվար է մահմեդականներից հավաքել այն, երկրորդ՝ իշխանությունները չեն տալիս նրանց զաբթիեներ և երրորդ՝ կառավարությունը գերազատում է տալ տոհանորդի հավաքումը մահմեդականներին»[64]։

Բայց վաշխառուներն ազգությամբ ովքեր էլ լինեին, պահանջում էին շահադրծող վերնախավին և ավելի կամ պակաս չափով հարստահարում ու կեղեքում էին բոլորին, այդ թվում նաև իրենց ազգակիցներին։ Նրանք ամենուրեք արտացոլում էին աշխատավորության ունեզրկումը, մեծացնում աղքատությունն ու թշվառությունը և կասեցնում արտադրողական ուժերի զարգացումը։ Կ. Մարքսը ցույց է տալիս, որ վաշխառուական կապիտալը, երբ յուրացնում է ասիական արտադրողի ամբողջ հավելյալ աշխատանքը առանց փոխելու արտադրության եղանակը... թշվառացնում է արտադրության այս ոլորտի եղանակը, չլատում է արտադրողական ուժերը՝ սրանք զարգացնելու փոխարեն և միաժամանակ հավերժացնում է այս ողորմելի վիճակը, որի ժամանակ աշխատանքի հասարակական արտադրողականությունը չի զարգացվում բուն իսկ աշխատանքի հաշվին ինչպես այդ տեղի ունի կապիտալիստական արտադրության պայմաններում»[65]։

Այդպիսով, թուրքական կառավարությունը Արևմտյան Հայաստանի ազգաբնակչությանը ենթարկում էր հարկային դաժան հարստահարման։ Իսկ XIX դարի վերջին քաոտրոում և XX դարի սկզբին ավելի ուժեղացրեց այդ հարստահարումը։ Այդ պայմանավորված էր մի կողմից՝ Թուրքիայի վերածումով եվրոպական պետությունների կիսագաղութի, իսկ մյուս կողմից՝ թուրքական կառավարության վարած հայերին ջարդարարական քաղաքականությամբ։ Կառավարությունը, աստիճանաբար բնակչության հարկային ճնշումը, ձգտում էր հավաքել միջոցներ՝ մարել իր միջազգային պարտքերը և գաղութել Արևմտյան Հայաստանը հայերից։

62 Գետ է նշել, որ երկրի որոշ շրջաններում էլ գերիշխում էին տաղիներ։ Օրինակ, Խրգանում, քան 8. Փիրամյանի վկայության, «վաշխառուները բացառապես բազէշցի տաղիներն են» («Մուրճ», 1891, № 2, էջ 224)։

63 «Երկրի ձայն», 1906, № 8, էջ 14։

64 **Р. И. Термен.** Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1909, стр. 64.

65 Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, մ. 2, էջ 138։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՂՈՒԹԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Նախքան Արևմտյան Հայաստանի տնտեսության բնութագրմանն անցնելը, հարկ ենք համարում կանգ առնել իմպերիալիստական պետությունների գաղութային ռեժիմի և թուրքական կառավարության տնտեսական քաղաքականության վրա, քանի որ դրանք վճռական ազդեցություն ունեցան Արևմտյան Հայաստանի տնտեսական զարգացման համար։

XIX դարի երկրորդ կեսին կապիտալիստական խոշոր պետությունները վարում էին իմպերիալիստական քաղաքականություն և ձեռք բերում նորանոր գաղութներ։ Նրանք քաղաքականապես ու տնտեսապես ստրկացնում էին ոչ միայն փոքր, այլև խոշոր երկրներին։ Իմպերիալիստական ձգտումներից զերծ չէր նաև Թուրքիան։ Սուլթանները ձգտում էին վերականգնել Օսմանյան երբեմնի հզոր կայսրությունը, հասցնել նրա սահմանները Ալժիրից մինչև Ջիբրալթար և շարունակել նվաճումը։ Աբդուլ-Համիդն իր հուշերում գրում էր, որ ինքն ավելի քան երեսուն տարի աշխատում էր համախմբել աշխարհի բոլոր մահմեդականներին Թուրքիայի գերիշխանության տակ, ստեղծել համամահմեդական ուժեղ կայսրություն և հակադրել այն Եվրոպային։

Սակայն նա ոչ միայն չկարողացավ իրագործել այդ ցնորամիտ երազանքները, այլև իր վարած քաղաքականությամբ ավելի արա-

գացրեց Թուրքական կայսրության տերիտորիալ մասնատումն ու քայքայումը։ Ալպես, 1878 թ. Բեռլինի պայմանագրով Բուսաստանը Թուրքիայից ստացավ Ալզահանը, Կարսը, Բաթումին և Բեսարաբիան, Անգլիան՝ Կիպրոս կղզին, Ավստրո-Հունգարիան՝ Բոսնիան և Հերցեգովինան, Ռումինիան վերականգնեց իր վաղեմի անկախությունը, իսկ Բուլղարիան բաժանվեց երկու մասի, որոնցից մեկը՝ Հյուսիսային Բուլղարիան, վասալական կախվածության մեջ դրվեց Թուրքիայից, իսկ մյուսը՝ Հարավային Բուլղարիան, ձեռք բերեց ինքնավարություն։

1881 թ. Ֆրանսիան գրավեց Թունիսը, իսկ Հունաստանը ազատագրեց Թեսալիան և Հարավային Էպիրը։ 1882 թ. Անգլիան հափշտակեց Եգիպտոսը, 1908 թ. Բուլղարիան հռչակեց իր անկախությունը։ 1912 թ. Թուրքիան պատերազմի մեջ մտավ Իտալիայի հետ, որի հետևանքով Աֆրիկայում կորցրեց իր վերջին տիրույթները՝ Կիրենաիկան և Տրիպոլիտանիան, ինչպես նաև Էգեյան ծովում մի շարք կղզիներ։ 1913 թ. Թուրքիան պարտվեց Բալկանյան երկրորդ պատերազմում և որվեց Սալոնիկից ու Թրակիայի մեծ մասից։

Բայց բանը միայն դրանով չվերջացավ։ Եվրոպական պետությունները Թուրքիայի տերիտորիալ մասնատման հետ միասին կատարում էին նաև նրա տնտեսական նվաճումը։ Այդ բանը նրանք կատարում էին տարբեր ձևերով, որոնցից մեկը կապիտուլյացիաների ռեժիմն էր։ Կապիտուլյացիան համաձայնագիր էր, որով պայմանավորվող կողմը պարտավորվում էր թույլատրել մյուս կողմի քաղաքացիներին մուտք գործելու իր երկիրը, զբաղվելու առևտրով, արդյունաբերությամբ և այլ գործերով։ Թուրքերը, որոնք կապիտուլյացիաների ռեժիմին ծանոթացել էին տակավին XV դարում, սկզբնական շրջանում կապիտուլյացիաները կնքում էին խիստ կամավոր սկզբունքներով, բայց հետագայում, մասնավորապես XIX դարում, նրանք եվրոպական պետությունների ճնշման տակ կապիտուլյացիաներն արդեն կնքում էին պարտադիր կարգով։ Սուլթանը իրավունք չուներ մերկորմանի վերացնելու դրանք։ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Թուրքիայում կապիտուլյացիայի իրավունքից օգտվում էին Ֆրանսիան, Անգլիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Բուսաստանը, Պրուսիան, Ավստրո-Հունգարիան, Գանիան և այլ երկրներ։

Եվրոպական պետությունների ձեռքին Թուրքիայի տնտեսական նվաճման միջոց էր հանդիսանում նաև արտաքին առևտուրը։ Թուր-

քիայի հետ առևտուր էին անում Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը, Իտալիան, Հոլանդիան, Ավստրո-Հունգարիան և այլ երկրները։ XIX դարի երկրորդ կեսին Թուրքիայի հետ կատարվող առևտրում մեծ դեր էին խաղում Անգլիան ու Ֆրանսիան, իսկ XX դարի սկզբին՝ Գերմանիան։ Վերջինիս առևտուրը Թուրքիայի հետ 1880—1910 թթ. ընթացքում ամեն ավելի քան 35 անգամ[1]։

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նրա առևտուրը Թուրքիայի հետ չափազանց դանդաղ էր աճում։ Բավական է նշել, որ 1881—1910 թթ. ընթացքում ռուսական ապրանքների արտահանումը դեպի Թուրքիա ամեն ընդամենը 2,3 անգամ[2]։ 1890-ական թվականների վերջերին Ռուսաստանին էր պատկանում Թուրքիա արտահանվող բոլոր ապրանքների 10%-ը, իսկ Թուրքիայից ներմուծվող ապրանքների միայն 5%-ը[3]։ 1908 թ. Կ. Պոլսի ռուսական դեսպանը հաղորդում էր. «Անհրաժեշտ է լինել Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի, Բեյրութի (էլ չհաշած Կահիրեի մասին) տեղական շուկաներում, պետք է ծանոթանալ այդ և այլ առևտրական կենտրոնների հսկայական ունիվերսալ խանութներին, որպեսզի հասկանալ, թե որքան անհաջող է Մերձավոր Արևելքում ռուսական առևտրի նշանակությունը[4]»։

Իմպերիալիստական պետությունների առևտուրը Թուրքիայի հետ ուներ զարգացման բնույթ։ Նրանք իրենց ապրանքները վաճառում էին Բանկ, իսկ Թուրքականը՝ գնում էժան, արտահանում էին Թուրքիա գերազանցապես արդյունաբերական, իսկ այնտեղից ներմուծում գյուղատնտեսական ապրանքներ։

Իմպերիալիստական պետությունները Թուրքիան նվաճում էին նաև կապիտալներ արտահանելու և նրա տնտեսության տարբեր բնագավառներում ներդնելու նպատակով։ Այսպես, Գերմանիան իր կապիտալները ներդրել էր Թուրքիայի պետական երկաթուղային շինարարության, Անգլիան՝ մշակող արդյունաբերության ու առևտրի, Ֆրանսիան՝ հողային արդյունաբերության ու բանկերի, Բելգիան՝ մետալուրգիայի, իսկ Ամերիկան և Հոլանդիան՝ առևտրական ձեռնարկությունների մեջ։ Նրանք փաստորեն գրավել էին Թուրքիայի տնտեսության բոլոր առաջնակարգ ճյուղերը։

Իմպերիալիստական պետությունները տնտեսապես նվաճում էին Թուրքիան նաև պարտքեր ու փոխառություններ տալու հանապարհով։ Նրանք Արևելյան պատերազմի ժամանակ (1854 թ.) Թուրքիային տվեցին 3 միլիոն, 1873 թ.՝ 27 միլիոն ռուբլի[5], իսկ ռուս-թուրքական պատերազմից հետո՝ տվյալ մեծ գումար։ 1880-ական թվականներին տալիսներ փորձեց խուսափել պարտքերից, բայց կարճատև դադարից հետո նորից վերցրեց գրանք։ Կ. Պոլսի ռուսական դեսպան Դ. Տ. Զհենովը 1901 թ. հոկտեմբերին գրում էր. «Ես ներկա ծառայության անցնելու օրվանից մինչև այժմ Թուրքիան չէր բնկել ֆինանսական այնպիսի ծանր դրության մեջ, ինչպես այժմ... Արդեն մի քանի ամիս է, որ ֆինանսների մինիստրությունը մի կերպ յոլա է գնում, տեղական բանկիրներից պարտքեր վերցնելով։ Ամենակենսական պահանջները մնում են անբավարարելի։ Ծառայողների դասը հասցված է աղքատության, իսկ գավառներից մշտապես տեղեկություններ են գալիս զորամասերի հուզումների մասին, որոնք առաջանում են ցածր ասիճանավորներին ոռճիկ չվճարելուցը[6]։

XX դարի սկզբին Թուրքիայի պարտքերն էլ ավելի աճեցին, հասնելով յոսված չափերի։ Նրա վարկատուները հանդիսանում էին հիմնականում Ֆրանսիան, Անգլիան ու Գերմանիան։ Նրանցից առաջինին պատկանում էր Թուրքիայի բոլոր պարտքերի 62,9%-ը, երկրորդին՝ 22,3%-ը, իսկ երրորդին՝ 14,8%-ը, այլ կերպ ասած՝ Թուրքիայի գլխավոր վարկատուն Ֆրանսիան էր։

Իմպերիալիստական պետությունները Թուրքիան տնտեսապես նվաճում էին նաև երկաթուղիներ կառուցելով։ Նրանք առաջին երկաթուղին կառուցեցին XIX դարի կեսերին, միացնելով Իզմիրը Այդընի հետ։ Այնուհետև կառուցեցին Հայդարփաշա—Իզմիդ—Էսկիշեհիր, Մերսինա—Ադանա, Էսկիշեհիր—Անկարա, Անկարա—Կեսարիա և այլ երկաթուղիները։ Ուշագրավ է, որ Թուրքիայում եղած համարյա բոլոր երկաթուղագծերը, բացառությամբ Հեջազի և այլ ոչ մեծ ճյուղերի, որոնք կառուցվել են թուրքերի և մահմեդական

[1] Hugo Grothe, Türkische Asien und seine Wirtschaftswerte, Frankfurt am Main, 1916, էջ 82.

[2] Տե՛ս «Ближний Восток как рынок сбыта русских товаров. Отчет о деятельности организованной в 1912 году министерством торговли и промышленности экспедиции для изучения рынков Ближнего Востока, составил зав. делами экспедиции В. К. Лисенко». СПб, 1913, стр. 201.

[3] Տե՛ս «Соперничество торговых интересов на Востоке, доклад члена Совета общества востоковедения М. Н. Федорова», СПб, 1903, стр. 156.

[4] Հայկական կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 23, օպ. 18, գ. 256, թ. 58։

[5] Տե՛ս V. Totomjanz und E. Topschjan, Die Sozial-ökonomische Türkei, էջ 116.

[6] Հկպպա, ֆ. 560, օպ. 22, գ. 252, թ. 2։

կրոնական որոշ կազմակերպությունների միջոցներով, կառուցվել են իմպերիալիստական պետությունների կողմից և ունեցել ինչպես տնտեսական, նույնպես և ռազմա-ստրատեգիական նշանակություն։

Իմպերիալիստական պետությունները Թուրքիայի տնտեսական նվաճումը կատարում էին նաև ֆարթիկներ ու գործարաններ կառուցելով։ Այսպես, 1860-ական թվականներին Ֆրանսիացիները Դամասկոսում և Էդիրնեի մոտերքում հիմնեցին մետաքսափաթթոցման և մետաքսամշակման, իսկ անգլիացիները՝ Քեսաբ-Խայում բամբակագործական ձեռնարկություններ։ 1870-ական թվականներին սառաբերկրացի կապիտալիստները միանալով տեղացիների հետ՝ կառուցեցին Կրկի-Ադաշհում ու Զեյթուն-Բաղրանում գնաբ և փամփուշտ, իսկ Կ. Պոլսում, Իզմիրում և Բեյկոզում՝ հագուստեղենի և հանդերձանքի ֆարթիկներ։ Այնուհետև նրանք հիմնեցին գորգագործական ձեռնարկություններ՝ 1880-ական թվականներին Ուշակում և Գյորդեսում, իսկ 1894 թ.՝ Կեսարիայում։

Օտարերկրացիները թափանցեցին Թուրքիայի նաև լեռնային արդյունաբերության մեջ։ Նրանք տակավին 1860-ական թվականներին մշակում էին Կերասունդի պղնձահանքերը, իսկ 1870-ական թվականներին Զմյուռնիայում քրոմի և մագրանեցի հին հանքերի կողքին բացեցին նորերը։ 1896 թ. Ֆրանսիացիները հիմնեցին «Հերակլ» բնկերությունը, որն իր ձեռքը վերցրեց Սև ծովի ափերի քարածխի հանքերը և տասը տարվա ընթացքում (1902—1912) ավելի քան կրկնապատկեց հանույթը։

* * *

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին իմպերիալիստական պետությունները Թուրքիայի հետ միասին տնտեսապես նվաճում էին նաև Արևմտյան Հայաստանն ու տարածում այնտեղ իրենց քաղաքական ազդեցությունը։ Նրանք այդ բանը կատարում էին նույնպես տարբեր ճանապարհներով, որոնցից մեկը հյուպատոսությունների ստեղծումն էր։ Իմպերիալիստական պետությունները Արևմտյան Հայաստանի գլխավոր քաղաքներում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արդեն հիմնել էին այդ հաստատու-

7 Տե՛ս Ю. А. Петросян, «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958, стр. 22, 29.

թյունները։ Այսպես, Անգլիան հյուպատոսություններ ուներ Կարինում, Վանում և Տիգրանակերտում, Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ Կարինում ու Խարբերդում, Ֆրանսիան՝ Կարինում և հյուպատոսության գործակալ՝ Տիգրանակերտում, Ռուսաստանը Կարինում ուներ գլխավոր հյուպատոսություն, Վանում՝ փոխհյուպատոսություն, իսկ Բաղեշում և Բայազետում՝ հյուպատոսության կետեր։ Այդ հյուպատոսությունների աշխատողները ենթարկվում էին Կ. Պոլսում նստած իրենց դեսպաններին և զինավարվում նրանց ցուցումներով։ Նրանք ոչ միայն ներկայացնում ու պաշտպանում էին Արևմտյան Հայաստանում իրենց երկրների ու քաղաքացիների շահերը, այլև զանազան պատրվակներով միջամտում էին տեղացիների կյանքին։

Իմպերիալիստական պետությունները տարածում էին իրենց քաղաքական ազդեցությունը Արևմտյան Հայաստանում նաև միսիոներական գործունեության շնորհիվ, ուզարկելով հատուկ պատվիրակներ Արևմտյան Հայաստան՝ քրիստոնեության պատգամները տարածելու և տեղացիներին իբր թե քաղաքակրթելու համար։ Ֆրանսիացի կաթոլիկները հաստատվել էին Կարինում, Տիգրանակերտում, Վանում, Խարբերդում և Սղերդում, ամերիկացի բողոքականները՝ Վանում, Խարբերդում, Բաղեշում, Կարինում և Մարդինում, անգլիացիները՝ Վանում, Խարբերդում և Կարինում, գերմանացիները՝ Կարինում, Տիգրանակերտում և երկրի այլ վայրերում, իսկ ռուսական ուղղափառները գործում էին գլխավորապես Կարսո և Վանի վիլայեթներում։

Իմպերիալիստական պետությունները հավանավորում էին իրենց հոգևոր գործիչներին, տալիս էին նրանց մեծ գումարներ, իսկ վերջիններս Արևմտյան Հայաստանում հիմնում էին խանութներ, արդյունաբերական ձեռնարկություններ, դպրոցներ, բարեգործական զանազան ընկերություններ և այդ ու նման ճանապարհներով ձգտում էին բնակչության մեջ համակրանք ստեղծել իրենց պետությունների նկատմամբ։

Չնայած նրանց գործունեությանը, այդ հոգևոր գործիչները մահմեդական բնակչության մեջ չկարողացան ունենալ լուրջ հաջողություններ, բայց քրիստոնեական բնակչության մեջ որոշ չափով կարողացան հասնել դրանց։ Այդ պայմանավորված էր գլխավորապես նրանով, որ թուրքական կառավարությունը հավանավորում և պաշտպանում էր մահմեդական կրոնը, իսկ քրիստոնեականը հալածում և հետապնդում էր։ Դրա հետևանքով հայ և ասորի ազգա-

բնակչության որոշ մասը, իր անձն ու գույքը պաշտպանելու համար, հարկադրված էր հաճախ հավատափոխ լինել՝ ընդունել լուսավորչական եկեղեցին ու դավանել կաթոլիկ, բողոքական կամ լյութերական եկեղեցուն։ Ա. Երիցյանը, անդրադառնալով այդ հարցերին, իրավացիորեն գրում էր, հայ գյուղացին «ինչ չհամաձայնեն ի՞նչ անեն։ Տաճկաստանի հայ շինականը տեսնում է, որ տերության գործակատարները յուրյան կեղեքում են, դատավորները յուր իրավունքները յուրյան հանցանք են համարում, ոտովհետև հայ է, մինչև անգամ իր մոտիկ դրացի մուսուլմանը նորան արհամարհում է, հայհոյում է, սատօ սանդիմար չէ համարում, ամենքը նորան զարնում են, ամենքը քալանում, ամենքը հալածում և ոչ ոք կա նրան պաշտպան, վասն զի հայ է։ Բայց նրա դրկից Կրպոն, որ կաթոլիկության դիմից—այսօր ֆրանցուզի պաշտպանության տակ է, ըոզ մեկը դիպչի կաթոլիկ եղած Կրպոյին—բարհանան խոյսն կգրե Կարնո մոնսինիորին և Պարիզից սաստիկ հրաման կգա գայմագամին վրա—Կրպոյին չդիպչել։ Ահա Մկոն— որ քանի մի օր առաջ բրատ (բողոքական—Ա. Հ.) եղավ ու պատվիլիների մոտ կերթա կուգա, ըոզ բուրդ տանի նրա ոչխարը—Մկոն կերթա Կարին և մխիթարների Հերով Բիպլիից հրաման կբերի, թե Մկոյի ոչխարը ետ պետք է դարձվի։ Հայը ո՞ւմ դիմի»[8]։

Միսիոներները, տարածելով իրենց պետությունների գաղութային քաղաքականությունը, միաժամանակ օրկեստրորեն օգնում էին Թուրքական սուլթանին, քանի որ պատահում էին քրիստոնեական բնակչությանը տարբեր խմբերի, սերմանում նրանց միջև թշնամություն, քայքայում նրանց առանց այն էլ նվազ ուժերը և հեշտացնում սուլթանի ու ազանների գործը՝ Արևմտյան Հայաստանում բռնկվող ազգային ու սոցիալական շարժումների ճնշման համար։

Իմպերիալիստական պետությունները, բացի նշված ուղիներից, անտեսապես ու քաղաքականապես նվաճում էին Արևմտյան Հայաստանը նաև առևտրի միջոցով, արտահանելով առավելապես բրդյա և բամբակյա գործվածքներ, թել, մետաղյա զանազան շինվածքներ, ապակյա և ճենապակյա ամանեղենիներ, շաքար, սուրճ, լուցկի և Արևմտյան Հայաստանից ներմուծելով մանր ու խոշոր եղջերավոր անասուններ, անասնապահական մթերքներ, գլխավորապես բուրդ ու մոհայի ոչխի մազ, կաշի և մորքի, այնուհետև գյուղատնտեսական մթերքներ, չորացրած մրգեր, բոկուզենու փայտ և այլն։

Արևմտյան Հայաստանի առևտուրը ներքին հիշյալ պետություններից յուրաքանչյուրի հետ 1880-ական թվականների կեսերին արտահայտվում էր հետևյալ ազյուսակով (հազ. ռուբլիներով)[9]։

Պետությունները	Արտահանումը	Ներմուծումը	Շրջանառության գումարը	% հաշվարկությամբ
Անգլիան	864,0	7927,1	8791,2	33,3
Ֆրանսիան	678,1	1611,5	2289,6	8,7
Գերմանիան	782,3	1375,0	2157,3	8,2
Ավստրիան	120,0	756,0	876,0	3,3
Իտալիան	486,7	906,1	1392,8	5,3
Թուրքիան և Եգիպտոսը	4.870,2	2446,7	7316,9	27,7
Իրանը	7,8	101,9	109,7	0,4
Պարսկաստանը	174,7	1.957,5	2132,2	8,1
Բաքվի հետ Բուլղարիան	154,2	32,3	186,5	0,7
Բելգիան	83,3	121,9	205,3	0,8
Հունաստանը	93,4	33,4	126,8	0,5
Դանիան	93,5	—	93,5	0,3
Շվեյցիան		160,0	160,0	0,6
Այլ երկրներ	88,0	478,0	566,0	2,2
Ընդամենը	8496,2	17.907,4	26403,6	100,0

Այդ ավյալները թեև վերաբերում են միայն Կարնո, Վանի, Բաղեշի և Տրապիզոնի վիլայեթներին, բայց բնորոշ են նաև երկրի մյուս վիլայեթների համար։ Նրանք ցույց են տալիս, որ Արևմտյան Հայաստանի ներմուծումը ավելի քան երկու անգամ գերազանցում է արտահանումից, որը վկայում է նրա տնտեսական հետամնացության և գաղութային բնույթի մասին։

Այդ տվյալները այնուհետև ցույց են տալիս, որ Արևմտյան Հայաստանի արտաքին առևտուրը ամենից շատ կապված էր Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Պարսկաստանի հետ, իսկ Ռուսաստանի հետ նրա առևտուրը շատ աննշանափակ էր[10]*, որը*

8 «Փորձ», 1879, № 2, էջ 113։

9 Տե՛ս Ф. Грязнов, Военный обзор передового театра в Азиатской Турции, Тифлис, 1897, ч. II, стр. 172.

10 Ռուսաստանը Թուրքիայի հետ կնքել էր առևտրական պայմանագիր գեռ 1862 թ. փետրվարի 3-ին։ Համաձայն այդ պայմանագրի նա կարող էր գնել և

բացատրվում էր վերջինիս հետամնացությամբ և զբաղվածությամբ իր ծայրամասերի՝ Սիրիայի, Միջին Ասիայի ու Կովկասի անհանգիստ իրադրությամբ։

Սակայն XX դարի սկզբին ցարիզմը սկսեց վճռական քայլերի դիմել Արևմտյան Հայաստանի շուրջ ձնող դիկու ուղղությամբ։ Այդ քայլերից մեկն այն է, որ նա 1903 թ. բացեց ցամաքային առևտուր Բաթումիի հետ և նկատելի արագությամբ մեծացրեց Արևմտյան Հայաստան արտահանվող ապրանքների քանակը։ Եթե 1903 թ. Օրգռովի վրայով, այսինքն՝ ռուս-թուրքական ցամաքային առևտրի խոշորագույն կետով, արտահանել է 226.946 ռուբլու, ապա 1909 թ.՝ 889.430 ռուբլու ապրանք[11]։ Միայն Վան եթե 1910 թ. արտահանել է 160.500 ռուբլու, ապա 1911 թ.՝ 254.500 ռուբլու ապրանք[12]։ Ռուսական ապրանքների արտահանումը դեպի Արևմտյան Հայաստան համարյա նույնպիսի ամպագրով աճում էր նաև Կարապետրոնում և առևտրական մյուս կետերով[13]։

Շնորհիվ այդ ամպերի, ռուսական որոշ ապրանքներ արագորեն արտամղում են Արևմտյան Հայաստանի շուկայում եվրոպա-

---

ժանակ Թուրքիայում, այդ թվում, Իզմիրի, նաև Արևմտյան Հայաստանում, ցամաքային ապրանքը (վճարելով տեղափոխման համար 8% մաքս), բացի ածից, ձկտեսակից, վառոդից և զանազան այլ նյութերից։ Գործակիցը կերվում էր 14 տարով, բայց եթե կոզմերից մեկը չէր հայտնում ցանկության այն փոխելու կամ վերացնելու մասին, ապա ուժի մեջ էինար ևս 7 տարի (Տե՛ս Т. Юзефович. Договоры России с Востоком, политические и торговые. СПб, 1869, стр. 162—169). Եվ այն մնաց ուժի մեջ ևս 7 տարի։

1883 թ. հատուկ համձնաժողովների դարձյալ Դ. Ս. Տիմիրյազեվ գործադրվեց Կ. Պոլսի՝ Բաթումին Դան հետ խոչընդոտելու և վերջիշյալ առևտրական զարգացումը մեծ որոշ փոփոխության ենթարկելու։ Սակայն բանակցությունները չարվին որևէ արդյունք և այն ուժի մեջ մնաց մինչև ապրիլի համաշխարհային պատերազմը, միայն այն տարբերությամբ, որ 1914 թ. Թուրքիան եվրոպական պետությունների և Ռուսաստանի համաձայնությամբ բարձրացրեց ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսը՝ 8%-ից 11%-ի (Տե՛ս В. К. Лисенко, Указанное сочинение, стр. 176—180)։

Ռուսաստանը առևտուր էր անում Թուրքիայի հետ ինչպես ծովով, այնպես էլ ցամաքով։ Նա մինչև Կարսի մարզի միացումը ցամաքով անմաքս էր իր ապրանքները Ալեքսանդրապոլի, Ախալցխեի, Բգնիի, Կոզրի և Նախիջևանի վրայով, իսկ Կարսի մարզի միացումից հետո՝ գլխավորապես Կարաուրանի, Օրգռովի, Օլթիի, ինչպես նաև մասամբ Կաղզվանի, Ռատապանի, Կարաքանի և Օրշոխի վրայով (Տե՛ս Վրացական ՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 378, оп. 1, д. 13534, рр. 39—48)։

11 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՄԱ, ֆ. 521, оп. 2, д. 310, рр. 259—260, д. 492, р. 267։

12 Նույն տեղում, ֆ. 71, д. 76, р. 141։

13 Նույն տեղում, ֆ. 378, оп. 1, д. 13534, р. 34։

կան ապրանքները։ Վանի ռուսական փոխհյուպատոսը 1911 թ. գրում էր, որ երեք-չորս տարի առաջ Վանում համարյա չկար ռուսական շաքար, 1910 թ. եղած շաքարի մոտ 1/3-ը արդեն պատկանում էր Ռուսաստանին, իսկ մնացածը՝ Ավստրիային ու Ֆրանսիային։ «Ներկայումս տեղական շուկայում իշխում է բացառապես ռուսական շաքարը և լրիվ հիմք կա հուսալու, որ 1912 թ. ընթացքում շաքարի ներմուծումը Ավստրիայից ու Ֆրանսիայից վերջնականապես կդադարի»[14]։

Նա մի այլ առիթով ավելացնում էր. «Պակաս ուշադրության արժանի չի նաև տարեցտարի մեր երկրին, դյուրատանելական գործիքների, ինչպես նաև ապրուստեղենի, նավթի, կարմիր պղնձի և այլ ապրանքների նկատմամբ աճող պահանջը»[15]։

Ռուսական «Ռուս» նավթի ֆիրման Կարինում, Վանում և Բաղեշում արդեն ուներ իր պահեստները, որտեղ համարում էր Բաքվից եկած նավթը և ցանկացած դեպքում արտահանում այն երկրի տարբեր վայրերը[16]։

---

14 ՀՍՍՌ ԿՊՄԱ, ֆ. 71, д. 76, р. 140։

15 Նույն տեղում, ֆ. 378, оп. 1, д. 13534, р. 41։

16 Ներկայիս Արևմտյան Հայաստանի շուկան ձգտում էր նվաճել նաև այլ ճանապարհներով, ինչպես օրինակ, երկաթուղիների կառուցումով կենցնախանձ վերցնելով, բանկի բաժանմունք հիմնելով, Կարապետրան — Կարինի և Բայազետ — Վան խճուղիների կառուցելով, Կարինում ռուսական ապրանքների յուցադրատեղ և առևտրական ներկայացուցչի հաստատելով, Վանս յնի նավագնացությունը կանոնավորելով, փոստ-հեռագրական աշխատանքները բարելավելով և այլն (տե՛ս ՀՍՍՌ, ֆ. 378, оп. 1, д. 13534, рр. 36—39)։ Նա 1900 թ. վերցրեց Անկարա—Կեսարիա—Մերզիֆոն—Կարին և Տիգրանակերտ երկաթուղու կառուցման իրավունքը, 1910 թ. Բաթումի հետ կնքած նոր պայմանագրով արգելեց ուրիշներին կառուցելու երկաթուղի այդ գծից դեպի արևելք բնկած մարզերում, 1913 թ. վերցրեց Տիգրանակերտի վիլայեթի Արդին—Մարդին պեհեռնաձևերի շահագործման իրավունքը և այլն։ Բայց որևէ իրական բան չարեց։

Ուշագրավ է, որ ցարիզմը խուսափում էր կովկասահայ արդյունաբերական բուժմասպիայի ինանացումից ու հատահատումից Արևմտյան Հայաստանում։ Այդ տեսակետից բնորոշ է հետևյալ փաստը. 1911 թ. Հայոնի կոպիտատիա Մանթաշյանը, որը հանդիսանում էր «Բիֆիֆի առևտրական բանկի» ուղղ, առաջարկեց ռուսական իշխանություններին՝ թույլատրել իրեն հիմնելու Արևմտյան Հայաստանում հատուկ բանկ։ Բայց ռուսական իշխանությունները մերժեցին նրան։ Կ. Պոլսի ռուսական գեսպան Գիրսը գտնում էր, որ Մանթաշյանի ցանկությունը ունի սուր հայրենասիրական երանգ և որպես այդպիսին խանգարում է հիմնավորելու և պարզելու Թուրքիայի հայկական վիլայեթներում մարդը ռուսական ապրանքներ։ (Տե՛ս «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительства в 1878—1917 гг.», серия III, т. 2, стр. 94)։

Տարիզմը Արևմտյան Հայաստանի շուկան նվաճելու համար պատրաստում էր արևմտահայ վաճառականներին, որոնք կապված էին գերազանցապես արևմտաևրոպական երկրների հետ։ Նա ռուսական զանազան ֆիրմաների ներկայացուցիչներին ուղարկում էր Վան, Կարին, Բայազետ և այլ քաղաքներ, որտեղ նրանք ծանոթացնում էին տեղական վաճառականներին իրենց արտադրանքին և շահադրգռում նրանց կապվել Ռուսաստանի հետ։ Օրինակ, 1910 թ. հունիսին Վան մեկնեց Մոսկովյի «Էմիլ Պինդեր» մանուֆակտուրային ընկերության ներկայացուցիչ Օստրոմիսլենսկին և վաճառականներին ցույց տվեց իրենց արտադրած չիթը։ Նրանցից շատերը հետացան այդ չիթով և պատրաստակամություն հայտնեցին վաճառել այն, ինդենով ևվրոպականը։ Վանի ռուսական փոխհյուպատոսը այդ առիթով գրում էր. «Մոսկովյի խոշոր ֆիրմայի գործակալի առաջին անգամ երևալը Վանում առաջացրեց ուժեղ խառնաշփոթ Վանի այն առևտրականների միջև, որոնք վաղուց ապրանք էին առնում Արևմտյան Եվրոպայից ու Անգլիայից՝ Կ. Պոլսի միջոցով։ Ռուսական ֆաբրիկայի հոչակավոր չիթի օրինակները բնդհանուր հետաքրքրություն առաջացրին։ Մանուֆակտուրայի ամենախոշոր վաճառական Կափամաջյանը (քաղաքապետիր), որը միշտ առևտուր էր անում Մանչեստրի հետ, առաջինը պատվիր տվեց ռուսական ֆաբրիկային։ Մնացած վաճառականները, հաճախելով Օստրոմիսլենսկուն, նրա հետ բանակցություններ են սկսել»[17]։

Նա այնուհետև շարունակում էր, որ Օստրոմիսլենսկին «մտադիր է Վանում ստեղծել միջին և մանր առևտրականներից իր ապառոդու Այդ միջոցառումը միանգամայն ուշադրության է, խոշոր առևտրականը, որը կապ ունի Արևմտյան Եվրոպայի հետ, միայն այն ժամանակ գործարքի մեջ կմտնի մեր առևտրական ֆիրմաների հետ, երբ նրան կսպասի անհրաժեշտություններ և մրցակցության դժվարություններ»[18]։

Տարական պաշտոնյաներից Արևմտյան Հայաստանի շուկան նվաճելու ուղղությամբ մեծ աշխատանք էր ծավալել հատկապես Կարնո գլխավոր հյուպատոս Ա. Ն. Շարիաուրը։ Նա միտքը ուղարկում էր ապրանքների օրինակները, որոնք կարող էին հաջողությամբ վաճառվել Արևմտյան Հայաստանում և, կապ հաստատելով տեղացի վաճառականների հետ, ձգտում էր նրանց ծանոթացնել ռուսական գաղութատիրական նպատակներին։ Տարական պաշտոնյաներից մեկը՝ Ն. Գուլը նրա գործունեությանը հատկապես էր նոր շրջան Ռուսաստանի և Արևելյան Թուրքիայի անտեսական հարաբերությունների պատմության մեջ, գտնելով, որ «մինչև այժմ ոչ ոք չի դադրել այդպիսի լուրջ ուշադրություն էրզրումի շուկայի վրա»[19]։

Ենթրիվ ռուսական կապիտալիստական շրջանների հետաքրքրության գործունեության, Վանի որոշ նշանավոր վաճառականներ, ինչպես՝ Գեորգ Ջիդալյանը, Կափանյանցը և ուրիշներ, սկսեցին առևտուր անել բացառապես ռուսական ապրանքներով[20]։

Շուտով Վանի վաճառականների օրինակին հետևեցին նաև մի շարք այլ քաղաքների վաճառականները։ 1912 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Մինչև վերջին ժամանակները էրզրումի վաճառականությունը, բուս սովորության, գերադասում էր գործ ունենալ Եվրոպայի հետ, բոլորովին անծանոթ լինելով ռուսական արդյունաբերական շուկային...։ Այժմ նկատվում է նոր երևույթ... վաճառականները սկսում են հետաքրքրվել ռուսական գործվածքներով ու հինվածքներով»[21]։

Ռուսական ապրանքների նկատմամբ արևմտահայ վաճառականների պահանջը տիրան արագ էր աճում, որ ռուս կապիտալիստները համաձայն չէին հաշվեհամ բավարարել այն։ Օրինակ՝ «Եռանկյուն» («Треугольник») ֆիրման 1911 թ. չկարողացավ կատարել Վանում իր ներկայացուցչի ստված խոստումը տեղացի վաճառականներին՝ 10.000 ռուբլի երկարաձիա կոշիկներ ուղարկելու մասին[22]։

Տեսնելով ռուսների ակտիվացումը Արևմտյան Հայաստանում, անգլիացիները և ֆրանսիացիները սկսեցին լուրջ անհանգստանալ։ Այսպես, Մանչեստրի գործարանատերերը երբ իմացան, որ Կափամաջյանը որոշել է հրաժարվել իրենց չիթից և դնել ռուսականը, իջեցրին Վանում վաճառվող իրենց չիթի գինը, պահանջեցին Մանչեստր ուղարկել ռուսական չիթ՝ նմանը արտադրելու համար, կանչեցին նրան Մանչեստր և «խոստացան զանազան արտոնություններ»[23]։

Իսկ ֆրանսիացիները, երբ իմացան, որ ռուսները ուզում են ուժ հարթել Բայազետից Վան, պատրաստակամություն հայտնե-

17 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, օպ. 3, գ. 492, թ. 230։
18 Նույն տեղում, թ. 231։
19 Торгово-промышленный юг, 1912. № 9, стр. 36.
20 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 76, թ. 148։
21 Նույն տեղում, ֆ. 378, օպ. 1, գ. 13534, թ. 37։
22 Տե՛ս նույն տեղում, թ. 37։
23 Նույն տեղում, ֆ. 71, գ. 76, թ. 143։

ցին օգնել տերիտորիան կառուցել Տրապիզոնից Կարին երկաթուղի և խճուղի, մտադրվելով ընդարձակել դրանով իրենց ապրանքների արտահանումը դեպի Արևմտյան Հայաստան և դյուրացնել ռուսական ապրանքների արտամղումն այնտեղից[24]։

Սակայն ռուսները վախենում էին ոչ այնքան ֆրանսիացիներից, որքան գերմանացիներից և ամերիկացիներից (էլ չխոսենք անգլիացիների մասին), որոնք ինչ-ուշ նկան Արևմտյան Հայաստան, բայց արագորեն լցնում էին նրա շուկաները իրենց ապրանքներով։ 1911 թ. Վանի ռուսական փոխհյուպատոսը գրում էր. «Պատահաբար ինձ հաջողվեց նայել Վանի ֆրանսիական հյուպատոսների վերջին տարիների գաղտնի զեկուցագրերից մի քանիսը։ Նրանցում ասվում էր, որ ռուսական առևտրի հետ հաջողությամբ մրցակցելու համար Ֆրանսիան պետք է օգնի Թուրքիային Փորր Ասիայում երկաթուղիների և խճուղիների կառուցման գործում, քանի որ դրանց կառուցումով Ռուսաստանը այլևս չի ունենա աշխարհագրական այն առավելություններ, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն կարող օգտագործվել, բայց բացում են առևտրական լայն հեռանկարներ։

Ֆրանսիացիները մեծ լավատեսներ են։ Նրանց մրցակցությունը մեզ համար վտանգավոր չի։ Նրանց առևտուրը Թուրքիայում (իսկ՝ Արևմտյան Հայաստանում—Ա. Հ.) տարեցտարի նվազում է։ Ֆրանսիական ֆարթրիկատները, որոնք մի ժամանակ այսպես որ էին ածվում, ապշեցուցիչ արագությամբ փոխարինվում են անգլիականով ու գերմանականով։ Վերջիններս էժանությունը ձեռնտու է տեղացիներին, որոնք քիչ են ուշադրություն դարձնում ապրանքների որակի վրա։ Դրա հետ մեկտեղ անգլիական ու գերմանական գործարանատերերը այնքան բարեխիղճ են պատվիրներ կատարելու գործում և համաձայնվում են այնպիսի պատռնուքյուններ, որ ֆրանսիացիները իրենց բանկ ապրանքներով չեն կարող երազել ապագայում որևէ հաջողություն ունենալու՝ Թուրքիայի այդ հեռավոր գավառներում»[25]։

Չնայած ցարիզմի այդ ձգտումներին, Արևմտյան Հայաստանի շուկայում գերակայությունները, հատկապես անգլիացիները գերիշխող դեր էին խաղում ոչ միայն XIX դարի երկրորդ կեսին, այլև XX դարի սկզբին։ Այսպես՝ 1908 թ. ներքոհիշյալ պետություններից յուրաքանչյուրը ապրանք է արտահանել Վանի վիլայեթ հետևյալ արժեքությամբ[26]։

Անգլիան	239 հազ. ռուբլու.
Ռուսաստանը	144 հազ. ռուբլու.
Գերմանիան	83 հազ. ռուբլու.
Ավստրիան	74 հազ. ռուբլու.
Ֆրանսիան	53 հազ. ռուբլու.
Պարսկաստանը	18 հազ. ռուբլու.
Ռումինիան	3 հազ. ռուբլու.
Հունաստանը	1 հազ. ռուբլու.

Այդ տվյալները ցույց են տալիս, որ Անգլիան մոտ 100.000 ռուբլով ավելի շատ է ապրանք արտահանել Արևմտյան Հայաստան, քան Ռուսաստանը։

Անգլիան գերիշխող դեր էր խաղում նաև Արևմտյան Հայաստանի մյուս շրջանների ներմուծման մեջ։

1912 թ. վերաբերող ռուսական պաշտոնական զեկուցագրերից մեկում նշվում էր, որ Կարինում տարեկան մոտ 20 միլիոն ռուբլու ներմուծվող ապրանքից Ռուսաստանին պատկանում է միայն 1.500 հազարը[27]։

24 Եվրոպական պետություններն Արևմտյան Հայաստանի շուկան հնարավորինս նվաճելու համար նույնպես ձգտում էին բարելավել Համայագծերը, կառուցելով հատկապես երկաթուղու ճյուղ, որ 1873 թ. Ամասիական կառավարության համաձայնությամբ Աբել և Տիխի ինժիներները ուսումնասիրեցին Արևմտյան Հայաստանի աշխարհագրական պայմաններում՝ Սերաստիայից դեպի Կամասիա—Եարբերդ—Բոզատ—Ամասիա—Մամուռ—Եղնկա և Կարին երկաթուղի կառուցելու նպատակով («Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ», Ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա», 1873, գ. 1085, քք. 41—42)։

1894 թ. բնչպիսի մի խոշոր կապիտալիստներ ուզում էին կառուցել Ամասիա—Ակնաբիա—Կնապիա երկաթուղին և Ծումբրիկի մոտ գտած բնչէ այն մետրքրական ծովը, այլ կերպ ասած՝ միացնել Սև և Միջերկրական ծովերը։

1910 թ. Ֆրանսիացի Ծումբրայլ եղբայրները կոնցեսիա վերցրին՝ կառուցելու Անկարա—Սերաստիա—Զրնկիա—Կարին—Վան, Մամուռ — Ամասիա—Սերաստիա—Տիգրանակերտ, Նեռա—Մուշ—Բաղեշ և Կարին—Քղբի—Եարբերդ ուղիները (ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 71, գ. 62, քք. 13—15)։

Համաքայլ այդ նույն ժամանակաշրջանում ամերիկյան «American Development Co»-ընկերությունը խնդիր էր հետապնդում կառուցելու Եարբերդ—Տիգրանակերտ—Վան երկաթուղին, հորդորելով Ամերիկայում վերադարձնելու Վանա լճի նավագնացությունը և հատատուելու կանոնավոր երթևեկություն Արևմտյան Հայաստանի հանքային օրգանների միջև (ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 71, գ. 62, թ. 13—15)։

Սակայն այդ բոլոր ձեռնարկությունները մնացին սոսկ թղթի վրա։ Նրանց իրագործմանը խանգարեցին մի կողմից մեծ պետությունների միջև եղած հակասությունները, իսկ մյուս կողմից՝ Թուրքական կառավարությունը։

25 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 71, գ. 76, թ. 145։

26 Տե՛ս «Ванский шлайет», М., 1910, стр. 9—10.

27 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 278, օպ. 1, գ. 13534, թ. 34։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ ձորաստանական մնացուկներով ծանրաբեռնված Թուրքիան ի վիճակի չէր շահելու կապիտալիստական առաջավոր երկրների հետ մրցող տնտեսական մրցություններ։ Եվ Թուրքիան ու Արևմտյան Հայաստանը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին դարձան առավելապես արևմտաեվրոպական պետությունների հումքի բազան ու վաճառքի շուկան, Վ. Ի. Լենինի խոսքով ասած՝ կիսագաղութը[28]։

Իշարկի, իմպերիալիստական պետությունները որոշ չափով նպաստեցին Թուրքիայի տնտեսության զարգացմանը, որքանով կառուցեցին գործարաններ ու ֆաբրիկաներ, որի հետեևանքով երկրում, այսպես թե այնպես, ձևակերպվեցին կապիտալիստական հարաբերությունները, առաջացան բուրժուազիայի և հատկապես պրոլետարիատի զանազան շերտեր՝ բազկացած թուրքերից, հույներից, հայերից, հրեաներից և ուրիշներից։

Նրանք նպաստեցին Թուրքիայի տնտեսության զարգացմանը, որքանով բարեկարգեցին հաղորդակցության միջոցները, կառուցելով հատկապես երկաթուղիներ։ Ֆ. Էնգելսը գրում է. «Երկաթուղիները նշանակում են կապիտալիստական արդյունաբերության առևտրում և պրիմիտիվ հողագործության հեղաշրջում»[29]։

Սակայն իմպերիալիստական պետությունները ընդհանուր առմամբ խոչընդոտական դեր, քանի որ նպաստեցին Թուրքիայի տնտեսության այն ճյուղերի զարգացմանը, որոնց կարիքն զգում էին, իսկ մյուսների առաջացումն ու զարգացումը՝ արգելակեցին։ Իմպերիալիստները խոչընդոտեցին Թուրքիայի ծանր արդյունաբերության առաջացմանն ու զարգացմանը, որի հետևանքով այն մնաց ագրարային երկիր։ Բավական է նշել, որ XX դարի սկզբին բնակչության մոտ 85 տոկոսը զբաղվում էր գյուղատնտեսությամբ, իսկ 15 տոկոսը՝ արդյունաբերությամբ։

Իմպերիալիստական պետությունները Թուրքիայի անցամ գյուղատնտեսությանը ամեցին այլանդակ կերպարանք, երբ նրա որոշ ճյուղերի նկատմամբ առհասարակ իրենց մոնոպոլիան և ագրեսիվ դանդաղեցրին նրանց զարգացման տեմպերը։ Նրանք չբարելավեցին հողի մշակումը, չնպաստեցին արտադրահարաբերությունների նոր կապիտալիստական ձևի, բնդհակառակը՝ կոնսերվացրին գոյություն ունեցող ֆեոդալական, անցամ նահապետական

28 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 194, 341։

29 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 22, стр. 450.

արտադրահարաբերությունները և խանգարեցին ագրարային հարաբերությունների էվոլյուցիային։ Իմպերիալիստական պետությունները հարմարվեցին ինչպես ազանների, նույնպես և գյուղացիների տնտեսություններին իրենց կապիտալիստական պահանջներին և չմոցրին նրանց մեջ արժատական տեղաշարժեր։ Նրանք ուժեղացրին աշխատավարձության սոցիալական ու ազգային ճնշումները և, ինչպես ցույց տրվեց վերևում, խաղացին բացարձակապես հետադիմական դեր ազգային ազատագրական շարժումներին ճնշելու գործում։

Իմպերիալիստական պետությունները էլ ավելի հետադիմական դեր խաղացին Արևմտյան Հայաստանում։ Նրանք իրենց գործունեությին քաղաքականությամբ ոչ միայն արգելակեցին Արևմտյան Հայաստանի արդյունաբերության զարգացումը, այլև քայքայեցին այն։ Ահա այդ բանն ապացուցող մի քանի փաստեր.

Բաղեշում 1870-ական թվականներին գործում էին 70.000—80.000 լիտր բամբակ, իսկ 1880 թ.՝ «տարիվ 10 հազ. լիտր կգործվիր»[30]։ Այսանդ «առաջ չատ էին հայ կտավագործներ (չուխակի), բայց հիմա նոցա թիվը հարյուրի հազիվ է հասնում, մյուսները ցրվել են զանազան տեղեր»[31]։

Արաբկիրում «անհամեմատ գործունեություն երբեմն շատ ծագկած էր... այնպես որ կըսվի թե 1600 բնակիչ կը շահվեին ազով...», բայց այժմ այդ «արհեստը շատ բնակավայրեցիներ... արհեստապետների թիվը 200-ի և գործավորների թիվը 1000-ի կը հասնի»[32]։

Վանում «Շալի գործարանք այժմ ինկած վիճակի մեջ են ինչպես և ասուի, մանխայի և այլ արտադրությանց... այսօր այլևս տեղական ասուի, ապա, շալ չեն արտահանվիր»[33]։

Տիգրանակերտում «եվրոպական ապրանքները՝ էժան, բայց վատորակ, ավելի են ազդում շուկան, ճնշելով ու դուրս մղելով տեղական արտադրություններ։ Այդ առանձնապես վնասակար է անբարեմասնում տեղացի ջուլհակների վրա, որոնք չնայած բրբա-

30 «Մասիս», 1881, հոկտեմբերի 17։

31 «Արձագանք», 1882, № 35, էջ 544, տե՛ս նաև «Մշակ», 1887, հուլիսի 28։

32 «Մշակ», 1891, մայիսի 16, տե՛ս նաև «Մասիս», 1885, փետրվարի 2, էջ 656, «Արեւելք», 1884, հունիսի 15։

33 «Արեւելք», 1884, ապրիլի 27, տե՛ս նաև «Մուրճ», 1904, № 8, էջ 31, «Բյուզանդիոն», 1898, մարտի 19, 1905, օգոստոսի 18։

նաջան աշխատանքի, վաստակում են օրական միայն 3—4 դուրուշ (25—30 կոպ.)»[34]։

Երզնկայում մանուկան «20—25 տարի առաջ (խոս՝ 1870-ական թ.—Ա. Հ.) մեծ համբավ ուներ... Կարնո բռնանդակ նահանգին մեջ այս պատմական արտադրութիւնը ծախսված էր համակ»[35], բայց այժմ այն «արհեստանոցին վիճակի մեջ էր»[36]։

Եվրոպական ապրանքների ներմուծման հետևանքով արդյունաբերությունը քայքայվում էր նաև Ակնում, Քղդիում, Սերդում և Երկրի մնացած քաղաքներում ու գյուղաքաղաքներում։

* * *

Բացի խմպերիալիստական պետությունների գազութային քաղաքականությունից, Արևմտյան Հայաստանի անտեսության զարգացումը կաշկանդում էր նաև թուրքական կառավարության վարքիծրը։ Օսմանյան տերությունը՝ վարելով հայաթափության քաղաքականություն, կոտորում էին ոչ միայն հայ աշխատավորներին, այլև անհատական հարստություն ձեռք բերած կամ գրան ձգտող հայ առևտրականներին ու ձեռնարկատերերին։ Այսպես, 1872 թ. սեպտեմբերի 10-ին վալիի ցուցումով մի անհայտ անձնավորության Կարինում օրը ցրեկով սպանից հայտնի վաճառական Խաչատուր Բաղտասարյան, որը գանազան հանապարհներով տեր էր դարձել բնդարձակ հողերի և նույնիսկ քաղաքի թաղերից մեկին[37]։

1876 թ. նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը տեղական իշխանությունները կազմակերպեցին Վանի շուկայի հրկիզումը, որտեղ կար 500 կրպակ, որոնք «պատկանում էին համարյա բացառապես քրիստոնյաներին»[38]։ Կարնո ռուսական գլխավոր հյուպատոսն այդ առիթով գրում էր Կ. Գոլցի ռուսական դեսպանին. «Վանից ինձ հաղորդեցին, որ Վանի հարուստ վաճառականները, որոնք մինչև նոյեմբերի 30-ը ունեին մի քանի տասնյակ հազար լիրա, այժմ բոլորովին աղքատացած են»[39]։

[34] Томилов. Отчет о поездке по Азиатской Турции, Тифлис, 1907, ч. 1, стр. 260.

[35] «Բյուզանդիոն», 1896, դեկտեմբերի 3։

[36] «Բյուզանդիոն», 1896, դեկտեմբերի 5։

[37] Թուրքական արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Գլխավոր արխիվ Վ—Ա՝», 1872, գ. 1083, թթ. 44—45, ֆ. «Դեսպանությունը Կ. Գոլցում», 1881, գ. 1567, թ. 8։

[38] Նույն տեղում, ֆ. «Գլխավոր արխիվ Վ—Ա՝», 1876, գ. 1089, թ. 54։

[39] Նույն տեղում, թ. 55։

Թուրքական իշխանությունները 1894—1896 թթ. հայկական չարդերի ժամանակ Վանում փակեցին 303 արհեստի և առևտրի կրպակ, իսկ երբ նրանց տերերը հետագայում ցանկացան բացել դրանք, թույլտվություն չտվեցին[40]։

Այդ նույն տարիներին իշխանությունները հարբերդում քար ու քանդ արեցին Քյուրքճյանների մետաքսագործարանը, իսկ Բարիկյաններին առաջարկեցին փակել մեքենաշինական գործարանը, պատճառաբանելով, որ այնտեղ զենք է արտադրվում։ Քյուրքճյանները իրենց գույքը փրկելու համար ընդունեցին մահմեդականություն, իսկ Բարիկյան եղբայրները, կաշառելով պաշտոնյաներին, մի կերպ կարողացան պահպանել ձեռնարկությունը։

Կառավարությունը հարկում էր հայ ձեռնարկատերերին մեծ ուրբերով ու պարհակներով, որի հետևանքով նրանք ոտնատված էին լինում դադարեցնել իրենց ձեռնարկումները։ Այսպես, Վանում պատրաստվեց Պարթևյանին՝ կարկ զորքի համար 400 զույգ կոշիկ։ Վ. Փափազյանը նշում էր, թե ձեռնարկատերը «կկործանվի, եթե չվճարեն... ուրիշ ճար չկա, ողորմել պետք է այս Պարթևյանի հասմար, այլապես նրան փրկի վաշխառուների ձեռքերից»[41]։ Այլապես, իհարկե, չփրկից Պարթևյանին. նրա ձեռնարկությունը փակվից։

Կառավարությունը որոշից հարկել անգամ բրուսագործներին՝ պահանջելով յուրաքանչյուր ճառեհազումից տարեկան 2,5 լիրա և եկամտի 5 տոկոսը։ Ժամանակակիցներից մեկը նշում էր, որ եթե այդ որոշումը իրագործվի, ապա բրուսագործները կկոզնեն իրենց գործունեությունը[42]։

Թուրքական կառավարությունը չէր մտահոգվում Արևմտյան Հայաստանի բնական հարստությունների ոչնչական օգտագործման ուղղությամբ։ Գետերի օգտագործումը մտանել էր ինքնահոսի, իսկ Վանա լճում չկարողացավ կանոնավոր նավագնացությունը գործ բերել։ Մինչդեռ այդ նավագնացությունը, ի թիվս այլ գործառնական հետևանքների, զգալի չափով կնպաստեր նաև ապրանք-դրամական հարաբերությունների աշխուժացմանը։ Բավական է նշել, որ յեի մի ափից մյուսը գնալու համար ցամաքով հարկավոր էր 2— 3 օր, իսկ շոգենավով՝ 2—5 ժամ։

Կառավարությունը հանքահորերը տալիս էր կապալով՝ 40—99 տարի ժամկետով, եթե հանքահորերը այդ ժամանակամիջոցում

[40] Տե՛ս «Բյուզանդիոն», 1897, մարտի 17։

[41] Վ. Փափազյան, Երկեր, հատ. 5, էջ 409։

[42] Տե՛ս «Բյուզանդիոն», 1900, հոկտեմբ 11։

չնշակվեին, կվերցվեին ու կտրվեին ուրիշներին։ Բայց այդ դեռ բավական չէր. կապալառուները, որպեսզի առանձին կառավարությունն հետևյալ ամեն մի պաշտոնյայից Ի. Ի. Գոլոբորոդկոն նշում էր, որ մի բնակավայրում վանի առնջակի նավթային հարստությունների շահագործման իրավունքը առանձնալու համար ստանալ է ավելի քան տասը տարի նա այնտեղ եղած է եղել մշտական[43]։

Կառավարությունը արգելակում էր ձեռնարկատերերին և կապալառուներին նվաստացնող նեղմտության մեջ։ Բայց այն, ինչ նրանք նեղմտում էին, բերում էին մեծագույն դժվարություններով։ 1906 թ. հեղինակը, դրում էր, որ Կարնո առնջակում շնորհիվ ճակնդեղի առատության, շատ համեղ խոտ է լինում աշխարհի գործարան հիմնելու մասին, բայց ամեն անգամ, որ խոսքը մեքենաների և գործիքների է գնում, այդտեղ ալ կանգ են առել, որովհետև Թուրքիայի մեջ մեքենաների մասին մտածել, երևակայական աշխարհի մեջ ապրել բան է[44]։ Նա այնուհետև նշում էր. «Բարերդի մոտ մի պղնձահանք կա, որը կը շահագործեն մի քուրք փաշա և հայ մը։ Կառավարություն չի թողուր, որ մարդիկը գործիք, մեքենաներ բերել սան և առանցքով առանձն պղինձ։ Իսկ շահագործումը ուզի կունենա կատարյալ նախնական ձևերով»[45]։

Օսմանյան տիրակալները, ինչպես ասվեց, չէին ապահովում բնակչության, այդ թվում նաև ձեռնարկատերերի ու առևտրականների, անձն ու գույքը։ Եվ ապահեն ու բեյերը, օգտվելով այդ հանգամանքից, քաղաքական արշավանքներ էին կազմակերպում և կողոպտում նրանց։

Ճիշտ է, ապահեների ու բեյերի արշավանքներից տուժում էին գյուղատնտեսական աշխատավոր գյուղացիները, բայց գերծ չէին մնում նաև հարուստները։ Ահա փաստեր. Ս. Հայկունին գրում էր, որ Բագրեանդի Ղազի գյուղում գյուղացի Սահակի «անդանը և հացը միշտ պատրաստ էր անցորդի համար, ամեն անցորդ այստեղ հայ պիտի ուտե... Վերջին տարիները կարգ մը ավազակներ՝ նրանից

43 **И. И. Голобородько.** Турция, М., 1912, стр. 144.

44 «Որկրի ձայն», *1906*, № 11, էջ 10։

45 Նույն տեղում։

դրամ պահանջեցին, նա առանց դիմադրելու տվավ, մի գիշեր ձին պահանջեցին, դարձյալ տվավ, այժմ նա հարստությունից զրկված է»[46]։

Է. Դիլոնը գրում էր, որ 1892 թ.՝ ավազակապետ Անտոնի հրոսակախումբը թալանում է Ալաշկերտի Մանկասար դյուղի հարուստներից մեկին՝ Գևորգ Վարդանյանին։ Երբ վերջինս դանգատվում է իշխանություններին, ավազակապետը կրկին է կողոպտում նրան, տանելով կահ-կարասիք, հագուստեղեններ, կովեր, եղներ և այլ բաներ, իսկ այնուհետև տանում է հարազատներին[47]։

Նույն հեղինակի վկայությամբ, Բալանբերում շեյխ Բշամիլը հարձակվում է Աբրա գյուղի վրա և կողոպտում հայտնի հարուստ Մելիքին։ Վերջինս նույնպես բողոքում է իշխանություններին։ Շեյխը այդ լսելով, նորից է կողոպտում նրան, տալանում արդիներին և առանդում կնոջը։ Եվ Մելիքը, չդանելով ուրիշ ելք, ստիպված է լինում թողնել ամեն ինչ ու փախչել Թեոսատան[48]։

Ագանների ու բեյերի թալանումներից տուժում էին նաև առևտրականները, ընդ որում ոչ միայն հայ, այլև թուրք վաճառականները։ Նրանք, օրինակ, 1912 թ. օգոստոսի 25-ին հարձակվեցին Կարինից Բաղեշ գնացող մահմեդականների քարավանի վրա, ամանց ձեծեցին, մյուսների աչքերը կապեցին և, դրամն ու ապրանքը կողոպտելով, հեռացան։

Երբ վաճառականները բողոքում էին, իշխանության ներկայացուցիչները սովորաբար չէին հետապնդում ու պատժում ավազակներին, որովհետև կամ ընկերակցում էին նրանց հետ, կամ ույզակի վախենում։ Այսպես, 1913 թ. Սղերդի առնջակի էրուսի նահիե մուֆթասարրիֆի տեղակալը մի խումբ վաճառականների բողոքին պատասխանեց. «Գնացեք որ հեղինակը հայտնեմ և կուրծքս դնդակ մը առնելով զոհվիմ... Ձեր գործին գնացեք»[49]։

Ագաներն ու բեյերը թալանում էին ոչ միայն վաճառականներին ու հարուստ գյուղացիներին, այլ նաև ձեռնարկատերերին։ Երբեմն նրանք ուղղակի քար ու քանդ էին անում ձեռնարկությունները։ Օրինակ՝ 1850 թ. շեյխ Ուրեյդ-Ուլլայի գինվորները Բերկ-

46 Ս. Հայկունի. *Բագրեանդ*, Զմյուռնիա գավառ, Էջմիածին, 1894, *տ. Ա*, էջ 262—263։

47 **М. П. Ролле́н Жекмен.** Армения, армяне и трактаты, М., 1896, стр. 342.

48 Նույն տեղում, էջ 360—361։

49 «Բյուզանտիոն», *1913*, հատոր 3, № 24,—1102։

թում այնպես ավերներին Առաքելյանցի նամքի հանբերը, որ նա աշխուհահան անիմաստ համարեց վերականգնել գործը[50]։

Թուրքական կառավարությունը շնչին միջոցներ էր հատկացնում Արևմտյան Հայաստանի հանապարհների բարեկարգման, իսկ այն, ինչ հատկացնում էր, հատկացնում էր գլխավորապես սպյուղինների բացման և մասամբ խճուղիների կառուցման նա ոչ միայն XIX դարի երկրորդ կեսին, այլև XX դարի սկզբին չհատուցեց երկաթուղու Այդ պատճառով էլ բնակիչները բեռները տեղափոխում էին հիմնականում սայլուղիներով ու դրաստային ուղիներով, որոնք հաճախ անձրևներից ու ձյուներից խափանվում էին երկար ժամանակով։ Եռա շրջաններ զուրկ էին անգամ այդ ուղիներից։

Ականատեսներն արձանագրում էին. Կարևս վիլայեթը «իր երկրագործության ու անասնապահության արդյունքներն արտահանելու համար սայլուղիների մեծ կարիք է զգում»[51]։

Վանի վիլայեթում «առևտուրը չի կարող զարգանալ, քանի որ բացակայում են հաղորդակցության միջոցները։ Ճանապարհները բացարձակապես դրաստային ուղիներն են»[52]։

Խարբերդի վիլայեթում, հատկապես Գողտի գավառում, «ճամբաները խիտ անհարթ վիճակի մեջ են, հազիվ կարելի կըլլա ճամբորդել այս երկրները շրջիններու միջոցով... ամբողջ տանջանքի մեջ միայն ուղի մը կա բնդ որ կարթով կընա ճամբորդվիլ, այն է Խարբերդի ճամբանն, սակայն այդ էլ տարվա մեջ համարյա յոթ ամիս ծածկված է բուք ու բորանով[53]։

Ճանապարհների անբարեկարգ վիճակի հետևանքով հաճախ ապրանքների գնումը ավելի էժան էր նստում, քան նրանց տեղափոխումը։ Օրինակ՝ Կարևս վիլայեթում շինափայտի արժեր չորս, իսկ նրա տեղափոխումը գեպի Տրապիզոն՝ 20 դուրուշ[54]։ Եռա հաճախ էլ ապրանքների տեղափոխումն այնքան երկար էր տևում, որ նրանց որոշ տեսակները ուղղակի փչանում էին ճանապարհին։

50 Տե՛ս «Մշակ», 1883, հոկտեմբերի 14։

51 Я. Д. Малама. Описание Эрзерумского вилайета. СПб, 1874, стр. 124.

52 Р. И. Термен. Отчет о поездке в санджак Хеккиари Ванского вилайета в 1906 году. Тифлис, 1910, стр. 68.

53 «Մշակ», 1893, ապրիլի 24, էջ 253։

54 Карлайль Мак Коан. Наш новый протекторат. Описание географических, этнографических свойств Турецкой Азии. Перевод с английского. М., 1884, стр. 258.

Թուրքական կառավարությունը չէր մասնակցում Արևմտյան Հայաստանում ուղղան սխտանիի զարգացմանը ու հողի բերքատվության բարձրացմանը, իսկ առանձին անհատների նեղկայացած ձեռնարկած նախագծերը ոչ պետանի հողերը ոռոգելու և յուրացնելու մասին մասնավոր էր անուշադրության։ Օրինակ՝ 1892 թ. շրջիցի Հարություն Թեչիբաշյանն առաջարկել ոռոգել Քոլիի Խոսրովդյուղից գեպի հարավ ընկած տարածությունները, յուրացնել 10—15 հազար օրավար հող, սակայն շրջապատի բնակիչներին և վիրացնել նրանց սակավահողությունը։ Սակայն իշխանությունները հաշվի չառան նրա արժեքավոր առաջարկությունը։ 1908 թ. բուրժուական հեղափոխությունից հետո Թեչիբաշյանը կրկին ուսյ քաշեց այդ հարցը, բայց դարձյալ միաց անպատասխան։

Ավելին. երբ դյուղացիները հաշող փորձեր էին կատարում դյուղատնտեսական մթերքների բերքատվությունը բարձրացնելու ուղղությամբ, դարձյալ պաշտպանության չէին ստանում իշխանությունների կողմից։ Այսպես, Վանի սանջակի դյուղերից մեկում Ջոնչյան Մկրտիչը, որը Հայտնի էր որպես մի ինքնուս, գործնական դյուղատնտես, կարողացել էր հասնել այն բանին, որ ցորենի մեկ արմատի վրա աճեցնում էր տասնյակ հասկեր։ Ականատեսը գրում էր, թե «նա շատ փորձեր և դյուտեր է արել ու անում է դեռ դանելու, ջրելու, հերկելու և այլ դժվարությունները վերացնելու համար... Նրա փորձերը ցույց են տվել, որ նույնպես գարնացա, տեսնելով նրա ցույց տված մի հասկի ցորենի արմատի վրա 50—70 լիք հասկեր[55]։ Բայց իշխանությունները անուշադրության մատնեցին Ջոնչյանի գյուտը և չտարածեցին այն։

Կառավարության վարած ֆինանսական քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում չարունակում էին գործել տարբեր չափերն ու կշիռները, գյուղական տարբեր միավորները։ Շատ տեղերում չկար մանր գրամ, և բնակիչները չէին կարողանում առևտուր անել։ Ա.-դոն գրում էր, որ իր շրջագայած վիլայեթներում «այնքան սակավ է գրամն բնդհանրապես և մանր գրամն առանձնապես, որ առևտուրը միանգամայն կաշկանդված էր։ Կարող եր երևակայել, որ հաճախ կամ գնողն է հրաժարվում գնումից և կամ խանութպանը՝ վաճառքից միմիայն այն պատճառով, որ գնողը մի ոսկին մանրացնելու համար մանր գրամ չի ճարվում և այս տեղի է ունենում շատ անգամ»[56]։

55 Հայկ Տեր-Մկրտչյան. Գյուղատնտեսության հարցը Վասպ. Թիֆլիս, 1910, էջ 2։

56 Ա.-Դո. Նշված աշխատություն, էջ 261։

Պետք է նշել նաև մաքսային ներքին պատնեշների առկայությունը, որը ձեռականորեն վերացավ 1874 թ.[57], իսկ փաստորեն՝ 1898 թ.[58]։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ կատարվության վարած այդ քաղաքականությունը բացասաբար էր անդրադառնալու արդյունաբերական կապիտալի առաջացման ու զարգացման վրա։ Ֆ. Էնգելսը նշում է, որ թուրքական, ինչպես և ասիական ցանկացած տերիտորիայության անհամամասնելի է կապիտալիստական հասարակության հետ։ Ձևը բերված հավելյալ արժեքը ոչնչով տարհավված չէ առարտայնների ու փաշաների գիշատիչ ձեռքերից. գոյության չունի բուրժուական ձեռնարկատական գործունեության առաջին հիմնական պայմանը—մանատական անձի ու սեփականության ապահովությունը»[59]։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտյան Հայաստանը լեռնա նրկիր է։ Նրա երկարությամբ՝ արևելքից դեպի արևմուտք համարյա իրար զուգահեռ ձգվում են երեք գլխավոր լեռնաշղթա՝ Պոնտական, Ներքին Տավրոսը և Հայկական կամ Արևելյան Տավրոսը։ Այդ լեռնաշղթաներից ու նրանց առորոտներից սկիզբ են առնում մի շարք գետեր, որոնք հոսում են տարբեր ուղղությամբ և թափվում Սև և Կասպից ծովերն ու Պարսից ծոցը։ Այսպես, Կարնո վիլայեթի Դյադուր լեռներից սկիզբ է առնում Ճորոխը (երկարությունն է 360 կմ), որը անցնելով Բաբերդի հարթավայրով, հոսում է Պոնտական լեռնաշղթայի երկայնքով և Բաթումիի մոտ թափվում Սև ծովը։

Սեբաստիայի վիլայեթի Կեղի-զադ լեռներից սկիզբ է առնում Ալիս (Ղզըլ-Իրմաղ) գետը (950 կմ), անցնում է Կեսարիայի հարթավայրով և թափվում Սև ծովը։

Կարնո վիլայեթի Մադկանց (Թլհադին) լեռներից սկիզբ է առնում Արևելյան Եփրատը (Արածանին կամ Մուրադը), անցնում է Ալաշկերտի, Մանազկերտի, Բուլանըխի, Մուշի ու Խարբերդի դաշտավայրով և Կեբսիմի մոտ խառնվում Արևմտյան Եփրատին (Կարա-սուին)։

Բյուրակն (Քին-Դյոլ) լեռնային զանգվածից սկիզբ է առնում Բյուրակը (Քին-Դյոլ սու), որը ոռոգելով բազմաթիվ արտավայրեր, խառնվում է Արևելյան Եփրատին։ Մազկավետ (Թումյու-զադ) լեռներից սկիզբ է առնում Արևմտյան Եփրատը, հոսում Կարնո և Երզնկայի դաշտավայրերով, Դերսիմի մոտ իր մեջ է ընդունում Արեվելյան Եփրատը և գոյացնում մեծ գետը (2800 կմ)։ Իսկ Եփրատը անցնում է Մալաթիայի դաշտավայրով, Տիգրանակերտի վիլայեթով և թափվում Պարսից ծոցը։

Հայկական Տավրոս լեռնապարից սկիզբ է առնում Տիգրիսը և հանելով Եփրատին՝ համարյա զուգահեռ, թափվում է նույնպես Պարսից ծոցը։ Այս գետի ամենամեծ վտակներն են հանդիսանում Արևելյան Տիգրիսը (Բոհտանը) և Մեծ-Զաբը, որոնք սկիզբ են առնում Վանի վիլայեթի հարավ-արևելյան բարձունքներից։

Բյուրակն լեռներից սկիզբ է առնում Արաքսը կամ Երասխը, անցնում է Արևելյան Հայաստանով ու Ադրբեջանով և թափվում Կասպից ծովը։

Արևմտյան Հայաստանի լճերից նշանավոր է Վանա լիճը, որը գտնվում է ծովի մակերևույթից 1720 մետր բարձրության վրա և զբաղեցնում է 3690 քառ. կմ. տարածություն։ Նրա երկարությունն է 12 կմ, իսկ լայնությունը (ամենալայն տեղը) 50 կմ։ Վանա լիճը շրջապատված է արևմուտքից՝ Նեբրոյի, արևելքից՝ Վարագա լեռներով, հյուսիսից՝ Նեխ-Մասի (Սիփան) զանգվածով, իսկ հարավից՝ Հայկական Տավրոսով։ Բացի Վանա լճից, կան նաև մի շարք փոքր լճեր, որոնցից են՝ Ծովքը (Գյոյջուկը, Խարբերդի վիլայեթում), Արճակը, Նազիկը (Վանի վիլայեթում), Գայլատունը (Կարնո վիլայեթում), Ջարիշատը (Ջրլըքը, Կարսի մարզում) և այլն։

Արևմտյան Հայաստանը հարուստ է բազմաթիվ օգտակար հանածոներով՝ երկաթով, պղնձով, նավթով, ոսկով, արծաթով և այլ թանկարժեք մետաղներով։ Այսպես, երկաթի հանքեր կան Սեբաստիայի վիլայեթի Կեղի-զադ լեռներում, Դիվրիգի կազայում, Արղնի-Մադենի սանջակում, Մուշի Կոնտեմիր ու Ալաղազ սարերում, Սասունի Տալվորիկ նահիեում և Երզնկայում, պղնձի հանքեր՝ Մալաթիայի, Արղնի-Մադենի, Սղերդի սանջակներում, ինչպես նաև Կարկառ, Կաթնկան և Կեցան գավառներում։ Ոսկու և արծաթի հանքերը գրանվում են Արղնի-Մադենում ու Երզնկայում, քարածխի հանքերը՝ Բայազետում ու Նորդուզում, նավթի հանքերը՝ Կարնո սանջակում ու Բերկրիի գավառակում, ադամանդները՝ Ջաբանջակում, Մուշի, Կարնո, Կարսի սանջակներում և Վանի վիլայեթի լճափնյա մի շարք

57 «Մշակ», 1874, փետրվարի 21։
58 Ю. А. Петросян. Указанное сочинение, стр. 23.
59 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 22, стр. 33.

դյուզերում, հատկապես Ջանիկում։ Երիքը հարուստ է նաև հանքային ջրերով ու ծծմբաջրանքերով։ Գ. Արծրունին գրում էր. «Ամբողջ Հայաստանը լի է հանքային ջրերով և հանքերով։ Եթե տնչ մարդ ցուշակել կարող է, որ գեանի տակ պահված են հարուստ հանքեր, որովհետև ամեն բալլափոխում հոսում են առատությամբ հանքային ջրեր»[1]։

Արեւմտյան Հայաստանը հարուստ է նաև արոտավայրերով ու դաշտերով, որոնք փսված են նրա լեռների լանջերին ու սարահարթերին։ Արոտավայրերից իրենց բնույթությամբ ու արդյունավետությամբ աչքի են ընկնում հատկապես Բյուրակնը (Բինգյոլը), Նեմրութի լճակերը և Տարոնի ու Գեղամի բարձունքները, իսկ դաշտավայրերից՝ Կարինը, Երզնկան, Բասենը, Այաշկերտը, Աբաղայի գաշտը, Մուշը, Խարբերդը, Հարբին կամ Բալուները, Ամիդը կամ Տիգրանակերտը և այլն։ Ուղեորները Թոգիլ են հետաքրքիր նկարագրություններ այդ արոտավայրերի ու դաշտավայրերի մասին։ Ահա դրանցից երկուսը. «Գեղամ և սահմանը խիստ գեղեցիկ է։ Գինեցի գալարահեղ տեսքը։ Նա բոլորովին ծածկված կերևի կանաչագեղ գալարեաց և հրինեղանգ բազմագույն անթիվ ծաղիկներու նկարեն գորգով, որոնք առույգ սնունդ մը կառնուն ոչ միայն վճիռ երկնից ցոգովն և ներքին ոգոյ գոլությամբ, այլ և Եզեմական հազարավոր ազբերաց ակնավճիռ կայլակներն բղխելով կարբնշացնեն իրենց այցելուները, այնպես որ կսկսին զանիկա երկրավոր դրախտ մը զաւանիլ»[2]։

Ա-դոն գրում էր, որ Մուշի դաշտն ընկած է երեք հսկա լեռների միջեւեղը, որոնք «տալիս են նրան մի գեղեցիկ տեսք։ Քամբեցեկ նրան շրջապատող լեռներից որը կամենաք, բարձրացեք նրա վրա և այդտեղից դիտեցեք այդ օրհինալ բնությունը։ Հորիզոնը չորս կողմից ներկայացնում է կատարների մի բոլորակ շղթա, այդ կատարները գլխիվայր իջնելով, գալիս օղակի պես բոլորում են սերուն դաշտը. երկու կնանի՝ Նեմրութն ու Մոկսոլորը դրսաստեղծ ակռաներով գաշտը, գալիս խառնվում են իրար և իրրև մարգամեն, բեկ-բեկուն գծում են հարթ մակարդակը, իսկ այդ բոլորին, իրրև մի նոր գեղեցկության հիմիկ հարթության վրա օազիսի պես բնկած են Մուշի դաշտի բազմաթիվ գյուղերը։ Նայում եք բնության առեղծած այդ գեղեցիկ տեսարանին, նրա հմայիչ պատկերներով հափշտակվում եք այնքան ժամանակ, մինչև որ այդ երկրում տիրող կարգերի տխուր հիշողություններ գալիս են բնդհատելու այդ հմայիչ տպավորություններդ»[3]։

Արեւմտյան Հայաստանի կլիման խիստ տարատեսակ է։ Տարվա միևնույն եղանակին միևնույն միկրոկլիմայի մի վայրում համարյա չրան է հասնում ամեռը, իսկ մյուսում դեռ շոգ ամառ է։ Երզնկայի Սասունի Անգոկ լեռները ամառ ու ձմեռ պատած են հավիտենական ձյունով, մինչդեռ նրանց տարրատեղում՝ Մուշի դաշտում ամռով են խաղողն ու թուզը, խնձորն ու տանձը։ Կարնո առնչակում ամառներ հով, իսկ Հաճընո ցուրտ է, իսկ Թոքիսումում՝ շոգ։ Ա-դոն գրում էր, որ երկրի «շրջանները, դավառները և նույնիսկ գյուղատեղերը, առանձին-առանձին վերցրած, կլիմայական տեսակետից այնպես են տարբերվում միմյանցից, որ մարդ մի կեռում իրեն զգում է ձյերբյան ցուրտ երկրներում, իսկ գրանից ոչ հեռու մի այլ կեռում տապակվում ու խաշվում է ամբեցյալ գոտիներին հատուկ տապից»[4]։

Երկրի բնակլիմայական այդ պայմանները հնարավորություն էին ստեղծ մշակելու բնագրական տարածություններ և ամենևնելու գյուղատնտեսական տարատեսակ կուլտուրաներ։ Սակայն տիրապետող քաղաքական ու անտեսական կարգերի հետևանքով մշակվում էր նրա հողային ամբողջ ֆոնդի սակ փոքր մասը։ Այդ երևում է 1913 թ. վիճակագրող հետևյալ տվյալներից[5]։

Վիլայեթները	Տարածությունը (քառ. կմ.)	Մշակվող հողերի տարածությունը (քառ. կմ.)	Տնկատային հարաբերությամբ
Սեբաստիայի	62.100	4.200	6,76
Կարնո	49.000	3.000	6,12
Տիգրանակերտի	37.500	3.000	8,00
Բազեշի	27.100	2.500	9,22
Խարբերդի	32.500	1.500	4,55
Վանի	39.000	700	1,79

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ մշակվող տարածությունը կազմում էր Բազեշի և Տիգրանակերտի վիլայեթներում 8—9, Կարնո և Սեբաստիայի վիլայեթներում՝ 6—7, Վանի և Խարբերդի վիլայեթներում՝ 2—4, իսկ ամբողջ Արևմտյան Հայաստանում՝ մոտ 6 տոկոսը։

1 Գ. Արծրունի. Թուրքաց Հայերի ներկայական դրությունը. Բիֆլիս, 1894, էջ 6։

2 «Մասիս», 1882, մարտի 29։

3 Ա-դո. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Նյութեր, 1913, էջ 98։

4 Ա-դո. Նշված աշխատությունը, էջ 4—5։

5 Տե՛ս И. Бутаев. Проблемы Турции, Л., 1925, стр. 44.

Վիլայեթները մշակվող հողերի վրա ցանում էին ցորեն, գարի, վարսակ, բրինձ, բամբակ ու բազմաթիվ այլ կուլտուրաներ և աճեցնում զանազան մրգեր ու հատապտուղներ։ Գ. Ժուկովսկու բերած տվյալներով, 1927 թ. Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում գյուղատնտեսական ներքնահիշյալ կուլտուրաների տակ զռնդ-ժում էր հետևյալ տարածությամբ մշակելի հող[6]։

Վիլայեթները	Հացահատիկ		Բանջարեղեն		Տեխնիկական		Այգեղ	
	հազ. հեկտ.	%	հազ. հեկտ.	%	հազ. հեկտ.	%	հազ. հեկտ.	%
Վանի	72,1	95,37	0,3	0,42	2,05	2,72	1,1	1,46
Կարնո	334,3	98,99	3,1	0,90	0,1	0,04	0,3	0,07
Բաղեշի	244,1	94,63	1,9	0,73	3,1	1,21	8,8	3,43
Մեզրեսթյան	392,7	92,53	9,1	2,18	5,4	1,26	17,3	4,08
Տիգրանակերտի	249,4	81,08	10,9	3,55	8,8	2,86	38,5	12,51
Խարբերդի	134,1	73,58	5,1	2,83	16,5	9,03	26,6	14,56

Աղյուսակը ցույց է տալիս, որ երկրի մշակվող հողերի մեծ մասի վրա ցանվում էր հացահատիկ, իսկ այգիների, բանջարա-բոստանային և տեխնիկական կուլտուրաների տարածությունները փոքր էին։

Իհարկե, առաջին համաշխարհային պատերազմը քայքայեց Արևմտյան Հայաստանի տնտեսությունը, կրճատեց գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածություններն ու նրանց արտադրությունը, բայց հացահատիկի հարաբերությունը մյուս կուլտուրաների նկատմամբ, այնուամենայնիվ, չփոխեց։

Սակայն աղյուսակը տալիս է ընդհանուր տեղեկություններ։ Մենք պետք է ավելի կոնկրետ պարզենք գյուղատնտեսական յուրաքանչյուր կուլտուրայի շրջանը։ Վիճակագրական տեղեկությունների բացակայության պատճառով, կատարելու ենք այդ բանը ժամանակակիցների և ականատեսների հաղորդած բազմաթիվ վկայությունների հիման վրա։

Սկսենք հացահատիկից։ Կարնո վիլայեթում հացահատիկի ցանքատարածություններով ալքի էին բռնում Կարնո, Երզնկայի և Ղարսի սանջակները[7], ինչպես նաև Բասենը, Ալաշկերտի հովիտը, Հարաքիլիսեն և Դիդըջանի գետահովիտները[8]։

Բաղեշի վիլայեթում հացահատիկի արտադրության շրջաններ էին հանդիսանում Բաղեշի սանջակի Ախլաթ և Մուշի սանջակի Բուլանըխ ու Մանազկերտ կաղաքները։ Գ. Սրվանձտյանցը հիշատակում էր, որ Մանազկերտում և Բուլանըխում հողը սքանչելի է «արգասաբերությամբ ցորենով, գարով ու խոտի և ադեկ մշակված»[9]։

Վանի վիլայեթում հացահատիկի արտադրությամբ ալքի էին բռնում Բերկրիի, Կարճկանի, Գավաշի, Ալջավազի, Արճակի, Թիմարի, և Հայոց Ձորի կազաներն ու նահիեները։ Դրանցից նշանավոր էին հատկապես Ալջավազը և Արճեշը, որոնք հանդիսանում էին նահանգի հացի շտեմարանները[10]։

Խարբերդի վիլայեթում հացահատիկի արտադրության կիսավոր կենտրոնը հանդիսանում էր Խարբերդի դաշտը, որը մեկ կագմում էր նույնանուն կուսակի ամբողջ տարածության $^1/_3$ մասը, բայց տալիս է նրա հացի արտադրության մոտ 74%-ը[11]։

Տիգրանակերտի վիլայեթում հացահատիկի արտադրությունը համեմատաբար զարգացած էր Բալուի կազայում, որտեղ մշակվող հողերի մոտ 65%-ը օգտագործվում էր ցորենի, իսկ 13%-ը՝ գարու ցանքսերի համար[12]։

Մեզրեսթյանի վիլայեթում հացահատիկի արտադրությամբ աչքի էին բռնում համարյա բոլոր նախալեռնային շրջանները, բայց ավելի շատ՝ Քոթատի սանջակի Զիլի և Նիքսար կազանները[13]։

Բրինձ ցանում էին Կարնո վիլայեթի Քարթոսի նահիեում, Վանի վիլայեթի Ջալամերկ կազայի ցածրադիր շրջաններում, Մուշի սանջակում և Խարբերդի դաշտում։ Նրա ցանքատարածությունները կազմում էին երկրի մշակվող հողերի խիստ աննշան մասը։ Գյուղացիները տերեսպահող կարգերի ու բարքերի հետևանքով խուսափում էին ընդարձակել դրանք։

---

[6] *Տե՛ս* **П. М. Жуковский.** Земледельческая Турция, под редакцией акад. Н. И. Вавилова. М.—Л., 1933, стр. 152.

[7] **Я. Д. Малама.** Средства продовольственные, фуражные, перевозочные и денежные северо-восточной части азиатских владений Оттоманской империи. Тифлис, 1876, стр. 6—10.

[8] *Տե՛ս* Նույն աշխատությունը, էջ 175, 186, 211։

[9] Գ. Սրվանձտյանց. Ճամով հետ, Կ. Պոլիս, 1884, էջ 100։

[10] *Տե՛ս «Մուրճ», 1904, № 3, էջ 37, 47։*

[11] **А. М. Колюбакин.** Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. III, ч. 1, отд. 2-й, стр. 423.

[12] Նույն տեղում, էջ 128։

[13] **А. И. Гиппиус.** Вилает Сивас и сеть путей к западу от Эрзерума. Тифлис, 1890, ч. 1, стр. 9, 25—26.

Արևմտյան Հայաստանում երկրագործության կարևոր հյուղ էր հանդիսանում նաև այգեգործությունը։ Կարնո վիլայեթում նրանով հայտնի էին Քոթմումի, Սալեմի և Կիսկիմի կազանները։ Ա-ոն գրում էր. «Մեծ Բասենը հանդիսանում է էրզրումի հացի շտեմարանը, Քոթմումը հանդիսանում է մրգեղենի շտեմարանը»[14], իսկ Կիսկիմում կան գյուղեր (օրինակ՝ Կոմբրուկը), որոնց խաղողի այգիներն ու պտղատու պարտեզները կազմում են բնակիչների «ապրուստի գլխավոր ապրյուրներից մեկը»[15]։

Վանի վիլայեթում այգեգործությունը տարածված էր Շատախում, Աբաճեցում, Այրարատում, Ջուլամերկում, Ոստանում և հատկապես Վան քաղաքում, որի Այգեստան թաղամասում աճում էին խնձորի ու տանձի ամենատարբեր տեսակներ՝ վաղահաս, մեղրուկ, ձնենուկ, պոկոշ, մարտիրոս, շալաբեկ, մոկաց, մալաշիկ, մեղեդիկ, նռենկ, մալաքի և այլն։ Գ. Սրմաճյանցը գրում էր. «Մալաշին պատիվ ունի անվանիլ տանձից արքա, քն իր համեղությամբ և քն մեծությամբ», իսկ խնձորի տեսակներից գալատիկը «կրնա պարծիլ իրրև քաղաքի բոլոր մրգեղինաց, որ իր վրա կկրե ամեն տպավորական հատկություններ. մեծ, կարմիր, նրբակեղև, անուշահոտ և սաստիկ ախորժահամ»[16]։

Բաղեշի վիլայեթում այգեգործությամբ զբաղվում էին Բաղեշի, Մուշի, Սղերդի և Գենջի սանջակներում։ Հատկապես Սղերդի սանջակի Բերմարի, Խարզանի և Երբմանի կազաներում աճում էր խաղողի «այնպիսի բազմ տեսակ, որ շաբաթ պատվան կրնար դիպչիլ»[17]։

Տիգրանակերտի վիլայեթում այգեգործությունը տարածված էր Արղնի-Մադենի սանջակում և Բալուի կազայում։ Գ. Սրմաճյանցը նշում էր, թե Արղնի-Մադենի բնակիչներն աճեցնում են «խաղողը այնքան ազնիվ և այնքան շատ, որո նման հայաբնակ գավառաց մեջ չկա տեղ մը, չդիտեմ ինչո՞ւ Արղնո գավառ կոչած են և ոչ՝ խաղողու Դեղին, սև, կարմիր, սպիտակ խաղողներ, խոշորահատ, անուշահոտ, մեղրաժորան, որ սոսինձի պես կը փակչի ատոցին մատները, նրբամորթ, ակավակատ, մատու Ջատ է դինու

14 Ա-ոն, նշված աշխատությունը, էջ 201։
15 Նույն տեղում, էջ 198։
16 Գ. Սրմաճյանց. Տանեան, Կ. Պոլիս, 1876, էջ 99—100։
17 Մ. Միրախորյան. Նկարագրական տեղեկություն ի հայաբնակ գավառս Արծկեայ Տանկատանեաց, Կ. Պոլիս, 1884, մ. Ա, էջ 53։

խաղողն, որ նույնքան առատ է և պատվական չուր գուշն ու համբո»[18]։

Խարբերդի վիլայեթում բնակիչները այգեգործությամբ զբաղվում էին Խարբերդի և Մալաթիայի սանջակներում։ Նրանք աճեցնում էին «բառիր մրգեր՝ խաձ, մրշմրշ, որը փոքր, բայց համեղ ծիրան է, ցեղ-ցեղ տանձեր և խնձորներ, խոշորահատ խաղող և շամիշ... խաչան և սև սալոր և այլն, որոց շորացած չիրները շատ երկրներ ծանոթ են»[19]։

Անհրաժեշտ է նշել, որ բնակիչները այգեգործության հետ զուգընթաց համարյա ամենուրեք զբաղվում էին նաև բանջարաբուծությամբ՝ ձմերուկի, սեխի, դդումի, կաղամբի, վարունգի, գազարի, բոզկի, շաղգամի մշակմամբ։ Նրանցից յուրաքանչյուրը համեմատաբար զարգացած էր երկրի տարբեր շրջաններում։ Օրինակ՝ Տիգրանակերտի վիլայեթում հայտնված էին ձմերուկն ու սեխը, իսկ Կարնո վիլայեթում՝ կազամբը, շաղգամը, կարտոֆիլը, բակլան, սիսեռը, սոխը, չուշման և այլն։

Երկրի որոշ շրջաններում գյուղացիները հացահատիկին ու բանջարեղեններին ավելացնում էին նաև յուղատու բույսեր (կտավատ, մուշ, պտուտի, բանջում և այլն), որոնցից հանում էին յուղ և օգտագործում ինչպես սննդի մեջ, նույնպես և վառելու համար։

Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության մեջ որոշ տեղ էր բռնում նաև անասնապահական կուլտուրաներն՝ բամբակենու, շերամի, ծխախոտի, հաշիշի և մարենի մշակությունը։

Բաղեշի վիլայեթում բամբակենին աճեցնում էին Մուշի սանջակի Բերդակ հատվածում, իսկ Կարնո վիլայեթում՝ գետազանցային Երզնկայի հարթավայրում և ափսուրում տարեկան մոտ 5000—7000 փութ[20]։

Սակայն բամբակենու մշակության գլխավոր կենտրոնները հանդիսանում էին Խարբերդի և Տիգրանակերտի վիլայեթները։ Խարբերդի վիլայեթում այն մշակվում էր Խարբերդի գաշտում և Դերսիմի սանջակի Չարսանջակ կազայում, իսկ Տիգրանակերտի վիլայեթում՝ Բալուի կազայում։ 1886 թ. Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Խարբերդի գաշտում բամբակի ցանքատարածությունները բնդգրկում են պիտանի հողերի մոտ 20%—30%-ը, իսկ Բալուի կազայում՝ 15%-ը[21]։ Վերջինում բամբակագործությունը զարգա-

18 Գ. Սրմաճյանց. Բերդս ազգաբ, մ. Բ, էջ 185։
19 Նույն տեղում, մ. Ա, էջ 323։
20 Я. Д. Малама. Описание Эрзерумского вилайета. СПб, 1874, стр. 109.
21 А. М. Колюбакин. Материалы..., т. III ч. 1, отд. 2-й, стр. 138, 444.

ցած էր հատկապես Մադուսի նահիկում, որը տալիս էր ամբողջ արտադրանքի մոտ 70%-ը[22]։ Բամբակի մշակությամբ զբաղվում էին գլխավորապես հայերը, անհամեմատ քիչ՝ թուրքերը և ավելի քիչ՝ քրդերը»[23]։

Շերամապահության գլխավոր կենտրոնները հանդիսանում էին Տիգրանակերտի և Խարբերդի վիլայեթները։ Նրանցից առաջինում բնակիչները շերամապահությամբ զբաղվում էին վաղուց, իսկ երկրորդում՝ սկսեցին զբաղվել XIX դարի 70—80-ական թվականներից։ Մեզբերեում ու Խարբերդում մետաքսագործության զարգացման և Տիգրանակերտից Մալաթիա տանող ճանապարհի բարելավման հետևանքով։

Բաղեշի վիլայեթում գյուղացիները զբաղվում էին շերամապահությամբ Մասունի կազայում, հատկապես նրա Խիանք և Խուլփ գյուղերում, ինչպես և Տալվորիկի Ձորերում[24]։

Կարնո վիլայեթում շերամապահությամբ չէին զբաղվում, իսկ Վանի վիլայեթում՝ այնքան քիչ, որ Ներսիկի խոսքերով ասած՝ «մինչև անգամ շարժն հիշել»[25]։

Մեսոպոտամի մշակության գլխավոր կենտրոնները հանդիսանում էին Բաղեշի ու Մուշի տանջակները, Ջուլամերկի ու Շամդինանի կազաները, Կարնո ու Երզնկայի տանջակները, ինչպես նաև Կապան-Մադինի կողան և Դիարբեքիր տանջակը[26]։

Հաշիշը մեծ զորեմ Արևմտյան Հայաստան XIX դարի երկրորդ կեսում. Վանում՝ 1854 թ., Մալաթիայում՝ 1860 թ., Խարբերդում՝ 1876 թ., Երզնկայում՝ 1878 թ. և այլն[27]։ Բայց նրա արտադրության գլխավոր կենտրոնները հանդիսացան Խարբերդի և Մալաթիայի տանջակները։ Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ Մալաթիան տալիս է «աֆիոն՝ թխա քնիր անուկի»[28], իսկ Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Խարբերդի կազայում հաշիշը «կազմում է արտահանության խոշորագույն առարկաներից մեկը»[29]։

22 Տե՛ս А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 160.

23 Նույն տեղում, էջ 138։

24 Տե՛ս «Մշակ», 1895, մարտի 16, Ա–դր, նշված աշխատությունը, էջ 132—133։

25 «Մուրճ», 1904, № 3, էջ 51։

26 Տե՛ս Ф. Грязнов. Военный обзор передового театра в Азиатской Турции, Тифлис, 1897, ч. II, стр. 152. Ս. Միրախորյան. Նկարագրական ուղեգրություն..., մ. Ա, էջ 113։ Я. Д. Малама. Описание..., стр. 110.

27 Տե՛ս «Մասիս», 1857, սեպտեմբերի 8, 1880, նոյեմբերի 4, 1881, մարտի 29։

28 Գ. Սրվանձտյանց. Ճանապարհ, մ. Ա, էջ 323։

29 А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 448.

Արհեստական հայաստանյան գյուղացիները երկրագործության հետ զուգընթաց զբաղվում էին նաև անասնապահությամբ՝ որոշ տեղերում՝ շատ, իսկ մյուսներում՝ քիչ չափերով։

Կարնո վիլայեթում անասնապահական գլխավոր շրջաններ էին հանդիսանում Կարնո, Բայազետի և Խնուսի սանջակները. հատկապես հաշակված էր Բյուրակնը, որի մասին Ա.-դոն գրում էր. «ոչ մի լեռնային շրջան չի կարող համեմատվել այնպիսի հարմար վայր հանդիսանալ, ինչպիսին է Բինգյոլյան շրջանը։ Դա մի մեծ լեռնաղարխա է իր արոտներով և հովատան խոտատեղիներով. ժողովրդի մեծագույն մասը գլխավորապես քրդերը, պարապում են խաշնարածությամբ»[30]։

Վանի վիլայեթում անասնապահությունը համեմատաբար զարգացած էր Վանի սանջակի Նորգույղ, Խոշաբ, Ադրակ, Կավրկան, Շատախ, Կաթկան, Մոկս և Արճեշ կազաներում ու Նահիևներում և Հեքյարի սանջակի Ջուլամերկի կազայում։ Գ. Սրվանձտյանցը նշում էր, որ Նորգույղի «յուղն ու պանիրը, կաթն ու մեղրը, ոչխարն ու կովը շատ անվանի են բոլոր այդ կողմերը (այսինքն՝ Ջուլամերկում, Խոշաբում և Շատախում—Ա. Հ.), որպես է Բինգյոլինը՝ Մշո և Կարնո կողմերը։ Այդ առատության և համեղության կողմանց շնորհիվ արոտին, օդին և ջրին»[31]։

Իսկ Միքրախորյանը հիշատակում էր, որ Կաթկանում կան «հարյուրավոր պաշարտ ոչխարներ, մեծամեծ դմակներով ծանրացյալ։ Յուրյանց հոտերու մեջ, զոր կախ կանվանեն, կը գտնվին հրթեմն այնպիսի ոչխարներ, որոց յուրաքանչյուրի դմակը 10—15 օխայի կշիռ ունի, զոր ոչխարը շատ անգամ յուր ետևեն չկրնար քաշել, որս համար կը գործածեն սայլակներ, որս դրած կը կապեն, որով այդ սուրբ կենդանին գյուղերյուն կունենա յուր բոլոր առաջ տանելուս»[32]։

Բաղեշի վիլայեթում անասնապահության գլխավոր շրջաններ էին հանդիսանում Խիզանի կազան և Սասունի ու Բուլանըխի լեռնային շրջանները, Խարբերդի վիլայեթում՝ Դերսիմը, իսկ Սերաստիայի վիլայեթում՝ Սերաստիայի սանջակը, որտեղ Ա. Ի. Գիպիուսի վկայությամբ, «ուժեղ զարգացած էր ոչխարարությունը»[33]։

30 Ա–դա, նշված աշխատությունը, էջ 182։

31 Գ. Սրվանձտյանց, Ճամփ Հայոց, էջ 66—67։

32 Մ. Միրախորյան, Նկարագրական ուղեգրություն, մ. Ա, էջ 99։

33 А. И. Гиппиус. Указанное сочинение, стр. 29.

Անցնելով գյուղատնտեսական արդյունքների արտադրությանը, անհրաժեշտ ենք համարում ամենից առաջ նշել, որ թեև աղբյուրներում և գրականության մեջ հաճախ հանդիպում ենք այդ մասին որոշ տվյալների, սակայն դրանք մեծ մասամբ անարժանահավատ են, քանի որ բերված են թուրքական «սալնամեներից», որտեղ իշխանությունները, ինչպես արդեն ասվեց, ձգտելով վերցնել գյուղացիներից հնարավորինս շատ հարկեր, նրանց բերքը կամ անասունների գլխաքանակը նկարագրել են անհամեմատ շատ, քան եղել են իրականում։ Այսպես, 1875 թ. Կարսի սանջակում, բացի «սալնամեի», 36622 գյուղացիական անասնագլուխներ արտադրել են 5.702.166 փութ միայն ցորեն[34], նրանից բնությունից, որ գրա կիսի չափ էլ նրանք արտադրել են գարի[35], ապա կստացվի մոտ 8,3 միլիոն փութ ցորեն ու գարի։ Բանանելով այդ տվյալը անասնագլուխների վրա, կգտնենք, որ յուրաքանչյուրին կհասնի ավելի քան 232 փութ, կամ յուրաքանչյուր անձին (բնակչությունից, որ յուրաքանչյուրը անասնագլուխ բազկացած էր 7 չնչից[36])՝ 33,1 փութ։ Մինչդեռ նմանատիպ Թուսապատի հայկական շրջաններում, որտեղ գյուղացիները ունեին ավելի շատ հող, շահագործվածության, անձի և գույքի ապահովության, քան Կարսո սանջակում, բա Վ. Ի. Լենինի բերած տվյալներից, այդ նույն ժամանակաշրջանում յուրաքանչյուր շնչին հասնում էր մոտ 20 փութ հացահատիկ[37]։ Այդպիսի տարբերությունը պարզապես անհամեմատելի է։

Թուրքական հյուպատոսների ու փոխհյուպատոսների, ինչպես նաև Վիտալ Քինեի բերած տվյալները նույնպես անարժանահավատ են, քանի որ նախ՝ վերցված են մեծ մասամբ թուրքական «սալնամեներից»[38] և ապա՝ հակասում են միմյանց։ Այսպես,

34 Я. Д. Малама. Средства продовольственные..., стр. 10.

35 Այդ նպատակի համար մենք կարող է ծառայել այն փաստը, որ 1871 թ. նույն սանջակում արտադրվել է 4.344.789 փութ ցորեն և 2.482.709 փութ գարի (տե՛ս Я. Д. Малама. Описание..., стр. 109)։

36 Տե՛ս Ա–գրա, նշված աշխատությանը, էջ 225։

37 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 3, էջ 397 (բնագրերով՝ 1 չհավ.=8 փթի)։

38 Ֆ. Գրյազնովը գրում էր, որ Վ. Քինեի երկերում բերված թվերի համարյա նշգրիտ համընկումը թուրքական սալնամեների տվյալներին՝ էրզրումի վիլայեթի վերաբերյալ, իրավունք է տալիս նպատակ ունենալու, որ Վ. Քինեն մյուս վիլայեթների նկատմամբ իրեն թուրքական պաշտոնական աղբյուրներից Հայաստանի հետազոտող էր, որ Վ. Քինեի անասնապահության մասին տված տեղեկությունները լրիվ չեն համապատասխանում իրականությանը, բնդ որում նրա

1880-ական թվականներին ներքոհիշյալ սանջակներում յուրաքանչյուր շնչին միջին հաշվով արտադրվել է[39].

Սանջակները	Հաս Վ. Քինեի բերած տվյալների	Հաս Ծննեանի բերած տվյալների
Կարս	19,8 փութ	38,9 փութ
Երզնկայի	20,1 փութ	41,8 փութ
Բայազետի	30,2 փութ	74,2 փութ

Ինչպես տեսանում ենք, տարբերությունը մեծ է[40]։

Իրերի նման վիճակը հարկադրում է մեզ խուսափել այդ տվյալներից և դարձյալ վերցնել ժամանակակիցների ու ականատեսների հաղորդած մասնավոր վկայություններ։

Հացահատիկի արտադրությունը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, հատկապես ռուս-թուրքական պատերազմից և 90-ական թվականների հայկական ջարդերից հետո, կրճատվում էր։ Այսպես, 1907 թ. Կարսո ռուսական դիվանագիտական գրասենյակը գրում էր, որ հացահատիկների բերքը նախորդ տարիների համեմատությամբ քիչ է եղել. Բասենում՝ 45%-ով, Թուրխանեում՝ 50%-ով, Օվաջի հովտում՝ 25%-ով, Բարթրդում՝ 30%-ով, իսկ Ենուսում և Բայազետում նրանց ցանքատարածությունները կրճատվել են 20%—60%-ով[41]։

1908—1909 թթ. Վանի ռուսական փոխհյուպատոս Ռ. Տիրմենը նշում էր, որ Վանի վիլայեթում բնակչությունը, նեղության կրելով բոլոր բաներից, հազ չի տանում իր ցանքատարածությունների ընդարձակման ուղղությամբ, «այլ սահմանափակում է այնպիսի տարածություններով, որոնք կրավարարին նրա ապառնան կարիքները»[42]։

մի փոքրամ նրանք իրոք որոշ չափով չափազանցնում են, մյուսում՝ բնչնափոխում, բյացնում են իրականությունը» (տե՛ս նրա նշված աշխատությանը, էջ 181—182)։

39 Տե՛ս Ф. Грязнов. Указанное сочинение, стр. 138—139.

40 Այդ տարբերությունը մեծ է նաև նրանց անասնագլուխների մասին բերած տվյալներում. Օրինակ՝ Բայազետի սանջակում, բա Վ. Քինեի, 1880-ական թվականներին յուրաքանչյուր 100 հոգուն հասնում էր մեկը հաշվով 280 գլուխ, իսկ բա Ա. Մ. Կալյուժնիի՝ 180,7 գլուխ խոշոր եղջերավոր անասուն (նույն տեղում, էջ 155)։

41 Թուրքական արտաքին բաղաքականության արխիվ, ֆ. «Հնդկաստանություն» Կ. Պոլսում», 1907, գ. 2675 ա, թթ. 60—61։

42 Վրացական ԱՍՍ գիտությունների պետական պատմական արխիվ, ֆ. 521, ող. 2, գ. 452, թ. 78, գ. 492, թ. 272, տե՛ս նաև ԱՔՔՈ, «Հնդկաստանյան Պոլսում», 1908, գ. 1595, թ. 55։

Հավանական է, որ հացահատիկների ցանքերի ու արտադրության կրճատումը ավելի կամ պակաս չափերով տեղի էր ունենում նաև երկրի մնացած վիլայեթներում։

Բացի հացահատիկից, քշանում էր նաև այգեգործական արդյունքների՝ հատապտուղների ու մրգերի արտադրությունը։

Ա-գոն նշում էր, որ Մուշի դաշտում հնձվը միանգամայն ձեռք է վերցրել բոստաններ ու այդիներ մշակելու զբաղմունքից. նրա վրա այնքան ապօրինի տուրքեր են բարդել, որ այդին ու բոստանը ոչ միայն օգուտ չեն բերի, այլև պատճառ կդառնան տերոջ գլխին»[43]։

Բամբակի արտադրությունը 1850-ական թվականներին զբաղեցվում էր լճացման ու քայքայման վիճակում։ 1860-ական թվականներին Թուրքական կառավարությունը ձեռնարկից մի շարք միջոցառումներ՝ նրա զարգացման ուղղությամբ։ 1862 թ. հրատարակից օրենք՝ բամբակագործներին աշխարից ազատելու մասին, 1863 թ. թույլատրից առանց մաքսի ներմուծել բամբակագործ մեքենաներ, իսկ 1866 թ. գյուղացիներին ձրի բաժանից ամերիկյան բամբակի սերմեր։ Շնորհիվ այդ միջոցառումների, ինչպես նաև Ամերիկայում բռնկված քաղաքացիական կռիվների, բամբակի արտադրությունը Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում որոշ չափով աճեց։ Սակայն երբ Ամերիկայում վերջացան քաղաքացիական կռիվները, նրա բամբակը նորից ոտղոց եվրոպական շուկան և եվրոպացի տեքստիլ ապրանքները թափանցեցին Թուրքիա, ընդհուպ մինչև նրա արևելյան մասերը և դուրս մղեցին տեղական տեքստիլ արդյունաբերությունները, բամբակի արտադրությունը Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում սկսեց քշանալ։ Օրինակ՝ 1901 թ. մի թղթակից գրում էր, որ Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում բամբակի «արտածումը տարվե տարի կտրկտի, 16 միլիոն լիտրամեն 9 միլիոնի իջած է»[44]։

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերի արտադրության հետ մեկտեղ կրճատվում էր նաև նրա երկրորդական ճյուղերի արտադրությունը (կտավատի, կանեփի և այլ կուլտուրաների)[45]։

43 Ա-գո, նշված աշխատությունը, էջ 102։

44 «Բյուզանդիոն», 1901, հունվարի 29։

45 1897 թ. ականատեսներից մեկը նշում էր, որ Վանում մի ժամանակ գործել տասնյակ ձեռնոցներ, իսկ այժմ մնացել են 8—10-ը։ Գիշերօթիկները գնալով «մեջտ պակսելու վրա էին» («Բյուզանդիոն», 1897, մարտի 17)։ Մի այլ տեղեկա-

Ներամապահովիչությունը Արևմտյան Հայաստանում XIX դարի 50-ական թվականներին սկսեց որոշ չափով աշխուժանալ[46]։ Սակայն 60-ական թվականներին շերամաորդի հիվանդության պատճառով այն ինչպես ամենուրեք երկրներում, նույնպես և Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում սրապորեն գնում է դեպի անկում։ 1864 թ. ականատեսներից մեկը գրում էր. «Ոմանք իրենց շերամներ բոլորովին թափեցին, ոմանք ալ հազիվ 55 կամ 40% գոս բաժան կրցան առնել, նույն ատեն անտոգրելի ազդատության երկյուղն ալ պաշարեց, ըստ որում դիվանատան գլուխը բնակիչն այնու ևեթ կարող կրնան բլլալ ամեն պարեններին հոգույն»[47]։

Շերամապահովիչությունն Արևմտյան Հայաստանում չզարգացավ նաև հետագա երկու տասնամյակներում։ Սակայն սկսած 1880-ական թվականներից մեծապաշտպանության զարգացման հետևանքով, որի մասին խոսք կլինի ստորև, այն սոթի կանգնեց և անշեղորեն առաջ գնաց։ Այսպես, 1905 թ. մի թղթակից գրում էր, որ Խարբերդի տանջական խոզակի մշակմանը «հետևողներու թիվն օր ըստ օրե կավելնա... Հաղատներն շատեր մեկմեկու նայելով ջեմ փափաքով թթենի հատնելն կաշխատին. ամեն կողմ թթենիի մշակության սկսած են»[48]։ Այդ երևույթը նկատվում էր նաև Մրդենի-Մարդինում, Բալուում և այլ տեղերում։

Բացի շերամապահովիչությունից, որոշ չափով աճում է նաև ծխախոտի արտադրությունը՝ հատկապես Վանի վիլայեթի Շամգինա գավառում։ Սակայն երկրի մյուս շրջաններում նրա արտադրությունը «Regie ottomane des Tabacs» (կրճատ «Ռեժի») ընկերության գործունեության հետևանքով, որի մասին կասվի ստորև, նույնպես քշանում էր։

տես 1906 թ. գրում էր. որ Խարբերդի վիլայեթում տեղական ձեռի գործածությունը թեև գոնաե չատ մը անկյուններուն մեջ տակավին մեծ տեղ կգրավե, սակայն Խարբերդեն կամաց-կամաց կհրաժարի, որով 3000 մետրի քարչոյը կատանաեք Կավկասեն 2.500 ռուբ. արժեցությամբ» («Բյուզանդիոն», 1906, ապրիլի 27)։

46 Ուշագրավ է, որ այդ աշխուժացումը նկատվեց անգամ Վանի վիլայեթում։ 1852 թ. վանեցի մի խումբ պանդուխտներ՝ Կ. Գալեից վերադառնալով հայրենիք, Ամենց գյուղում գնում են հոգմամա, տեղում թթենիներ, կատարում փորձեր և հաստում հաշտությունների շերամապահովության զարգացման ուղղությամբ (տե՛ս «Արծվի Վասպուրական», 1858, էջ 63)։

47 «Մասյաց», 1864, հունիսի 2։

48 «Բյուզանդիոն», 1905, հունիսի 17։

Ինչ վերաբերում է հարկերին, ապա նրա արտադրությունը մինչև 80—90-ական թվականները գործնականում էր, բայց հետագա տարիներին, չհարգանալով դիմանալ եվրոպական շուկայի մրցմանը, սկսում է նկատելի չափերով բնկնել։ Ահան Հայկն իր հուշերում գրում էր, որ Խարբերդի տանջակի թվիատին գյուղում «1880—1885-ի տարիներին... արտերուն գրեթե կիսուն մեջ խոշոռ կը մշակվեր և անկե կարտոֆիլ աֆիոն, որուն 1 օղան (1 1/4 քիլոգրամ) կը վաճառվեր 4-ին 5 հնդուն ոսկիի... քանի մը տարիներ դիները շատ իջան և գյուղացին տուիալած լքեց այդ գործը»[49]։

Անցնելով անասնապահության, պետք է նշել, որ կալվածատիրական անտեսություններում այն գտնվում էր, իսկ գյուղացիական անտեսություններում՝ բացարձակ։ Օրինակ՝ Արձակի ներքնհիշյալ գյուղերում անասունների դիմաքանակը 1894—1903 թթ. ըստ Հ. Չոփուրի[50]։

Գյուղերը	Ձիեր		Եզ		Մատակ		Կով		Ոչխար	
	1894	1903	1894	1903	1894	1903	1894	1903	1894	1903
Հակոբա	200	15	400	50	300	35	500	150	3000	—
Մանդան	68	13	480	42	20	6	520	60	7000	—
Բոզպերյան	180	4	310	12	220	—	460	37	2100	—
Հասդասան	50	10	150	90	60	25	260	140	1400	—
Ընդամենը	498	42	1340	194	600	66	1740	387	13500	—

Ինչպես տեսնում ենք, 15 տարվա ընթացքում խոշոր եղջերավոր անասունների դիմաքանակը իջել է 4178-ից 682-ի, իսկ մանր եղջերավոր անասունների դիմաքանակի կրճատումն բնորոշել է կատաստրոֆիկ բնույթ։

Անասունների դիմաքանակի անկման պատճառը հանդիսացել էր նաև Մուշի դաշտի ներքնհիշյալ գյուղերում։

49 Վահե Հայկ. Խարբերդ և անոր ոսկեկեն դաշտը, Հայրենասիրական պատմական, մշակութային և ազգագրական նյութեր, 1959, էջ 738—739։

50 Ա-զա. Նշված աշխատությունը, էջ 354։

Գյուղերը	Տնտեսությունները		Եզ		Կով և տավար		Ոչխար	
	1889	1909	1889	1909	1889	1909	1889	1909
Ազաթոնք	30	22	70	6	200	25	100	—
Փոդրկով	60	22	120	20	500	20	500	—
Ասրանք	20	10	80	6	200	100	300	40
Բարձոր	60	10	100	2	500	10	1000	—
Արնձոուտ	20	17	60	14	200	60	300	40
Հեխոյան	90	63	120	64	700	250	1500	400
Ախազագրյար	28	21	60	8	350	70	400	70
Ղզլագաղ	135	90	150	30	2000	250	—	—
Բյուրդ-մեկյան	72	27	84	10	700	180	1200	70
Ընդամենը	515	282	844	160	5350	965	5300	620

Այս ավյալներն իրենք են խոսում իրենց մասին։

Այն հարցը, թե հասարակության երկու հիմնական դասակարգերը՝ կալվածատերերն ու գյուղացիները որշա՞փ էին արտադրում դյուզանանհանական մթերքներ և ինչքա՞ն անասուն ունեին, կարելի է յուսաբերանել հետևյալ հնդհանուր տեղեկություններով։ Ա. Մ. Կալյուժկինը նշում էր, որ Քղղի կազայում, որը, ինչպես ասվեց, հանդիսանում էր Կարնո վիլայեթի տնտեսական խոշոր շրջաններից մեկը, 1880-ական թվականների կար 130.000 ոչխար, որոնք պատկանում էին գերազանցապես կալվածատերերին[51], իսկ Խարբերդի կազայում, որը հանդիսանում էր երկրի հայահաստիկային գլխավոր շրջաններից մեկը, այդ նույն ժամանակաշրջանում արտադրվել է 4.058.482 փութ գարի ու ցորեն, որից 800.546 փութը՝ կալվածատիրական, 2.413.068 փութը՝ սեփականատեր գյուղացիների և 844.868 փութը՝ հողազուրկ գյուղացիների տնտեսություններում[52]։

Հետևաբար, նրա անասունների մեծ մասը գտնվում էր կալվածատերերի, ապա հայահաստիկի արտադրության մեծ մասը՝ գյուղացիների ձեռքերում։ Կալվածատերերը, հենվելով իրենց տնտեսական ուժի վրա, մեծացնում էին անասունների դիմաքանակը, իսկ գյուղացիները, որոնք տառապում էին աղքատության հրամաններում, ի վիճակի չէին այդ անելու։ Ահա թե ինչու Արևմտյան Հայաստանում

51 Տե՛ս А. М. Калюбакин. Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 63.

52 Նույն տեղում, էջ 417—419։

անասունների գլխաքանակը բնդհանուր առմամբ աճում էր, իսկ հարյուրհոգիների արտադրությունը՝ նվազում։

Մենք չունենք բնկալ կդկուռը տեղեկություններ նաև գյուղատնտեսության մյուս ճյուղերի մասին։ Սակայն հիմնվելով այն իրական փաստերի, որ նրանց արտադրությունը նույնպես նվազում էր, կարելի է ենթադրել, որ գյուղացիական անտեսությունները այնտեղ ևս խաղում էին գերիշխող դեր։ Կալվածատերերը չէին լցնում առանձնացած բացը, քանի որ նրանց մեծ մասը կամ չէր վարում սեփական անտեսություն, կամ զրաղվում էր անասնապահությամբ։

* * *

Մի քանի խոսք Արևմտյան Հայաստանի անասունների մասին։ Արևմտյան Հայաստանը բնդհանրապես ապրատ էր անասուններով։ Նրա անասունները կազմում էին Թուրքիայի ամբողջ անասունային ապրանքության հավիվ 1—2%-ը։ Սակայն որոշ տեսակներ ու կապաններ համեմատաբար հարուստ էին զրանցով։ Աշքի էին բնկնում հատկապես Կարնո, Երզնկայի և Սերաստիայի տանջակները, որտեղից առաքվում կար 126.950, երկրորդում՝ 30.500, իսկ երրորդում՝ 149.500 գլուխ անասուն[53]։ Բացի այդ վայրերից, անասուններ մեծ կամ փոքր չափերով կային նաև Շապախում, Մոկսում, Կարնկանում, Դավաշում, Հիթյարիում և երկրի այլ շրջաններում[54]։

Անասունները պատկանում էին պետությանը, կրոնական հաստատություններին, ազատներին ու բեյերին և, վերջապես, առանձին գյուղերին։ Մենք վիճակագրական տվյալներ չունենք այն մասին, թե նրանցից որը ինչքան անասուն ուներ, բայց ուսումնասիրողներից մեկը 1870-ական թվականներին նշում էր, որ անասունները մեծ մասամբ գտնվում են գյուղական համայնքների օգտագործման տակ, իսկ մասնավոր սեփականները «վերին սահմանափակ են»[55]։ Եթե այդ ձիշտ էր 1860—1870-ական թվականներին, ապա սխալ պետք է համարել հետագա տարիներին, քանի որ ազատներն ու բեյերը, ինչպես ցույց կարելի տարել, ընդարձակելով իրենց կալվածքները, բռնագրավում և սեփականացնում էին նաև գյուղացիական անասունները։

---

53 Տե՛ս П. М. Жуковский. Указанное сочинение, стр. 749.

54 Տե՛ս «Մշակ», 1890, պրոսպեկտ 4։

55 ՀՄՈՒ ԿՊՊԱ, ֆ. 1087, աշ. 1, գ. 1014, թ. 15—16։

Անասուններից օգտվելու համար սահմանված էր հետևյալ կարգը. կառավարությունը իրավունք էր տալիս գյուղացիներին անվճար օգտվելու պետական անասուններից՝ եթե նրանք կատարում էին ուն կամ շինում գյուղատնտեսական գործիքներ, բայց եթե փայտ էին կտրում վաճառելու նպատակով, ապա պարտադրում էր կատարել որոշ պարհակներ։ Համաբերա այդպես էր նաև կրոնական հաստատությունների կամ վակուֆային անասուններից օգտվելու հանձնարարությամբ։ Համայնական անասուններից կամ, ինչպես նրանք կոչվում էին, բալթալիկներից կարող էին օգտվել միայն տվյալ համայնքի անդամները։ Ինչ վերաբերում է մասնավոր սեփականատերերին, ապա նրանց տերն ու տնօրենը ազատներն ու բեյերն էին, և գյուղացիները առանց նրանց թույլտվության չէին կարող անգամ ձուկ որսալ այնտեղ։

Թուրքական իշխանությունները ու ազատները վարձակալությամբ էին տալիս անասունները կապալառուներին, որոնք փայտ էին կտրում և արտահանում վաճառքի կամ քաղաքները, կամ երկրի անտառապուրկ շրջաններում։ Նրանք, օրինակ, Թորթումից փայտն արտահանում էին Կարին, Ալաշկերտ, Արձնը և Վան, Սոդոմլուղից՝ Բարիրդ, Երզնկա, Թերջան ու Կապան-Մուգհնի սղնձահալական ձեռնարկությունները և այլն։ Կապալառուները արտահանում էին փայտ, հատկապես կաղնին ու բնկուզենին նաև Եփրատ՝ Մարանի, Փարիդ, Հոթգան և այլ քաղաքներ, որտեղ պատրաստում էին կահույք և վաճառում բանկ գներով։ Հաշակված էր մասնավորապես Վանի բնկուզենին, որը ուղարկվում էր Մարանի։

Իշխանությունները հող չէին տանում անասունների պահպանման մասին, իսկ կապալառուները բնկնելով շահի հետևից, հաճախ ամենաուրեք դիշատիչ կերպով քայքայում էին դրանք։ 1890 թ. մի թղթակից գրում էր. «Այնքան քիչ հող է տարվում... անասունների վրա, այնչափ անգութությամբ աշնչացնում են ծառերը, որ գուցե մի քանի տարուց հետո փորրիկ անասուններ ունեցող տանջակները զրկվեն բոլորովին անասուններից»[56]։

Եվ իսկապես, Խարբերդի վիլայեթը, որը տեղ-տեղ ուներ հարուստ անտառներ, այդ բնաջնջման հետևանքով համարյա անտառազրկվեց։ Նույն բանը տեղի ունեցավ նաև Բաղեշի վիլայեթում։ «Երբեմնի անտառներով հարուստ այդ վիլայեթը,—գրում էր Ֆ. Գրր-

---

56 «Մշակ», 1890, պրոսպեկտ 4։

յազնովը,— այժմ համարյա զուրկ է նրանցից և շարունակում է անտառազրկվել՝ հակօրինության բացակայության և անտառների պիշատիչ բնաջնջման հետևանքով»[57].

Անտառների բնաջնջումը սրդկունք էր տիրապետող այն ագրար-անտեսական կարգերի, որոնք պայմանավորում էին նաև գյուղատնտեսության բնորոշ քայքայումն ու անկումը։ Արևմտյան Հայաստանում որքան արագ էր նվազում երկրագործ հայերի թիվը, այնքան արագ էր աճում քոչվորների ու կիսաքոչվորների թիվը, այնքան արագ էր երկրագործությունը արատավորվում անասնապահության կողմից, այնքան հեռ էր գնում գյուղատնտեսությունը։ Իսկ անասնապահության զարգացումն ինչպես XIX դարի վերջին, նույնպես և XX դարի սկզբին ուներ բացառիկորեն էքստենսիվ բնույթ։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՆՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԸ

Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը մինչ հետաքրքրող ժամանակաշրջանում արդեն ներքրավվել էր շուկայական հարաբերությունների մեջ և ընդունել ապրանքային բնույթ։ Երկրի հեռացահատիկային գլխավոր շրջանները ցորենն ու գարին արտահանում էին արդյունաբերական կենտրոններն ու անասնապահական վայրերը։ Այսպես, Խարբերդի կազան իր հացահատիկը արտահանում էր գերազանցապես Արաբկիր, Չարսանջակը՝ Դերսիմ, Դերջանը՝ Քրդիի կազան, Այշիկիրուց՝ Վանի և Բաղեշի վիլայեթների անասնապահական շրջանները և այլն[1]։ Նրանց արտահանած հացահատիկների քանակի մասին որոշ պատկերացում տալու համար բերենք հետևյալ տվյալները. Խարբերդի կազան 1884 թ. արտահանել էր Արաբկիր 130.000 փութ ցորեն և 50.000 փութ գարի[2], իսկ Դերջանը՝ Դերսիմ տարեկան ավելի քան 1000 սուամ կամ 16.000 փութ գարի ու ցորեն[3]։

Ուշագրավ է, որ Արևմտյան Հայաստանի հացահատիկը հաճախ արտահանվում էր նաև Անդրկովկաս, հատկապես նրա այն շրջաններ, որոնք զրաղված լինելով այլ ապրանքների արտադրությամբ, հացի կարիք ունեին[4]։

Բացի հացահատիկից, ապրանքային բնույթ էր ստացել նաև բրինձը, որը Ջուլամերիկից արտահանվում էր Մուշ, իսկ Տիգրանակերտի և Բաղեշի վիլայեթներից՝ Վանի վիլայեթ[5]։

Այսպիսով արդյունքները՝ հատապտուղներն ու մրգերը արտահանվում էին ամենատարած երկրի լեռնային և նախալեռնային շրջաններ։ Այսպես, Արաբկիրից արտահանվում էր գերազանցապես թուզ, խաղողից՝ սերկևիլ ու նուշ, Կարնո վիլայեթի մրգատու շրջաններից՝ դեղձ, տանձ, բալ ու կեռաս, իսկ Արտամետից՝ խնձոր։ Մ. Մբրատյանցը նշում էր, թե Արտամետում բարեբեր տարին այնքան շատ խնձոր է լինում, որ «ձավարն ծախով, հավ և բուրդ գյուղացոց հարյուրապատիկ հրապանների ցամաքով կը տանին ու կը տանին և չեն կարող վերջ տալ»[6]։

Ոստանա հավիտը արտահանում էր տասնյակապես ծիրան ու բնկույզ, իսկ Բաբերդից՝ Սկերդը և Քաշերտունյաց գավառը՝ խաղողը։ Ա-գոն գրում էր, որ Բաբերդի խաղողը «առատությունով հռչակված էր էքզորտի շուկաներում»[7], իսկ «Սկերդի բնակ խաղողը ծախվում էր Բաղեշի մեջ և առաքվում շրջակա լեռնային նրիդներուն»[8]։

Քնակիչները հատապտուղներից ու մրգերից պատրաստում էին չիր և արտահանում նույնպես վաճառքի։ Օրինակ՝ Մալաթիան արտահանում էր տարին չիր, իսկ Արգնի-Մադենի տանջակը՝ «ամեն բանակությամբ չամիչ, պաստեղ և կիսով-կեսով քաղցրավենիք այլուրով շաղված և տուր (բնթմենյա)»[9]։

Բոլոր արտահանում էր ծիրանի, դեղձի, տանձի, սալորի, խնձորի և այլ մրգերի չիր՝ Դերսիմ, Քրդիի կազան և Տավրոսյան

---

57 Ф. Грязнов. Указанное сочинение, ч. II, стр. 129.

1 *Տե՛ս* Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության ու արվեստի թանգարան, Բարտ Ագատյանի արխիվ, 47, թ. 29, 59, թ. 7, 57, թ. 88, 53, թ. 6, 46, թ. 6, 38, թ. 6, «Բյուզանդիոն», 1898, նոյեմբերի 2։

2 *Տե՛ս* А. М. Колюбакин. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. III, ч. I, отд. 2-й, стр. 422.

3 Նույն տեղում, էջ 219։

4 *Տե՛ս* Վրաստանի ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 521, օպ. 2, գ. 310, թ. 256, ֆ. 378, օպ. 1, գ. 13534, թ. 42։

5 Նույն տեղում, գ. 492, թթ. 69, 81, 779, ֆ. 71, գ. 76, թ. 135։

6 Մ. Մբռատյան, Նկարագրական ուղեորություն ի հայրենիկ գավառս Արեւելյան Տանկատանաի, գ. Պոլիս, 1864, մ. Բ, էջ 235։

7 Ա-գո, Վանի, էրիվանի և էրզրումի վիլայեթները, էջ 5։

8 «Մշակ», 1889, հունիսի 27։

9 Գ. Տոխաճեանց, Բարտ ագրար, մ. Բ., էջ 186։

լեռներից դեպի հարավ ընկած վայրերը, իսկ Տիգրանակերտն ու Ծղերդը՝ Վանի վիլայեթը[10]։

Այդեղծության հետ միասին ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ էն ներգրավվում նաև բանջարա-բոստանային մթերքները, որոնց վաճառով ալքի էին ընկնում հատկապես Կարնո, Երզնկայի և Վանի ռանջակները։ 1890-ական թվականների վերջին Վ. Տ. Մաեևսկին գրում էր, որ Վանի «շուկայում աշնանը երեմուտ են մեծ քանակությամբ կաղամբ, ճակնդեղ, դդար, բողկ, պոմիդոր, բազրիջան, սոխ, կտրոշիխ... վարունգ, ձմերուկ և տխիր. վերջիններս լինում են միանգամայն բարձր որակի»[11]։

Նշված ռանջակներից ետ չէին մնում Ալաշկերտի հովիտն ու Խարբերդի դաշտը։ Ալաշկերտի հովտում բանջարա-բոստանային մթերքների վաճառով հոգակված էին Խաստուրա, Կարաթլիան և հատկապես Մալա-Սաղիման գյուղերը, որոնք վաճառում էին «Ալաշկերտի ամբողջ գյուղացոյ համար ամեն տեսակ բանջարեղեն, սոխ, սխտոր, բազուկ, կարմիր բազուկ, շաղգամ, լոլիկ, սիսեռ, ճմերուկ, վարունգ, խրտ (սեխի տեսակ), շամամ, դդում, դեղձանիձոր»[12]։

Իսկ Խարբերդի դաշտում հայտնի էր Քեսերիկ գյուղը, որի բնակիչները իրենց բանջարեղենով լցնում էին Խարբերդի ու Մեզրեհի շուկաները։ Մ. Ճիգմեճյանը նշում էր, «Քե կենդանիներու համար ծախված խոտը ավելի սուղ էր Խարբերդ, քան բնակիչներու բանջարեղեններու։ Անոնց արտադրած քաղցր կաղամբը մեծ համբավ կվայելեր»[13]։

Սակայն երկրի որոշ շրջաններում բանջարա-բոստանային մթերքների արտադրությունը չուներ ապրանքային բնույթ։ Այդ տեսակետից բնորոշ էր Բայուն, որը արտադրում էր բանջարեղեն «հետմարդա բացառապես անձնական սպառման համար»[14]։

Արևմտյան Հայաստանում ապրանքային բնույթ ուներ նաև յուղատու կուլտուրաների և բուսական յուղի արտադրությունը։ Այսպես,

10 ՎՄՄԻ ԿԳՎԱ, Ֆ. 521, օպ. 2, գ. 492, թ. 73, Ֆ. 71, ց. 76, թ. 136։

11 В. Т. Маевский. Ванский вилайет, военно-статистическое описание, Тифлис, 1901, стр. 125—126.

12 Ս. Հայկունի. Բագրեւանդ, Զորաշէն գաւառ, Էջմիածին, 1894, էջ Ա, էջ 101։

13 Մ. Ճիգմեճյան. Խարբերդ և իր գաւառները, Կալիֆորնիա, 1955, էջ 93։

14 А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. I, отд. 2-й, стр. 163.

Կարնո վիլայեթը արտահանում էր վուշի սերմ և յուղ, Տիգրանակերտի վիլայեթը՝ զեյթունի ձեթ, Խնուսը՝ անիսոնի յուղ և այլն։ Սակայն բուսական յուղի ապրանքայնությունը բնկնում էր՝ ուսական նավթի ներմուծման հետևանքով։

Բամբակը երկրի մի շարք շրջաններում իրացվում էր արտադրողների կողմից։ Բայց բամբակագործության գլխավոր շրջաններում այն արդեն ընդունել էր ապրանքային բնույթ։ Այսպես, Խարբերդի կազայում 1885 թ. 24.000—25.000 փութ բամբակից արտահանվել է Հալեպ՝ 7000 փութ, իսկ Աթարկիր՝ 5000 փութ[15]։ Բացի այդ վայրերից, Խարբերդի բամբակը արտահանվում էր նաև Կարնո, Բայնզի, Տիգրանակերտի վիլայեթները և երկրի այլ շրջաններ։ 1906 թ. Բոյամեից Պ. Թեոդոյանը նշում էր. «Խարբերդի բամբակը մեծ պատիվ կը վայելի Սեբաստիա, Կարնի, Տիարպեքիրի և Պիթլիսի հրապարակներուն վրա։ Տարեկան 70.000 լիտր կարտածե 18.200 ոսկի արժողությամբ»[16]։

Բացի Խարբերդի կազայից, բամբակագործությունը ապրանքային բնույթ ուներ նաև Մալաթիայի ռանջակում, որը 1870-ական թվականների կեսերին տարեկան 10.000 ոսկու բամբակ էր արտահանում Եվրոպա[17]։

Շերամապահությունը նույնպես ներգրավված էր ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ։ Տակավին 1860—1870-ական թվականների խոպոտը արտահանվում էր Աթարկիրից Տիգրանակերտ, Ամասիա և Կ. Պոլիս, իսկ Խարբերդի գուշից՝ Կոփկաս, Կ. Պոլիս և Եվրոպա։ Բայց հետագա տարիներին՝ մեսաբատագործության զարգացման հետևանքով, խոպոտը վաճառվում էր գերազանցապես երկրի ներսում։

Ուշագրավ է, որ շերամի արտադրությունը ապրանքային բնույթ էր ստացել ոչ միայն շերամապահության գլխավոր շրջաններում, այլև այն վայրերում, որտեղ այն նոր էր մուտք գործել և կազմել գյուղատնտեսության երկրագործական և նուիրական տասներդրական ճյուղերից մեկը։ Օրինակ՝ Վանի վիլայեթում, ինչպես ասվեց, արտա-

15 А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. I, отд. 2-й, стр. 445.

16 «Բյուզանդիոն», 1906, ապրիլի 27։

17 Տե՛ս Հայկական ՍՍՌ կուլտուրայի մթերատարության գրախանության ու արվեստի թանգարան, Թարս Ագռաչյանի արխիվ, 47, թ. 11։

դերվում էր չափազանց աննշան քանակությամբ սերմ, բայց նրա մի մասը արտահանվում էր Կ. Պոլիս[18]։

Ծխախոտի ապրանքայնությունը տակավին 60—70-ական թվականներին նկատելի տեմպերով աճում էր։ 1860 թ. Անդիջովկան է արտահանվել 7089 ուղտ, իսկ 1871 թ.՝ 43000 ուղտ ծխախոտ[19]։ Սակայն հետագայում՝ 1883 թ., երբ ֆրանսիական «Ռեժի» ծխախոտի բնակերությունը իր ձեռքը վերցրեց ամբողջ Թուրքիայի, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի ծխախոտի առևտուրը, ծխախոտի ապրանքայնությունը սկսեց նվազել։ Նշված բնակերությունը տեղական իշխանությունների միջոցով արգելում էր գյուղացիներին ցանելու ծխախոտ, նրան իրենից չէին սաացել թույլտվություն, սահմանում էր նրանց ծխախոտի ցանքատարածությունների չափը, որոշում էր տեսակը, գինը և այլն։ Գյուղացիները «Ռեժի»-ից թույլտվություն ստանալու համար հարկադրված էին ամրակներով կրթել վենել և բանել նրա դռները։ 1898 թ. մի բղթակից գրում էր. «Երկրագործն բան առաջնայն հետաքրքիր և մերձավոր վայրերն կսկսի վերբասին գնդերել Ռեժիի գուրը «Նչսօր գնա, վաղն նկուր. զալ շաբաթ նկուրս-ներ կշարունակվին. 1—2 ամիս անցնելն վերջն (գյուղացին) օր մ'ալ կիմանա, թե աշխատությամբ և ծախքերով երեան բերած բերքին Ռեժիի կողմն 20 փր. կամ 1—2 ղրուշ գին կորվիշ»[20]։

Բայց XIX դարի վերջին և XX դարի սկզբին հատկապես կալվածատիրական տնտեսություններում ծխախոտի ապրանքայնությունը սկսեց նորից աճել։ Այդ տեսակետից աչքի էին ընկնում Վանի վիլայեթի Դավաշ, Չուլամերիկ, Բիգելշաթաբ, Ոստան դաշտավայրերը և հատկապես Շամիրանը, որը միայն 1909 թ. արտահանել է մոտ 90.000 ուղտ ծխախոտ[21]։

Արևմտյան Հայաստանում ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ էր ներգրավված նաև հաշիշը։ Նրա վաճառքով աչքի էին ընկնում Խարբերդի և Մալաթիայի կազմակերպությունները, որոնցից առաջինը միայն 1888 թ. արտահանել է Ալեքսանդրիա 1.500.000 դուրուշի հաշիշ[22]։ Սակայն հետագայում հաշիշի արտադրության կրճատման հետ միասին կրճատվում է նաև նրա ապրանքայնությունը։

18 Տե՛ս «Մասիս», 1868, հունվարի 24։

19 Տե՛ս ՎՍՍՌ ԿՓՄԱ, ֆ. 10, գ. 1985, թ. 22, ֆ. 5, գ. 3079, թ. 5։

20 «Բյուզանդիոն», 1898, ապրիլի 21։

21 Տե՛ս ՎՍՍՌ ԿՓՄԱ, ֆ. 521, օպ. 2, գ. 492, թ. 271։

22 Տե՛ս А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. I, отд. 2-й, стр. 448.

Անասունների ասքն ու վաճառքը համեմատաբար զարգացած էր Վանի, Կարնո, Բաղեշի և մասամբ Տիգրանակերտի վիլայեթներում։ Վանի վիլայեթում անասունների վաճառքի գործում աչքի էր բնկնում հատկապես Չուլամերիկ, որը տարեկան արտահանում էր մոտ 10.000 գլուխ ոչխար[23]։

Չուլամերիկից հետո չէին մնում, իսկ հաճախ նույնիսկ առաջ էին անցնում, նաև վիլայեթի մյուս շրջանները՝ Աբաղան, Ադրակն ու Արճեշը։ Բավական է նշել, որ միայն Արճեշն ու Աբաղան տարեկան արտահանում էին 35.000 ոչխար ու գառ[24]։ 1904 թ. Մերուկը գրում էր, որ Վանի վիլայեթից «ոչխար և այծ արտահանում են բոլոր այն կետերից, ուր անասնապահությունը զարգացած է, այսինքն գլխավորապես նահանգի հարավային, արևելյան և հյուսիսային կողմերից»[25]։

Բաղեշի վիլայեթից ոչխարների հոտերը տանում էին վաճառելու Տիգրանակերտ, Հալեպ, Դամասկոս, Ուրֆա, Երուսաղեմ և այլ քաղաքներ։ Ա.-դեռ գրում էր, որ այդ վիլայեթի Վարդոյի կազայում «հոտերը պարարտացնելով, ջիրրանցի թուրք բռում տանում է մինչև Դիարբեքիր և նրա փոխարեն ոսկիներ բերում»[26]։

Կարնո վիլայեթից տակավին 1870-ական թվականներին տարեկան արտահանվում էր միջին հաշվով 12.000—15.000 գլուխ կով ու եզ, 4000—5000 գլուխ ոմճեշ և բազմաթիվ ոչխար ու այծ։ Այդ արտահանության մեջ աչքի էին ընկնում հատկապես Խնուսն ու Քղին, որտեղ տարիս էին վաճառվող անասունների շուրջ կեսը։ Ն. Ֆ. Բ. Լինչը հիշատակում էր, որ Կարնո վիլայեթի անասունների վաճառքի կենտրոնը Խնուսն է, ուր անասուն գնելու նպատակով վաճառականներ են գալիս Թուրքիայի ամենատարբեր քաղաքներից ու գյուղերից[27]։

Տիգրանակերտի վիլայեթը նույնպես մեծ քանակությամբ ոչխար էր ուղարկում վաճառքի Հալեպ, Դամասկոս ու Բեյրութ։ Օրինակ՝ 1889-ական թվականներին այստեղից արտահանվում էր տարեկան միջին հաշվով 33.000 ոչխար ու այծ։

23 Տե՛ս «Известия кавказского отдела императорского русского географического общества», т. II, стр. 176.

24 «Ազան-Տարագ», 1913, օգոստոսի, 10, էջ 345։

25 «Մուրճ», 1904, № 8, էջ 20։

26 Ա.-դա. Նշված աշխատությունը, էջ 151։

27 Х. Ф. Б. Линч. Армения, т. II, стр. 239—240.

Սեբաստիայի վիլայեթում անասունների վաճառով աշխի էր բնկնում Սեբաստիայի սանջակը, իսկ Խարբերդի վիլայեթում՝ Դերսիմի սանջակը։ Այդ վիլայեթների մնացած շրջանները ո՛չ միայն չէին արտահանում անասուն, այլ, որպես կանոն, ներմուծում էին այն։ 1906 թ. Ք. Քերոլյանը գրում էր, որ Խարբերդը տարեկան ներմուծում է Կարինից, Մուշից ու Մադենից 70.000 դլուխ կամ 32.500 ոսկու անասուն[28]։

Անհրաժեշտ է նշել, որ Արևմտյան Հայաստանից արտահանվող անասունների մեծ մասը ուղարկվում էր Եգիպտոս, Սիրիա, Լիբանան և Կ. Պոլիս, իսկ փոքր մասը՝ Ռուսաստան, գերազանցապես Անդրկովկաս։ Այսպես, 1908 թ. Վանի վիլայեթից արտահանվել է 908.000 ուրբու անասուն, որից 874.000 ուրբ. արտահանվել է Սիրիա և Եգիպտոս, 4000 ուրբ.՝ Տիգրանակերտ, 13.000 ուրբ.՝ Կարին, 4.000 ուրբ.՝ Բաղեշ, իսկ 13.000 ուրբ.՝ Ռուսաստան[29]։

Բացի անասուններից, վաճառի էր հանվում նաև նրանց կաշին, մորթի, կաճենկոնը, բուրդը, մազը և այլն։ Կաշվի և մորթու վաճառքի գործում աշխի էին բնկնում Կարսո և Վանի վիլայեթները։ Միայն 1908 թ. վերջինս արտահանել է 58.072 ուրբու արժողությամբ կաշի ու մորթի, որից 52.972 ուրբ.՝ Ֆրանսիա, իսկ 5.100 ուրբ.՝ Ռուսաստան[30]։

Ուշագրավ է, որ բնակիչները բացի ընտանի կենդանիներից, վաճառքի էին հանում նաև վայրի կենդանիների մորթիներ։ Այդ գործում հռչակված էին Վասպուրականի Ջռնակ գյուղի բնակիչները, որոնք որսում էին գայլ, ազվես, վարազ և այլ կենդանիներ և մորթին վաճառում Վանում։ «Մի ձմեռվա ընթացքում,—գրում է Վ. Փափազյանը,— շուրջ 5000—6000 դանազան մորթիք է մտնում Վան և Վանից էլ գնում այլ քաղաքներ»[31]։ Կարինում կային 4—5 վաճառական, որոնցից յուրաքանչյուրը գնում էր տարեկան միջին հաշվով 50.000-ից ավելի վայրի կենդանիների ու դազանների մորթի և Կարսի վրայով արտահանում Ռուսաստան[32]։

28 Տե՛ս «Բյուզանդիոն», 1906, ապրիլի 27։

29 Ванский вилайет, М., 1910, стр. 4.

30 Տե՛ս ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, օպ. 2, գ. 492, թթ. 76, 77, 267, 271, ֆ. 10, գ. 1955, թ. 120, ֆ. 74 գ. 26, թ. 139։

31 «Մշակ», 1890, ապրիլի 19։

32 «Բյուզանդիոն», 1898, հունվարի 12։

Անասնապահության արդյունքներից վաճառքի առարկա էին դարձել նաև ոչխարի բուրդն ու անդորական այծի մազը։ Այդ այծը, որն ուներ հաստ մեջ, բարձրորակ ու նուրբ մազ, ամենամին վաղ միջնադարում Հայկական լեռնաշխարհից տարածվեց Փոքր Ասիայի դանազան շրջաններ և լայն գործածում ստացավ Անկարայի մոհերում. այդ պատճառով էլ կոչվից անդորական այծ։ Մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում նրա մազը բրդի հետ միասին ուներ լայն արտահանում։ Միայն 1863 թ. Տիգրանակերտի վիլայեթից արտահանվել է 70.000 ֆունտ տարրիների բուրդ և 20.000 ֆունտ տարրիների անդորական այծի մազ[33]։

Արևմտյան Հայաստանում անբարեբարոքության թույլ զարգացման պատճառով ապրանքային բրդի ու մազի մեծ մասը արտահանվում էր արտասահման՝ Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա և շնչին քանակությամբ՝ Ռուսաստան։ 1889 թ. մի հաղորդման մեջ նշվում էր. «բուրդը արտահանվում է մեծ մասամբ Եվրոպա, իսկ մի մասն էլ տեղումս է մշակվում»[34]։

Բացի անասնապահության նշված մթերքներից, վաճառքի առարկա էին դարձել նաև կոմիսիոներները՝ յուղն ու պանիրը։ Նրանք նախ և առաջ վաճառվում էին Երիշի ներսում։ Այսպես, 1884 թ. Մ. Միրախորյանը գրում էր, որ Կարինցիից «ի վաճառս կը տարվին ի Բաղեշ և ի Վան (որոց հետ են իրենց առևտրական հարաբերությունք) պատվական յուղ, որ ազնվությունեմբ վաճառողն զնոդին ցույց տալու համար «բուրբ պես խմես կրան, երբ յուղի համն նայելով գոհ չլինի»[35]։ Մանչն յուղն ու պանիրը արտահանվում էին նաև Կ. Պոլիս, Թուրքիայի այլ քաղաքներ, ինչպես նաև արտասահման։ Օրինակ՝ 1903 թ. արտահանվել է Ռուսաստան 4.368 ուրբ.[36], իսկ 1909 թ.՝ Կ. Պոլիս 6.300 ուրբ. կարագ ու կաճենկոն[37]։

* * *

Գյուղատնտեսական մթերքներն Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում, հատկապես նրա լեռնային մասերում, ուղղակի փոխանակվում էին միմյանց հետ։ Այսպես, Խնուսում անա-

33 **В. Штреккер.** Очерки Верхней Армении, Тифлис, 1873, стр. 80.

34 Տե՛ս ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, օպ. 2, գ. 492, թ. 267։

35 Մ. Միրախորյան, Նշված աշխատությունը, մ. Ա, էջ 160։

36 Տե՛ս ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, օպ. 2, գ. 310, թ. 259—260։

37 Նույն տեղում, գ. 492, թ. 271։

սանձերն ու նրանց մեքենաները, Ռասանում՝ բնակչությ, իսկ Հայոց Ձորում՝ միրզը փոխանակում էին ցորենով, այլուրով, ձավարով ու բլղուրով։ Ականատեսներից մեկն ութանասում էր, որ այդ շրջանների շատ բնակիչներ «յուր կյանքում փող, դրամ տեսած չեն։ Նրանք ամեն բան բնության արդյունքով են փոխանակում»[38]։

Իհարկե, մեքենաների փոխանակումը միմյանց հետ իրենից ներկայացնում էր առևտրի արխաիկ ձևը։ Բայց դրա կողքին առկա էր նաև առևտրի համեմատաբար զարգացած ձևը, որը հանդես էր գալիս այն ժամանակ, երբ բնակիչները իրենց մեքենաները վաճառում էին դրամով։ Նրանք երկրի տարբեր մասերում և տարբեր ժամանակներում վաճառում էին իրենց մեքենաները տարբեր գներով։ Ակօրո, 1872—1874 թթ. ցորենի փութը վաճառվում էր[39].

Կարնո տանջակում —80 կոպ.
Կարսի տանջակում —70 կոպ.
Ջրլղրի տանջակում —73 կոպ.
Վանում (1904 թ.)—60—76 կ. և այլն։

Բայց հացահատիկից, դրամով էին վաճառվում նաև անասուններն ու նրանց արդյունքները։

Գյուղատնտեսական մեքենաները վաճառվում էին տեղական շուկաներում ու տոնավաճառներում, որոնք որոշ տեղերում լինում էին կիրակի, իսկ այլ տեղերում՝ երբեմն օրերին։ Օրինակ՝ Վանում դրանք լինում էին կիրակի[40], իսկ Բերդակում՝ ուրբաթ օրերին։ Բերդակի շուկայի թիչ մի շատ ընդարձակ նկարագիրը թողել է Անդրանիկը, որն ավելորդ չենք համարում մեջ բերել։ 1900 թ. նա գրում էր. «Տեղումի հեռավոր վայրերին այստեղ կշավաքվին ամեն ուրբաթ օրեր, ուր կլինի մեծ քանակությամբ իրերու փոխանակություն, որ տեսած մը տոնավաճառի կերպարանք կստանա։ Հինդհարթի օրվանե սկսյալ քարբերդի արհեստավորներու և մանրավաճառ չարչիներու աշադին բազմությունն մը կսկսի խառնվիլ Բերդակի ավերակներուն մեջ, իրենց հետ բերելով կոշիկ, կտավ, լայակ, չիթ-չեմպեր, զրլխարկ, կռնակ, տաբեղ, թել, մանած, պատրաստի հագուստներ քրդական ձաշակով, գանազան տեսակի զենքեր և այլն, և այլն։ Իսկ քրդերն իրենց հետ կբերեն իրենց ունեցածները՝ ընկույզ, մանանա (գաղպե), ոլաներ, յուղ, շորիան, բաւրդ, կովու և ոչխարի մորթ, վայրենի կենդանիներու մորթ, կապիտա, քիլիմ, գորգ, գուլպա, ոչխար, գառ, ջորի, մատակ, ձի և այլն։ Առևտուրն ուրբաթ առավոտեն կսկսի։ Քաղաքացին ամեն կերպ կաշխատի իր ունեցած իրեղենները, սուդ-սուդ ծախել, այսինքն փոխել քրդու ունեցածի հետ, մեկի փոխարեն երեք-չորս և նույնիսկ տասնեսպատիկ առնելով։ Իսկ լիմոնական քարդը, որ երբեք գաղափար չունի ոչ առևտրի և ոչ ալ դրամի և կամ իր ունեցվածներու արժեքի մասին, և մանավանդ, որ քարդու ունեցած փայլուն-փայլուն իրեղենները կշլացնեն ու միանգամայն խիստ կշրապուրեն դինքը... ամեն ջանք ու ճիգ ի գործ կդնե և նույնիսկ կպարչե ու կպարպատի քաղքցուն, որ նա բարեհաճի իր հետ առևտուր ընել»[41]։

Սակայն կիրակնօրյա շուկան ու տոնավաճառն ունեին տեղական նշանակություն և ոչ այլ ինչ էին, բայց եթե տպրանքային տնտեսության առաջացման ու զարգացման ցածր ստադիան, որի ժամանակ անմիջական արտադրողի և սպառողի միջև եղած տարածությունը աննշան էր, իսկ վաճառահանման շուկան ծայր աստիճան նեղ։

Ապրանքային տնտեսության հետագա զարգացումը նրանով է արտահայտվում, որ, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «առևտուրն բնադրածակվում է, հայտնվում են մասնագետ մեծագնորդ—առևտրականներ. շինվածքների վաճառահանման շուկա է դառնում ո՛չ թե դյուղական մանր բազարը կամ տոնավաճառը, այլ ամբողջ մարզը, հետո ամբողջ երկիրը, իսկ երբեմն էլ նույնիսկ այլ երկրներ»[42]։

Արևմտյան Հայաստանում մեծագնորդ առևտրականները կամ վաճառականները արդեն թափանցել էին երկրի դյուղատնտեսության մի շարք ճյուղերը, բայց ավելի շատ՝ անասնապահության մեջ։ Այդ ոչ միայն այն պատճառով, որ անասնապահությունը հացահատիկների և դյուղատնտեսության մի շարք այլ ճյուղերի համեմատությամբ շատ էր բնդունել ապրանքային բնույթ, այլև այն պատճառով, որ անասունների տեղափոխումը հաղորդակցության տարբեր միջոցների առկայության պայմաններում ավելի հեշտ էր։

Վաճառականները կամ տեղացիները էին՝ հայեր, թուրքեր, քրդեր, կամ օտարերկրացիներ՝ ֆրանսիացիներ, անգլիացիներ,

38 «Մշակ», 1876, հոլիս 22։
39 Տե՛ս Я. Д. Малама. Средства продовольственные..., стр. 33, 46.
40 Տե՛ս «Արծվի Վասպուրական», 1858, էջ 241։

41 Անդրանիկ. Հերթիմ, համապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900, էջ 138—139։
42 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 3, էջ 419։

գերմանացիներ և այլն։ Նրանք ունեին իրենց գործակալները, որոնք շրջելով Արևմտյան Հայաստանի գյուղերն ու յայլաններըը, կատարում էին նախապատրաստված գնումներըը, դիրքացնում գնած անասունները երկրի արգավանդ արտաներում ու մարգագետիններում և քշում վաճառքի։ 1906 թ. ձմռվան գրում էր, որ յուրաքանչյուր վաճառական իր գործակալներով տարեկան գնում է առնվազն 2—3 բեռլյուկ, որոնց յուրաքանչյուրը բաղկացած է 700—1000 գլուխներից։ Կան այնպիսիները, որոնք մինչև 50—60 բեռլյուկ կը գնեն»[43]։

Վաճառականներից շատեր նրբերին այնքան շատ էին գնում անասուն, որ բազարային բնակիչներին զրկում էին մսից։ Նրանք այդպես վարվելին, օրինակ, 1906 թվականին և բանը այնտեղ հասցրին, որ «Ելչպես Կարինի, այնպես և ուրիշ հարևանից գավառներու բնակիչներ ստիպվելով բարձրել բազարային վարչության՝ մսի նվազության դեմ»[44]։

Վաճառականներից մյուսները ամբարում էին մեծ քանակությամբ հացահատիկ ու անբերրիության կամ սովի տարիներին վաճառում բանկ վեճով։ Եվ այնասավոր ժողովուրդը, օգտվելով այդ բանից, երբեմն կոտորում էր նրանց։

* * *

Այժմ հարց է ծագում—ի՞նչ չափով էին գյուղատանտեսության գյուղերը ներգրավված ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ։ Այդ կարևոր հարցին պատասխանելու համար մենք ունենք հետևյալ անուղղակի և կեղծուր տեղեկություններ։ 1886 թ. Խարբերդի կազայում ցրենի ու գարու տարվա միջին հավաքական արտադրանքը նրանց վաճառվող մասի համեմատությամբ ներքոհիշյալ պատկերն էր ներկայացնում (փթերով)[45]։

Հացահատիկների տեսակները	Համախառն արտադրությունը	Վաճառվող մասը
Ցորեն	3.536.276	200.000
Գարի	522.206	110.000
Ընդամենը	4058582	310.000

43 «Երկրի Ձայն», 1906, № 9, էջ 13։

44 Նույն տեղում։

45 Տե՛ս А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 420, 454 (տպագրածը կազմված է մեր կողմից)։

Այս տպագրածը ցույց է տալիս, որ ցորենի և գարու ապրանքային մասը կազմում էր նրանց համախառն արտադրության 7,5%-ը եղնելով այն բանից, որ Խարբերդի կազան հանդիսանում էր Արևմտյան Հայաստանի հացահատիկային գլխավոր շրջաններից մեկը, պետք է ենթադրել, որ ցորենի ու գարու ապրանքայնությունը համապատասխան չափով էր արտահայտվում նաև նրա մյուս շրջաններում։

Անասունների ապրանքայնության մասին մեր ձեռքի տակ հետևյալ տվյալները. 1908 թ. Վանի վիլայեթում, որը, ինչպես ասվեց, հանդիսանում էր երկրի անասնապահական գլխավոր շրջաններից մեկը, կար 2.040.000 գլուխ ոչխար ու այծ[46]։ Իսկ 1910 թ. այդ վիլայեթի Բերկրի, Սարա, Ազրակ, Նորգուզ, Շատախ, Մոկս, Կարկառ և Կարճկան գավառները մոտ կես միլիոն ոչխար արտահանեցին Հալեպի, Ադանայի և ուրիշ վիլայեթներ։

Հետևաբար, այդ վիլայեթում մանր եղջերավոր անասունների ապրանքայնությունը կազմում էր նրանց ընդհանուր գլխաքանակի մոտ 25 տոկոսը։ Հավանական է, որ այդ տոկոսը իրականում ավելի բարձր լիներ, քանի որ անասունների վաճառքի մասին բերված տվյալները քերի են։

Անցնելով անասնապահական մթերքներին, պետք է նշել, որ բատ Յա. Ռ. Մալամայի տվյալների, Կարնո վիլայեթում տասնվեցերորդ 1870-ական թվականների սկզբներին բրդի ու մազի մոտ $^1/_4$-ը ծառայում էր բնակիչների անձնական կարիքներին, իսկ $^3/_4$-ը՝ հանվում վաճառքի։ Հատկապես շատ էր վաճառվում անդորական այծի մազը, որը «Համարյա ամբողջովին գնում էր արտասահման»[47]։

Սակայն երկրի որոշ շրջաններում, որտեղ տասնվեցերորդ դարում էր բնատնտեսությունը, բրդի ու մազի մեծ մասը ծառայում էր բնակիչների անձնական սպառումներին։ Օրինակ՝ Սասունում «բուրդը մեծ մասամբ գնում էր բնատնեական պիտույքների համար։ Բացի հագուստից, որի վրա դործ են ածում բուրդ, սասունցի կանայք պատրաստում են կարպետներ, փալասներ, թաղիքներ, լուսնիներ և երբեմն գորգեր։ Այս վերջիններըը շատ մեծի մասի տարածվում են բյուրդերի մեջ»[48]։

46 ՎՄՈՒ ԿՓՓՈ, ֆ. 521, ող. 2, գ. 432, թ. 79։

47 Տե՛ս Я. Д. Малама. Средства продовольственные..., стр. 51.

48 «Մշակ», 1895, մարտի 16։

Յա. Դ. Մալաման, դժբախտաբար ուղղակի տեղեկություններ չի տալիս կաշիների ու մորթիների ապրանքայնության մասին, բայց հիմք ընդունելով նրա այն տվյալները, որոնց համաձայն Կարինում յուրաքանչյուր տարի մշակվում էր 20.000 և վիլայեթից արտահանվում շուրջ 100.000 ոչխարի ու այծի մորթի[49], կարելի է ենթադրել, որ դա նույնպես զգալի էր։

Այդճարտությանն արդյունքներից ապրանքային բնույթ ուներ գերազանցապես խադոդը, իսկ մդրերը քիչ էին ներգրավված շուկայական հարաբերությունների մեջ։ Օրինակ՝ Վանի Այգեստան թաղամասում բնակիչները տարեկան առանում էին 30.000 լիտր խադոդ, 20.000 լիտր առնձ, 25.000 լիտր խնձոր, 20.000 լիտր ծիրան, 10.000 լիտր սալոր, 200 լիտր դեղձ և այլն, բայց վաճառում էին առավելապես խադոդը[50]։

Համաբերա այդպիսին էր վիճակը նաև Խորբերդի կազայում։ Այստեղ բնակիչները վաճառում էին խադոդը, իսկ մդրերը՝ «համեմատաբար ոչ մեծ քանակով, քանի որ հարևան օկրուգներն ունեին իրենց մդրերը և հնարավոր արտահանության համար դրանք հարմար առարկա չէին։ Մդրերի հսկայական մասը ոտաոտում էր տեղում»[51]։

Տեխնիկական կուլտուրաներից մեծ էր բամբակի ապրանքայնությունը։ Այսպես, Խորբերդի կազայում, որը հանդիսանում էր երկրի բամբակագործության գլխավոր շրջաններից մեկը, 1880-ական թվականների կեսերին արտադրվել է 20.000 փութ բամբակ, որից վաճառվել է 11.000 փութ, կամ 55,0 %-ը[52]։

Ավելի մեծ էր խոզակի ապրանքայնությունը։ Խորբերդի կազայում նրա արտադրության $^2/_3$-ը արտահանվում էր Տիգրանակերտ, Մալաթիա և երկրի հարավային շրջանները, իսկ $^1/_3$-ը մշակվում տեղում՝ մեղրերի մեատաքացագործական ֆաբրիկաներում[53]։

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության մյուս ճյուղերին, ապա նրանց ապրանքայնության մասին չունենք արժանահավատ տեղեկություններ։

49 Տե՛ս Я. Д. Малама. Описание Эрзерумского вилайета. СПб, 1874, стр. 115.

50 «Мирбэ», 1904, № 8, էջ 25։

51 А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. 1, отд. 2-й, стр. 448.

52 Նույն տեղում, էջ 453։

53 Նույն տեղում, էջ 449—450։

Ահռելի էր արդյոք գյուղատնտեսական մթերքների ապրանքայնությունը։ Մեր ձեռքի տակ եղած տվյալները թույլ են տալիս ասելու, որ անասնապահության ապրանքայնությունը XX դարի սկզբին սկսում էր Ա՜հա այդ տվյալները[54]։

Վանի վիլայեթից արտահանվել է (ռուբլիներով)

Արտահանության ապրանքները	1909 թ.	1911 թ.
Ոչխար ու այծ	405.000	590.000
Եղ, կով ու գոմեշ	18.000	65.000
Ոչխարի ու այծի մորթի	50.000	30.000
Ոչխարի բուրդ ու այծի մազ	40.000	35.000
Ընդամենը	513.500	720.000

Կարնո վիլայեթից արտահանվել է (ռուբլիներով)

Արտահանության ապրանքները	1911 թ.	1912 թ.
Հդիերագոր անասուն	389.500	475.000
Ոչխար	1425.000	1425.000
Մի ու ջորի	28.500	95.000
Դալի ու մորթի	184.300	210.000
Ընդամենը	2.027.300	2.205.000

Այդ տվյալները ցույց են տալիս, որ անասնապահության երկու գլխավոր շրջաններում անասունների ու նրանց մթերքների արտահանությունը զգալի էր։

Պետք է նշել, որ 1908 թ. այդ արտահանումը (օրինակ՝ Վանի վիլայեթում)[55] ավելի մեծ էր։ Սակայն 1908 թ. չի հանդիսանում սովորական տարի, քանի որ պատերազմ ու բերքերից շատերը երկրում երկարով հեղափոխությունից՝ արտերուն վաճառելին իրենց անասուններն և անցան արտահանմանու Ուշագրավ է, որ հայկական

54 Տե՛ս ՀԽՍՌ ԿԳԱԿ, ֆ. 321, oպ. 2, գ. 492, քք. 77, 271, ֆ. 71, գ. 76, թ. 139։

55 Նույն տեղում, ֆ. 321, oպ. 2, գ. 492, թ. 77։

վանքերն այդ երկյուղից նույնպես վաճառեցին իրենց անասուն-ները։ Աղթամարի սիրուն քարտուղար Հովսեփ Եղցաթյանը գրում էր, թե վանքի անտեսությունից «անասուններ կը վաճառ-վին սովորաբար ամեն տարի, իսկ ամենախոշոր քանակությամբ վաճառված է 1908 թ. հունիսին, երբ վանքերու հոգերը տրմեցան իշարեով և ավելցող անասունները ծախվեցին»[56]։

Անհատած, աճում էր նաև խոզաի տպրանքայնությունը։ Ինչ վերաբերում է գյուղատնտեսական մյուս ճյուղերին, ապա նրանց ապրանքայնությունը գյուղատնտեսության ընդհանուր քայքայման հետևանքով հավանական է, որ նվազում էր։ Բնակիչները, չունե-նալով անծի և գույքի ապահովություն, պարզապես շահագրգռված չէին մեծացնելու գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ապրանքայնությունը։ Նրանք արտադրում էին սոսկ այնքան, որ-պեսզի կարողանային մի կերպ ապրել, ավելի ճիշտ՝ քարշ տալ իրենց գոյությունը։ Այսպես, Տ. Փիրումյանը 1891 թ. գրում էր, թե գյուղացիները «սաստիկ վախենում են շատացնել իրենց անա-սունները, որպեսզի «շան ու գելի» փայ չդառնան նրանք»[57]։

Իսկ Ա. Ֆ. Բ. Լինչը 1892 թ. նշում էր, որ Բաղեշի վիլայեթի Սալ գյուղի բնակիչները «շատ աղքատ են, ապրում են գլգիլով ու բիլ են ցանում ցորեն ու գարի... Թեև այդ գաշտավայրում հողը արտակարգ պարարտ էր։ Երբ հա կշտամբեցի նրանց անհոգության համար, ինձ պատասխանեցին, որ անշահավետ է աշխատելը, քանի որ գյուղա-ցին չի օգտվելու իր աշխատանքի պտուղներից»[58]։

Այնուամենայնիվ, ապրանքային արտադրությունը առաջ բե-րեց Արևմտյան Հայաստանում որոշ տեղաշարժեր։ Այն նպաստեց հաղորդակցության միջոցների բարելավմանը։ Կառուցվեցին մի շարք այլուղիներ, որոնց մի մասն սկսեց խճապատվել։ Այսպես, 1856—1871 թթ. ավարտվեցին Տրապիզոն—Բայբերդ—Կոփին խճա-ղուղու կառուցման աշխատանքները՝ 280—300 վերստ երկարությամբ։ Այնուհետև սկսվեց Երզնկա—Տիգրանակերտ, Երզնկա—Մալա-թիա, Երզնկա—Կապան—Մադեն, Երզնկա—Բերդուկ—Չմշկա-ծագ, Կարին—Հասան-Կալա, Վան—Արճեշ, Վան—Արտամետ, Բա-ղեշ—Տիգրանակերտ, Բաղեշ—Մուշ և այլ սայլուղիների խճապա-

56 Հովսեփ Եղցաթյան, *Աղթամարի խեղճ պատրաստությունը*, Կ. Պոլիս, *1909, էջ 3։*

57 *«Մուրճ», 1891, № 2, էջ 222։*

58 Ֆ. Բ. Լինչ. Указанное сочинение, т. II, стр. 184.

տումը, որոնց գլխի մասը ավարտվեց առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։

Ճանապարհների հետ մեկտեղ փոքր ինչ բարելավվեցին նաև ջրային ճանապարհները։ Վանա լճի վրա սկսեց առա-գաստանավերի քիվը և փոքրիկ կաստրվեցին շոգենավեր։ Ցանց-նելու ուղղությամբ։ 1896 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ 1806 թ. այդ լճի վրա «հավիվ յոթը ութ առագաստանավեր կը գոր-ծածվին եղեր, Բաղեշ քաղաքի վաճառականության համար։ Դարուս սկզբին մինչև ցայժմ տարվա տարի երբեմն բազմացած են առա-գաստանավեր, և քան վերջին հաշվառած կան 87 առագաստանավեր, որք ունին 347 նավատեր և 1040 ուսկառաւոր բեռ կը փոխադրեն։ Մեծ նավեր խիստ քիչ կը գտնվին. 1879 թ. Վանա ամերիկյան քա-րոզիչք առաջին անգամ ձգեցին շոգենավակ մը, որուն մասունք ուշտերով բնկել ափած են. ծխախոտի բնկերությունն ևս ունի փոքր շոգենավ մը»[59]։

Ապրանքային արտադրությունը նպաստեց այնուհետև գյուղա-տնտեսական գործիքների բարելավմանը։ Սկզբում և հատկա-պես Ռուսաստանից սկսեցին մուտք գործել երկաթյա գութաններ, հնձիչներ, խոտհարիններ և արտադրության այլ միջոցներ։ Բերկրիում 1910 թվին երեք ամսվա ընթացքում «Ակսայ» ֆիրմայի միջոցով վաճառվեց ավելի քան 500 ռուսական գութան[60]։

Արձանում երկաթյա գութանների հետ միասին մուտք գործե-ցին նաև ֆուրգոններ, հնձիչ մեքենաներ, եղանիներ, փոցխեր և այլն։ 1910 թ. Վանի ռուսական փոխհյուպատոսը գրում էր. «Գյուղատնտ-եսական գործիքները, հատկապես հնձիչները, որոնք ներմուծվե-ցին Ռուսաստանից, այստեղ առաջ բերեցին հակայական փութոր։ Մեքենաների նկատմամբ եղած պահանջարկը մեծացավ և նույնիսկ Շամդինանի շեյխը գիմեց ինձ, խնդրելով դուրս գրել նրա համար հնձիչներ»[61]։

Ապրանքային արտադրությունը խորացրեց երկրի տարբեր շրջանների մասնագիտացումը գյուղատնտեսական տարբեր մթերք-ների արտադրության մեջ և որոշ չափով ներգրավեց ինչպես կալ-վածատիրական նույնպես և գյուղացիական տնտեսությունները

59 *«Բազմավեպ», 1896, էջ 309։*

60 Տե՛ս Р. Бекгульянц, По Турецкой Армении. Впечатления от поездки летом 1914 года. Ростов н/Д, 1914, стр. 10.

61 *ՎՄՄՌ ԿՔՎԱ, ֆ. 521, օպ. 2, գ. 492, թ. 260։*

չուկայական հարաբերությունների մեջ, խարխլելով գյուղացու բնատնտեսության հիմքերը և դրձնելով նրան մանր ապրանքի արտադրող:

Բայց չնայած այդ տնտեսատիպերին, Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը դեռ քիչ էր ներգրավված շուկայական հարաբերությունների մեջ, իսկ որոշ շրջաններ անցած հետ էին կանգնած գրանցից: Գյուղատնտեսության միայն երկրորդական ճյուղերի ապրանքայնությանն էր համեմատաբար բարձր, իսկ հիմնական ճյուղերինը դեռ ցածր էր: Այդ պատճառով էլ երկրում բնատնտեսությունը ոչ միայն XIX դարի երկրորդ կեսին, այլև XX դարի սկզբին տակավին մեծ դեր էր խաղում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտյան Հայաստանի ինչպես գյուղական, նույնպես և քաղաքային բնակչությունը բազմազգ էր: Բայց և տարբերության գյուղերի, որտեղ հայերից հետո մեծ թիվ էին կազմում քրդերը, քաղաքներում հայերից հետո մեծ թիվ էին կազմում թուրքերը[1]: Որոշ քաղաքներում (օրինակ՝ Կարինում) և գյուղաքաղաքներում թուրքերը քանակապես հայերից նույնիսկ շատ էին: Երկրի քաղաքներում ու գյուղաքաղաքներում բնակչությունը XIX դարի վերջին տեղաբաշխված էր հետևյալ կերպ (երկսեռ անձ)[2]:

Տիգրանակերտում	38.000	Սեբաստիայում	15.000
Խարբերդում	33.789	Դիարբեքիրում	10.000
Սերաստիայում	35.000	Ակնում	8.000
Կարինում	32.362	Բայբուրդում	7.000
Վանում	30.000	Զեյթունցագում	4.690
Ագնիքերտում	22.000	Արգնիում	3.000
Բայեզետում	20.000	Բայազետում	2.600
Մուշում	27.000	Խնուսում	2.000
Թոքմակում	21.797	Ընդամենը	339.588

1 Շեքինգը գրում էր. «Խարբերդում, Վանում, Բայեզետում, Տիգրանակերտում, Խարբերդում և Փոքր Հայոց երեսի քաղաքներում առևտրական և արվեստից հրապարակներում գործարքների ժեստաձևությունը հայ ամբոխն է» (Մշակ, 1883, օգոստոսի 25): Նույն բանն էին հաստատում նաև մի շարք այլ հեղինակներ (տե՛ս «Արձագանք», 1858, էջ 182; Գ. Սովանճյանց, Բերա ազգաբ. Տ. Բ, էջ 211):

2 Կարլայլ Մակ Կոզի. Наш новый протекторат. Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии; перевод с

Այդ տվյալները ցույց են տալիս, որ երկրի 18 քաղաքներում ու գյուղաքաղաքներում ապրում էր մոտ 330.588 մարդ: Եթե Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ընդհանուր թիվը ընդունենք մոտավորապես 4.000.000 մարդ, ապա քաղաքային բնակչությունը կկազմի նրա 8,2%-ը: Բայց հենվելով այն բանից, որ որոշ քաղաքների ու գյուղաքաղաքների բնակչության թիվը, տվյալների բացակայության պատճառով, չի բերված կամ թերի է բերված մեր հոդվածից, կարելի է ենթադրել, որ երկրի քաղաքային բնակչությունը կազմում էր նրա ամբողջ ազգաբնակչության մոտ 10%-ը: Մեր այդ հաշվումները համընկնում են Հեսլի այն կարծիքին, որի համաձայն Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ամենահետ բազմությունը, գրեթե 90%-ը, բաղկացած էր աշխատավոր գյուղացիությունից[3]:

Քաղաքային բնակչությունը զբաղվում էր արդյունաբերության տարբեր ձևերով, որոնցից մեկին պատկանում էր: Կային արհեստի բազմաթիվ տեսակներ, ինչպես օրինակ՝ դարբնություն, դերձակություն, կոշվակարություն, ջուլհակություն, ծղոտագործություն, սաղմոսագործություն, երկաթագործություն, պարտաուլություն, օրճնագործություն, քարտաշություն, ոսկերչություն, արծաթագործություն, բիլիզագործություն և այլն: Արհեստի այդ տեսակներից մի քանիսը համեմատաբար զարգացած էր՝ երկրի մեկ, մյուսներըմյուս քաղաքներում: Այսպես, Կարինում զարգացած էր պղնձագործությունը և անագապատությունը, Վանում՝ ոսկերչությունը, դերձակությունը և աուազագործությունը, Բաղեշում՝ ժամագործությունը, դարբնությունը և պարտաուլությունը, Մուշում բրուտագործությունը, Խարբերդում՝ կոշկակարությունը և այլն[4]:

Հայ արհեստավորները մի շարք տեղերում իրենց արհեստները հասցրել էին կատարելության: Նրանք Կարինում պատրաստում էին

английского. М., 1884, стр. 254. Ф. Грязнов. Военный обзор передового театра в Азиатской Турции, СПб, 1897, ч. II, стр. 83, 87, 89, 91, 93—94; **Н. Н. Голобородько.** Турция, М., 1912, стр. 5. Հիշե՛ք Եեիլլս. Հավատան, Հայաստան և Քյուրթաան, Վաղարշապատ, 1893, էջ 67:

3 Նա, Քուրթաշ հեղափոխության զազափարաբանությունը, Փարիզ, 1934, հ. II, էջ 27.

4 Տե՛ս Մ. Միրաքյան. Նկարագրական ուղեւորություն ի հայոց աշխարհս Արեւելյան Տաճկաստանի, Ս. Պետ. 1884, մ. Բ, էջ 167; Վ. Փափազյան, Երկեր, հ. 3, էջ 378, «Մասիս», 1861, Հոկտեմբերի 17, «Բարեգործ», 1882, № 4, էջ 57, «Մշակ», 1887, Հուլիսի 28, Ա-դս. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 111:

հրաշալի կողպեքներ և պողպատի վրա կատարում ամենանուրբ փորագրություններ, Վանում էին ոսկյա և արծաթյա սքանչելի իրեր, Մուշում՝ դիմացկուն և ոսկեզօծ քիլիկներով զարդարված կճուճներ, ինչպես նաև ջրամաններ, որոնք ջուրը միշտ սառն էին պահում, ամի տեսակ ֆիլտր էին, մաքրում էին ջրի անմաքրություններ[5], Եարբերդում գործում էին ասլպիսի գործեր, որ ականատեսներից մեկի խոսքերով ասած՝ «մարդ կզարմանա, թե ինչպես կհաջողին այդչափ դիզելիկ ու պատշաճավոր նկանակով իրարու հարմարեցնել բազմազան կրանդներն, զորս իրենք կներկեն՝ գործածելով զուտ տեղական բույսեր և հանքեր»[6]։

Հայ վարպետներն իրենց շինվածքներով ու գործվածքներով մասնակցում էին համաշխարհային կամ ծայրերկրային ցուցահանդեսներին և շահում մրցանակ։ Օրինակ՝ 1867 թ. Փարիզում Սահակ Սերաստացի անունով մի արհեստավոր վիրաբուժական և դիեզելոգիական նուրբ գործիքներ պատրաստելու համար արժանացավ պատվո վկայականի։ Նրա շինած գործիքները «առհասարակ գերազանց համարվեցան»[7]։

1880 թ. Կյուրինում մի հայ ջուլհակուհի, որի անուն ազգանուն, դժբախտաբար, մեզ չհաջողվեց պարզել, հնարեց մի սարք, որով բրդյա գործվածքների վրա արտատպում էր եվրոպական կերպասների նախշերը, ծաղիկների գծագրությունն ու գրանց գույների հրաշագործումները։ Ջուլհակուհու մոտ սովորելու էին գալիս տարբեր վայրերից[8]։

1910 թ. Թուրքական կառավարության կողմից կազմակերպված Վանի ցուցահանդեսին մրցանակ շահեցին մի խումբ հայ արհեստավորներ, որոնցից պետք է հիշատակել ատաղձագործ Ն. Տ. Գրիգորյանին, բրուտագործ Ն. Պ. Շահաթլոյանին, չուստգործ Ռ. Մարաիրոսյանին, գորգագործ Ս. Գոնտակչյանին և ուրիշներիւ Առանձնապես հրաշալի էր ոսկերիչ Գ. Քալումճիպաշյանի պատրաստած երկրագունդն իր պատվանդանով հանդերձ, որի ինչն իրեն պատկերում էր ամբողջ ամիսը, օրը, մասը և տարիներ։

Արևմտյան Հայաստանի արհեստավորների մի մասը համախմբված էր էնաֆութիւններում, իսկ մյուս մասը բանում էր միայնակ։ Էնաֆութիւնները, քան էութիւն, նայնն էին, ինչ համքարութիւնները միջնադարյան Եվրոպայում, որտեղ համախմբված էին միատեսակ արհեստի ներկայացուցիչները, յուրաքանչյուր արհեստանոցում վարպետի ղեկավարության տակ աշխատում էին վարպետացուն և աշակերտը, ունեին իրենց ղեկավարները, պատասխանատուները և այլն։ Համքարութիւնները դեմ էին մրցութիւնն, որևէ մեկը բարձրացնում կամ իջեցնում էր իր արդյունքների գնները, ապա մյուսները խզում էին նրա հետ իրենց ունեցած գործնական կապերը, մեկուսացնում էին նրան, ներարկում անտեսական ու բարոյական ճնշման և ստիպում վերադառնալ նորմալ գներին։ Համքարութիւններն ունեին իրենց անդամավճարները, որոնք խանգարում էին կապիտալիստական հարաբերութիւնների առաջացմանն ու զարգացմանը։ Կ. Մարքսը գրում էր. «Համքարային օրենքները... խստիվ կերպով սահմանափակելով մ'ըն ննջավարպետների թիվը, որոնց աշխատանք տալու իրավունք ուներ մեկ վարպետը, զրանով էլ հենց պլանաչափորեն արգելք էին լինում համքարային վարպետների կապիտալիստ գառնալուն։ Նմանապես՝ վարպետը կարող էր ննջավարպետներ բանեցնել բացառապես այն արհեստում միայն, որի վարպետն էր ինքը։ Համքարութիւնն իրեն հոանդագին պաշտպանում էր վաճառականական կապիտալի,— համքարութիւնների դեմ կանգնած կապիտալի այդ միակ ազատ ձևի,— ամեն մի ոտնձգութիւնից։ Վաճառականը կարող էր ամեն տեսակ ապրանք գնել, բայց ո՛չ աշխատանքը որպես ապրանք։ Նրան հանդուրժում էին յոկ իբրև արհեստի արդյունքների հավաքագործող... Քեև համքարային կազմակերպութիւնը առաջ էր բերում արհեստների առանձնացում, մեկուսացում ու զարգացում և դրանով մասնիֆակտուրային ժամանակաշրջանի նյութական նախադրյալ էր ծառայում, այնուամենայնիվ, ինքը՝ համքարային կազմակերպութիւնը, բացառում էր աշխատանքի մասնիֆակտուրային բաժանման հնարավորութիւնը»[9]։

Սակայն էնաֆութիւնները եվրոպական համքարութիւնների համեմատութիւնամբ ունեին մի շարք առանձնահատկութիւններ։ Ի տարբերութիւն եվրոպական երկրների, Արևմտյան Հայաստանում վարպետին թույլատրվում էր ունենալ մեկ աշակերտից և վարպետացուից ավելի, իսկ արհեստավորին՝ աշխատանքից հետո զբաղվել արդյունքների արտադրութիւնամբ և դրանք վաճառել իր համար։ Եթե Արևմտյան Եվրոպայում համարյա բոլոր արհես-

5 Վ. Փափազյան, Երկեր, հ. 2, էջ 474։
6 «Մուշ», 1893, ապրիլի 24, էջ 252—253։
7 «Բազմավեպ», 1882, էջ 298։
8 «Մշակ», 1881, մայիսի 8։

9 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 378։

տավարներն ու առևտրականները համախմբված էին համբարությունների, ապա Արևմտյան Հայաստանում նրանց մի մասը, ինչպես ասվից, դուրս էր կանգնած էսնաֆությունների։ Այդ առանձնահատկությունները հնարավոր էին դարձնում էսնաֆություններում սկզբում ունեցվածքային շերտավորում, իսկ այնուհետև կապիտալիստական հարաբերությունների առաջացում ու զարգացում։

Արևմտյան Հայաստանում արհեստավարների հետ միասին կային նաև առևտրականներ, որոնք իրենց դրամական հարաբերությամբ բաժանվում էին խոշոր, միջին և մանր խմբերի։ Քանակապես գերիշխողը մանր առևտրականներն էին, իսկ դրամապես՝ խոշորները։

Ժողովրդի հետ ամենից շատ գործ ունեցողը մանր առևտրականը, կամ շարչին էր։ Սա լավ գիտեր, թե ո՞ր ապրանքը որտե՛ղ, ե՛րբ, ո՛ւմ և ի՛նչ գնով էր վաճառելու և, օգտվելով բնակիչների աղքատությունից ու տգիտությունից, կողոպտում էր նրանց։ Շատ անգամ շարչին ապրանքը տալիս էր ապառքով, իսկ բերքահավաքին վերցնում նրա գին կրկնակին ու եռակին և այդ ու նման ճանապարհներով գրկում աշխատավորին ունեցվածքից։ Գ. Արմանձրյանցը նշում էր, որ այդ գործում ալքի էին բնկնում հատկապես Բազեշի առևտրականները։ «Ընդհանրապես,— գրում էր նա,— շափազանցորեն հռչակված է բազեշցի վաճառականց և վաճառաց շահասիրությունն մարդ խաբելու մեջ, և այդ քաղաքի շրջակա գյուղացոց ավերումն՝ այսպիսյաց անխղճությունեն է, որ արտեր կր գրավին, ցորեններ և անասուններ կը տիրեն, գնա տակոսի տեղ չեն կրնար լեցնել. և այդ՝ կրնեն առևտրական արդարության օրենաց համաձայն»[10]։

Արևմտյան Հայաստանի արդյունաբերության մյուս, համեմատաբար բարձր ձևը մանր ապրանքային արտադրությունն էր։ Մանր ապրանք արտադրողը մի կողմից՝ ապրեներում էր արհեստավորից, իսկ մյուս կողմից՝ բանվորից։ Նա առաջինից տարբերվում էր նրանով, որ ավելի քիչ էր կապված, հաճախ անգամ չէր կապված հողի հետ, իսկ երկրորդից՝ նրանով, որ ուներ իր աշխատանքի գործիքները։ Եթե արհեստավորը բանում էր պատվիրատուի համար, ապա մանր ապրանք արտադրողը՝ սովորաբար շուկայի համար, վաճառելով իր շինվածքները կամ անմիջական սպառողին, կամ գնորդ-առևտրականին։

10 Գ. Արմանձյանց, Համով-Հոտով, հ. Պոլիս, 1884, էջ 107։

Մանր ապրանք արտադրողների երկրի տարբեր քաղաքներում պատրաստում էին ամենատարբեր շինվածքները և վաճառում տարբեր գներով։ Կարինում նրանք դեռ 1870-ական թվականներին արտադրում էին պղնձյա զանազան իրեր և վաճառում 1 օկային 34 դուրուշով կամ 3 ֆունտ՝ 2 շիլլինգ[11], իսկ Վանում կարում էին բանկոն ու արխալուղ, որպիսզի պարտներ տաննն գյուղերի կամ քյուրդերի մեջ[12]։

Նահապետական հարաբերությունները արդեն անտեսապես բարքայել էին մանր ապրանք արտադրողներին և տանջող նրանց միջև ունեցվածքային շերտավորում։ Դրա մասին վկայում է հետևյալ անուղղակի տեղեկությունը. 1872 թ. ժամանակակիցներից մեկը գրում էր, որ Վանում «հարյուրեն 5-ը խիստ լավ կապրին, 45-ը միջակ, 50-ը՝ վատ»[13]։

Մանր ապրանք արտադրողների միջև նրած ունեցվածքային այդ շերտավորումը որոշ տեղերում վեր էր աճում կապիտալիստական հարաբերությունների, որի հետևանքով երկրի արդյունաբերության մեջ գոյություն ունեցող արհեստային և մանր ապրանքային ձևերի կողքին առաջ էր գալիս նաև մանուֆակտուրային ձևը։

* * *

Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղաքաղաքներում մանուֆակտուրան առաջանում էր տարբեր ճանապարհներով։ Դրանցից մեկն այն էր, որ արհեստային վարպետը մեծացնում էր աշակերտների, իսկ որոշ դեպքերում՝ նաև վարպետապուների թիվը, ընդարձակում էր արհեստանոցը, մտցնում աշխատանքի բաժանում և այդպիսով կազմակերպում կապիտալիստական տնտեսություն։ Այսպես, Վանում 1907 թ. յուրաքանչյուր դերձակ ու սակերիչ վարպետ ուներ միջին հաշվով 3—4, 4—5 և ավելի աշակերտ։ «Շալակիս քղմակից հաշվեմեն գրում էր, որ Վանում «ամեն մի վարպետ իր կարողության համեմատ ունի 1—8 աշակերտ, բայց միայն առաջնակարգ, մատի վրա համրվող վարպետներ կարող են պահել 8—9 աշակերտ, միջակ դասու վարպետները 4—5 հատ որ պահեն՝ դեռ շատ է։ Աշակերտներից ամենքն ալ գրեթե 10—20 ոսկու պատանիներ են»[14]։

11 Թուատատեի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա», 1880, գ. 1095, թ. 142։

12 Վ. Պապազյան, Երկեր, հ. 3, էջ 473։

13 «Մեծվի Վասպուրական», 1872, մարտի 17։

14 «Մշակ», 1907, հոկտեմբերի 3։

Մանուֆակտուրայի առաջացման ձանապարհներից մյուսն այն էր, որ գնորդ-առևտրականը, աստիճանաբար իրեն ենթարկելով մանր արտադրողներին, հնարք էր տալիս նրանց և վարձատրում շինվածքների համար։ Ալպես, Կյուրեղում (Սեբաստիայի վիլայեթ) 1860-ական թվականներին կար մոտ 5000 դազգահ, որոնց վրա աշխատողները գերազանցապես կանայք էին։ Նրանց մի մասը բանում էր սեփական, իսկ մյուսը՝ գնորդ-առևտրականների տված հումքով։ Բայց բոլոր ջուլհակները տալիս էին իրենց գործվածքները վաճառականներին, որոնք իրացնում էին դրանք ինչպես Թուրքիայի, նույնպես և Եվրոպայի զանազան քաղաքներում։ 1907 թ. Ժամանակագիրներից մեկը գրում էր. «Շալագործությունը Կյուրեղի մեջ քաոսային տարման հնութիւն մը ունի. հետզհետե զարգացման հետ բնդհանրացած է ամեն տուներն ներս և այսօր քաղաքիս գրեթե տպրուստի միակ միջոցն է եղած։ Գործավոր դասակարգը ամենազլխավոր մասը կը կազմե բնակչութեան, որ շալ գործելով ապահոված ըլլալ կը կարծի իր օրապահիկը։ Բսանեն քսանհինգ վաճառականներ եվրոպական լարաներ (մանված բուրդ), մանածը և երբեմն ներկանյութ, գործողներու կը հանձնեն։ Այս վերջինները իրենց տուների մեջ հասարակ և ժամբառ հոսերու (տեզերկաճ) վրա նմուշներու համաձայն գործելով կը հանձնեն ապանրուն, ինչպես իրենք սովոր են կոչել»[15]։

Մանուֆակտուրան այդ ճանապարհով առաջացավ նաև Շամախի կենտրոնում։ Բաղում։ Ալպես կային մոտ 1000 շալագործներ, որոնք աշխատում էին որպես բանվորներ վաճառականները նրանց նուլնպես տալիս էին հումք, աշխատավարձ, իսկ գործվածքները վաճառքի արտահանում Կարին, Տրապիզոն, Բաղեշ, Տիգրանակերտ և այլ քաղաքներ։ Շատ անգամ վաճառականները շահագործում էին ջուլհակներին վաշխառուական եղանակներով։ Նրանք ֆինանսավորում էին ջուլհակներին բավականին մեծ տոկոսներով, իսկ հետո պարտքի ու տոկոսների փոխարեն վերցնում նրանց գործվածքները։

Անշուշտ, ինչպես Կյուրինում, նույնպես և Բաղում ջուլհակները աշխատում էին իրենց տներում, որտեղ նրանց օգնում էին ընտանիքի անդամները, բայց այդ հանգամանքը չի խանգարում բնութագրելու գնորդ-վաճառականների և նրանց միջև առաջացած հարաբերությունները որպես կապիտալիստական, քանի որ առ-

15 «Երկրի ձայն», 1907, № 30, էջ 4, տե՛ս նաև «Մշակ», 1881, մայիսի 15։

արքական կապիտալը արդեն վեր էր ածվել արդյունաբերական կապիտալի։ Վ. Ի. Լենինը, ցույց տալով առևտրական կապիտալի բնորոշած ձևերը՝ արդյունաբերական կապիտալի ներաճման ճանապարհին, նշում էր, որ դրա բարձրագույն ձևն այն էր, որ առևտրականը պատրաստի հումքը բաժանում էր ունիվերսալ արտադրողներին և վարձատրում նրանց շինվածքների համար։ Այդ ձևի ժամանակ «առևտրականը de facto վարձու բանվոր է դառնում, որ ստանձ է աշխատում կապիտալիստի համար. մեծագնորդի առևտրական կապիտալը արդյունաբերական կապիտալ է դառնում»[16]։ Առևտրականն այնուհետև կարող էր բոզնել այդ վիճակին անփոփոխ, բայց կարող էր նաև կառուցել ձեռնարկություն և բոլորին հավաքել մի տեղում։

Արևմտյան Հայաստանում մանուֆակտուրան, բացի նշված ուղիներից, կազմավորվում էր նաև առանձին անհատների կողմից ձեռնարկություններ կառուցելու և բանվորներ վարձելու ճանապարհով։ Ո՞վքեր էին այդ անհատները, ի՞նչպես էին կուտակել իրենց միջոցները, դժբախտաբար, մենք չգիտենք։ Բայց ելնելով մեր ձեռքի տակ եղած որոշ նյութերից, որոնք կրճատվեն ասորև, պետք ենթադրել, որ նրանք հարստացել էին անմիջական արտադրողներին ունեզրկելու կամ շահագործելու հունակներով և հիմնել իրենց ձեռնարկությունները առավելապես տեքստիլ արդյունաբերության մեջ։ Ահա փաստեր. Վանում, համաձայն է 1870-ական թվականների կեսերին[17], Թոխմախյան եղբայրները հիմնեցին կտավագործական մի ձեռնարկություն։ Հետագայում նրանց օրինակին հետևեցին նաև ուրիշները։ 1880-ական թվականների սկզբներին Գ. Սրվանձտյանցը գրում էր. «Ի Վանում ամառ ատրիներս քանի մը նոր գործարաններ բացված էին տեսակ-տեսակ մանեցապի, և Շամի, Հալեպի ու Պուրսայի ապրանքներու տեսակներ կը գործեին, ինչպես նաև տեղական տեսակ մը ատուի, որ ընդհանրացած է գրեթե տեղացիներու մեջ հագուստ շինելու»[18]։

Կարինում Հալիճը 1880-ական թվականներին կատարելագոր-

16 Վ. Ի. Ռենին, Երկեր, հ. 3, էջ 466։

17 Այդ եղելությունի համար հիմք կարող է ծառայել Ա. Թոխմախյանի հետևյալ վկայությունը. «Վերջին տարիներին Թոխմախյան եղբայրները բացակ բամբակեղենների համար մի գործարան բացին, որոնց մանածը եվրոպացիքն են առաքուած (տե՛ս Նրա «Հայերենի պահանջներ և հայ գյուղացին», Բիֆիս, 1881, էջ 24)։

18 Գ. Սրվանձտյանց. Հայոց-Հոռոմ. Գ. Պոլիս, 1884, էջ 78, տե՛ս նաև «Մշակ», 1881, ապրիլի 23։

ծնց իր արտի ձեռնարկությունը և մեծացրեց նրա արտադրությունը[19], իսկ 1897 թ. ամերիկացի Մր. Չեմպըրս հիմնեց մանուածյի ձեռնարկություն։ Բայց սա այնքան քիչ էր վարձատրում, որ բանվորները հրաժարվեցին նրա մոտ աշխատելուց, և ձեռնարկությունը փակվեց[20]։ Կարինում հատկապես հռչակված էր էհրամների (կանեփի ծածկոցների) արտադրությունը, որի աշխատանքի կազմակերպման մասին, դժբախտաբար, չունենք բավարար տեղեկություններ։

Արարկիրում կտավագործությունը կազմում էր բնակչության հիմնական զբաղմունքը։ Այստեղ կար 15 մանուածյի, 2 մանածի և 18 սամանի կամ սիտոյի ձեռնարկություն[21]։ Շատ հավանական է, որ դրանց մի մասը մանր ապրանքային բնույթի էր, իսկ մյուսը՝ կապիտալիստական։ Առանձնապես հռչակված էր Տեր-Գևորյան Պողոս էֆենդու մանուածյի ձեռնարկությունը, որի մասին Գ. Սրվանձտյանցը 1879 թ. գրում էր, թե այն իր արտադրած գործվածքներով կարող էր մրցել «Հալեպի և Շամի ապրանքներուն հետ»[22]։

Խարբերդում կար կտավագործության երկու ձեռնարկություն, որոնք XX դարի սկզբին տարեկան արտադրում էին մոտ 10.000 կտոր կամ 1000 ոսկու կտամիր կտավ և արտահանում Կարին, Կարահիսար, Տիգրանակերտ, Բալու, Քղղի և այլուր[23]։ Սակայն Խարբերդում համեմատաբար զարգացած էր գործագործությունը։ Ոմն Գեննեթյանը տակավին 1890-ական թվականներին դնեց Խարբերդի վերին թաղում գտնվող Գյուլբեկյանի տունը, գործեցրեց այն այրհատանոց։ Ակնից հրավիրեց վարպետներ, հավաքեց անտեր ու որբ մնացած հայ պատանիներին ու աղջիկներին և սկսեց արտադրել գորգեր։ Նա սկզբում բանվորներին տուրք էր միայն ուտելիք ու հագնելիք, բայց հետագայում, երբ ընդարձակեց ձեռնարկությունը, հասցնելով գազգահների թիվը մինչև 25-ի, նրանց համար սահմանեց աշխատավարձ՝ աղջիկներին 1, իսկ տղաներին 2 մեջիդ։ 1910—1912 թթ. Գեննեթյանը բացեց գորգագործական ձեռնարկու-

19 Տե՛ս «Բազմավեպ», 1882, էջ 297։

20 Տե՛ս «Բյուզանդիոն», 1898, մարտի 16։

21 Տե՛ս Ս. Եփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, ա. Ղազար, 1903, հ. I, գիրք Ա, էջ 280։

22 Գ. Սրվանձտյանց, Բարձր ադրար, Ժ. Ա., էջ 281։

23 Տե՛ս «Բյուզանդիոն», 1906, ապրիլի 27, Գ. Նազարյան, Արտասահմանի կամ տեղեկագիր Բալուի, Քարբերդի, Չարսանճաղի, Ճապաղչուրի և Երզնկայի, Կ. Պոլիս, 1883, էջ 136։

թյուններ նաև Խարբերդի Վարին թաղում, Մեզրեռում և այլ տեղերում, հասցնելով նրանց թիվը 8-ի։ Նա իր գորգերն ուղարկում էր վաճառելու դանագան երկրներ, ընդհատ մինչև Ամերիկա։ 1903 թ. Գեննեթյանը հիմնեց նյու-Յորքում մի խանութ, որտեղ վաճառում էր իր ձեռնարկություններում արտադրած հայկական գորգեր[24]։

Բացի հիշատակված քաղաքներից, մանուֆակտուրային կտավագործական ու գորգագործական ձեռնարկություններ կային նաև Բաղեշում, Սղերդում, Տիգրանակերտում, Երզնկայում և այլուր, որոնց մեր տեղերի աղբյուրների օգնությամբ չենք կարող կանգ առնել[25]։ Այդ ձեռնարկությունների բնորոշ կողմերից մեկն այն էր, որ նրանց գործ մասը բանում էր տեղական, իսկ մեծ մասը արտասահմանից ներմուծած նումրով՝ գլխավորապես թելով ու մանվածքով։ Ճիշտ է, XIX դարի վերջին Խարբերդում հիմնադրվեց մանուածյան, բայց այն չէր կարող համեմատվել բավարարել երկրի բոլոր ձեռնարկություններին։ Կապիտալիստները հիմնականում բելից պատրաստում էին նուրբ, իսկ տեղական բելից՝ կոպիտ գործվածքներ։ Բացառություն էին կազմում էհրամները, որոնց թելը պատրաստում էին կարինցի կանայք հմտորեն հյուսված նրբությամբ[26]։

Անհրաժեշտ է նշել, որ Արևմտյան Հայաստանում, բացի մանուածյի մարդկանցից, տեքստիլ արդյունաբերության ձեռնարկություններ հիմնադրողներն նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ու Կարմիր խաչի բնակերությունը։ Նրանք այդ ձեռնարկությունները հատուցեցին 1890-ական թվականների հայկական ջարդերից հետո։ Այսպես, պատրիարքարանը 1896 թ. կառուցեց կտավագործական մի արհեստանոց Վարագա վանքում, իսկ 1900 թ. այն անգործունյա մնաց։ Հետագա տարիներին նա կտավագործական ձեռնարկություններ կառուցեց Տիգրանակերտում, Այնթափում և այլ տեղերում[27]։ Այդ ձեռնարկություններում բանվորները հոգոցածներից տուժած պատանիներն ու կանայք էին, որոնք աշխատում էին բացարձակապես մի կտոր հացի և մերկ մարմինները ծածկելու համար։

24 Տե՛ս Մ. Ոիգմենյան, Խարբերդ և իր գավակները, Կալիֆորնիա, 1955, էջ 376—377։

25 Տե՛ս «Մասիս», 1881, հոկտեմբերի 17, «Արծվի Վասպուրականց», 1863—1863, էջ 188, Մ. Միհրանյան, Նշված աշխատությունը, Ժ. Ա, էջ 57—58։

26 Վ. Փափազյան, Նրկեր, հ. 3, էջ 408։

27 Տե՛ս «Բյուզանդիոն», 1904, փետրվարի 4, «Արարատ», 1902, էջ 140, 674—675։

Կարմիր խաչի բնակութիւնը 1895 թ. անդու-ամերիկեան մի-սիոներներին բաց թողեց որոշ դումար՝ ջարդերից տուժած հայ բնակչութեանը օգնելու նպատակով։ Միսիոներների մի մասը այդ դումարով 1896 թ. վաճառում գնեց հինգ տուն, տարբերից դրանք ար-հեստանոցներ, հավաքեց տատապած հայուհիներին և սկսեց նոսով արտադրել։ Բայ մյուս մասը գնեց բուրդ ու բամբակ, բաժանեց այն կարիքավորներին՝ իրենց տներում կատվ ու զանազան գործվածք-ներ պատրաստելու համար։ Նրանք գործավորներին վարձատրում էին փողով, իսկ արդյունքը վաճառքի ուղարկում երկրի զանազան շրջաններ[28]։

Բացի Վանից, Կարմիր խաչի բնակութեան միջոցներով կազ-մակերպական ձեռնարկութիւններ հիմնվեցին նաև Արաբկիրում։ Սակայն հիմնադրողները, բան երևույթին զգալով, որ անդոր են մրցել տեղացի կազմակերպների հետ, իրենց ապրանքները շուտով տեղափոխեցին Մալաթիա[29]։

Արևմտյան Հայաստանի ինչպես մանավանդ, նաև նախ և պատ-մութաբանական ու Կարմիր խաչի բնակութեան կազմակերպական ձեռնարկութիւններում աշխատում էին հիմնականում, անդերքով, իլիկով, մասրայով, գազդահով և այլն։ Այդ ձեռնարկութիւնների աշխատանքի մանուֆակտուրային բաժանման մասին պատկերա-ցում տալու համար բերենք Վանի կարմիր խաչի բնակութեան վերա-հիշյալ հինգ արհեստանոցների օրինակը։ Այսպես 60 հոգի գործ էին բուրդ ու բամբակ, 1000 հոգի ճախարակներով թել էին մանում, 70 հոգի մասրա էին լցնում, 200 հոգի գազդահներով կտավ ու շալ էին գործում, 15 վարպետ հագուստ էին ձևում, 160 բնտանիք այն կարում էին, 20 բնտանիք գուլպա էին գործում, 10 հոգի վերջակ էին կարում և 70 հոգի «կը ծառայեն իրրև գրագիր, հաշվակալ, քննիչ, գործակատար, գնահատող, հիվանդապահ և այլն, և այլն»[30]։

Իհարկե, կազմակերպական ոչ բոլոր ձեռնարկութիւններն ու-նեին այդչափ բանվորներ, բայց հավանական է, որ նրանցում ևս աշխատանքի բաժանումը նույն կերպ էր կատարված։

Արդյունաբերության մյուս ճյուղը, որտեղ մանուֆակտուրան երևան եկավ թիչ թե շատ դպրի չափով, կաշեգործությունն էր։ Երկրի մի շարք քաղաքներում ու գյուղերում գոյություն ունեցող հին ձեռնարկութիւնների կողքին բացվեցին նորերը, որոնք ի տարբե-

28 *Տե՛ս «Մշակ», 1895, սեպտեմբերի 7։*

29 *Տե՛ս «Բյուզանդիոն», 1897, ապրիլի 25։*

30 *«Մշակ», 1896, մարտի 2։*

րութիւն հների, կաշիների ու մորթիների մշակումը կատարում էին կատարելագործված եղանակներով։ Այսպես, Վանում տակավին 1870-ական թվականներին կար կաշեգործական մի ձեռնարկու-թյուն, որտեղ կաշիների մշակումը, բան Ա. Թոխմախյանի վկայու-թյան, տեղի էր ունենում հմրուգական ձևով[31]։ Այդ քաղաքում հե-տագայում կառուցվեցին նաև ուրիշներ։ Նրանցից ազբի էր բնակում Պարթևյանի ձեռնարկութիւնը, որի մասին Վ. Փափազյանը գրում էր, թե դա մեկն է այն նորութիւններից, որոնք պատիվ են բերում քաղաքին։ Պարթևյանի ձեռնարկութիւնում «մի ծայրից մտնում-է մորթը, և մյուս ծայրից ելնում են կաշիները... Այս օրերս նրա ար-տադրած կաշին փորձել ուվին, լավ կաշի է, և մուտքութիւն կա նոր տեսակներիը Էրզրում և Կ. Պոլիս ուղարկել»[32]։

Կարինում 1860-ական թվականներին կար 6 ձեռնարկութիւն, որտեղ տարեկան մշակվում էին 10.000 հատ ու գոմեշի կաշի և 20.000 ոչխարի ու այծի մորթի[33], իսկ Տիգրանակերտում՝ 10 ձեռ-նարկութիւն հմուտ աշխատավորներով, որոնք լավ ըմբռնած են արհեստի գաղտնիքը»[34]։

Մալաթիայում կային կաշեգործական շուրջ ձեռնարկութիւն[35], իսկ Խարբերդի կազայի Բիկատն կամ Խոյու գյուղերում՝ երեք ձեռնարկութիւն, որտեղ մշակվում էին «մեծ քանակութիւնը գո-մեշի և եղան կաշիներ»[36]։

Ձեռնարկատերերի մեծ մասը կաշիների մշակման առաջա-վոր եղանակները սովորել էր Թուրքահայաստանում, հատկապես Կովկա-սում։ 1912 թ. ժամանակակիցներից մեկը գրում էր, որ վերջում կաշիների պատրաստելու նոր ձևերը հայերը բերել են Կովկասից։ Նրանք շատ հավանական է, որ իրենց ձեռնարկութիւններում կի-րառում էին աշխատանքի մանուֆակտուրային այն բաժանումը, ինչ կար Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Օրդուբադում և այլ քաղաքներում[37]։ Ձեռնարկատերերի փոքր մասը կաշիների

31 *Տե՛ս Ա. Թոխմախյան, Հայերենի պահանջներ և հայ գյուղացին, էջ 24։*

32 *Վ. Փափազյան, Երկեր, հ. 5, էջ 409։*

33 *Տե՛ս Я. Д. Малама, Средства продовольственные, фуражные, перево-зочные и денежные северо-восточной части азиатских владений Оттоман-ской империи, СПб, 1876, стр. 53.*

34 *«Բյուզանդիոն», 1907, մարտի 30։*

35 *Տե՛ս Աշխեն Ալպոյաճյան, Գաւառներ Մալաթիոյ Հայոց, տեղեկա-գրական, պատմական և ազգագրական, Վենետիկ, 1961, էջ 1007։*

36 *Գ. Սրվանձտյանց, Բերոս ազգաբ, մ. Բ, էջ 79։*

37 *Այդ մասին մանրամասն տե՛ս* С. Гулишамбаров. Обзор фабрик и заво-дов Тифлисской губернии, Тифлис, 1883, стр. 95—98.

մշակման առաջավոր հաշանակները սովորել էր Եզիպտոսում և Եվրոպայի զանազան երկրներում։

Անհրաժեշտ է նշել, որ բացի մասնավոր ձեռնարկություններից, կար կաշիների մշակման նաև պետական ձեռնարկություն, որը գտնվում էր Երզնկայում։ 1860—1870-ական թվականներին այնտեղ տարեկան մշակվում էր 15000—20000 հատ կաշի և զորքի համար պատրաստվում 36.000 կիսամետրաքավոր և 15.000 հետրաքավոր կոշիկներ[39]։ Այդ ձեռնարկության մասին ուրիշ ավելորդ մենք, դժբախտաբար, չունենք։

Արևմտյան Հայաստանի արդյունաբերության երրորդ ճյուղը, որը մասնավոր էր զարգացման մանուֆակտուրային ստադիային, սպիրտային խմիչքների արտադրությունն էր։ Երկրի մի քանի քաղաքներում և որոշ գյուղերում սկսած 1860-ական թվականներից գործում էին թիչ թե շատ կատարելագործված օղեթորման և գինեգործական ձեռնարկություններ։ Դրանցից էին Կարնո օղեթորման երկու ձեռնարկություն։ 1870-ական թվականների սկզբներին մանմնդական փանտախի բնակչության, իշխանությունների ղբղմամբ, հարձակվից այդ ձեռնարկությունների վրա և զարդ ու փշուր արից զրպան մեղադրծությունն։ Բայց հետագա տարիներին այդ բացարում առաջ եկան չոր նոր օղեթորման ձեռնարկություններ։ Նրանցից առանձնապես նշանավոր էր Շամբանյան եղբայրներինը, որը փակվեց XX դարի սկզբին՝ փայտի պակասության պատճառով։

Խարբերդում և Բալուում, հատկապես վերջինս Մարզամի և Կարաշար նահիճներում արտադրում էին բնական գինի, որը հայտնի էր «խարբերդի գինի» անունով և արտահանվում վաճառքի երկրի տարբեր շրջանները[39]։

Բացի Խարբերդից ու Բալուից, գինիների արտադրությամբ հռչակված էին նաև Վանի վիլայեթի մի քանի գյուղերը, հատկապես Շադրուվին։ Գ. Արմանձյանցը գրում էր, որ Շադրվանի գինին «Շամբանիո գինին է Վանա համար. և բուռ մեկ՝ գերազանց կա է. նայն ատոր գոյնը, Բրիստոսի անարատ արյուն, բաժակի մեջ լեցված ատենը չունի փրփուրը, անմահական հոտը, իսկ խմածդ ժամանակ՝ հարկ չկա ձեռքովդ ի բերան տանելու. նա իր հրապուրիչ դուրեկ, հոտով ու մղմղուն ձայնով կոկորդդ կը դյութեն, ինքն կը ձգե»[40]։

Արևմտյան Հայաստանի արդյունաբերության մեջ մանուֆակտուրան առաջացել էր նաև բրուտագործության բնագավառում։ Վանի, Բաղեշի, Խարբերդի և Կարնո մոտակա մի շարք գյուղերում կային ձեռնարկատերեր, որոնք իրենց արհեստանոցներում կիրառում էին վարձու աշխատանքը կամ աշակերտության սիստեմը։ Նրանց ձեռնարկություններում աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը ցույց տալու համար վերցնենք Վանից 5—8 կմ հեռավորության վրա գտնվող Ջիրաշեն գյուղը։ Այդ գյուղում բանվորներն աշխատում էին գեռնահարկային 6—7 արհեստանոցներում, որոնք կոչվում էին բանելատեղեր կամ բանատուններ։ Բանվորների մի մասը հողը լցնում էր հորը և վրան չոր ածուխ, որը ժամանակից հետո տեղափոխում էր ցեխը բանատուն, որտեղ «վերազարուն բանվորներ ոտքեկ մը կը կոխեին»[41]։ Նրանց մյուս մասը շաղախում էր ցեխը սալարարների վրա և հանձնում վարպետին ու նրա աշակերտներին։ Իսկ սրանք Հախալաքի օգնությամբ շաղախից պատրաստում էին աման, թողում հարթում էին այն, բաթախում լրջրծուն մարդի մեջ և նախչում։ Վերջապես բանվորների մի այլ մասը տեղափոխում էր պատրաստված ամանը փուռը և թրծում[42]։ Այնուհետև ձեռնարկատերը տալիս էին ամանեղենները վաճառականներին, որոնք, մի ականատեսի վկայությամբ, «իշարեռներով քաղաքը փոխադրելով կամբարեն դյխավոր պողոտային վրա գտնվող իրենց խանութներուն մեջ և կծախեն հատով թե շատով»[43]։

Բացի նշված ճյուղերից, մանուֆակտուրան երևան եկավ երկրի արդյունաբերության նաև այլ ճյուղերում։ Այսպես, 1880-ական թվականներին Խոտայքի կոմս Քոնտ որ Բիլանին Կարինում հիմնեց ծխախոտի մշակման ձեռնարկություն, որտեղ սկզբում աշխատում էին 50, իսկ հետագայում ավելի շատ բանվորներ։ Նրա ձեռնարկությունն ուներ տղամարդկանց և կանանց բաժիններ։ Վ. Փափազյանը գրում էր. «Կանանց մասը հետզհետե լցվում է բացառապես հայ գործավորուհիներով։ Հետաքրքիր է տեսնել, թե նրանք ինչպես ամեն առավոտ խումբ-խումբ գնում են գործարան, որը գտնվում է Գյոլբաշիի մոտ, ծածկված իրենց խոշոր

---

38 Տե՛ս Я. Д. Малама. Средства продовольственные..., стр. 50.

39 Տե՛ս Գ. Ալճեոնեի, Թուրքաց հայկի տեսակական գրություններ, Թիֆլիս, 1894, էջ 15. А. М. Колюбакин. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции. Тифлис, 1891, т. III, ч. 1, отд. 2-й, стр. 163.

40 Գ. Արմանձյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1878, էջ 101—102։

41 «Բյուզանդիոն», 1906, սեպտեմբերի 26։

42 Նույն տեղում, սեպտեմբերի 28։

43 Նույն տեղում։

շինության ճյուղում։ Նրանց կառուցողները Բարիկյան նշանավոր եղբայրներն էին ու վարպետ Ալիքսանը։ Առաջինները հիմնադրին իրենց գործարանը 1880-ական թվականների սկզբներին Խարբերդում, իսկ երկրորդը՝ Վանում, հավանական է 1890-ական թվականներին։ Նրանք մեքենաշինության գործը սովորել էին Եվրոպայում և Ամերիկայում ու հենց այդ երկրներից էլ բերել սարքավորումը։ Այդ ձեռնարկատերերը արտադրում էին ջրհան մեքենաներ, գյուղատնտեսական գանգան գործիքներ և երկաթյա այլ շինվածքներ։

Վարպետ Ալիքսանի գործարանի մասին հակիրճ տեղեկություն էր տալիս «Բյուզանդիան» թղթակիցը։ Նա 1897 թ. գրում էր. «Վարպետ Ալիքսան անունով անձ մը երկար տարիներ ծառայելով եվրոպական մեքենայի գործարաններու մեջ, տեղս (այսինքն՝ Վանում—Ա. Հ.) բացած է բավական խոշոր արհեստանոց մը, մեծ և կարևոր մեքենաներով ու գործիներով, կառավարությենեն երաշխավորված, վարպետ Ալիքսանը կը շինե ջրհան մեքենաներ, եվրոպական կարգիր, կը ձուլե գործիքներ, գանգակներ և կը պատրաստե երկաթեղեն ամենագժվար առարկաներ»[51]։

Իսկ Բարիկյան եղբայրների մեքենաշինական գործարանի հիմնադրման ու զարգացման պրոցեսը բավականին մանրամասն նկարագրված է Վահե Հայկի և Մ. Ճիզմեճյանի հուշերում[52]։

Նրանք XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի մշակող արդյունաբերության մեջ նկատվում էին որոշ տեղաշարժեր, ապա հայթայթվող արդյունաբերությունը առաջվա նման շարունակում էր մնալ անշարժ վիճակում։ Երկրի հանքային հարուստ հանածոները չէին մշակվում, իսկ այն, ինչ մշակվում էր, մշակվում էր ծայր տաճկանի պրիմիտիվ ու հետամնաց եղանակներով։ Ալպակս, Խնուսի Քաթոս Տաղլի գյուղում ջրով պատվող անիվը իջեցնում էին աղաջրի հորի մեջ և նրա վրա ամրացված կաշվե հակերով դուրս բերում աղաջուրը։ Այնուհետև աղաջուրը դատարկում էին փայտյա նավերի մեջ, որտեղից այն գնում թափվում էր մեծ ատաժության վրա շինված ածուների մեջ։ Աղաջուրը արևի տակ գոլորշիանում էր, ածուների հատակում թողնելով ավազանման ապի բաժակաձին հատիկ շերտը[53]։

51 «Բյուզանդիան», 1897, մարտի 17։

52 Տե՛ս Վահե Հայկ, նշված աշխատությունը, էջ 645, Մ. Ճիզմեճյան, նշված աշխատությունը, էջ 90։

53 Ա.-դր, նշված աշխատությունը, էջ 182։

Արդեն-Մադենի պղնձահանքում տիրապետում էր ձեռքի աշխատանքը։ Բանվորները փորում էին բահերով ու բրիշներով, հանույթը լցնում էին կողովների մեջ և հանքահորից շալակով դուրս բերում, այնուհետև դատարկում էին այն այդ նպատակին հատկացված տեղերում և փայտի վառելիքով հալում ու ձուլում։ Հանքահորի փոցխերը գործում էին գետի ջրով, որը սառչելիս բոլոր աշխատանքները դադարում էին։ Մատչված պղինձը մասամբ վաճառվում էր երկրի ներսում՝ արհեստավորներին, իսկ մեծ մասամբ արտահանվում օսմանյան կայսրության գանգան մասերն ու եվրոպայի արդյունաբերական կենտրոնները[54]։ Արդեն — Մադենի պղնձահանքերում աշխատում էին մոտ 300 բանվոր, որոնք տարեկան հավքով էին տալիս 40.000 ոսկու նկատմամբ[55]։ Ավելի քիչ էր ապի հանույթը և, հետևաբար նրանից ստացված հնամուրը։ Բավական է նշել, որ 1860-ական թվականներին Կարնո հարուստ աղահանքերը տարեկան արտադրում էին ընդամենը միայն 496.310 փութ ապ[56]։

Այդպիսով, XIX դարի վերջին և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի արդյունաբերության մեջ նույնպես կատարվեցին զգալի տեղաշարժեր։ Գոյություն ունեցող արդյունաբերության հին ձեվերի կողքին (արհեստն ու մանր ապրանքային արտադրությունը) առաջ եկան նորերը (մանուֆակտուրան ու գործարանը), իսկ արհեստավորների ու մանր ապրանք արտադրողների կողքին՝ արդյունաբերական բուրժուազիայի ու պրոլետարիատի տարրերը։ Ինչպես առևտրա-վաշխառուական, նույնպես և արդյունաբերական բուրժուազիան բաղկացած էր խոշոր, միջին ու մանր խմբերից։ Սակայն նրանցից գերակշռողը միջին ու հատկապես մանր բուրժուազիան էր։ Բուրժուազիան բաղկացող էր՝ կազմված հայերից, թուրքերից, քրդերից և այլ ազգություններից։ Բայց նրա մի շերտի մեջ տիրապետում էր այդ ազգություններից մեկը, իսկ մյուսում՝ մյուսը։ Կոնկրետ. վաշխառուական բուրժուազիան բաղկացած էր գերազանցապես թուրքերից ու քրդերից, այսինքն՝ մահմեդականներից, իսկ արդյունաբերական բուրժուազիան՝ հայերից։ Ինչ վերաբերում է առևտրական բուրժուազիային, ապա այն XIX դարի 60—70-ական թվականներին բաղկացած էր առավելապես հայերից, իսկ հետագայում՝ թուրքերից ու քրդերից։ Թուրքական կառավարու-

54 Տե՛ս Վահե Հայկ, նշված աշխատությունը, էջ 657—658։

55 Տե՛ս «Բյուզանդիան», 1906, ապրիլի 18։

56 Տե՛ս Я. Д. Малама. Описание Эрзерумского вилайета. СПб. 1874, стр. 118—119.

թյան վարած ազգային քաղաքականության հետևանքով հայ առևտրականները XIX դարի վերջին և XX դարի սկզբին նկատելի արագությամբ փոխարինվեցին թուրք և քուրդ առևտրականներով։ 1906 թ. ճեմիլը գրում էր, որ թուրքերը իրենց ձեռքն են վերցնում երկրի առևտուրը։ Նրանք արդեն մեծ դեր են խաղում անասունների և նրանց մթերքների առևտրի մեջ։ «Բացի այդ գյուղական ապահովագնեերին, կամաց-կամաց մահմեդականներու ձեռքը կանցնի նաև առևտրական մյուս հրապարակները. առաջին՝ իրենց վաչկատ առավելություններուն՝ առևտրական, դատական, ապահովության հայեցակետով և երկրորդ՝ շնորհիվ իրենց հետզհետե փոքրաթիվ դառնալուն... մանուֆակտուրան, մանրավաճառությունը և նմանօրինակ առևտրականներն, ուր չէին երևնար մահմեդականներ, սկսած են այժմ նույնպես անոնք գրավել»[57]։

Համարյա նույն բանն էր հաստատում նաև «Աբոթաման» թղթակիցներից մեկը։ 1908 թ. նա գրում էր, որ Թուրքիայում «հենական խնդիրը հայ վաճառականության նվազումն ու նվազումն է, որ ասկալի համեմատություններ առավ այս վերջին տարիներ»[58]։ Շնորհիվ այդ փոփոխության՝ երկրի մի շարք շրջաններում թուրք փերեզակները գառնում էին խոշոր վաճառականներ, իսկ հայ խոշոր վաճառականները՝ նրանց փերեզակները։

Արդյունաբերության նոր ձևերի՝ մանուֆակտուրայի ու գործարանի առաջացումով, իհարկե, սկիզբ է դրվում արտադրության կապիտալիստական եղանակին։ Սակայն Արևմտյան Հայաստանում մանուֆակտուրան գտնվում էր առավելապես իր սաղմնային վիճակում, քիչ թե շատ տարածվել էր թեթև արդյունաբերության մեջ և ուներ պատահական բնույթ։ Ավելին, թուրքական կառավարության անակցիան վարքագծի և իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականության հետևանքով մանուֆակտուրան, ինչպես արդեն ցույց տրվեց, շատ տեղերում բոլորվում էր, իսկ գործարանը, որն առաջ եկավ 1880—1890-ական թվականներին, երկրի արդյունաբերության մեջ այն էր, ինչ օազիսն անապատի մեջ։ Արդյունաբերության այդ նոր ձևերը երկրի տնտեսության մեջ որոշիչ դեր չէին խաղում և շատ հեռու էին արտադրության ֆեոդալական եղանակը փոխարինելու կապիտալիստականով։

Արդյունաբերական բուրժուազիան ամբողջն չէր ձևակերպված որպես դասակարգ, նա մի ոտքով կանգնած էր շրջանառության, իսկ մյուսով՝ արտադրության ոլորտում, այսինքն՝ մի կողմից զբաղվում էր առևտրա-վաշխառուական գործունեությամբ, իսկ մյուս կողմից՝ ձեռնարկությամբ։ Ուշագրավ է, որ ինչպես առևտրա-վաշխառուական, նույնպես և արդյունաբերական բուրժուազիայի խոշոր շերտերը հարմարվում էին Թուրքական բռնապետական կարգերին և իմպերիալիստական պետությունների դաղութային քաղաքականությանը (պաշտոններ էին ձեռք բերում, իրացնում էին իմպերիալիստական երկրների արդյունաբերական ապրանքները, նրանց հումք էին մատակարարում, որոշ դեպքերում հավատափոխ էին լինում և այլն)։

Արևմտահայ պրոլետարիատը նույնպես չէր ձևակերպված որպես դասակարգ և արդյունաբերական բուրժուազիայի նման գտնվում էր անցման պրոցեսում. մի կողմից բանվոր էր, իսկ մյուս կողմից արհեստավոր կամ դյուղացի։ Նրա կապը դեռ ամուր էր հողի հետ

57 «Երկրի ձայն», 1908, 9, էջ 13։
58 «Աբոթաման», 1908, էջ 47։

ԱՊԳԱՅԱՑԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՏԱՃՈՒՄԸ

ԿԱՎԱՌԱՏԻՐԱԿԱՆ ՀՈԳԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐԶԱՑՈՒՄԸ

Թուրքական կառավարության քաղաքականությունը մի կողմից, տնտեսական անդաշտրժերը մյուս կողմից, զրկի փոփոխություններ առաջացրին նաև տիրապետող ֆեոդալական հարաբերությունների մեջ։ Կառավարությունը Արևմտյան Հայաստանում իր սոցիալական հենարանը ամրապնդելու և հայ ազգային ապատագրական ու ազատագրական շարժումները ճնշելու նպատակով ոչ միայն պահպանեց ֆեոդալների դասակարգը, այլև համալրեց նրա շարքերը նորանոր ուժերով։ Նա այդ բանը կատարեց տարբեր ճանապարհներով, որոնցից մեկը համիդիեական գնդերի ստեղծումն էր։ Ճիշտ է, այդ գնդերի ստեղծումը, ինչպես ասվեց, հետապնդում էր ամենից առաջ քաղաքական նպատակ, բայց ուներ նաև սոցիալ-տնտեսական նշանակություն։ Թուրքական կառավարությունը ուղղակի և անուղղակի կերպով խրախուսեց քրդական ցեղապետերին՝ բռնագրավելու գյուղացիների, հատկապես հայ գյուղացիների հողերը։ Եվ նրանք կատարեցին այդ բանը մեծ եռանդով։ Միայն Ալաշկերտում, 1892—1893 թվականների ընթացքում, համիդիեական գնդերում ցուցակագրված Սեյիտ փաշան տիրացավ Համամա գյուղին, Ռասուլ բեյը՝ Ջիրա գյուղին, Հյուսեին բեյը՝ Քոփրան գյուղին, Թշկան բեյը՝ Արթ գյուղին, Ահմեդ էֆենդին՝ Մանկասար գյուղին, Յաթիհ բեյը՝ ս. Հովհաննու վանքի կալվածքներին և այլն։

Ուշագրավ է, որ քրդերից ամենք, որոնք զրաղվում էին գազութչությամբ և ավազակությամբ, ցուցակագրվելով համիդիեական գնդերում, դարձան հայտնի բեյեր ու աղաներ։ Այսպես, Ջելլիբիում

Մուսթաֆա բեյ Բոխտանցիին, որա վանի ռուսական փոխհյուպատոս Թումանսկու վկայության, սկզբում մի խափանաշրջիկ բայդուշ էր։ Մանկուց համիդիեական գնդերը, նա ազդեցություն ձեռք բերեց միևրան ցեղի մեջ, դարձավ ընդարձակ հողերի տեր և կիսանկախ իշխան։ «Վերշերա թուրքերը նրան շնորհեցին միր-ալայա աստիճանը, իսկ քրդերը նրան դիմում են ոչ այլ կերպ, բայց եթե միրի-միրան»[1] մեծարանքով։

Շատախի հայտնի ավերիչ Շաքիր աղան 1890-ական թվականների հայկական կոտորածներից առաջ, ժամանակակիցներից մեկի խոսքերով ասած, մի աննշան «կլուռա» էր, բայց ցուցակագրվելով համիդիեական գնդերում, սկսեց անհնա թալանել բնակչությունը, կատարել անհամար հղհանդգրծություններ և դարձավ «Շաքիր աղա, տեր քանի մը հազար ոչխարներու, անթիվ հողերու ու արտավայրերու, կրնասոսյան հարստության»[2]։

Թուրքական կառավարությունը, բացի համիդիեական գնդերի ստեղծումից, ֆեոդալների դասակարգը համալրեց նաև Արևմտյան Հայաստանից արտաքսած ազգերին ու բեյլերին կամ նրանց ժառանգորդներին նո վերադարձնելու ճանապարհով։ Շնորհիվ այդ բաղաքականության, քրդական մի շարք ցեղապետեր վերադարձան Մուշ, Սասուն, Բաղեշ, Տիգրանակերտ, Վասպուրական և այլուր ու կրկին տիրացան իրենց տիրույթներին։ Այսպես, 1882 թ. մի հարցաքննման մեջ ասվում էր, որ Խլաիֆը նորերումս վերադարձրեց Շատյասան այն 64 քուրդ բեյերին, որոնք Արեգին փաշայի հրամանով կալանավորված էին և Կ. Պոլսում պահվեցան 2 տարի ոչ իրրև կալանավորներ, այլ խալիֆի հյուրեր։ Այս անբացատրելի նեղորոդամտության շնորհիվ չարագործները վերադարձան յուրյանց բնակատեղին այն նպատակով, որ յուրյանց քշնամիներից վրեժը հանեն և արդեն նորից սկսել են ավազակություններ, կարծես թե ուզում են վճարել տալ հայերին... այն երկամյա ժամանակամիջոցի համար, որ նորա անցկացրին խալիֆայի պալատում»[3]։

Սուլթանը աճեցրեց ֆեոդալների դասակարգը նաև 40-ական թվականներին հողային տիրույթներից զրկված, բայց քոշակավորված ազաներին ու բեյերին կրկին հողային տիրույթներ ձեռք բե-

1 Թուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Դեսպանություն Կ. Պոլսում», 1901, գ. 1387, ՔՔ. 5—6։

2 «Բյուլուդիան», 1909, համարը 16։

3 «Մշտագործ», 1882, № 2, էջ 23։

բնու իրավունքի շնորհումով։ Այդպիսի ազանների թիվը, նկատի առնելով հետևյալ փաստը, պետք է հնարավորել, որ դեպի էր. 1879 թ. Կարսի սանջակում կային 24 թոշակ ստացող ազաներ[4], որոնք բոլորը միասին ստանում էին 62.528 դուրուշ թոշակ, իսկ անհայտ թվով ազաներ ստանում էին՝ Կարնո սանջակում 695.809, Մուշի սանջակում՝ 509.869, Երզնկայի սանջակում՝ 425.650, Վանի սանջակում՝ 255.104 և Չրդրի սանջակում՝ 98.871 դուրուշ թոշակ[5]։ Յա. Դ. Մալաման 1870-ական թվականների սկզբներին, նկատի ունենալով այդ ազաներին, գրում էր. «ազնվականությունն ու ընդհանրապես հարուստ մարդիկ սկսեցին նորից ձեռք բերել հողամասեր՝ գնելով, վարձակալելով և պրոգեցնելով այնպիսի հողեր, որոնք ասկարին չէին մշակվել ոչ սթի կողմից»[6]։

Թուրքական կառավարությունը համայրում էր Արևմտյան Հայաստանի ֆեոդալների դասակարգը բացարձակապես մահմեդականներով, իսկ քրիստոնյաներին, հատկապես հայերին խոչընդոտում էր հողեր ձեռք բերելու գործում։ Յ. Գրյազնովը հիշատակում էր, որ Վանի վիլայեթում «տեղական իշխանությունները հրաշանք ունեն՝ ամեն կերպ խոչընդոտել հողերի անցմանը հայերին»[7]։ Ենթադիր այդ բացարձականությամբ՝ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում մահմեդական հողատերերի թիվը աճում էր, իսկ քրիստոնյաներինը, հատկապես հայերինը՝ խիստ նվազում[8]։

Ազաները ու բեյերը, բացի համիդիեական գնդերում ցուցակագրվելուց, սկսեցին նաև այլ ճանապարհներով գրավել գյուղացիների հողերը։ Նրանք կաշառում կամ ճնշման էին ենթարկում պաշտոնյաներին, այդ թվում նաև գյուղապետին ու թափուղապետին, որոնց մոտ էին գտնվում գյուղի կնիքն ու հողային մատյանները և ձեռք բերում թափու՝ ցանկացած հողակտորի նկատմամբ։ Չէ՞ որ գո-

[4] Տե՛ս ՎՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 545, գ. 3137, քք. 7—11։

[5] Я. Д. Малама. Средства продовольственные, фуражные, перевозочные и денежные северовосточной части азиатских владений Оттоманской империи, стр. 70—71.

[6] Նույն տեղում, էջ 3։

[7] Ф. Грязнов. Военный обзор передового театра в Азиатской Турции, СПб. 1897, ч. II, стр. 18.

[8] Բնական գրում էր, որ XIX դարի կեսերին կային հայ մելիքներ, զրայք այժմ (իմա 1890-ական թվականների վերջերին—Ա. Հ.) միայն սակավ է մնացել այդ նշանավոր օջախներից (ՀՀուսերը կամ Հարքի գավառ», հավաքեց Բենան, խմբագրեց և հրատարակեց Ն. Հայկան, Թիֆլիս, 1901, էջ 37)։

յությունն ունեցող կարգը նպաստում էր նրանց բռնագրավումներին. թափուի մեջ նշվում էր ոչ թե հողամասի չափը, այլ սահմանները (սահեք՝ Կիրակոսի հողամասը սահմանագծում է արևելքից՝ Մարկոսի, արևմուտքից՝ Գրիգորի, հարավից՝ Մահմեդի, իսկ հյուսիսից՝ Յուսուֆի հողերով), օրենքը թույլատրում էր թափուի մեջ մտցնելու փոփոխություններ, չպարտադրելով սրբանագրել, թե ում կողմից են կատարվել այդ փոփոխությունները։ Երբ գյուղացիները բողոքում էին, ազաները պատասխանում էին, որ իրենք ավելի քան տասը տարի է, որ մշակում են այդ հողամասը և վկաներ էին բերում, իսկ դատարանը, ունկնդրելով դրանց, անտեսում էր գյուղացիների արդար բողոքը և գործը վճռում նրանց օգտին։

Ազաներն ու բեյերը տիրանում էին գյուղացիների հողերին նաև այսպես կոչված գնելու և վաճառելու միջոցով. տում ենք այսպես կոչված, քանի որ համարյա ոչ մի տեղում գյուղացիները չէին կարողանում վաճառել իրենց հողամասը համապատասխան գնով։ Նրանք հարկադրված էին իրենց հողակտորները ուղղակի հանձնելու ազաներին, փոխարենը ստանալով լավագույն դեպքում ընչին գումար։ 1912 թ. ականատես Ջևդին Տատառյանը էր, որ Դիբջանի Ղարաղուլախ գյուղի շատ բնակիչներ իրենց արտերը վաճառել են ազային—ակամա, ազատվելու համար նրա սիստեմատիկ հալածանքներից։ Շատերը իրենց 80 ոսկու կալվածքը ծախել են 5—6 ոսկու՝ ոչ թե որովհետև գումարի պետք ունեին, այլ նրա համար, որ ազան ամեն տարի ուտեցնել էր տալիս նրանց խոտը կամ ցորենը։ Նա այնուհետև նշում էր, որ 5 ազաները 151 լիրայով գյուղացիներից գնել են 2555 լիրա արժող նրանց կալվածքները։

Բեյերն ու ազաները բռնագրավում էին գյուղացիների հողերը նաև վարչատնտեսության միջոցով։ Նրանք գյուղացիներին բարձր տուկումներով պարտք էին տալիս և բռնագրավում նրանց ոչ միայն շարժականն, այլև անշարժ ունեցվածքը՝ հողը։ Ահա մի քանի վկայություններ. Տարոնում Հաջի Յաղուբ ազան պարտք է տալիս քրդադումրի Մարգարին 200 դուրուշ, այն պայմանով, որ կալորին նրանից ստանա 1 քիլե (96 օկկա) ցորեն։ Մարգարը չի կարողանում մարել իր պարտքը. ազան ամիսցնում է տոկոսը և առաջարկում՝ վճարել հաջորդ կալոցին։ Երբ Մարգարը այս անգամ էլ չի կարողանում մարել պարտքը, ազան բռնագրավում է նրա արտերը[9]։

Ա. գյուղում Հաջի Մուսթաֆա ազան գյուղացի Տանիին տալիս է 2 քիլե գյուղ, պայմանով, որ կալոցին նրանից ստանա 2 քիլե մա-

[9] «Յուսաբերիկ» 1909, հոկտեմբերի 23։

քուր ցորեն։ Տանն չի կարողանում մարել պարտքը մանավանդ, երբ մեկ տարվա մեջ 2 քիլեն դարձել էր 14 քիլեի։ Եվ նա ստիպված է լինում պարտքի փոխարեն տալու իր արտերը։ «Անորուն, Թշվառութեան դեղնած ու ամքած Տանն դողն ի դող կպատի կառավարության սրահին մեջ, ուր սաթիսով փարամը ալորմ բանալու արդար գործողությամբ ֆիքարը տեղի կտանէ», այսինքն՝ կատարվում է Տանեի արտերի ձեռնհպումը Հաջի Մուսթաֆա ագայի սեփականությանը[10]։

Մի այլ դեպքում Հաջի Ահմեդ աղան պարտք է տալիս Մարկոսին 1 քիլե կորեկ, որը երկու տարի հետո հասնում է մեծ չափերի։ Մարկոսը չի կարողանում վերադարձնել պարտքը և կարծկոտ, թե կուզածի ագայի ճանկերից, փախչում է դյուղից։ Բայց աղան կեղծելով Մարկոսի սոցիալական ծագերությունը, ոհսի միջոցով ձեռնհպում է նրա արտերն իր վրա[11]։ Այդ փաստերն արձանագրող Տիգրանը եզրափակում էր՝ «Հաշխառուները շորշոր տուներ ու չեն օջախները... բանջրցին ու փչացույին... Այս ու ավելի բազմաթեսակ նենգ ծրագիրներով նպած է Մուշի դաշտի հողերու գրաւումն ու տուներու քանդումը, նախ Մուշի կառավարության և ապա հաճիներու և աղաներու կամ պեյերու կողմե»[12]։

Անհրաժեշտ է նշել, որ հատկապես 90-ական թվականներից հետո բեյերն ու աղաները, օգտվելով գյուղացիների ծայրահեղ աղքատությունից, հրաժարվում էին նրանց պարտք տալ՝ գրամ կամ գյուղատնտեսական մթերքներ առանալու պայմաններով։ Նրանք պահանջում էին գրավ դնել հողակտորները։ 1911 թ. Գեղամ Տեր-Կարապետյանը գրում էր, որ կար ժամանակ, երբ վաշխառուները «նախապես պարզ մուրհակով կը գոհանային, հիմա գրամատերը բնդհանրապես հողագործին հողերը կանեռավոր գրավի տակ դնելէ հետո միայն կը համաձայնի գրամ տալ։ Հարյուր ոսկի արժող հողերը 20—30—40 ոսկիով կարելի է գրավ դնել, և չբավար հողագործը ստիպված է այնպես բնել, որովհետև ուրիշ տեղ չի կրնար գրամ գտնէ»[13]։

Գյուղացիները հաճախ դիմում էին տեղի երկրագործական բանկին։ Սակայն բանկը, բան էության, զբաղվում էր միայն քաղաքային վաշխառուներից, որովհետև ավատ պարտքի փոխարեն պահանջում էր նաև ունեցվածքը, իսկ ժամանակին չվերադարձնելու դեպքում բանագործվում էր այդ։ Այսպես, 1908 թ. ժամանակակիցներից մեկը վկայում էր, որ Վանի վիլայեթում «հողերն մեծ մաս մը կա, որը երկրագործական անդուկի մոտ գրավ են։ Հայ տերերը փոխ գրամ վերցուցած են անդուկեն, գրավ դրած են իրենց հողերն հավիվ 1/3 գնով։ Պարքն ու գրավ ցայսօր կմնային, իսկ այժմ կառավարությունը տեսնելով, որ տերերը կրնան գտանել և իրենց գրավ հողերն ազատել պարտքի վճարումով, որպեսզի տեղիս անկարելի դարձնեն և միանգամայն եկող հայ պատգամավորներուն հետաքննեցնեն, էմին փաշայի և նման քյուրտ պետիրու և աղաների խորհրդով նույն գրավ եղած հողերու ցուցակը պատրաստելով, պատերը փակցուցած և ազուրդի հանած է գանոնք, որոնցմե ամեն գնով ծախե քյուրտ-բուն»[14]։

Գյուղացիները շատ անգամ ընդհատանում էին երկրագործական բանկի վաշխառուական ու թալանչիական գործունեության դեմ[15], բայց և այնպես հարկադրված էին նրանից պարտք վերցնել։ 1911—1912 թթ. Արևմտյան Հայաստանի մեջ վիլայեթներում երկրագործական բանկի բաց թողած գումարը, համաձայն առանձին արժեքների, բաշխվում էր հետևյալ կերպ (դրուշներով).

Վիլայեթները	Հողակտորները գրավ դնելու պայմանով	Փոխատրած երաշխավորության համար
Կարնո	3.323.284	8.577
Բաղեշի	216.811	
Տիգրանակերտի	1.153.781	598.697
Մեզրեհի	4.518.713	122.528
Խարբերդի	1.629.994	13.500
Վանի	132.142	5.600
Ընդամենը	10.975.025	749.302

Այս ամենատակը ցույց է տալիս, որ երկրագործական բանկը իր գրամը բաց էր թողնում հիմնականում հողակտորները գրավ դնելու պայմանով։ Նա իր գոյության 25 տարվա ընթացքում (1887—1912) Արևմտյան Հայաստանում հողակտորներից գրկել էր շուրջ 30.000 հոգու։

10 Նույն տեղում։

11 «Բյուզանդիոն», 1909, հոկտեմբերի 23։

12 Նույն տեղում։

13 Գեղամ Տեր-Կարապետյան, Հոգային հարցը հայաբնակ նահանգներուն մեջ, Ս. Գալա, 1911, էջ 30։

14 «Բյուզանդիոն», 1908, նոյեմբերի 13։

15 1910 թ. դեկտեմբերի 8-ին առաջին գլխավոր հյուպատոսը կարգիներ հաղորդում էր, որ գյուղացիները «պատրաստվում են ինչ-որ գեմոնստրացիայի» (ՒԱՔՔ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1910, գ. 2678, թ. 32)։

Սակայն ագանների ու բեյերը բնադրձակում էին իրենց կալվածքները ավելի շատ գյուղացիական հոգերը բացահայտ գավթելու, բռնադրավելու համապարհով։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ երկրում համարյա չկար մի անկյուն, որտեղ նրանք չզավթեին գյուղացիների հողերը։ Ահա մի քանի փաստեր։

Արձիշում էին փաշան բռնագրավեց Ասրաֆ, Մատվանք, Արմիզոն, Գանձակ, Բանոն և Գիլին գյուղերը, նրա եղբայր Արդուլլահ աղան՝ Մակծակ գյուղը, Ալի բեյը՝ Գոգեր, Կարատքար գյուղերը, Հաջի-Մուսա աղան՝ Բերդակ գյուղը, Արդի աղան՝ Հարութիւն գյուղը, Սալման աղան՝ Ասպիսինակ գյուղը, Ջահրադ աղան՝ Իրիշատ գյուղը, Սուլեյման աղան՝ Ներքին Իրիշատ գյուղը և այլն[16]։

Կաթկանում Հաջի-Մուսա բեյը և ուրիշներ բռնագրավեցին Ուրանց, Սաուս, Կուբ, Հնձան, Սարթ, Գաշվանձ, Խնձորակին, Օղվանց, Կանճաան և Մրաթա գյուղերի հողային բնադրձակ տարածությունները[17]։

Շատախ և Նորգյուղ գավառներում Շաբիր աղան իր եղբայրների ու նրանց որդիների հետ միասին գրավեցին Շահրար, Փերրեսկյան, Կոգան, Օլուման, Հասթյան, Տեմ և Սքունս գյուղերը, իսկ Ճուտվայ, Հասան և Էսմիր աղաները՝ Մաքշկ, Շամանս և Նորաբեր գյուղերը[18]։

Աղլեվագում Հյուսեին փաշան իր ազգականների հետ միասին բռնագրավեց Զիրեքլու, Նորշեն, Վերին Սեփոն, Ներքին Սեփոն, Անաշ-աղբյուր, Կարաբեշիշ, Գուզել, Բաբկաթ, Խառանց և Տուրբեկուս գյուղերը[19]։

Մուշի գաշտում Բալբ և քուրդ ագանները գրավեցին Քուրմեկյան, Խրղլյուղած, Ամած-աղբյուր, Արտխոնք, Աշնձուտ, Փաղլկով, Քարձոր, Ձրոնք, Խոխեր, Ջրիկ, Տոմ, Գոմս, Հունան, Առրեդվանք, Սոխյում, Ալիկրբնան, Առաղ, Մակոնք, Սուլաս, Խաագյուղ, Քրդաղում, Երիշտիր, Ոդակ և ուրիշ գյուղեր։

Այդպիսի փաստեր շատ կարելի է բերել[20]։

16 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, փետրվարի 23։
17 Նույն տեղում, ապրիլի 24։
18 Նույն տեղում, հունիսի 16։
19 Նույն տեղում, փետրվարի 24։
20 Բյուզանդ Քեշյանը գրում էր. «Հայագաբերաբոյ անգամ բլլալով նկատգրելու պետք չունինք, թե ինչպես Կարնո, Ալաշկերտի, Բասենի, Վանա, Արձկեի, Բագեշի, Մշո, Սասնո, Խոթերգի, Սգերգի, Տիգրանակերտի, Տերսիմի, Բալուի, Բաղերգի, Տրապիզոնի, Երզնկայի գավառներուն մեջ կատարած, կոտրածէ փախած, կամ Հայրենի հարկերեն բշված վտարված հայերուն հողերը, տուներ, այգիները, արտերը, պարտեզները, տպարանները գրավվելնան քաղքենու կողմն ուզդակի հափշտակումով» («Բյուզանդիոն», 1910, հունիսի 5)։

21 Գ. Տեր-Գաբրիելյան, Հայոցին հարցը հայարնակ հանգներուն մեջ, Կ. Պոլիս, 1911, էջ 43—44, օրավարի վերածումը հեկտարի՝ կատարել է Ե. Սարգսյանը՝ ընդունելով 1 օրավարը=$^2/_3$ դեսյատինի, իսկ 1 դեսյատինը=1,09 հեկտարի (Е. К. Саркисян. Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957, стр. 68).

22 Տե՛ս «Մուրճ», 1905, № 3, էջ 6 և 11։

Բեյերն ու ագանները բռնագրավում էին ոչ միայն հայ, այլ հաճախ նաև թուրք, քուրդ և այլ ազգի պատկանող գյուղացիների հողերը։ Ըստ Գեղամ Տեր-Կարապետյանի բերած ոչ լրիվ տվյալների, նրանք XIX դարի վերջին և XX դարի սկզբին երկրի ներքոհիշյալ վիլայեթներում նշված հանապարհներով բռնագրավել են[21]։

Վիլայեթները	Բռնագրաված հողերի տարածությունը	
	օրավար	հեկտար
Կարնո	100.000	72.000
Խարբերդի	200.000	144.000
Մեզրաեթյան	80.000	57.600
Տիգրանակերտի	200.000	144.000
Վանի	100.000	72.000
Բագեշի	350.000	252.000
Ընդամենը	1030.000	741.600

Այդ թվերն իրենք են խոսում իրենց մասին։ Մի շարք ագաներ ու բեյերի այդ բռնագրավումների շնորհիվ տեր դարձան բնադրձակ տիրույթների և կատակեցին առաջադիմական հարստություն։ Այսպես, Բագեշի վիլայեթում շեյխ Սեյիդ-Ալին տիրում էր Խիզանի, Կաբկաոի, Սղաթիկոտի գավառակները և ուներ հազարավոր դեսյատին հողեր։

Վանի վիլայեթում շեյխ Ուբեյդ-Ուլլահի որդի շեյխ Մահմեդ Սքղքքր հանդիսանում էր ամրողջ Շամդինանի տերն ու անօրենը։ Նա ուներ շորս հարկանի հոյակապ պալատ, որի յուրաքանչյուր հարկը բաղկացած էր 14-ական դահլիճ-սենյակներից, 4000—5000 ոչխար, բազմաթիվ խանութներ ու կրպակներ[22]։

Հյուսեին աղան տիրում էր Ալչավազին և նրան հարակից մի քանի շրջաններին, ուներ 100 գյուղ, 40 հազ. ոչխար, մեծ քանակությամբ ձիեր ու մի քանի գղյակներ։ Սեբաստիա գրում էր, որ շեյխ Մհմեդ Սթրջրի և Քոռ Հյուսեինի «հարաստությունը բառի բուն նշանակությամբ անհաշվելի էր։ Նրանց հոսկինները գնահատված են ոչ քե երկաթե արկղների մեջ, այլ մեշոկներում և եթե պետք լինի ընդհանուր հաշիվ անելու, ոչ քե համրում են, այլ չափանոթով չափում են։ Վանի այս երկու թուրդ կրևսոսները իրենց այդ հսկա հարստությամբ ասոմածային ազդեցության ունեն ոչ քե միայն Վանի նահանգում, այլ նույնիսկ շրջակա և հեռավոր տեղերն էլ»[23]։

Քոռ Հյուսեինի աղգական էմին փաշան տիրում էր ամբողջ Արձիշին, նրա 80 գյուղերով հանգերձ, ուներ տավարի ու ոչխարի բազմաթիվ հոտեր, գղյակներ և այլ հարստություն։

Վանի վիլայեթում որպես խոշոր հողատերեր հայտնի էին նաև՝ Հյուսեին աղան (Արտայի գաշտում), Կոփ Մահմեդ և Մուսթաֆա բեյերը (Բերկրիում), շեյխ Թաշիրը (Գեվաշտում), Շերիֆ բեյը (Ագրաիում), Մուսա բեյը (Կարճկանում), Սադոմ, Մհմեդ, Քեամիլ բեյերը (Արճեշում) և շատ ուրիշներ[24]։

Կարնո վիլայեթի Երզնկայի սանջակում հողերի մեծ մասը դանվում էր յոթ բեյերի ձեռքերում։ Նրանցից ամենաազդեցիկը Սաղըր օղլին էր, որ նստում էր Քեմախում, Գ. Սրվանձտյանցի վկայությամբ, նա «բարձր ազդեցություն ունի բոլոր գավառին վրա»[25]։

Բայազետում նշանավոր էր Մհմեդ բեյը, որն ուներ 40—50 գյուղ, 100 կով, ձի, եզ, 200 ոչխար և 10.000 ոսկի, իսկ Բասենում՝ Ռաշիդ աղան, որն ուներ 75 գյուղ, բազմաթիվ հոտեր ու այլ հարստություն։

Խարբերդի վիլայեթում՝ Դերսիմում հայտնի էր Տիսպ աղան, որի ճոխակը հասնում էր շատ հեռու երկրներ, մինչև Պաղտատ ու Պասրա, մինչև Իրան ու Թուրան»[26]։

Ջարանդակում ամենահարուստ և ազդեցիկ բեյերը Օսմանն ու Իսաևն էին, որոնք ունեին ընդարձակ կալվածքներ և տավարի ու ոչխարի բազմաթիվ հոտեր, իսկ Ջեզիգծաղում՝ Հաշի Թահար։

23 «Մուրճ», 1904, № 4, էջ 12—44։ Տե՛ս նաև Առտիա, Ճիվար — Քյոր Հյուսեին փաշա-բուրդր, Բիթլիս, 1311 թ.։

24 Տե՛ս «Մշակ», 1889, թիվ 7, «Մասիս», 1882, հունիսի 8, «Բյուզանդիոն», 1909, օգոստոսի 13։

25 Գ. Սրվանձտյանց, Բարև ապրար, մ. Բ, էջ 63։

26 «Մշակ», 1895, հունիսի 8։

Գ. Սրվանձտյանցի խոսքերով ասած՝ սա հանգիստանում էր «բոլոր բնկերն ավազակությունը... ամենեն ավելի հոդեր և գյուղեր ունեցողը»[27]։

Սեբաստիայի վիլայեթում՝ Կարահիսարում հաշվկված էր Ալիշան-գաղեն, որը «հայկական ազդեցություն ուներ Սրվադի վիլայեթի, ինչպես նաև Դերսիմի բոլոր կրզրլյաշների մեջ»[28]։

Այս վիլայեթում իրենց հարստությամբ հայտնի էին նաև Ութֆաղ բեյը, Մահմուդ Ալին, Խալիլ բեյը, Վախտի բեյը և ուրիշներ[29]։

Կարելի է այս ցուցակը շարունակել, բայց սահմանափակվենք բերածներով։ Շնորհիվ այդ հափշտակումների, հողատերերը իրենց ձեռքն էին կենտրոնացրել Արևմտյան Հայաստանի պիտանի հողերի մեծ մասը, իսկ աշխատավոր գյուղացիությանը պահել սակավահողության և հողազրկության մեջ։ Ասոմը գրում էր, որ եթե վիճակագրության լիներ, ապա կարելի էր տեսնել, թե ինչպես «100 տուն բնակիչ ունեցող գյուղի աշխատավոր գասակարդ 100 տեռնյում հող, 100 բնտանի անասուն ունի, նույն 100 տան աշխատանքով ապրող նույն գյուղի աղան, պեկը, Բռռունը, աշրաթը, որոնք ամենաշատը 5—10 տուն չեն կազմեր, կը տիրապետեն 100, 200 տեռնյում հողի և մեկ քանի հարյուր, մեկ քանի հազար բնտանի անասունների»[30]։

* * *

Արևմտյան Հայաստանում կալվածատիրական տնտեսությունը քանակական փոփոխման հետ միասին ենթարկվում էր նաև որակական փոփոխության։ Ինչպես հայտնի է, տիպիկ ֆեոդալական տնտեսությունը իր իսկ էությամբ բնատնտեսություն էր։ Ֆ. Ենգելսը գրում է. «Վաղ միջնադարի ֆեոդալական օրինակելի տնտեսությունում փոդի համար համարյա ամենևին տեղ չկար։ Ֆեոդալը առանում էր իր ճոխերից այն ամենը, ինչ պետք էր նրան՝ կամ աշխատանքի, կամ պատրաստի արդյունքի ձևերով։ Կանայք մանում ու գործում էին վուշն ու բուրդը և կարում հագուստ, տղամարդիկ մշակում էին դաշտերը, երեխաները արածացնում էին ազգի անասունները, հավաքում նրա համար սունկ ու պտուղ-

27 Գ. Սրվանձտյանց, Բարև ապրար, մ. Բ, էջ 109։

28 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, օպ. 2, գ. 315, թ. 240։

29 Նույն տեղում։

30 Առտի, Քնասկան վերաբնորդություններ և հողային հարցը, Կ. Պոլիս, 1910, էջ 34։

ներ..., անասուններն ծղոտ, բայի դրանից ամբողջ ընտանիքը պարտավոր էր մառակարարել նաև հացահատիկ, բանջարեղեն, ձու, յուղ, պանիր, թռչուն, մատղաշ անասուն և շատ ուրիշ բաներ։ Յուրաքանչյուր ֆեոդալական տնտեսություն ամբողջովին ինքն էր բավարարում իր կարիքները, նույնիսկ ռազմական մատակարարումները հավաքվում էին արդյունքներով։ Փոխանակություն և առևտրական հարաբերություններ չկային, փաղն ավելորդ էր»[31]։

Սակայն քրդական որոշ ազնվերի ու բեյերի տնտեսությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արդեն դուրս էր եկել այդ բնատնտեսության շրջանակներից և ներգրավվել ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ։ Դրա արտահայտություններից մեկն այն է, որ նրանք, ինչպես տեսանք, սկսում են զբաղվել վաշխառությամբ, վարել սեփական տնտեսություն (բավական է հիշել, որ աշխատավարձ ստանան կազմում էր ֆեոդալական ամբողջ ռենտայի 45,3%-ը) և զբաղվել դյուղատնտեսական մթերքների վաճառքով։ Օրինակ՝ Վանի վիլայեթում Թեմիր ու Խալիլ փաշաները զբաղվում էին հացահատիկի առևտրով, վաճառելով ոչ միայն սեփական, այլև ուրիշներից գնած հացահատիկը, ոչ միայն վիլայեթի ներսում, այլև նրա սահմաններից դուրս[32]։

Այդ վիլայեթի հայդարանցիների, շավգվիների, մուրուբցիների, միլանցիների, քաքուրցիների, շեմսկցիների, մեհմեդբիրանցիների, շիռանցիների և այլ ցեղապետերը 1897 թ. արտահանել են 35.000 ոչխար, 76.000 գառ և 704.000 դուլուշի բուրդ, դֆտիկ, ալթի ու ոչխարի մորթի և նման կաշի[33]։ Նրանցից ամենաշատն արտահանել էին հայդարանցիների ցեղապետերը (20.000 ոչխար և 25.000 գառ), որոնցից մեկը, ինչպես ասվեց, Քոր Հյուսեին փաշան էր։ Ռ. Ի. Տերմենը հիշատակում էր, որ նա բացի ոչխարի առևտրից, նաև «մարում է հացահատիկի մեծ առևտուր և ավելի շատ նման է վաճառականի, քան զինվորի»[34]։

Քոր Հյուսեինից ետ չէր մնում նաև Շատախ Շաթիր ագան։ Նա, թոթակիցներից մեկի խոսքերով ասած, «շատ օրինապահ ու կանոնավոր մեծ վաճառական մըն է», ուներ 5000 ոչխար, որոնցմե մաս մը տարվե տարի կծախե ոչխարի վաճառականներուն»[35]։

31 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 21, стр. 407—408.

32 Տե՛ս ՌԱՔՄ, ֆ. «Գեներալ-նահանգապետություն Կ. Գոլամեի», 1887, գ. 1573, թ. 6—7։

33 Տես «Գյուղատնտես», 1897, մարտի 14։

34 Р. И. Термен. Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1909, стр. 43—44.

35 «Գյուղատնտես», 1913, սեպտեմբերի 26։

Շամդինանի շեյխ Մեհմեդ Սրդրբր ուներ ծխախոտի բնագրծակ գաշտեր և բերքը վաճառում էր ինքնուրույն, առանց հաշվի առնելու «Ռիժի» ընկերությունը։ Նա վաճառում էր ոչ միայն սեփական գաշտերի, այլև ուրիշներից գնած ծխախոտը։ Վ. Տ. Մաևսկին վկայում էր, որ Շամդինանում ծխախոտի առևտուրը ամբողջապես կենտրոնացված է հայերի քարոզ շեյխ Մեհմեդ Սրդրբի ձեռքը, որը վաճառում էր ծխախոտը Պարսկաստանում և տարեկան ստանում 5000—6000 թուրքական լիրայի եկամուտ[36]։

Կարևոր վիլայեթի հողատերերից հացահատիկի ու անասունների վաճառքով զբաղվում էին՝ Նազիմ-Բերքահիմ օղլին, Մամեն Իբրահիմ բեկը, Մաֆիր Մուսթաֆա աղան, Զինֆեր Ալի բեկը, շեյխ Սաչեխ բեյը, Մուսթաֆա Հյուսեին բեկը, Էյուբ փաշան, Մահմուդ բեյը, Ալի բեկը և ուրիշներ։ 1904 թ. արխիվային մի փաստաթղթում նշվում էր, որ Թուսաստանի սահմանամերձ շրջաններում թուրքական ու քրդական գրաքար դասը, այսպես կոչված բեկերը, համարյա բոլորը զբաղվում են հացահատիկի արտահանման առևտրով[37]։

Սերտաճման վիլայեթում անասունների առևտրով զբաղվում էին՝ Մուհյիման-ղագի աղան, Բեյրթ-օղլի Բահիկը, Ալիշան բեյը, Հաչդաղ բեյը, Թաշիդ բեյը, Ալի Սելիմ օղլին և ուրիշներ[38]։ Աղաններից ու բեյերից շատերը զբաղվում էին դյուղատնտեսական մթերքների առևտրով նաև երկրի մեջացած վիլայեթներում։

Կալվածատիրական տնտեսությունների ներգրավումը ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ արտահայտվում էր նաև նրանում, որ քրդական ազնվերից ու բեյերից շատերը, հենց աննշան, այնուամենայնիվ, սկսում են կիրառել վարձու աշխատանք և դրանով սկիզբ դնում հարկադիր աշխատանքի միջոցներով վարձու աշխատանքի հետ խիտանում, օրինակ շեյխ Ջալալեդդինը տարեկան վարձում էր 30 մշակ[39]։

Ներկրիվ այդ ամենի՝ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արագացվեց նահապետական մնացորդների քայքայման և ֆեոդալական հարաբերությունների զարգացման պրոցեսը։ Այդ արտահայտվում էր նրանում, որ ցեղապետերը զրաված հողերն ու գյուղերը բաժանում էին իրենց դինակիցների ու ազգակիցների միջև և առեղ-

36 Տե՛ս ՌԱՔՄ, ֆ. «Գեներալ-նահանգապետություն Կ. Գոլամեի», 1912, գ. 1603, թ. 35։

37 ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 521, ող. 2, գ. 310, թ. 384, գ. 521, թթ. 33—45։

38 Տե՛ս նույն տեղում, ֆ. 71, գ. 115, թթ. 182—194։

39 Տե՛ս «Մշակ», 1883, օգոստոսի 25։

ժամ վասալական հարաբերություններ։ Օրինակ՝ Հյուսեին փաշան Ագլղևմազում իր գրաված գյուղերից՝ Ջիրքիյան ովից Իբրահիմ աղային, Նորշենը՝ անեղջը, Վերին Սեփոնը՝ Հասան աղային, Ներքին Սեփոնը՝ Շուքրի բեյին, Նորշենձագը՝ Հայդար աղային, Անուշ աղբյուրը՝ Սրլոյին, Կարաքշիշը՝ Յուսուֆին և այլն։ Նրանք բոլորը պարտավոր էին ենթարկվել Հյուսեին փաշային և նրա համար գյուղերից հավաքել հարկեր[40]։

Ուշագրավ է, որ երբեմն ցեղապետի զինակիցները և ազգակիցները ձեռք բերելով անտեսական որոշ հզորություն, այլևս չէին հաշտանում նրա իշխանությունը, դառնում էին ինքնուրույն։ Այդ տեսակետից օրինակ կարող է ծառայել Հայդարանցիների ցեղի տրոհումը. XX դարի սկզբին նրանց ցեղը վերջնականապես բաժանվեց երեք մասի, որոնցից մեկը գլխավորում էր Հյուսեին փաշան, մյուսը՝ Էմին փաշան, իսկ երրորդը՝ Հաջի Քհլիբ փաշան։ Նրանք Քհև ազգակիցներ էին, բայց «մզում էին իրար հետ արյունալի կռիվներ»[41]։

* * *

Իսկ ի՞նչ էր կատարվում հայոց վանական-հիմնիգական հողատիրության հետ։ Այս հողատիրությունը տեղ-տեղ բնդարձակվում էր և նույնիսկ ներգրավվում ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ։ Օրինակ, ս. Վարագա վանքը հրամանի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ (հողի ռացիոնալ օգտագործումը, նորանոր հանդակների ձեռք բերումը, կատարելագործված գործիքների, հատկապես երթային գութանի ներմուծումը, նոր կուլտուրաների մշակումը և այլն) XIX դարի վերջին և XX դարի սկզբին զգալի չափով ընդարձակեց իր հողային կալվածքները, բարձրացրեց հացահատիկի արտադրությունը, անասունների գլխաքանակը, զարգացրեց շերամապահովությունը, մեղվաբուծությունը, հանվաբուծությունը, յուղագործությունը և պանրագործությունը։

Բացի Վարագից, ապրանքային տնտեսության մեջ ներգրավվեցին նաև մի շարք այլ վանքեր։ Հովնանի հիշատակարանը ցույց է տալիս, որ 1903 թ. Աղթամարի բոլոր վանքերը միասին վերցրած ստացել են 12.544 դուրուշ նվիրատու, որից 1.818 դուրուշը՝ անասունների, բրդի, ցորենի ու փայտի վաճառքից։

Բայց այդ ամենը որպես բացառություն, իսկ իրրև կանոն հայոց վանական հողատիրությունը բալքայվում էր։ Ագանների ու բեյերը ոտքերի բռնագրավում էին վանական հողերը։ Նրանք այդ բռնագրավումները ավելի մեծ թափով շարունակեցին 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և հատկապես 1890-ական թվականների հայկական ջարդերից հետո։ Այսպես, էմին փաշան տիրեց Արճեշի բոլոր վանքերի հողերը, Ջաուշ Մուկնյանն և Մեհմեդ ագանները գրավեցին Մեծոփա վանքը, Ռշտիղ և Բերքր ագանները՝ Արծվաբերդ վանքը, Շերիֆ բեյը՝ ս. Բարդուղիմեոսի Առաքելոց վանքը, Մահմուդ Նիժթե և Յուսուֆ բեյերը՝ Սղերդի Էջմիածին հիմնիգու կալվածքները, Մեհմեդ բեյը՝ Կարնո Նորշեն հիմնիգու հողերը, Մուսկի Սեֆին՝ Աղլղևմազի Աստվածածին հիմնիգու հողերը, Խտիսանի Բաուն, փերքանցի Յաթրլը և ուրիշներ՝ Կարճկանի Պողվանց գյուղի հիմնիգու հողերը, Կասբե ագան՝ Արդնի ս. Նշան վանքը, Ֆերյ ագան՝ Ջմշկածագի ս. Նշան վանքը, Տետե բեյը՝ Քրդիի Օսնակ ս. Կիրակոս վանքը, Հասան և Օսման բեյերը՝ Խնուսի ու Մեծկերտի վանքերը և այլն, և այլն[42]։

Ագանները ու բեյերը որոշ տեղերում քանդում ու բնաջնջում էին վանքերն ու հիմնիգիները, որոշ տեղերում վեր էին ածում գրանք «խոտների՝ «իբրև անարգանք քրիստոնեական կրոնին»[43], բայց որոշ տեղերում էլ գործնում էին իրենց հարկատուն, որպես հիմնական աղբյուր։ 1874 թ. Ագպային ժողովի հիմնադիրներից մեկը ասում էր. «Մշո Ագրյուրիկ վանքն հիս ժամ հեռու Մահպուզանի գյուղը բնակող Սասունցի քրդերն հիշյալ վանքը կթթման, կուտեն, կը խմեն, և ամեն տարի՝ իրրև տուրք, վանքեն 400 դուրուշ, 4 կով, 20 ոչխար, 4 պաթման ծխախոտ, 4 պաթման յուղ և 5 գրիվ ցորեն կառնուն բանի որ եթե վանքը զանոնք չհատուցանեն, միաբանությունն ու հայերը մեծ վտանգի կենթարկին»[44]։

Համաչա նույն բանն էր հատատում նաև մի այլ հեղինակ, որը գրում էր, թե քրդական ցեղապետերը «տոմոտական քրեր են վանքերեն խաֆիրություն առնելը, որ տեսակ մը տուրք է, իրր թե վանքը իրենց սեփական բլլա, ամեն ժամանակ ցորյան, ոչխար, յուղ, ձեթ և ամեն ինչ կը տանեն, համարյա թե բաժին մը ունին վանից մեջ»[45]։

[40] Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, փետրվարի 24։

[41] П. И. Акерьянов. Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Тифлис. 1900. стр. 278.

[42] Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, հոկտեմբերի 9, 1909, փետրվարի 23, 1909, օգոստոսի 4, «Տեղեկագիր Հոգևոր գրամեմաց հանձնաժողովոս», տետր Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 5—10։

[43] «Բյուզանդիոն», 1908, հոկտեմբերի 9։

[44] «Ազանեաղբյուրեան ազգային ժողովոս», 1876, էջ 218—219։

[45] «Դիվան Հայոց պատմության», հ. 13, էջ 62։

Ուշագրավ է, որ բեյերն ու աղաները հարկ էին վերցնում ոչ միայն վանքի տնտեսությունից կամ բաժին առնում թեմական գյուղերից հավաքած արդյունքներից, այլ նաև ուխտավորների նվիրատվություններից[46]։

Բեյերն ու աղաները տերում էին հայկական վանքերին նաև վաշխառուական եղանակներով։ Նրանք վանքերին փող էին տալիս բարձր տոկոսներով և ժամանակին չվերադարձնելու դեպքում տարբերացնում նրանց։ Այդ տեսակետից բնորոշ է Մուշի ս. Կարապետ վանքի օրինակը։ 1866 թ. այդ վանքի միաբանությունը նուրբաղ բեյից վերցրել էր 15.000 ղուրուշի չորեն՝ երեք ամիս ժամանակով, բայց հետո չէր կարողացել վերադարձնել, որի հետևանքով, ինչպես վկայում էր նրնիկ Սերաստացին, նրա արնդհանուր պարտքը տասնյակ հազարի (իմա՝ 90.000—Ա. Հ.) հասած էր[47]։ Հետագա տարիներին ս. Կարապետ վանքը ամիսի ինդիկի պարտքերի մեջ։

Հայոց վանական հողատիրության քայքայումը պայմանավորված էր գերպատերազմյան Թուրքական կառավարության բռնապետական քաղաքականությամբ։ Նա այդ հողատիրությունը համարում էր մաքուր չէր արդեյուն, եթե մեկը սեփականացներ այն[48]։ Թուրքական կառավարությունը ընդհանրապես ձգտում էր ընդհնդել այն ամենը, ինչ հիշեցնում էր հայկականը, ինչ խանգարում իր ասիմիլյատորական նպատակների իրագործմանը։

1907 թ. Արգուլ-Շամիրը, հետևելով ռուսական ցարի օրինակին, կարծիք հայտնեց Թուրքական կայսրության մեջ եղած հայոց վանական ու եկեղեցական հողերը բռնագրավելու մասին։ Բայց երկրում աճող հեղափոխական շարժումները, իսկ այնուհետև 1908 թ. հեղափոխությունը խանգարեցին նրան իրագործելու այդ նոր կողոպուտն ու թալանը[49]։

Սակայն բացի սուլթանի շովինիստական քաղաքականությունից, հայոց վանական հողատիրության քայքայման գործում որոշ դեր էին խաղում նաև հայ հոդևորականները։ Նրանք վանքի տնտեսությունը հիմնականում վարում էին միջնադարյան եղանակներով, իսկ ոմանք էլ, օգտվելով վանական հողերն իրենց անունով գրելու իրավունքից, ուղղակի սեփականացնում էին դրանք։ Գ. Սրվանձտյանցը հիշատակում էր, որ Խարբերդի վիլայեթի ս. Զարդարիչ վանքի հողերը գանվում են վանահայր Կարապետ վարդապետի ձեռքը, որը «տիրապես կժառանգե զայդ ամենուն»[50]։ Իսկ Վահան վարդապետը 1880 թ. Ազգային ժողովի նիստերից մեկում ասում էր. «Ճեղ կա, որ վանուց հողերը թափու եղած են վանահայր վարդապետի վրա»[51]։

Վանական հողատիրությունը, անշուշտ, միջնադարյան, ռեակցիոն հողատիրություն էր։ Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ այն «ամենից շատ է ազդրված հորատատիրության տրադիցիաներով, որը ծառայում է հասարակության ամենատկակցիոն և ամենավնասակար պորտարուշնների հարստացման համար»[52]։

Սակայն պատմական զարգացման, առաջընթացի տեսակետից վանական հողատիրությունը պետք է բռնագրավվեր և ոչնչացվեր շահագործվող գյուղացիության և ոչ թե սուլթանի կամ աղաների ու բեյերի կողմից, քանի որ նրա բռնագրավումը վերջիններիս կողմից միայն ամրապնդում էր Թուրքական բռնապետության հիմքերը, սաստկացնում աշխատավորության շահագործումը, կրոնական ու ազգային հալածանքները և ավելի տևական դարձնում խավարն ու տգիտությունը, զարգացման հետամնացությունն ու տարրկությունը։ Չպետք է անտեսել նաև, որ հայոց վանական հողատիրության հաշվին այսպես թե այնպես պահվում էին դպրոցներ և կուլտուր-լուսավորական մի շարք հաստատություններ։

46 Բաֆֆին նշում էր, որ քրդերը ս. Տիրամոր տոնին հետևում էին ուխտավորների տված նվիրներին։ Նրանք «Հեյտար ագայի մարդին են, որպեզ պահպանում են ուխտավորներից նվիրված արծաթը, որ վարդապետները անհավատարիմ կերպով չվարվեն նրա հետ, և ազան կարողանա ամրոդչությամբ տանալ իր մատը, որ նշանակված է նրա համար տանի ևկամուտիցը։ Եվ ասացին, թե ինչը Հեյտար ագան գտնվում է վանքում և վանահոր մոտ հյուր է» (Բաֆֆի, Երկեր, հ. 4, էջ 455)։

47 «Գիտեան հայոց պատմության», հ. 13, էջ 65։

48 Բաֆֆին գրում էր. «Տաճկաց կառավարությունը վանքային կամ եկեղեցական կալվածը չի համարում, որովհետև կալվածատուր կարող են լինել միայն անձնավորություն ունեցող անհատներ, իսկ վանքը և եկեղեցին, նրա կարծիքով, իրավաբանական անձնավորություն չէ, ուրեմն և կալվածատուր լինել կարող չէ... Այս պատճառով վանքային կալվածները համարվում են որպես մանելուկ, այսինքն՝ որոշ տեր չունեցող։ Այդպիսի կալվածների տերն ինքը պետությունն է լինում... Ջնեք կարողանում հանձնել, թե ինչու մահմեդական մզկիթը և մատրաան կարող են կալվածք (վակֆ) ունենալ, բայց հայոց եկեղեցին, վանքը և գպրոցը չեն կարող ունենալ» (Բաֆֆի. Նրկեր, հ. 9, էջ 238, ծան. 1 և 2)։

49 Տե՛ս «Իրի», 1907, № 7, էջ 1։

50 «Արևելյան Մամուլ», 1884, էջ 115։

51 «Ամառնագրություններ ազգային ժողովոս», 1880, էջ 227։

52 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 174—175։

XIX դարի 80—90-ական թվականներից ի վեր կալվածատիրական հողատիրության ընդարձակումն ու ամրապնդումն Արևմտյան Հայաստանում միշտ ավելի ու ավելի մեծ չափերով տեղի էր ունենում աշխատավոր գյուղացիության մասսայական ընաջնջման և արտաքսման ճանապարհով։ Սուլթանն ու աղաները հայ աղգային ապատագրական շարժումների ճնշումից հետո, սկսեցին դաժան դատաստան տեսնել շարժման մասնակիցների (և ոչ միայն մասնակիցների) հետ։ Նրանք գյուղացիների մի մասին կոտորում էին[1], իսկ մյուս մասին արտաքսում իրենց հողերից։ Ակնառուն Տիգրանը գրում էր, որ աղաները Մուշի սանջակում «իրենց անոր (իմա՝ գյուղացու—Ա. Հ.) արան ու չափը, բակերին ու քարուքանդ զարմուցին անոր հայրենի ճամփեն անցած փայտերն ու քարերը ու գիք բնավեր ջոչունի մը նման թափառեցուցին աստ անդ։ Եվ այսօր Տարոնի ընդարձակ դաշտին մեջ ի նշան գյուղմի նախճիրներուն, վիրեն վար կպպպան աղաներու ու պեյերու ենթիկեր կամ դղյակներ, իրենց փարթամությամբ[2]։

Այդ մասսայական արտաքսումների հետևանքով Արևմտյան Հայաստանում մեծ չափերով սկսեց մարթա կամ հոզատուրի դյուղացիների թիվը։ Նրանք կազմում էին՝ Խարբերդի կազայում հայ գյուղացիության 74,1%-ը, իսկ մամմեդական գյուղացիության՝ 23,1%-ը[3], Բալանբերում՝ 60 անասունոլյունից՝ 45—50-ը, Տարոնում՝ գյուղացիության 80%-ը, Արաղայի դաշտում՝ 77 գյուղերից 62-ը[4] և այլն։

Ա-ևն գրում էր. «Մարթարայություններ, որպես ինսթիտուտ, թեև վաղուց գոյություն ունի Տաճկաստանում, բայց նա առանձին ուժ սասցավ վերջին երեք տասնյակ տարիների ընթացքում տեղի ունեցող հալիկական չարդերի շնորհիվ»։ «Մարթարայություններ մեզ հե-

1 *1894—1895 ԹԹ. Էույ փաշան Աղաչկերտում կոտորեց մոտ 3000 հոգի, իսկ Էնին փաշան Արձիշում՝ ավելի քան 5000 հոգի (տե՛ս* **М. П. Роллен Жекмен.** Армения, армяне и трактаты. М. 1896, стр. 366. «Բյուզանդիոն», *1909, փետրվարի 24)։*

2 «Բյուզանդիոն», *1909, հոկտեմբերի 23։*

3 *Տե՛ս* **А. М. Колюбакин.** Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1891, т. III, в. 1, отд. 2-й, стр. 376—377, 384—385.

4 Ա-ղո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում, Երևան, *1912, էջ 278։*

տաքրքրող երեք վիլայեթներում (իմա՝ Վանի, Բագիշի և Կարնո—Ա. Հ.) մեծ չափերի է հասել. Հիշյա է, նա ամեն տեղ համահավասար չափով չէ զարդացել, բայց ընդհանուր առմամբ ահագին է նրա ծավալը[5]։

Աղաներն ու բեյերը իրենց էին այնքան գյուղացիներ, որքան պետք էր իրենց։ Բայց ապրանքային արտադրությունը ստիպում էր նրանց ավելացնել ունեցած գյուղացիների թիվը։ Եվ նրանք արտաքսած գյուղացիներին նորից էին ամրացնում հողին, սակայն տարբեր հողանակներով։ Այդ եղանակներից մեկը կիսարտությունն էր։

Հոդվածներում և գրականության մեջ կիսարտ-մարթարանների մասին կան բավականին տեղեկություններ։ Ներկեր Նազանից մի քանի Գ. Նազարյանը գրում էր, որ Խարբերդի դաշտում «արտերը տեր ունեն, ոմանք երեսի հայոց և ոմանք տաճկաց են։ Մշակողները մարթայա կը կոչվին[6]։

Անդրանիկը նշում էր. «Ջարսանճակի 60 գյուղերը, որոնց մեջ հայ և քուրդ ազգաբնակությունը խառն կրնակին՝ ընդհանրապես բոլորն ալ մարթայա (կիսոտդ) հողագործներ են, որ կվարին ու կցանեն աղաներու ու պեկիրու հողային կալվածները[7]։

«Բյուզանդիոնի» թղթակից Գ. Հ. Մուրադյանը հիշատակում էր. «Վերին Բասենի գյուղորեից ոմանց մեջ էրզրումի հարուստներեն ոմանց ագալյանները կան, զորս դեղկական հողագործ կարգ մը անհող տներ կմշակեն մարթայա անվամբ[8]։

Կիսարտությունը հանդիսանում է ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմը տանող բազմաթիվ անցումային ձևերից մեկը, որքանով նրա ժամանակ կալվածատիրական և մասամբ գյուղացիական անհատությունները դուրս են գալիս բնատնտեսության շրջանակներից և ներգրավվում ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ։ Սակայն այն ուներ նաև կապալային նշանակություն, քանի որ գյուղացիները հողի վարձակալման հետևանքով բնկնում էին տների անձնական իշխանության տակ և ենթարկվում բռնության ու հարստահարման։ Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ կիսարտությունը «միշտ ենթադրում է վարձվողի անձնական կախումը վարձողից-

5 Ա-ղո, նշված աշխատություններ, էջ 275, 278։

6 Գ. Նազարյան, Արտասր Հայաստանի կամ տեղեկագիր Բայուբ, Քաբերդոյ, Ջարսանճակի, Ճապաղջուրի և Երզնկայի, Կ. Պոլիս, *1853, էջ 137։*

7 Անդրանիկ, Տերտիմ, Հանապարհորդություն և տեղագրություն, Բիֆֆիս, *1900, էջ 134։*

8 «Բյուզանդիոն», *1898, նոյեմբերի 12։*

միշտ ենթագրում է «արտաոնտանասական հարկադրանքի» ամենի կամ պակաս չափով պահպանումը»[9]։

Ագռաներն ու բեյերը մարաբա գյուղացիների մյուս մասին ամրացնում էին հողին և շահագործում որպես ճորտեր։ Այդպես վարվեց, օրինակ, Միրզա բեյը Մուշի գաշտի Խարսոս գյուղում, Յուսուֆ աղան՝ Բաղեշի սանջակի Կորվու գյուղում, շեյխ Քյամիլը՝ Բուլանըխի կազայի Գյալոլան գյուղում և այլն։ Նրանք Բուլյաոտբեցին այդ գյուղերի բնակիչներին հաստատվելու իրենց գյուղերում միայն այն պայմանով, որ նրանց ճանաչեն իրրև հողատեր, իսկ իրենց որպես «ծառա, մարդպա»[10]։ Այդ աղաներն ու բեյերը հիշյալ գյուղերի բնակիչներին ստիպում էին վճարել գյուղատնտեսական ու անասնապահական զանազան մթերքներ, գրամ, կատարել անգարիա, այսինքն՝ կոռ և ֆեոդալական այլ պարտավորություններ, իսկ աղջիկ կամ ադա ամուսնացնելիս՝ իրենցից թույլտվություն վերցնել։

Ուշագրավ է, որ տեղական իշխանությունները, դեկավարվելով սալթանի ցուցմունքով, արգելակում էին հայ գյուղացիների, այդ թվում իշարեն նաև մարաբաների տեղափոխումները։ Այսպես, 1891 թ. Կարնո անգլիական հյուպատոսն իր զեկուցագրերից մեկում նշում էր, որ մինչև վերջին ժամանակները, եթե որևէ մեկը ցանկանում էր գնալ արտասահման, փաստաթուղթ ստանալու համար բավական էր ներկայացնել հավատարմագիր՝ համապատասխան հոգևոր պետերի կողմից, իսկ այժմ նա անձնագիր ստանալու համար պարտավոր է ներկայացնել հավատարմագիր նաև իր օկրուգի մահմեդական իշխանություններից[11]։

Նույն բանն էր հաստատում նաև Կարնո ռուսական գլխավոր հյուպատոսը։ 1891 թ. մարտի 22-ին նա գրում էր Կ. Պոլսի ռուսական դեսպանին. «Տեղական իշխանությունները Ալաշկերտի հայերից ոչ մեկին թույլ չեն տալիս հեռանալու սանջակի սահմաններից և նույնիսկ անցնելու մի գյուղից մյուսը։ Ասում են, որ եթե որևէ հայ ճանապարհին բռնվի գաբիհների ձեռքը, նրան ծեծում են, ենթարկում մանրապղին խուզարկության, զանազան հարցաքննության, օրերով քարշ են տալիս տեղից-տեղ, բանտարկում են և անխնա կողոպտում»[12]։

9 Վ. Ի. Աֆիֆե, նրկեր, հ. 3, էջ 239։

10 «Հորիզոն», 1910, փետրվարի 20։

11 М. П. Ролаев Жекмен. Указанное сочинение, стр. 171.

12 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Քաղարխիվ», 1889—1894, գ. 1630, քք. 90—91։

Գյուղացիները երբ փորձում էին տեղափոխվել բազաք, ապա իշխանությունները բանի կերպով նրանց հետ էին վերադարձնում։ Այսպես, 1899 թ. ականատեսներից մեկը Վանից հաղորդում էր. «Շարաթ մը ի վեր կառավարական հրամանով մը բազաթը բնակվող գյուղացիները բանի իրենց գյուղը կդրկվին»[13]։

1907 թ. Կարնո վիլայեթի Առուն, Սեկյութլու, Մերդիվիկ, Բյուր, Կեզ, Թուլանց, Էնակ, Դինարցիկ և Բզգածոր գյուղերի բնակիչները, թվով 4355 հոգի ռուսական ցարին ուղարկած իրենց խնդրագրում նշում էին. «Մենք ստիպում ենք այնպիսի վիճակում, որ մեր գործերով չենք կարող զբաղ զալ գյուղից, որպեսզի դնանք բազաք կամ ուրիշ գյուղ»[14]։

Ուշագրավ է, որ Բուրքական կառավարիչները ինչպես միջնադարում, նույնպես և XIX դարի վերջին և XX դարի սկզբին գյուղացիներին ճորտացնելիս, ոչ թե ամրացնում էին հողատիրոջը, այլ գյուղին կամ շրջանին։

Ագռաներն ու բեյերը երբեմն հողազուրկ գյուղացիներին վերցնում էին իրենց մոտ որպես ծառա և զարձնում տորունների այդ բառի իսկական իմաստով։ Նրանք աշխատացնում էին այդ մարդաբա-տորուններին, որքան ցանկանում էին, վաճառում և նույնիսկ սպանում էին, առանց որևէ մեկի առաջ պատասխան տալու։ Գարեգին Երիցյանը նշում էր, որ Բասենում «մարդպան իր աղայի կամակատար տորունն է, իսկ իր կամակներն ու կինը՝ աղայի ընտանիքի ծառաներն ու աղախիններն են»[15]։

1907 թ. Շեյուրթի բեյը Վարագա վանքում կռվի է բռնվում հայգումկների հետ և սպանվում։ Նրա կինը, ըստ մի հաղորդման, «երբ կյանք իր էրկան սպանվիլը հայ ֆեդայիներից՝ իր տան մեջ մորթել կուտա հայ ծառաչին»[16]։

Ի վերջո ագռաներն ու բեյերը վարձակալում էին մարաբաներին որպես գյուղատնտեսական բանվորներ, բաժակներ՝ տարբեր ժամանակներով և տարբեր նպատակներով՝ որպես հնձողներ, որմնադիրներ, փորողներ, հովիվներ և այլն։

Բերված այդ փաստերը ցույց են տալիս, որ ագռաների ու բեյերի կողմից իրենց հողերից արտաքսված գյուղացիներին, որոնք ար-

13 «Մշակ», 1899, օգոստոսի 14։

14 ՌԱՔԻ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1907, գ. 2875ր, թ. 43։

15 «Ազատամարտ», 1912, № 527։

16 «Մշակ», 1907, սեպտեմբերի 20։

բյուրներում և գրականության մեջ հայտնի են մարաթա ընդհանուր անունով, կարելի է բաժանել չորս կատեգորիայի՝ մարաթա-կիսարձանների, մարաթա-ճարտարների, մարաթա-բառարակների և մարաթա-ստրուկների։ Նրանց մեջ գերակշռողը մարաթա-կիսարձաններն ու մարաթա-ճարտարն էին, իսկ բառարակներն ու ստրուկները փոքր թիվ էին կազմում։

Ուշագրավ է, որ մարաթացության այդ կատեգորիաների մեջ տեղի էր ունենում անցում մեկ վիճակից դեպի մյուսը. այդ անցումը կատարվում էր մի կողմից՝ մարաթա-կիսարարությունից դեպի մարաթա-ճարտարագիտությունը, իսկ մյուս կողմից՝ մարաթա-բառարակությունից դեպի մարաթա-ստրկությունը։ Մարաթա-կիսարարությունից դեպի մարաթա-ճարտարագիտությունը տանող ճանապարհն այն էր, որ ազատներն ու բիչերը իրենց մարաթա-կիսարարներին պարտք էին տալիս և չվերադարձնելու դեպքում հորատացնում նրանց։ Ըստ այս, Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ նարբերդի կազմում մարաթա-կիսարարը, տանալով վարելահող, պետք է խնդրեր տեղի վճարի ամրողջ գումարը, կամ ծայրագույն դեպքում դրա կեսը։ Չվճարելով փող, նա պարտք է վերցնում հենց կալվածատիրոջից հակառական տոկոսներով և, այդպիսով, ստացվեր քայլերից բռնկում է պարտքի տակ։ Այնուհետև գյուղացին պարտքեր է անում նաև սերմացու գնելու ու բանող անասուն վարձակալելու համար։ «Ըստ պիսի համաձայնով այդ մեծ խմբի (այսինքն՝ մարաթաների— Ա. Հ.) կեսից ավելին դառնում է կալվածատերերի ու հարևանների մշտական, անվճարելի պարտքերի տակ»[17]։

Գ. Երիցյանը նշում էր, որ Բասենում մարաթա-կիսարարը ազատ գյուղը պարտք է վերցնում, «սակայն չկարենալով վճարել, կիլիա պարտքի տակ, որ տարվե տարի, տոկոսով միասին կմեծանա ու կը մեծանա։ Հաճախ կը պատահի, որ մարդային տակավին մեկի ձեռքին չազատված՝ ուրիշի մը ճանկը իյնա։ Գարտքը կավելանա, իսկ մարդան երթալով կընկճվի ու վերջիվերջո հարկադրված կըլլա փոխադրվիլ տղայի մոտ և դառնալ անոր ստրուկը...»[18]։

Երբ մարաթա-կիսարարները անտեսանելի լիակատար քայքայվում էին ազատներն ու բիչերը իրենց մշտական ու էժան աշխատուժով ապահովելու համար տալիս էին նրանց անասուն և դանդան իրեր, բայց վաշխառուական վերադրներով։ Կարևո վիայե-

[17] А. М. Колюбакин. Материалы..., т. III, ч. I, отд. 2-й, стр. 386, 388.
[18] «Ակօսամարտ», 1912, № 828։

քում, նրանք տալիս էին քալքալված մարաթային «մի կով, նրա կաթով կերակրվելու համար և մի տավարի կաշի տրեխներ կարելու համար, իսկ աերհրդության դեպքում տալիս էին ապրուստի համար ցորեն, գարի, գլգիլ և հաջորդ տարին տանում են կրկնակի չափով կամ վերադրով»[19]։

Մարաթա-կիսարարությունից դեպի մարաթա-ճարտարագիտությունը կամ մարաթա-բառարակությունից դեպի մարաթա-ստրկությունն անցնելը ոչ այլ ինչ էր, բայց եթե ազգարարային հարաբերությունների հոսանում, ճարտարագիտության վերականգնում և ամրապնդում։ Այլ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ Արևմտյան Հայաստանի գյուղում ապրանքային թույլ զարգացման պայմաններում առեղծվել էին մի կողմից՝ հոգատերեր, իսկ մյուս կողմից՝ հոգատուրկ գյուղացիներ։ Վ. Ի. Լենինը, քննադատելով նարոդնիկներին, որոնք կարծում էին, թե գյուղացիության հոգատրկումը կնպաստի կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, գրում էր. «Իրականում գյուղացիների հոգատրկումը 1861 թվականին մեծ մասամբ նշանակում էր ոչ թե ազատ բանվորի առեղծում կապիտալիստական արտադրության մեջ, այլ սարկացած (այսինքն՝ փաստորեն կիսաճորտ կամ անգամ գրեթե ճորտ) վարձակալի առեղծում այդ նույն «ազատական», կալվածատիրական հողի համար։ Իրականում 1861 թվականի «հողազատիչները» մեծ մասամբ նշանակում էին ոչ թե ազատ ինքնուրույն հողագործի առեղծում, այլ սորիացած վարձակալի ամրագրում նրա, որը փաստորեն հարկադրված է կրել նույն այդ կորը, իր ինվենտարով կալվածատիրոջ հողը մշակելով՝ արածատեղի համար, արտատեղի համար, մարգագետնի համար, անհրաժեշտ վարելահողի համար և այլն»[20]։

* * *

Իսկ ի՞նչ էր կատարվում գյուղացիության մնացած զանգվածների՝ ազատների, կիսաճորտերի ու ճորտերի հետ։ Ազատներն ու բիչերը շարունակում էին բարբարոսաբար թալանել ու կողոպտել իրենց իշխանությունից տակավին ազատ մնացած գյուղացիներին։ Իշխանությունների օգնությամբ նրանք բարբարոսական ավարատությունների որոշ տեսակներ անցնում են կանոնավոր հարկահա-

[19] Ա-դս, նշված աշխատություն, էջ 276։
[20] Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 17, էջ 119։

նության և այդպիսով ազատ գյուղացիներին դարձնում կախյալներ։ Այսպես, 1889 թ. Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ Վանի վիլայեթի Կարկառ գավառակում կար 10 հայկական գյուղ։ Երկու ցեղապետեր համաց-կամաց հափշտակելով նրանց հողերը «իրենց լիակատար սեր համարեցին ո՛չ միայն լեռնային արոտավայրերին, որտեղ արածացնում են իրենց բազմաթիվ հոտերը, այլև տեղական քրիստոնյա բնակչությանը։ Նրանք իրար մեջ հավասար բաժանեցին Կարկառի հայկական 10 գյուղը և իրենց բնիկով ենթարկեցին նրանց որոշակի հարկերի, խաոտրին հանձնելով դրանց վճարմանը»[21]։

Պետք է նշել, որ ազատ գյուղացինները բարբարոսական ավերիչ արշավանքներից ազատվելու համար հաճախ իրենք էին անցնում որևէ ազդի իշխանության ատակ, պայմանով, որ սա պաշտպաններ նրանց անձն ու գույքը, իսկ իրենք նրա օգտին կատարելին վանական պարտավորություններ։ Այլ կերպ ասած՝ բնորոշ էին շարիքներից փոքրագույնը։ Բայց այդ քայլը, ինչպես իրավացիորեն նշում էր Բաֆֆին, նրանց վրա շատ «քանկ է նստում, պաշտպանները թե՛ յոթ կալբով և թե՛ յոթ պատվով դառնում են յոթ աղայի գերին։ Դա մի կամավոր սերվիտություն է, որով անդորը հպատակվում է հզորին և դառնում է նրա կամքի բոլորովին կրավորական առարկա... Դա ճորտության սկիզբն է»[22],

Արևմտյան Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին տեղի ունեցող այդ երևույթը հիշեցնում էր Արևմտյան Եվրոպայում IX դարի ճորտատիրական իրավունքի հաստատման ժամանակաշրջանի կոմենդացիան։

Ազատ գյուղացիների կիսաճորտացումն ու ձորտացումը բնիկների և ազատների կողմից առանձին ըսպի ստացավ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և մասսայական բնույթ ընդունեց 90-ական թվականների հայկական ջարդերից հետո։ Վ. Տ. Մաևսկին 1900 թ. նշում էր, որ Վանի վիլայեթում «վերջին երկու տարվա իրագործությունները բազմաթիվ հայկական գյուղեր, հատկապես առանձին օկրուգներում, դրեցին տեղական քրդերից (իսկ՝ ցեղապետերից— Ա. Հ.) ուղղակի ենթական գրության մեջ»[23],

[21] **А. М. Колюбакин.** Материалы..., т. 1, ч. 1, стр. 133.

[22] Բաֆֆի, Երկեր, հ. 8, էջ 256։

[23] **В. Т. Маевский.** Ванский вилайет, военно-статистическое описание, Тифлис, 1901, стр. 188.

Իսկ Ա-դոն 1896—1908 թվականները իրավացիորեն բնութագրում էր որպես «լուռ ժամանակաշրջան, որի ընթացքում տեղի ունեցան այնպիսի բռնություններ և հարստահարումներ, որոնք ամիանգամայն մոռացնել տվին նախկինը... Այդ լուռ շրջանում... լուրաքանչյուր գյուղ, որ մինչ այդ ազատ էր մնացել աղայից կամ բեկից, եկավ այս կամ այն ազդեցիկ քուրդը... և իրեն հայտարարեց այդ գյուղի աղան կամ բեկը... Տարրական պարտականություն զարձավ ձրի վարել, ցանել ազայի հողերը, հնձել արտը, ծեծել ցորենը, գաշտից տուն բերել խոտը...»[24]։

Եթե մի տեղում ազաներն ու բեյերը ազատ գյուղացիներին դարձնում էին կիսաճորտեր, ապա մի այլ տեղում վերջիններիս դարձնում էին ձորտեր։ Այսպես, Թեյլորը հիշատակում էր, որ Տիգրանակերտի վիլայեթի որոշ շրջաններում տասվին 60-ական թվականներին հայերը կողոպուտներից համեմատաբար ազատ մնալու նպատակով գերադասեցին ընդունել ցեղապետերի իշխանությունը և վճարել նրանց դրամական հարկ, որը կոչվում էր «ատար–խուսա»։ Բայց ցեղապետերը գնալով խստացրին բռնություններն ու հարստահարությունները, գյուղացիներին դարձրին իրենց ճորտերը, վաճառում ու գնում էին նրանց, անվանելով «գաղոպի» այրեքն՝ ասկով գնվածներ[25]։

Ն. Ա. Լենկին նշում էր, թե ցեղապետը, իր շուրջը համախմբելով զուլամներին, մտնում էր գյուղ և առաջարկում կերակրել, հետո բնակիչներից պահանջում էր իր համար կառուցել զյալուր։ «Դրանով վերջանում է նրա գործունեության առաջին շրջանը, հետո սկսվում է երկրորդ և ավելի ծանր շրջանը—ազան իրեն հայտարարում է գյուղացիական հողերի սեփականատեր։ Նա այնուհետև եղրափակում էր, որ այդ բանը կատարվում է ոչ միայն հայկական, այլև քրդական գյուղերում, «բայց միայն համեմատաբար փոքր չափերով»[26],

Ձաֆիրության իրավունքը, որը երկրի բազմաթիվ շրջաններում իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, բայց եթե հողատերերի և

[24] Ա-դո, Նշված աշխատությունը, էջ 320—321։

[25] «Материалы для географии Азиатской Турции» (приложение I к тому II «Известий кавказского отдела императорского русского географического общества»), Тифлис, 1873, стр. 72.

[26] **Н. А. Ленский.** О правовом положении землевладения в Турецкой Армении, СПб, 1916, стр. 20.

կախյալ գյուղացիների ֆեոդալական ինտիտուտ, որոշ տեղերում տրդին վեր է ածվում իսկական հողատուիրական ինտիտուտի։ Դրա տրատահայտություններից մեկն այն էր, որ ազատներն ու բեյերը իրենց գյուղացիներին վաճառում էին ուրիշներին։ Այսպես, 1903 թ. Սասունի գաֆիրատաու գյուղացիները պատմում էին. «Մեր պեկը համոզված լլլալով, թե օրինական ճանապարհով ոչինչ չի կրնար պահանջել մեզմե, մեզ ծախեր է ուրիշ պեկի մը, որը իր տված ոսկին կուզե մեզմե և կամ... մեց հայու գլուխ[27]։

* * *

Այժմ անհրաժեշտ է որոշել, թե գյուղացիության ո՞ր մասն էր տակավին ազատ և ո՞րն էնթած ազատների ու բեյերի իշխանության տակ։ Ցանկնալով համապատասխան վիճակագրական տվյալներ, այդ կարևոր հարցը լուսաբանելու ենք հետևյալ մասամբական ու բնորոշ վկայություններով[28]։

Մեկտեղ հողերի մեծ մասը պատկանում է բեյերին, որոնք տալիս են դրանք հայերին կիսաբաժնությամբ։

Բաղեշի ամենշակում մի խումբ բեյերի սեփականության տակ են տարբեր բնակիչներ։

Զուղիջանում տեր ու տնօրեն են Հայդար բեկը և նրա ազգականները։

Խիզանը, Սպարկերտը, Շատախը, Սարան, Բաշ-կալեն քրդական ցեղապետերը դարձրել են իրենց շահատակությունների վայրերը։

Դերսիմը, Քամախը, Ակնը, Ամշկածագը, Բերդակը, Եռգատը, Բալուն և Բալուներին միշտ ստիպված են եղել կառավարական այլևայլ տուրքերի հետ միասին վճարել նաև քուրդ աշիրաթներին։

Բասենում, Վանի ամենշակում, Արաղայում, Բայազետում, Մուշի դաշտում, Սասունում, Կարնո հարթավայրում հայերի հողերը անցել են քրդերի ձեռքը, դառել բնկական կալվածքներ։

Նիփկերտում ազատները բռնությամբ տիրացել են հայաբնակ գյուղերին։

Դերջանում մի խումբ ազատներ 15—20 տարիներից ի վեր մոլեխի և թրթուրի նման ուռում են գյուղացու ունեցվածքը։

Ալաշկերտում քուրդ բեկերը սանձարձակորեն տիրում են հայկական գյուղերին։

Տզղտափ բոլոր գավառակների մեջ կա մեկ-մեկ բեյ։

Խլաթում տիրում է Ավդալ ազան իր 25 ազատների հետ միասին։

Խնուսում կատարածներից հետո բուն են դրել զանազան քուրդ ազատներ, յուրաքանչյուր գյուղ ունի մի ազա։

Բալուջրխում հատանցիների ցեղապետերը բռնությամբ բնակություն են հաստատել հայ գյուղերի մեջ։

Մանազկերտում աշիրաթապետները քայքայում են քուրդ ու հայ աշխատավոր գյուղացիության տնտեսական ու բարոյական կյանքը։

Դիադինում, Այնթափում, Բաբնոսում, Ալշավազում, Աբենշում, Վասպուրում, Եայըռում և Չիռուխում տիրում են գիլանցի, շալայցի, ախիկցի, բալաքցի, ջիբրանցի, խոյթցի, շխուրցի և զրբրքցի ցեղերի առաջնորդները։

Խարբերդում, Քղիում և Չարսանջակում հողերը գանվում են բեկերի ու ազատների ձեռքերում։

Գենջում, որի մեջ մտնում էին Ճապաղչուր և Խալփ կազաները, տիրում են բեյերը։

Բոտրամում, Կիսկիմում և Բաբերդում գյուղացիները ստրուկ են եղել ինքնակոչ բեկերի ձեռքում։

Տիգրանակերտի վիլայեթի մի շարք շրջաններում հայերն ու ասորիները տեղական քուրդ տիրակալների ստրուկներն են։

Մամռատանիում բնակիչները աշիրաթապետների հարատերն են, զրկված իրենց սեփական հողակալվածներից։

Սղերդում, որի մեջ մտնում էին Արվո, Բերվարի, Խարզանի կազաները, գյուղացիները ստրկացված են բեյերի կողմից։

[27] «Արձագանգ», 1909, № 150.

[28] Տե՛ս Գ. Ն. Նազարյան. Նշված աշխատություններ, էջ. 55, Ե. Սովանեցյանց, Թորոս ազատ, մ. Բ, էջ 81, Հ. Տայյան, Հայ քեսկեսությունը Մև ծովին մինչև դարին, պատմա-ազգագրական հետաքրքրի ակնարկ մը, Վիեննա, 1921, էջ 83, «Բիթլան հայոց պատմության», հ. 13, էջ 354, «Ամենայն պատմություն ազգային ժողովոյ», 1876, էջ 218, «Մասիս», 1880, նոյեմբերի 5, 1881, հոկտեմբերի 14, 1882, հունիսի 7, հուլիսի 22, «Արմենիա», 1884, հուլիսի 11, «Բյուզանդիոն» 1909, հուլիսի 31, 1912, հեկտեմբերի 21, 1913, ապրիլի 23, դեկտեմբերի 7, 1914, հոկտեմբերի 27, «Ճշմարտություն», 1892, մայիսի 9, «Ազատ-Տասդ», 1913, սեպտեմբերի 7, էջ 385, 1916, դեկտեմբերի 4, «Հորիզոն», 1910, փետրվարի 16, 1912, հունվարի 5, 19, 1914, փետրվարի 20, օգոստոսի 14,15, «Արարատ», 1910, մարտի 26, «Գրոշակ», 1895, № 6, էջ 11, № 10, էջ 3, 5, № 17—18, էջ 14, 1898, № 5, էջ 44, № 6, էջ 88, 1902, № 7, էջ 103, № 1, էջ 3, № 3, էջ 49։ Х. Ф. Б. Линч. Армения, т. II, стр. 202; В. Штреккер. Очерки Верхней Армении. Тифлис, 1873. стр. 71—72.

Շիրվանում, որի մեջ մտնում էին նաև Նամրմանը, գյուղացիները իրենց հողերը այս կամ այն քուրդ բեյերուն ակամա հանձնելով՝ ապրում են վիրջին ֆշվառության մեջ։

Մոտկանում ցեղապետերը ռուս-թուրքական պատերազմից հետո սկսել են հայ գյուղերից խաֆիրճա անունով անձնական տուրք հավաքել։

Բերկրիում, Աբեռակում, Հայոց Ձորում, Խոշաբում, Գավաշում և Կարկառում բնակիչների հողերը գրավված են քուրդ բեյերի ու աղաների կողմից։

Ջեֆյարի սանջակը, որի մեջ մտնում էին Ջուլամերկն ու Շամդինան շեյխերի աշխարհ է, ժողովուրդը բացի շեյխից ուրիշ տեր չի ճանաչում և նրա համար իրեն սորուկ աշխատում է գիշեր ու ցերեկ և այլն։

Այդ բոլոր տեղեկությունները ցույց են տալիս, որ Արևմտյան Հայաստանի գյուղացիության մեծ մասն ընկած էր աղաների ու բեյերի իշխանության տակ, գտնվելով կամ կիսաճորտական կամ ճորտական վիճակում։

* * *

Կալվածատիրական լուծն ավելի վատթարացրեց աշխատավոր գյուղացիության ատանց այն էլ ծանր վիճակը։ Երկրի համարյա բոլոր շրջաններում բազմաթիվ գյուղացիներ դրկվեցին իրենց շարժական ու անշարժ ունեցվածքից և գործան ընչազուրկներ այդ բառի իսկական իմաստով։

Այսպես, 1895 թ. մի հաղորդման մեջ նշվում էր. «10—15 տարի առաջ Դերջան գաղութը, եթե այսօր ալ այցելի, չպիտի հավատա, թե սա իր առաջվա տեսած երկիրը ըլլա, այն շեն ու ճոխ տները, ուր հարյուրավոր անցորդներ կը կերակրվեին, այսօր ետին չքավորության ու խեղճության մատնված են»[29]։

1909 թ. Մարզպետը արձանագրում էր. «Վասպուրականի և Տարոնի գյուղերուն մեջ ժողովուրդը չունի անկողին մը իր ամենեն հարգելի հյուրին հրամցնելու համար խոկ Ամբողջ գյուղական ժողովուրդը կը պառկի բաղիքներու մեջ պլլուած։ Առած անունդն ալ ասոր համեմատ է։ Երբեմնի ցորենով այնքան հարուստ Մշո գաշարայսօր կարտ կը քաշե կըլկըլի ու կորեկի ավազանման հացին։

29 «Դրոշակ», 1895, № 6, էջ 16։

Սասունը այդ ալ չունի։ Խոկ Կաղկաղ և Խիպանը ամբողջ ձմեռը հրաշքով կես անթի անցնելի ետք անհամբեր կըսպասեն իրենց լեռներուն սնամասուն որ դեռե խառնրով սնունդ ճարեն, տյսերնե աթածելով ապրին»[30]։

Գյուղացիների խեղճության ու աղքատության մեր բնութագրությանը հետևում էր նրանց անձնական կախվածության սաստկացման հետ։ Հատկապես համիդիական դեղերում ցուցադրված քրդական ցեղապետերը սկսեցին ավելի անձնաբաժակ վարվել գյուղացիների նկատմամբ, ենթարկեցնել նրանց բռնարար, հաշվի չառնելով բազաքացիական իշխանության ներկայացուցիչներին՝ կայմակամին, մութասարրիֆին, անգամ վալիին։ Գ. Ի. Ավերյանովը նշում էր. «Առանց մուշերի թույլտվության, անիմաստ է որևէ միջոցառում՝ ընդդեմ «համիդիեական քրդերի»[31]։ Գյուղացիները դիպուկ կերպով ասում էին. «համիդիե վար, փաթիշահ յոխդուր» (այսինքն՝ «համիդիեն կա, փադիշահը չկա»)[32]։

Վատթարացավ նաև բատրակների վիճակը։ Նրանք աշխատում էին արևածագից մինչև մայրամուտ, չունենալով ոչ հանգիստ և ոչ էլ առնական օր։ Կարնո գյուղերից մեկում կատարված այն հարցին, թե որք առհասարակ կիրակի օրերին աշխատում եք, բատրակը պատասխանում է.

«— Այո պարոն, միշտ աշխատում ենք։

—Ասոնք է ասիպում այդ բանին։

—Ոչ, ասան չէ ասիպում, բայց էլի բարին արտը գնալն է, որովհետև եթե տանը մնանք, նա ալնքան կբանեցնի մեզ իր տնային գործերով, որ կիրակին հարամ կը լինի պլանեբիս»[33]։

Տերերը բատրակներին չարաշար աշխատեցնելուց հետո վճարում էին շատ չնչին գումար՝ օրական 3—4 դուրուշ կամ 24—32 կոպ.[34]։

Եթե նկատի ունենանք (ամենահամեստ թվերով), որ 4—5 հոգուց բաղկացած ընտանիքը օրական օգտագործում էր 2 կգ. հաց,

30 «Ազատամարտ», 1909, № 165։

31 П. И. Аверьянов. Курды в войнах России с Персией и Турцией, в течение XIX столетия, Тифлис, 1900, стр. 272.

32 Նույն տեղում, էջ 278—279։

33 «Հորիզոն», 1913, № 210։

34 «Сборник географических, топографических и статистических материалов по Азии», вып. LXVI, Записка о Малой Азии Генерального штаба полковника **Путята**, СПб, 1896, стр. 106.

300 գրամ բրինձ, 200 գրամ յուղ, 500 գրամ միս և 5 կոպ. այլ մթերքներ, ապա միջին հաշվով 30 կոպ. ստացող բառարակը միայն ուտելիքի ծախսում էր մոտ 33 կոպ., այլ կերպ ասած՝ նրա աշխատավարձը չէր բավարարում կամ հազարյա չէր բավարարում ընտանիքի միայն անդամին։ Հասկանալի է, որ բառարակը իր ընտանիքի մյուս կարիքները հոգալու համար ստիպված էր էլ ավելի կրճատել անձնական ապառումները։

Աշխատավոր դյուղացիության վիճակն ավելի վատթարացավ պարբերաբար կրկնվող սովի հետևանքով։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում սովի բազմաթիվ դեպքեր եղան, բայց նրանցից հարկ ենք համարում նշել երեքը, որոնք ամենաարտահայտիչն էին։ 1878—1880 թթ. սովն ընդգրկել էր երկրի մի շարք շրջաններ։ Գյուղացիներից շատերը ոչինչ չունեին ուտելու (էլ չխոսենք ցանելու մասին)։ Նրանց մի մասը սովամահ եղավ։ Մեռնողների թիվը հասավ մի քանի հազարի։ Այն մեծ էր հատկապես Ալաշկերտում և Վասպուրականում։

1892—1896 թթ. սովը գերազանցեց իր նախորդին, ընդգրկելով ավելի շատ շրջաններ և թողնելով ավելի ծանր հետևանքներ։ Մթերքների գները բարձրացան ավելի քան տասն անգամ։ Օրինակ՝ Խնուսում, որտեղ սովից առաջ մեկ սամար հացահատիկը վաճառվում էր 60—65 դուրուշով, սովի տարիներին վաճառվում էր 700—750 դուրուշով։ Նույնիսկ այդ գներով հացահատիկ վաճառողները հազվադեպ էին։ Թուրքական կառավարության կողմից տարվող հալիկական մասսայական կոտորածների պատճառով դժվար էր որոշել սովից մեռնողների թիվը, բայց հավանական է, որ այն մեծ չափերի էր հասնում։

Աշխատավոր դյուղացիության համար ծանր էր նաև 1905—1908 թթ. սովը, որը տարածվել էր Սասունի լեռներից մինչև պարսկական սահմանը, Տիգրանակերտից մինչև ռուսական սահմանը։ Մարդիկ դարձել էին ուղղակի մուրացկաններ, բայց ուտելու բան չէին գտնում։ Նրանք մեռնում էին սովից, բնաջնջվում մասսայաբար։ Կառավարությունը, որը բնակիչներից գանձական հարկեր էր հավաքում, սովի ժամանակ նրանց օգնելու նպատակով, կամ ցուցարհրում էր քար անտարբերություն տուժածդողների ու մեռնողների նկատմամբ, կամ միջոցները տալիս էր գերազանցապես մահմեդականներին։ 1905 թ. «Մշակը» քաղվածաբար բերում էր ռուսական լրագրերից մեկի հետևյալ հաղորդումը. «Թուրքական կառավարությունը նոանդուն միջոցներ է ձեռք առել, որ բնակիչը անհ

հայ ժողովրդի մնացորդները... Սասունի, Մուշի, Բիթլիսի և նրա շրջակաների, Սպարկերտի, Վասպրի, Արքեդրի, Մոթրաբերդի, Իրիչի, Գասկաոի, Խլաթի, Երզնկի, Մոկաց և ուրիշ տեղերի հայերը բառի բուն նշանակությամբ մնռնում են սովից»[35]։

Գյուղացիները սովից չմեռնելու համար դիմում էին պատդրխաությանն նրանք գնում էին Կ. Պոլիս, Թուրաստան, եվրոպական ու ամերիկյան երկրները։ Պանդխտության հոսանքն Արևմտյան Հայաստանից հատկապես 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո նոր թափ առացավ։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ չկար մի դավառ, որ պանդխտ չունենար[36]։

1877 թ. պանդխտության են դնացել։ Մուշից՝ 17.000, Բաղեշից՝ 2800, Սղերդից՝ 5000, Քնամախից՝ 2000, Դերջանից՝ 1000, Քղուից՝ 3000, Վանից՝ 38.000 մարդ[37]։

Ըստ Ա. Հովհաննիսյանի բերած ոչ լրիվ տվյալների, պանդուխտների թիվը նթե 1860 թ. կազմում էր 15.000, ապա 1886 թ. միայն Կ. Պոլսում հասնում էր 50—60 հազար հոգու[38], այլ կերպ ասած՝ 26 տարվա ընթացքում այն աճել է մոտ 4 անգամ։

Ուշագրավ է նշել, որ տղամարդկանց հետ միասին սկսում են պանդխտության դնալ նաև կանայք։ 1880-ական թվականներին Բաֆֆին դրում էր. «Առաջ գնում էին միայն տղամարդիկ, իսկ այժմ կանայք նույնպես սկսել են օտար երկրներում բախտ որոնել։ Վանեցի կինը, որ իր տան ծածկի տակից չէր դուրս գալիս, որ նրա ներսը մի ուրիշ մարդ չտեսնի, այժմ պանդխտության մեջ վատնում է իր ամենդնական համեստությունը»[39]։

Գյուղացիները գնում էին պանդխտության մի քանի ամսով, կամ երկու տարով, բայց նրանցից շատերը մնում էին այնտեղ ընդ-

35 «Մշակ», 1905, հունիսի 3։

36 Մի հաղորդման մեջ ասվում էր. «Հաշիվ 30—40 տարի է, որ սկսավ պանդխտությունը և այսոր հասած է ծայրահեղության... Այժմ պանդխտության վարակումը ծավալված է ամեն դյուղ, ամեն խրճիթ։ Տուրաբանչյուր բնտանիք յուր թիվն նայելով 1—2 և մինչև 4—5 պանդուխտներ ունի այսօր։ Օրինակի համար Մուշի Խաչդուզը, որ ունի 250 տուն, ունի 300—400 պանդուխտ, Նորշենն՝ 200 տուն, և ունի 200 պանդուխտ, Բերգաձոր՝ 120 տուն, ունի 200 պանդուխտ... Այսպես և մյուս գյուղերը, տվածների ու քաղաքներդ («Արձագանք», 1887, էջ 269)։

37 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի ինստիտուտ, Ք. Ազատյանի արխիվ, գ. 40, թ. 6, գ. 47, թ. 23, գ. 49, թ. 6, գ. 57, թ. 87, գ. 59, թ. 7։

38 Ա. Հովհաննիսյան, Նավթագործը և նրա ժամանակը, գիրք I. Երևան, 1955, էջ 360։

39 Բաֆֆի, Երկեր, հ. 5, էջ 41։

միշտ։ Նրանք գնում էին փող վաստակելու և նյութական քիչ թե շատ բավարարության գոնելու համար, բայց ընկնում էին մի այլ կարիքի ու խեղճության մեջ—հանձախ ավելի վատ, քան իրենց հայրենիքում[93]։ Գանդիսաուիլյուներ արևմտահայության համար ուներ ավելորդ նշանակություն։

---

93 Կ. Պոլսում հայ պանդուխտների կյանքն ուսումնասիրող բժիշկներից մեկը գրում էր, որ շատերը բնակվում են Գալաթա փաշա կոչված թաղում, որտեղ տիրիկած պատկերն ամեն օր հազ և քոր վար կիճափին. մութ և խանձ տեղի՝ երբ շեփ բազդատելով գաղթի օրերն ավելի վայելչության ունեին։ Այս անկյունների մեջ բազմանալի տիրին... են լու, մլակ, ոչիչ և այսոքան կենդանիներ։ Նրա սահմով, ամենասարսափելին Երկար բազարի կողմերում ապրող պանդուխտների վիճակն էր, որտեղ տրճարատների տակին գետնափոս տեղերի գետնած հրեանների մարդեր գուրս կիրնեն պատահած և կիզատ շորեր հագած։ Ահա այդ մարդիկ Հայաստանցիներն են. 18—20—25 տարեկան երիտասարդներ... տղա մեկ կամ երկու 10—12 տարեկան պատանիներ ալ, որպես նոան կատարյալ հանահատներ և մերիս... խնդիրն այդ վիճակներ տեղեր խմբերին կազակին խոտ ան խոտ, հալը, որդի, հոտալը, դրացի, 10—15 անձ միասին, որոնցի վարձն ամիսի էժանագին լիներ... երկոտներ քիչ կրցած են փող շահել, այդ մոտ վատահատիր մեկ ազատ լուսով մի կանթիղ կվառի, որի բոլորքիր խնձ արտաքնեներ ձագուած կճահեն—պահեր, հազ և կամ ժոռնեցման (ատամ օրեր), սոխ, հաց (պահ օրեր) և կամ ցորեն մեկ հազ թաթախելով կուտեն։ Երբեմն ալ մի քիչ ղորթա կշղնեն ցորեն մեջ ու խաչելով կուտեն Մահտան կեթակուր... ամառն մեկ հազիվ մի կամ երկու անգամ կպատահի օր ուտեն, այն ալ... Հոտած տեսակներ։ Ձուրյանց հագած շորեր յոլչանք կլվան, այն ալ ոչ շատ տեղում, զի մարդան, պատած բաներ լինելով կվտեռան, որ լվացած ատեն ավելի պատռվին (*«Մշակ»*, 1877, պատոտի 25)։

Պանդուխտների վիճակը չավ չէր նաև Ամերիկայում։ Նրանք երկար ժամանակ թափառում էին աշխատանք գտնելու համար, իսկ աշխատանք գտնելիս տտանում չէին աշխատավարձ։ Մի հաղորդման մեջ ասում էր, որ Հյուսիսային Ամերիկայում պանդուխտների տեղաբաշխն մասը շարաչար կաշխատի, բայց տղեղ կվճատվին։ Նրանք ինչխատում են գործատուն և կոշտատան իրենց հազած երեխը և գրացիները, համոզվելով, որ նրա նույն գրկանք և աշխատանքն գրեին իրենց հայրենիքի, Թաթրիզի մեջ, նույնքան պետի կարծեսին վատասկել ատանց իրենց տղայությունը փաղնելու ամերիկյան գործատուների ազատական ձուլին, փորին մեջ (*«Մշակ»*, 1891, մարտի 26)։

Անշրամելու է նշել, որ կյանքի վատ պայմանները, ցածր աշխատավարձը, էլ չխոսած գործան շահագործման մասին, պատճառ էին գանում պանդուխտների մասսայական հիվանդացման. Նրանց մեծ մերոցը կյանքում ատապում էին այս կամ այն հիվանդություններով, իսկ մյուսները մահանում օտարության մեջ։ Ականատեսներից մեկը գրում էր. «Ջե այս հիվանդներն քանի՜ կտպատին... Հաշիվն գժվար է ասլ... մեռնողների քիվին, իշարին, ավորական համեմատությունն բարձր էր (*«Մշակ»*, 1881, հոկտեմբերի 5)։

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին, հատկապես նրա վերջին քառորդում Արևմտյան Հայաստանում տեղի էր ունենում մի կողմից կալվածատիրական հողատիրության ընդարձակումը, իսկ մյուս կողմից գյուղացիության կխաճորտացումն ու ճորտացումը։ Այդ երևույթը պայմանավորված էր ոչ միայն թուրքական կառավարության տղային ու ապրարային քաղաքականությամբ, այլև նահապետական հարաբերությունների առկայությամբ ու տապանքային տնտեսության թույլ զարգացմամբ։ Նահապետական հարաբերությունները անտեղ էին տալիս ֆեոդալական հարաբերություններին, իսկ ապրանքային տնտեսությունը չէր հասել այն աստիճանին, որն ապահովիր կապիտալիզմի զարգացումը։ Ճիշտ է, Արևմտյան Հայաստանում, ինչպես արդեն ցույց տրվեց, XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին առաջանում էին կապիտալիզմի տարրերը, բայց արտադրահարաբերությունների տեղաշարժերի գլխավոր և հիմնական ուղությունը ոչ թե առաջընթացն է դեպի կապիտալիզմը, այլ ետընթացը՝ դեպի ֆեոդալիզմ։ Ագրարային հարաբերությունների նոանը խիստ ծանր անդրադարձավ գյուղացիության աշխատավորական զանգվածների վրա։ Նրանք բնկան մի այնպիսի վիճակի մեջ, երբ նրանց սոցիալական ու տղային ազատագրումը դարձավ բացարձակապես անհնարին առանց դեմոկրատական ուժերի մի՛ջամտության։

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1908 Թ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՓՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

1908 թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցավ հեղափոխություն։ Երիտասարդ թուրքերը, որոնք գուրս էին եկել ֆեոդալական բյուրոկրատական միջավայրից և արտահայտում էին լիբերալ-կալվածատերերի ու առևտրական բուրժուազիայի շահերը, տապահեցին Աբդուլ-Համիդին և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը[1]։

---

1 Երիտասարդ թուրքերի կուսակցությունն ստեղծվել է 1889 թ. Կոստանդնուպոլսում, մի խումբ սպաների ուժերով և կոչվում էր «Իթթիհատ վե թերաքի» (*«Միություն և առաջադիմություն»*)։ Այդ կուսակցության անդամներին հետապնդումներ ավելի հետևողական թուրքերը անվանում էին իրենց՝ թուրքերի բազմով այդ անվանումն առաջին անգամ նկատ 1908 թ. հեղափոխությունից հետո, այն էլ ոչ թե թուրքական աղտատանությամբ, թուրքերենի հոգնակիով՝ «Ջեմի թուրքյե», կրճատ՝ «Ջեմեն»։

Նրանք հեղաշրջումը կատարեցին զորքի օգնությամբ, հեռու էին կանգնած ժողովրդից և այդ պատճառով չսատարեցին ազատագրական լայն մասսաների պաշտպանությունը։ Բ. Կնունյանցը դեռ 1909 թ. մայիսին գրում էր. «Թուրքական հեղափոխությունը... երկիրը հասցրեց... քաղաքական այնպիսի կարգի, երբ ազգը ենթարկվում է գինվորի հրամանին։ Ազգաբնակչության լայն խավերը՝ գյուղացիությունը և քաղաքային մասը արհեստավորները առայժմ բոլորովին մի կողմ են քաշված հեղաշրջումից և իրենց պահանջներով հանդես չեն գալիս։ Երիտասարդ Թուրքերը... շատ բան են խոստանում։ Թե նրանց ինչ կմտցրողի՝ չգիտենք»[2]։

Իսկ ի՞նչ խոստումներ էին դրանք և ի՞նչպես իրագործվեցին։

Երիտասարդ Թուրքերը խոստանում էին Թուրքիայի պարտքերի մարում և նրա ելքը կիսագաղութային վիճակից, կառավարման պատմաճնոական ձևի ոտնձգում, երկրի բոլոր քաղաքացիների համար հավասար ընտրական իրավունքի սահմանում՝ գաղտնի քվեարկությամբ, համայնքների ու մարդերի լայն ինքնավարություն, մամուլի և ժողովների լրիվ ազատություն, ազգային բոլոր արտոնությունների ու խարտիաների վերացում, սոցիալական լայն օրենսդրություն և աշխատանքի պաշտպանություն, պետական, կայվածատիրական և կրոնական հաստատությունների հողերի բռնագրավում և գրանց հանձնումը աշխատավոր գյուղացիությանը, դաշնազան բնակչաքների վերացում, պրոգրեսիվ հարկերի սահմանում, երկաթգծի, փոստ-հեռագրի ու հանքային հարստությունների պետական շահագործում, ժողովրդական միլիցիայի ստեղծում, եկեղեցու անջատում պետությունից և այլն, և այլն։

Ժողովրդի աչքին թող փչելու և նրա համակրանքը շահելու համար երիտասարդ Թուրքերը սկզբում վերացրին գրաքննությունը, որի հետևանքով լույս տեսան մի շարք նոր թերթեր ու ամսագրեր, Թուրքերեն լեզվով թարգմանվեցին Կ. Մարքսի «Կապիտալը», Է. Տոլստոյի, Մ. Գորկու, Ա. Չեխովի և պրոգրեսիվ այլ գրողների երկերն ու ստեղծագործությունները։ Որոշ տեղերում նրանք կազմակերպում էին մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների, այսպես կոչված, եղբայրացում։ Կ. Գալսում, օրինակ, մահմեդականների մի մեծ ամբոխ գնաց հայոց գերեզմանոց և պատկ դրեց հա-

[2] Հ. Ինճիկյան. Ե. Կնունյանցը երիտասարդ Թուրքերի հեղափոխության մասին (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ), 1953, № 8, էջ 100։

միջնադարյան ոճիրների ժամանակ ընկած զոհերի հիշատակին։ Բեյրութում Թուրք սպաներն ու գինվորները հայոց եկեղեցում մասնակցեցին այդ զոհերի հիշատակին նվիրված արարողությանը և այլն[3]։

Բայց երիտասարդ Թուրքերը հենց որ ձեռնարկին սուլթանի հակահեղափոխական խռովությունը, վերացրին գոյություն ունեցող երկիշխանությունը և զարձան երկրի լիակատար տերն ու տնօրենը, հեռու քաշվեցին իրենց խոստումներից և սկսեցին վարել Աբդուլ-Համիդի ոճրագործ քաղաքականությունը։ Այսպես, նրանք երկրին ավելի թաղեցին արտաոտհմանյան պարտքերի մեջ ու նպաստեցին նրա կիսագաղութացմանը եվրոպական պետությունների կողմից։ Բավական է նշել, որ 1914 թ. Թուրքիայի արտաքին պարտքերն արդեն կազմում էին 143.241.757 լիրա, չհաշված տոկոսը, որը հասել էր 9.024.158 լիրայի։

Երիտասարդ Թուրքերը համարյա փոփոխություն չմտցրին երկրի վարչական բաժանման ու կառավարման մեջ։ Շատ տեղերում նրանք նույնիսկ չպաշտոնազրկեցին համիդյան ատրճանավորներին, իսկ հակառակ դեպքում սրանց փոխարինեցին ավելի դաժան անձերով։ Նրանք չսահմանեցին բնակչության անձի և գույքի ապահովություն։ Կայսրության համարյա բոլոր շրջաններում և առավելապես Արևմտյան Հայաստանում առաջվա նման թագավորում էր բռնությունն ու կամայականությունը, կողոպուտն ու թալանը։

Դիմենք փաստերին. 1908 թ. դեկտեմբերի 1-ին Վանի ռուսական փոխհյուպատոսը հաղորդում էր. «Թալանը, սպանությունները, անասունների փախշտակումը այժմ էլ հազվադեպ բաներ չեն, իսկ կառավարությունը առայժմ հող չի տանում այդ չարիքի դեմ պայքարելու և ոչնչացնելու միջոցառումների մասին»[4]։

1910 թ. նոյեմբերի 1-ին նա շարունակում էր. «Վանի վիլայեթում իրերի դրությունը առաջվա նման անմխիթար է, նույնիսկ նկատվում է շրջադարձ դեպի վատը։ Այստեղ արդեն ոչ ոք այլևս չի հավատում Թուրքական սահմանադրությանը։ Կարականապես ոչ մի բանում չի նկատվում էական բարելավում։ Նույն անտարբերությունը թագավորությունը, նույն դիմազրկությունը, նույն կամայականությունը և զրկերի նույն հարատևությունը։ Տեղական իշխանությունները անզոր են պայքարելու ավազակների հետ, քանի որ, ինչպես ինքը, վալին էր ինձ ասում, Թուրքական սպաներից շա-

[3] Տե՛ս А. Ф. Миллер. «50-летие младотурецкой революции», М., 1958, стр. 37—38.

[4] Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1908, գ. 1595, թ. 123։

տիրը, որոնք ուղարկվում են բոլոր երկրների դեմ, ոչ միայն չեն հետապնդում քրիստոնեական ավազակապետներին, այլ ընդհակառակը՝ թաքցնում են նրանց։ Ընդհանրապես Վանի վիլայեթում իրերի դրությունն այնպիսին է, որ ...ոչնչով չի տարբերվում հին ավատական Թուրքական կարգերից։ Հեղաշրջումը գուցե եկավ ձևական ու մակերեսային, իսկ իրերի էությունը մնաց անփոփոխ»[5]։

1911 թ. մայիսի 1-ին Բոլանդխի հայ գյուղացիները Մուշի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Եսայեանցին գրում էին. «...Մինչդեռ մենք կը հուսայինք, որ սահմանադրությունը պիտի կարողանայր ժողովրդին ցավերը մեղմելու և ամոքելու, վերքերուն վրա սպեղանի գնելու, անոր արցունքը սրբելու, բռնության չարիքները վերցնելու և չարագործները պատժելու, բնդհակառակն, տեսապես, հարատևորված, վտարանդի եղած, և չքավոր ժողովրդին ցավերը ավելի ու ավելի բազմապատկվեցան, ավելի խորունկ վերքեր բացվեցան... Ինչ որ բռնապետական շրջանին չէր հուսացվեր, այսօր տեղի կունենա, ինչ որ մեր տխուր անցյալը պակաս թաղած էր, այսօր մեր ներկա դառն իրականությունը կուգա լրացնելու։ Հին բռնապետական հրեշը նույն թափով տասը կռնակի իր շահատակությունները, ավերները, բռնություններ՝ սահմանադրության գիմակին ներքև։ Ապահովություն, առևտրություն, վիրավորություն, ծեծ, բռնություն, սարսափություն և հոգային զրպարտները ավելի ու ավելի մեծ չափերով առաջ կտարվին գավառական խուլ անկյուններուն մեջ, և ժողովրդական այսքան անթիվ ու անհամար դժբախտությանց հանդեպ տեղական կառավարությունը քար անտարբերությամբ և հաճույքով կդիտե, կտեսնե, կլսե և, որ ավելի ցավալին է, կքաջալերե և այս բոլոր գործումներուն խորհրդով ու գործով կմասնակցի, քանդելով ու ավերել տալով ՀՅմսա ժողովրդի տունն ու տեղը»[6]։

Երիտասարդ Թուրքերը ոտակոխեն քաղաքականություն վարելին նաև ապագային հարցում։ Նրանք հայտարարելին, որ բոլոր ապրելը կարող են պահպանել իրենց կրոնը, բայց ոչ երբեք լեզուն, այլ կերպ ասած՝ ձգտում էին Թուրքացնել բոլոր ժողովուրդներին և տեղծել սամանյան հզոր կայսրություն, որի սահմանները պիտը է կազմեին Արևմտաւոքում՝ Բոսֆորը, իսկ Արևելքում՝ Ալբայրը։ Այդ նպատակին հասնելու համար նրանք քարոզում էին պանթուրքիզմ,

5 Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 521, օպ. 2, գ. 492, թ. 381։

6 «Հնչակյան», 1911, հուլիսի 22։

այսինքն՝ բոլոր Թուրքական ժողովուրդների համախմբում սամանյան Թուրքիայի շուրջը։ Քան էությունն նրանք վերաթարգմանում էին Արդուլ-Համիդի տեսահռչակ պանիսլամիզմը, որի նպատակն էր, ինչպես արդեն ասվեց, համախմբել բոլոր մահմեդականներին Թուրքիայի դեկավարության տակ։

Երիտասարդ Թուրքերը շարունակեցին Արդուլ-Համիդի հայաջինջ քաղաքականությունը, միայն Ադանայում 1909 թ. կատորածով 30.000 հայ։ Նրանք հայերության բնաջնջումը պարբերաբար շարունակեցին նաև հետագա տարիներին, իրենց այդ սև նպատակը իրագործելու համար պատճառաբանելով համիդիեական գնդերն ու այլ բռնություններ[7]։

Այդ քաղաքականության հետևանքով հայ ժողովրդի մասսայական արտագաղթը Արևմտյան Հայաստանից ավելի ուժգնացավ, որի մասին կարելի է գաղափար ներքոհիշյալ թվերից (գաղթել են մինչև Ամերիկա)։

1904 թ. — 1745 հոգի	1910 թ. — 5308 հոգի		
1906 թ. — 1895 »	1912 թ. հուլիսից		6988 հոգի
1908 թ. — 3209 »	1913 մարտ		

Ինչպես տեսնում ենք, արտագաղթողների թիվը սահմանադրությունից հետո ավելի մեծ էր, քան առաջ։ 1913 թ. Վանի ռուսական փոխհյուպատոսը գրում էր. «Հայերի արտագաղթը վերջանցպես գնալ Ամերիկա ընդունում է չլսված և ողջույի ահռելի չափեր, եթե այն չդադարի, ապա Թիւրքիայի վիլայեթում շուտով բոլորովին հայ չի մնաց»[8]։

Շնորհիվ արտագաղթի և պարբերական կոտորածների՝ Արևմտյան Հայաստանում հայերի թիվը զգալի չափով նվազեց. 1860-ական թվականներին եղած մոտ 2,5 միլիոնից, 1900-ական թվականներին, մասնավորապես սաոքին համաշխարհային պատերազմի նախօրյակին իջնելով 1.403.000 հոգու[9]։

7 ՎՍՀՄ ԿԳԱԿ, ֆ. 521, օպ. 2, գ. 521, թթ. 29—31։

8 Նույն տեղում, ֆ. 71, գ. 118, թ. 68։

9 Տե՛ս «Армянский вопрос перед мирной конференцией». Екатеринодар, 1919, стр. 27. Քան որոշ հեղինակների ավելիները, սաոքին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արևմտյան Հայաստանում եղել է մոտ 1.000.000—1.200.000, իսկ քան այլոց՝ մինչև 2.000.000 հայ (տե՛ս Альберт Вантель. Армяне и турецкие реформы, Петроград, 1903, стр. 6. А. Дживелегов. Будущее Турецкой Армении, М., 1911, стр. 18.

Բայց չնայած դրան, հայերը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, այնուամենայնիվ, կազմում էին Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ճարաբերական մեծամասնությունը, որը երևում է հետևյալ տվյալներից. 1912 թ. նրանք վից վիլայեթներում կազմում էին բնակչության 38,9%-ը, մինչդեռ թուրքերը՝ 25,4%-ը, քրդերը՝ 26,0%-ը, հույները, ասորիները, չերքեզները, լեհնները, պարսիկները և ուրիշներ՝ 9,7%-ը[10]։

* * *

Երիտասարդ Թուրքերը շարունակեցին Աբդուլ-Համիդի քաղաքականությունը նաև ազգաբանչի հարցում։ Ճիշտ է, աշխատավոր գյուղացիությանը խաբելու նպատակով նրանք հրապարակեցին որոշ օրինագծեր և օրենքներ, բայց դրանց մեջ չկար որևէ գործնական միջոցառում կալվածատիրական հողատիրության վերացման մասին։ Նրանք խոսքով ուզում էին հայերին վերադարձնել նրանցից խլված հողերը, բայց գործով ամրապնդում էին այնների ու բեյերի, ինչպես նաև մահմեդական ազգաբնակչության կողմից կատարված հափշտակած հողերի բռնագրավումները։ Այսպես, նրանք անցկացրին կաղաստրներ և դրանցով իրավապես ձևակերպեցին հողային փաստացի սեփականությունները։ Երիտասարդ Թուրքերի 1910 թ. հրապարակված օրենքներից մեկում ասվում էր, թե նրանք, ովքեր այս կամ այն պատճառով թողել են իրենց հողերը և արտագաղթել, վերադառնալիս կարող են պահանջել դրանք։ Բայց էլի նրանց հողերն արձեն զանվում են ուրիշների ձեռքում, որոնք թափու ունեն, ապա հողերը պետք է թողնել վերջիններիս, իսկ նախկին տերերին տալ այն գումարը, որը նրանք ծախել են պետական գանձարանը՝ թափու առանալիու «նրա գաղթականներու բացակայության առեն,— ասվում էր վերոհիշյալ օրենքներից մեկում,— ուրիշներ եկած ու անոնց թափուր թողած կալվածներու կամ հողերու վրա նոր գյուղեր կազմած են, չդրել այդ նորակազմ գյուղերը, այլ անոնց հին տերերը վերադարձած ատեն, փնտրել անոնց կալվածներու կամ հողերու դիմը կառավարական արկղին, բան նոր գնահատության[11]։

Այդ նույն թվականին հրապարակված մի այլ օրենքում նշվում էր, որ հողային վեճերի ժամանակ պետք է դեկավարվել

10 *Տե՛ս* «Сборник дипломатических документов, реформы в Армении». Петроград, 1915, стр. 289.

11 «Բյուզանդիոն», 1910, մայիսի 25։

հնուհյալ սկզբունքներով. նրն երկու կողմն էլ ունեն կալվածագիր, ապա հողը պետք է տալ նրան, ումը ավելի հին է, նրն միայն մի կողմն ունի կալվածագիր, ապա հողը պետք է տալ նրան, նրն երկուսն էլ չունեն կալվածագիր, ապա թողնել հողը նրա ձեռքում, ով տուրք է վճարում։ Օրենքը առաջարկում էր չրավարարվող կողմին՝ դիմել դատարան, միաժամանակ նշելով, որ վճռի առարկա կարող են լինել միայն 1908 թ. հետո կատարված զավթումները։

Պետական խորհրդում նախապատրաստվող նախագծերից մեկում ենթադրվում էր հայրենիք վերադարձողներին բաժանել երեք խմբի։ Առաջին խմբի մեջ մտնում էին նրանք, ովքեր իրավապես հրաժարվել էին օսմանյան հպատակությունից և գաղթել, երկրորդ խմբի մեջ նրանք՝ ովքեր գաղթել էին առանց օսմանյան հպատակությունից իրավապես հրաժարվելու (կառավարությունն էր հանել նրանց իր հպատակությունից) և, վերջապես, երրորդ խմբի մեջ մտնում էին նրանք, ովքեր գաղթել էին, ավելի ճիշտ՝ փախել էին և օսմանյան հպատակությունից հանված չէին։

Առաջին խմբին պատկանող վերադարձածները իրավունք չունեին որևէ բան պահանջելու։ Նրանք պետք է տեղավորվեին Արևմտյան Հայաստանում՝ ըստ Թուրքական իշխանությունների հայեցողության։ Երկրորդ խմբին պատկանող վերադարձողները կարող էին պահանջել իրենց կալվածքները։ Եթե նրանք արդեն վաճառված էին կառավարության կողմից ուրիշներին, ապա վերադարձողներին արվելու էր փոխ՝ վաճառքի գնի չափով և նոր գրամով։ Երրորդ խմբին պատկանող վերադարձողները կարող էին առանալ կամ իրենց հողերը, եթե դրանք զրաղեցրած չէին ուրիշների կողմից, կամ նոր հողեր՝ համաձայն իշխանությունների ցանկության, կամ թե փոխ՝ իրենց հողերի գների չափերով։ Թափուր ունեցողներին առաջարկվում էր դիմել դատարան և այնտեղ պարզել իրենց հաշիվները։ Նախագծում նշվում էր, որ ներկա օրենքը ուժի մեջ է երեք տարի, որից հետո այն կորցնում է իր ուժը և ոչ մի վերապահում չի կարող օգտվել նրանից[12]։

Այս օրենքների ներքին հակասություններն ու ռեակցիոն տենդենցները միանգամայն ակներև էին։

Բացի օրենքներից ու օրինագծերից, աշխատավոր գյուղացիությանը խաբելու նպատակով երիտասարդ Թուրքերը առնձնում էին նաև զանազան հանձնաժողովներ, որոնք, իբր թե, պետք է

12 «Բյուզանդիոն», 1911, հոկտեմբեր 5։

քննեին և վճռեին բնակչության մեջ առաջացած հողային վեճերը։ Նրանք այդ հանձնաժողովները ստեղծում էին յուրաքանչյուր տարին կամ նույնիսկ վեց ամիսը մեկ անգամ և ցրում՝ առանց գործնական նշանակություն տալու դրանց աշխատանքներին։ Այսպես, 1908 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Վիլիջեր կառավարության կողմն հայերն և թուրքերն բաղկացյալ հանձնաժողով մը դիվցավ շրջակա գյուղերը, խնամով քննելով ճշտելու հայ գյուղերն իրենց հողային կալվածքներով, որը գրաված են թուրգերեն ու անոնք դարս պիտի հանվին, իրենց նախկին հայ տերերուն հանձնելու»[13]։

Իսկ 1912 թ. Վանի ռուսական փոխհյուպատոսը հաղորդում էր. «ԵՒռնեցյան նահանգներում հողային հարցը վերջնականապես լուծելու համար ստեղծվելու են հատուկ հանձնաժողովներ, ընդ որում որոշված է բավարարել հողերի նախկին տերերին, այսինքն՝ հայերին փոդով, որը հատուկ նախատեսված է այդ նպատակին 3 միլիոն ռուբուշի չափով»[14]։

Պետք է, որ այդ բոլոր հանձնաժողովները բաղկացած էին համարյա բացառապես պաշտոնյաներից, հողատերերից և բնակչության ունևոր խավերից, իսկ գյուղացիներից, որոնք բոլորից շատ էին շահագրգռված հողային հարցի լուծումով, չկար նույնիսկ մեկ ներկայացուցիչ։

* * *

Երիտասարդ Թուրքերը կոխտան բարձրացրին և գնդակահարեցին այն ազանեցից ու բեյլերից մի քանիսին, որոնք խիստ ռեակցիոն դիրք էին բռնել հեղաշրջման հանդեպ և ձգտում էին վերականգնել սուլթանիզմը։ Օրինակ, 1913 թ. սեպտեմբերին նրանք սպանեցին Շարիր աղային, հոկտեմբերին՝ Միր-Մհենին, իսկ 1914 թ. ապրիլին Բագեշում կախեցին Սեիդ Ալիին, շեյխ Շեհաբեդդուն, Մհմհմեդ-Շիրինին, մոլլա Մուհեդդինին, Հաջի Հայրոյին, Ալի ազային և ուրիշների[15]։

Սակայն երիտասարդ Թուրքերը հիմնականում պաշտպանեցին ֆեոդալների դասակարգը։ Նրանք առաջարկեցին հետ վերադառնալ այն ազաներին ու բեյլերին, որոնք 1908 թ. հեղափոխությունից վախենալով, փախել էին Պարսկաստան։ Փախածների այն հարցին, թե կպաշտպանվի՞ արդյոք իրենց անձը, շարժական ու անշարժ ունեցվածքը, նրանք ամեն միանգամայն դրական պատասխան։

Եվ փախած ազաներն ու բեյլերը վերադարձան։ Թուրքական իշխանությունները շատ սիրալիր ընդունեցին նրանց ու տեղավորեցին «իրենց» կալվածքներում։ 1910 թ. մայիսի 9-ին ռուսական փոխհյուպատոսը Վանից հաղորդում էր. «Սրանից մի շարաթ առաջ այստեղ ժամանեցին Քոռ Հյուսեին փաշան և Հաջի Թիմուր փաշան, նրանք հյուր են վալիի մոտ, որը նրանց հետ վարվում է որպես բարեկամներին... Հայ, թուրք և քուրդ բնակչությունը դժգոհում է վալիից՝ ավազակապետերի նկատմամբ ցուցաբերած նրա այդ վերաբերմունքի համար»[16]։

Քիչ անց նա շարունակում էր. «Հյուսեին փաշան վերադարձավ տուն և ներկայումս ապրում է Ջոնկի գյուղում, որը գտնվում է Բաֆիեսից 3 վերստ հեռավորության վրա։ Նա ստացավ իր բոլոր հողերն ու անշարժ ունեցվածքը, նույնիսկ ունեցվածքի այն մասը, որը բռնագրավել էր կառավարությունը՝ նրա փախուստից հետո»[17]։

Ազաներն ու բեյլերը կառավարության աջակցությամբ ոչ միայն ետ ստացան գյուղացիների կողմից հեղափոխության ժամանակ իրենց բռնագրաված կալվածքները, այլև համարյա ամենուրեք շրջանակեցին ընդարձակել դրանք՝ ի հաշիվ գյուղացիների հողերի։ Նրանք մի տեղում հանդես էին գալիս որպես գյուղացիների հողերի «ամենահին տերեր», մի այլ տեղում՝ տնտես հովանավորողներ», մի տեղում ուժի օգնությամբ գյուղացիներին տանում էին դատարան և սպիտում նրանց, որ «կամավոր» հանձնեն իրենց հողերը, մի այլ տեղում ուղղակի բռնագրավում էին դրանք, առանց նրանց կամքը հարցնելու։

Ահա փաստեր. Կիսկիմում Շահ Հյուսեինը հայտարարեց, որ Ալիուն Հյուսեինի գյուղը պատկանելիս է եղել իր նախնիներին, իսկ նրա բնակիչները՝ հայերը, ապօրինի են ապրում այնտեղ։ Անհրաժեշտ է նրանց անհապաղ արտաքսել և հողերից օգտվելու համար գանձել 1000 լիրա։ 1911 թ. ապրիլի 15-ին Կարսեռ ռուսական գլխավոր հյուպատոսը այդ առիթով գրում էր. «Ջնայած բեկի անհիմն հայտարարություններ. թուրքական ադմինիստրացիան, որը վերջերս հաշվի է նստում քրդերի հետ... շատ արագ որոշեց վերցնել հայերից գյուղը, արտաքսել նրանց և գանձել նրանցից՝ հան-

13 «Բյուզանդիոն», 1908, սեպտեմբերի 26։
14 ՎՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 71, գ. 39, թ. 33։
15 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, հոկտեմբերի 9

16 ՎՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 521, օպ. 2, գ. 492, թ. 196։
17 Նույն տեղում, ֆ. 71, գ. 39, թ. 38։

գակներից ոչ ճիշտ օգտվելու համար հազար լիրաս։ Թեև որոշումը դեռ չի մտել օրինական ուժի մեջ... Ղաղին ու դատարանի անդամները անձամբ գնացել են գյուղ, վաճառել են հայերի ունեցվածքը, թանդել են նրանց տները և հավաքած փողը տվել Շահ Հյուսեինին։ Տուժածները հետագրով դիմել են Կ. Պոլիս և պանգատվել ադմինիստրացիայի ավագակային գործունեությունից, բայց մինչև հիմա ոչ մի բավարարում չեն ստացել»[18]։

Խնուսում Բիլիկ Զիպիր և Սեխ բեկերը հափշտակեցին Կեվանդուկի գյուղի հայերի հողերը և արգելեցին նրանց վար ու ցանքը։ Երբ գյուղացիները դիմադրեցին, բեկերը այրեցին նրանց գեղերը, բռնագրավեցին ունեցվածքը և տարան անասուններ։ Նույն բանը կատարեցին նաև Աբթախ, Ջահր, Շաբիր և Խուսար բեկերը, բռնագրավելով Կարակագարան և Ձելիբոմն գյուղերի հողերը։ 1911 թ. Կարնո ռուսական գլխավոր հյուպատոսը նշում էր. «Իհարկե, այդ բոլոր գեպքերի ու չարագործությունների մասին ասեվոդները հայտնում են ադմինիստրացիային, սակայն որպես պատասխան ստանում են միայն հանգստացուցիչ խոստումներ, իբր թե գատարաններն արդարությամբ կբնեն նրանց բողոքները»[19]։

Աղաներ ու բեյերը, բռնագրավելով գյուղացիների հողերը, նրանց մի մասին արտաքսեցին՝ ճիշտ այնպես, ինչպես 1908 թ. հեղափոխությունից առաջ, իսկ մնացած մասի շահագործումն ավելի ասահակացրին։ Նրանք անխնա սպանում էին իրենց վրա գանգատվող գյուղացիներին[20] և բացեիբաց հայտարարում. «Կեսվիրներ, ձեր ազան ալ մենք ենք, ձեր բեյն ալ մենք ենք, ձեր կառավարությունն ալ մենք ենք, ձեր ասլամածն ալ մենք ենք. ո՞վ բասի, թե ազատություն եղեր է ու դուք կալվածատեր պիտի բլլար, ձեր համանած տեղը դիմեցեք, տեսնենք»[21]։

Երիտասարդ Թուրքերը հող չտվեցին Արևմտյան Հայաստանի հողազուրկ և սակավահող գյուղացիներին, ինչպես նաև նրանց, ովքեր փախել էին հին ռեժիմից, իսկ այժմ լսելով հեղաշրջման մասին, վերադարձել էին հայրենիք՝ հող ստանալու և իրենց սիրած երկրագործությամբ զբաղվելու ցանկությամբ։

18 ՈՒՔՔ, ֆ. «Հնդկաստանյանք Կ. Պոլսոմ», 1911, գ. 2680, թ. 26։

19 Նույն տեղում, թ. 75—76։

20 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՄԱ, ֆ. 71, գ. 58, թ. 44։ «Վան-Տոսպ», 1913, հունիսի 15, էջ 245—246։

21 «Բյուզանդիոն», 1912, օգոստոսի 11։

Իհարկե, գյուղացիները դիմեցին պատարան և փորձեցին վերականգնել իրենց իրավունքները, բայց ոչ օր նրանց չպաշտպանեց։ 1910 թ. Ներսես եպիսկոպոս Խաչախանյանը գյուղ էր, թե պանդուխտ հայերից շատերը եկան Տարոն ու բողոքելով վերաբնակության պահանջեցին, բայց Մուշի գատարանին ներկա կազմը հայերուն հույսը բոլորովին կը կարե, այս մեկ-երկու տարվա մեջ տեսնված չէ, որ հայ մը իրավունք շահի Թուրքի մը կամ քյուրդի մը գեմ և ոչ իսկ հին ռեժիմի մեջ այնքան համարձակ անօրենություն կը գործվեր, ինչպես հիմա»[22]։

Հետրոշ է, որ Կ. Պոլսի բարձրագույն մարմինները երբեմն հայրենիք վերադարձած հայերին սիրաշահելու նպատակով կարգադրում էին նրանց բավարարել հողով, սակայն տեղական իշխանությունները դիտենալով, որ այդ ձեռական է, զանց էին առնում դրանք և հողերը քողնում բռնագրավողներին։

Երիտասարդ Թուրքերը հող չտվեցին ոչ միայն հողազուրկ կամ սակավահող հայերին, այլև Թուրքերին, քրդերին և այլ ազգի պատկանող գյուղացիներին։ Նրանք հակառակ իրականության՝ հայտարարեցին, որ հողային վեճերն արդեն լուծված են, իսկ նին պատահում էր, որ գրավում էին այդ վեճերով, ապա գրանք կամ լուծում էին մահմեդականների օգտին, կամ օգտագործում այդ առիթը ազգային կրքեր բորբոքելու համար։ Այդ քաղաքականության հետևանքով հայ և քուրդ գյուղացիների միջև տեղի էին ունենում կատաղի ընդհարումներ, որոնք վերջանում էին աղբերգական հետևանքներով։ Օրինակ՝ Մոկսի քրդերը 1911 թ. գալիում են իրենց հարևան Ոզիմ գյուղի հայերի հողերը։ Վերջիններս դիմում են տեղական իշխանություններին, որոնք պատասխանում են, որ քրդերը իրավունք չունեն կատարելու այդ քայլը։ Բայց հետո պարզվում է, որ իշխանությունները իրենք են քրդերին հրահրել գավթելու հայերի հողերը։ Այս պատճառով՝ հայերի և քրդերի միջև տեղի է ունենում կատաղի կռիվ, որի հետևանքով քրդերից սպանվում են երեքը և վիրավորվում հինգը։ Ի վերջո, ոստիկանները, որոնք կարողացել էին գարերով պահպանել իրենց կիսասանկախ վիճակը, լսելով, որ քրդերը պատրաստվում են իրենց ցեղակիցների վրեժ լուծել, քողնում են տուն ու հող և հետանում Մոկսից։ Իսկ իշխանության ներկայացուցիչը վերցնում է ոստիկանների հողերը և փորձ արյան գինն տալու քրդերին։

22 «Բյուզանդիոն», 1910, հոկտեմբեր 27։

364—16

1911 թ. Կարնո առաջնորդական գլխավոր հյուպատոսը հաղորդում էր, որ Մուշի սանջակում հայ և թուրք գյուղացիների միջև եղած հողային վեճերը, որոնք սովորաբար ընթանում են ծեծով ու սպանություններով, սովորական երևույթ են։ Իսկ ավելին նույնիսկ չի էլ միջամտում նման գործերին»[23]։

Ուշագրավ է, որ հեղափոխությունից հետո քրդերը սրոշ տեղերում թողել էին իրենց կողմից բռնագրավված հայ գյուղացիների հողերը և հետացել։ Բայց տեսնելով, որ կառավարությունը ներողամիտ է հայոց հողերը բոլոր կարգի բռնագրավողների նկատմամբ, նրանք նո վերադարձան (օրինակ, Արձնեշում, Ալաշկերտում, Ադրյեվազում և այլ տեղերում)[24]։

* * *

Երիտասարդ Թուրքերը, անցնելով իշխանության գլուխ, խոստացել էին հարկերի ու տուրքերի կրճատում, բնակչության նյութական վիճակի բարելավում (նույնիսկ հայատարարելին դաֆիրությունն, զինվորական տուրքերի և ապառքների վերացում)։ Բայց նրանք գործնականում ավելի սաստկացրին հարկային հարատևումը։ Ահա փաստեր. Սիլվանում աշարը 1908 թ. 554,470 դուրուշ էր, իսկ 1909 թ.՝ 1195684 դուրուշ։ Քղիում՝ 1908 թ. 7000 լիրա էր, իսկ 1909 թ.՝ 14000 լիրա։ Ալաշկերտում գյուղացիները նախքան սահմանադրությունը վճարում էին 12.200 դուրուշ, իսկ 1909 թ.՝ 55.800 դուրուշ[25] և այլն։ Երիտասարդ Թուրքերի կառավարման տարիներին բազմացան նաև մյուս հարկերը, որը երևում է հետևյալ աղյուսակից[26]։

Հարկերի և տուրքերի տեսակները	1908 թվականից առաջ (ընդունելով 100)	1913—1914 թթ.
Հոդային	100 դրշ.	156 դրշ.
Գույվածական	100 դրշ.	133 դրշ.
Քեմերկան	100 դրշ.	166 դրշ.
Ագնամի	100 դրշ.	156 դրշ.
Ծառատնորհի	100 դրշ.	125 դրշ.
Զինվորականը	5130 դրշ.	6669 դրշ.

23 ՆԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1911, գ. 2680, թթ. 87—88։
24 Տե՛ս «Յուլանդիոն», 1908, հոկտեմբերի 9։
25 «Յուլանդիոն», 1909, օգոստոսի 13։
26 Տե՛ս «Վան-Տոսպ», 1914, համարի 7, էջ 264։

Այդ աղյուսակը ցույց է տալիս, որ 5—6 տարվա ընթացքում բնակչությունից գանձվող հիմնական տուրքերը ածել էին բավականին սրտաճմլիկ չափերով։

Դրա հետ մեկտեղ երիտասարդ Թուրքերը, հակառակ իրենց հանդիսավոր հայտարարության, շարունակեցին բնակչությունից գանձել ապառքները։ 1911 թ. հունվարի 21-ին առաջնորդական գլխավոր հյուպատոսը Կարինից հաղորդում էր. «Բասենի կազայում գյուղացիներից գանձվում են հայտահարկի այն պարտքերը, որ նրանք վերցրել էին անբերրիության տարիներին»[27]։ Երբ գյուղացիները դանգատվում են, վալին պատասխանում է. «Հիմա հին ռեժիմը չի, և բոլոր հարկերն ու ապառիկները պետք է հավաքվեն մինչև վերջին կոպեկը»[28]։

Երիտասարդ Թուրքերը, չբավարարվելով հին հարկերի բարձրացումով և ապառքների գանձումով, սկսեցին բնակչության վրա նորանոր հարկեր բարդել, իսկ 1914 թ. բայ Թոզեցին նորբին փոխառության 5%-ի չափով, 5 տարվա ընթացքում վերադարձնելու պայմանով, որը փաստորեն նոր հարկի մի տեսակ էր։

Երիտասարդ Թուրքերի հարկային քաղաքականության ամբողջ ծանրությունը ընկած էր աշխատավոր մասսաների վրա, իսկ շահագործող վերնախավը առաջվա նման կամ ավելի էր հարկերից ու տուրքերից կամ վճարում էր աննշան գումար։ Այսպես՝ բան պաշտոնական հարկադրման, կալվածատերը պարտավոր էր վճարել իր մաքուր եկամտի 12%-ը, իսկ գյուղացին՝ իր համախառն եկամտի 50—60%-ը, այն դեպքում, երբ կալվածատիրոջ մաքուր եկամուտը հաշվվում էր հարյուր-հազար լիրաներով, իսկ գյուղացիության մեծ մասը չուներ այն։

Երիտասարդ Թուրքերը չփոխեցին հարկահանության նախկին հաջորդականությունը։ Նրանք առաջվա նման հանձնաժողովներ էին ուղարկում հավաքներին, կամ աճուրդով տալիս աղաներին ու քաղաքային դրամատերերին, իսկ կալվածատիրական գյուղացիների հարկերը սահմանում էին նրանց տերերի համաձայնությամբ և վերջնում կանխիկ դրամով։ Վերջիններս, օգտագործելով այդ առիթը, կոդոպատում էին իրենց հպատակներին այնքան, որքան կարողանում

27 ՆԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1911, գ. 2680, թ. 11։
28 Նույն տեղում, տե՛ս նաև ՎՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 71, գ. 58, թ. 18։

էին, կոզոպատի մեծ մասը գնելով իրենց գրպանը։ Այսպես, 1910 թ. Ճեմիլը նշում էր, որ Տիգրանակերտի վիլայեթի Հազրոյի դաշտում կային երկու բեհկ, որոնք ունեին 60 գյուղ։ Նրանք գյուղում եղած 300 ոչխարի փոխարեն ցույց էին տալիս 30 ոչխար և 270-ի տուրքը, որ կազմում էր մոտ 1000 դուրուշ, իրենք էին գրպանում։ Այդ հեղինակը այնուհետև եզրափակում էր, որ այս երևույթը ամիայն Հայաստանին հատուկ չէ, այն կը գրավի ավելի լայն սահմաններ, այն կը տարածվի Անատոլուի արևելյան բարձրավանդակի մեկ ծայրեն մինչև մյուսը, Հայաստանի և Քուրդիստանի միջև»[29]։

Երիտասարդ Թուրքերը պետական հարկերն ու տուրքերը հավաքում էին ամենայն խստությամբ։ Նրանք առաջվա նման գործադրում էին ծեծ ու բռնություն, բանտարկություն և սպանություն։ Եթե գյուղացիները գրամ չունեին, ապա իշխանությունները վաճառում էին նրանց անասունները, շարժական և անշարժ ունեցվածքը, տունն ու տեղը։ 1911 թ. վանի ռուսական փոխհյուպատոսը հաղորդում էր, որ Թուրքական իշխանությունները հավաքում են հարկերը անուղիղ հին ռեժիմի ժամանակ չեղած խստությամբ, բաղաքում վաճառելով աճուրդով կահույք, ապրանքներ, կրպակներ, տներ, իսկ գյուղացիներից հափշտակում են վերջին անասուներ Ե՛վ հայերը, և՛ մահմեդականները հավասարապես տուժում են կառավարության այդ խստություններից ու հավասարապես դատապարտում այն»[30]։

Համաբան նույն բանն էր հաստատում նաև Կարնո ռուսական գլխավոր հյուպատոսը 1911 թ. հունվարի 21-ին նա գրում էր, որ Բասենի կաղայում հարկահանություններ «Կատարվում է ոչ միայն խստությամբ, այլև դաժանությամբ։ Փող չունեցողներից հափշտակում են այդինների ու անային իրերը, իսկ ովքեր դուրկ են դրանցից, բանդում են նրանց տները և փայտը վաճառում որպես վառելիք։ Ես էրզրումում բազմիցս տեսի եմ ունեցել անծամբ տնանկու տալեր, որոնք բարձած են եղել հին տախտակներով, հանած, ներկված դռներով, պերաններով և փայտյա այլ իրերով, որոնք վաճառվում էին որպես վառելիք։ Բասենի կազայի ընչազուրկ բնակիչները եկել էին էրզրում՝ վաճառի դանգատվելու։ Բայց վերջինս, որը արել էր այդ դաժան կոզոպատրաստությունները, իհարկե, թողից նրանց դիմումները անհետևանք»[31]։

29 «Ազատամարտ», 1910, № 354։
30 ՎՄՄԻ ԻՔՔԱ, ֆ. 71, ց. 58, թ. 18։
31 ՆԱՔՍ,-ֆ. «Գիտությունը և Գրատուն», 1911, ց. 2680, թ. 11։

Իսկ ի՞նչ նպատակների էին ծառայեցնում հարկերից ստացված եկամուտները։ Այդ հարցին կարող են պատասխանել հետևյալ ավյալները. 1913—1914 թթ. Կարնո վիլայեթի եկամուտներից տրամադրված էին (հազ. գուրուշներով)։

Դատարանի նախագահությանը	28.557
Ֆինանսների մինիստրությանը	4.695
Ոստիկանությանը	3.709
Ներքին գործերի մինիստրությանը	2.508
Հանրային պարտքի վարչությանը	1.880
Փոստ-հեռագրին	1.506
Դատական մինիստրությանը	1.664
Երկրագործական մինիստրությանը	815
Առևտրին և շինարարությանը	949
Կրթական մինիստրությանը	942
Մահմեդական կրոնին	733
Ծիծիրխրանայի վարչությանը	197
Հեռաձիշտներին	188
Հանրային ապահովությանը	733
Երկաթուղային վարչությանը	21
Ընդամենը	49.040

Այս ավյալներից երևում է, որ Թուրքական կառավարություն, տարվելով ամենայն հրեշավոր ընդարձակ կազմակերպման ցնորամիտ պլաններով, առացած եկամուտների ավելի քան 60%-ը տրամադրում էր պատերազմի նախապատրաստմանը, իսկ մնացած մասը՝ ադմինիստրացիայի, ոստիկանության, ինչպես նաև կրոնական հաստատությունների պահպանմանը, որոնք անհրաժեշտ էին աշխատավոր մասսաներին հնազանդության ու տիրությունյան մեջ պահելու, նրանց ենթելու և հարատևացնելու համար։ Կատարությունը երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման նպատակներին հատկացնում էր շուրջ կամ՝ վիլայեթի ամբողջ ծախսերի 5—6%-ը։

* * *

Երիտասարդ Թուրքերի հակաժողովրդական քաղաքականությունը հեղափոխության առաջին իսկ ամիսներից առաջ բերեց աշխատավոր գյուղացիության մեջ հիասթափության ու բնդհանուր դժգոհության։

Եվ գյուղացիները շարունակեցին դասակարգային պայքարն իրենց հարատևահարստների դեմ նաև երիտասարդ Թուրքերի իշխանության տարիներին։ Նրանք բողոքագրեր էին ուղարկում՝ ընդհուպ

մինչև Կ. Պոլիս, որոնցում պահանջում էին հետ վերադարձնել բնչերի ու ապրանքի կողմից բռնագրաված իրենց հողերը, ապառիկ հարկերից ու տուրքերից, ապահովել իրենց անձն ու գույքը և հարգել մարդկային արժանապատվությունը։ 1908—1910 ԹԹ. ընթացքում այդպիսի բողոքագրերով իշխանությունների դիմեցին Բաղեշի, Մանազկերտի, Բուլանըխի, Մուշի, Վարդոյի, Դենզի և բազմաթիվ այլ գավառների բնակիչները։

Շատ տեղերում գյուղացիները հրաժարվում էին կառավարության և կալվածատերերի օգտին հարկեր վճարելուց և պարհակներ կատարելուց։ Այսպես, 1908 թ. օգոստոսին Շատախի Միծանց գյուղի բնակիչները հրաժարվեցին ցնդապետի օգտին ապալոք կոչված տուրքը վճարելուց[32]; իսկ 1911 թ. Օվայի Նահիճի Միջոց գյուղի բնակիչները ծնծղին հարկահանին և նրա հետ եղող երկու ասպիսականներին, զուրս քշեցին գյուղից, սպառնալով, որ եթե նրանք նորից երևան և հարկ ուզեն, ապա կսպանվեն[33]։

Գյուղացիները օրոշ տեղերում բռնագրավում էին կալվածատերերի հողերը և թոթափում նրանց լուծը։ Օրինակ, 1910 թ. Վանի վիլայեթի Շաղրապղի գյուղի բնակիչները գուրս գցեցին շեյխի գութանը իրենց հողից։ Որ շեյխը փորձեց ասպիսականների օգնությամբ գյուղացիներին հանել իր հողից, նրանք ցույց տվեցին զինված դիմադրություն։ Ականատեսներից մեկը գրում էր. «Ընդհարումը քիչ մնաց ասր հանգամանք ստանար, եթե շեյխը տեղի չտար»[34]։

Երիտասարդ Թուրքերի կառավարման տարիներին գյուղատնտեսական շարժումները բնդգրկեցին ավելի մեծ թվով գյուղեր և տարբեր ազգության պատկանող գյուղացիների, հատկապես բարձերին, որոնք հետևելով հայերի օրինակին, սկսի կանգնեցին և նույնպես պաշտպանեցին իրենց իրավունքները։ Այսպես, 1910 թ. երբ շեմսկիի և բանկորդի աշխատակիցները փորձեցին բռնագրավել իրենց հայատակ բղոների հողերը, հանդիպեցին նրանց համառ դիմադրությանը, որի հետևանքով տեղի ունեցավ լուրջ բնդհարում։ Գեղրուկը մանրամասն արձանագրելով այդ դեպքերը, ավելացնում էր. «Այսորիսի երևույթներ մեկով-երկուքով չեն, որ Վասպուրականի մեջ երևան կուգան, տասնյակներով, հարյուրներով, կը համրվին»[35]։

32 Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, օգոստոսի 23։

33 ԹԱՔԱ, ֆ. «Դևնագանությանը Կ. Պոլսոյ», 1911, գ. 2680, թ. 20։

34 «Ճշմարիտ», 1910, օգոստոսի 6։

35 Գեղրուկ. Քյուրտ բռնակալները և քյուրտ աշխատավորությանը դեմ-դիմաց, Կ. Պոլիս, 1911. էջ 3։

Քուրդ գյուղացիների իրենց պայքարը ուժեղացրին նաև պետական հարստահարությունների դեմ։ Նրանք ոչ միայն հրաժարվում էին կառավարական հարկերից ու տուրքերից, այլև ծեծում ու վանդում էին հարկահաններին ու պաշտոնյաներին։ Այսպես, 1913 թ. մարտի 11-ին, երբ պաշտոնյաները գնացին Թավշաի Պահվանց գյուղը՝ ապնամի հարկը հավաքելու, հանդիպեցին քրդերի դիմադրությանը, որի հետևանքով առաջացավ կռիվ։ Պաշտոնյաները դիմեցին փախուստի և «գյուղեն քիչ մը վար գտնված մարդը կը հասնին և հոն զոր և ատրկաններ, թվով 8 հոգի, դիրք կը պատրաստեն գյուրտերու հարձակման դիմադրելու»[36]։ Պաշտոնյաներին օգնության է հասնում կայմակամը, որը «գյուրտերը լավ մը ծեծելե վերջը կը բանտարկե և խնդիրը դատարանին կը հանձնե»[37]։ Նման դեպքեր տեղի ունեցան նաև քրդական Հին, Բաշկալե և այլ գյուղերում[38]։

Երիտասարդ Թուրքերի օրով տարբեր ազգերի պատկանող գյուղացիների համատեղ պայքարը իրենց հարստահարողների դեմ ավելի հաճախակի դարձավ։ Համատեղ պայքարում էին հայերը, Թուրքերը, քրդերը և ուրիշներ։ Այդպիսի պայքարի օրինակ կարող է ծառայել 1910 թ. Բաղեշի սանջակի Ջուղուր Նահիճի 33 գյուղերի և Մանազկերտի կազայի 17 գյուղերի հայ և քուրդ գյուղացիների ընդհանուր բողոքը իրենց շահագործողներ Հայի Նեմմեդդին էֆենդիի, Ֆեթհուլլահ, Մուհյիման և Հյուսնին բեյերի դեմ։

1910 թ. Բաբերդի շրջանի 124 գյուղերի հայ, Թուրք և քուրդ բնակիչները Կ. Պոլիս ուղարկած իրենց բողոքագրում նշում էին, որ իրենք որևէ հակասություն չունեն միմյանց նկատմամբ և կմիավորվին բողոքելու համար իրենց Քշնամիների դեմ։ Նույնն էին գրում նաև Երզնկայի սանջակի Խնձորեսկ գյուղի բնակիչները։

Ուշագրավ է, որ տղամարդկանց հետ միասին պայքարում էին նաև կանայք։

Այսպես, 1912 թ. երբ իշխանություններն ուզեցին բռնագրավել Չայկար գյուղի հողերը, հանդիպեցին կանանց ակտիվ դիմադրությանը և չկարողանալով կոտրել այն, դնացին գյուղ՝ «խելքը գլուխը մարդկանց հետ» խոսելու համար։ Բայց այստեղ էլ մատնվելով անհաջողության, համաձայնվեցին, որ հայերը մեկ տարի ևս Թջակեն «ֆիճեյին» հողերը։

36 «Վան-Տոսպ», 1913, մարտի 23, էջ 99։

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում, մարտի 30, էջ 114։

Այդպիսով, երիտասարդ Թուրքերը ինչպես երկրի մյուս շրջաններում, նույնպես և Արևմտյան Հայաստանում չսահմանափակվեցին բացառապես ոչ մահմեդական բնակչության, անձի ու գույքի ապահովության, չնայած այդպիսին էր ազատական հարցերի, շվեյցարական ձեռնարկությունը։ Գյուղացիները առաջվա նման մնացին սահմանափակ ու հողազուրկ, առաջվա նման սարկացած ու ճորտացված ազանների ու բեյերի կողմից։ Երիտասարդ Թուրքերը պաժանապատ ձեղում էին գյուղացիների դասակարգային հետքերը և սաստկացնում նրանց կեղեքումն ու հարստահարումը։ Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ երիտասարդ Թուրքերի հեղափոխությունը «Քույլ է... չի արմնացնում ժողովրդի սորին խավերը, չի հարթում մասսաների իսկական ինքնուրույնությունը... Թշնամի է սամանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին»[39]։

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վ. Ի. Լենինը իր մի շարք աշխատություններում ցարական Ռուսաստանը համեմատում էր սուլթանական Թուրքիայի հետ և բնդգծում նրանց միջև եղած նմանություններըՆա ցույց էր տալիս, որ նրանցից ինչպես մեկը, նույնպես և մյուսը աչքի են բնկնում իրենց բռնապետական կարգերով, աշխատավորության նկատմամբ կիրառած սոսկալի վայրագություններով, կամայականություններով ու դաժան հարստահարություններով։ Այսպես, Վ. Ի. Լենինը «Գյուղական չքավորության» հոդվածում նշում էր. «Եվրոպական մնացած բոլոր ժողովուրդները վաղուց արդեն քաղաքական աղատություն են նվաճել իրենց համար։ Միայն Թուրքիայում և Ռուսաստանումն է, որ ժողովուրդը քաղաքական սարկության մեջ է մնում սուլթանի կառավարության և ցարական ինքնակալ կառավարության ձեռքին»[1]։

Վ. Ի. Լենինը այնուհետև շարունակում էր. «Եվրոպական պետություններից միայն Ռուսաստանում և Թուրքիայում դեռևս մնացել են խայտառակ օրենքներ բնդդեմ ուրիշ, ոչ ուղղափառ հավատի մարդկանց, բնդդեմ հերձվածողների, աղանդավորների, հրեաների։ Այս օրենքները կամ ուղղակի արգելում են որոշ հավատ, կամ արգելում են նրա տարածումը, կամ որոշ հավատի մարդկանց զրկում են մի քանի իրավունքներից։ Այս բոլոր օրենքներն ամենատարօրեն, ամենապոռի, ամենախայտառակ օրենքներն են»[2]։

«Ժամանակակից կառավարության սպրատային բազաբախտության հարցի շուրջը» հոդվածում Լենինը, խոսելով ռուսական կալվածատերերի կապիտալիստական տնտեսության մասին, ասում էր. «Այդ կապիտալիզմ չէ։ Այդ տնտեսության ևվրոպական եղանակ չէ... Այդ ֆին-շիճառեն է։ Այդ բարբերեն է։ Այդ ճորատաիրականճարեն է։ Այդ ոչ մի կատարելագործված տնտեսության է, այլ հողային սլաշտառության Այդ հին, շատ հին սարկության էր»[3]։

Բայց ցարական Ռուսաստանի և սուլթանական Թուրքիայի միջև կային նաև խոշոր սարբերություններ, որոնք հանդես էին գալիս նրանց մի՛ քաղաքական, մի՛ տնտեսական և մե կուլտուրական կյանքում։ Ռուսաստանն ավելի քիչ էր կախված եվրոպական պետություններից, քան Թուրքիան։ Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունները գտնվում էին զարգացման շատ ավելի բարձր մակարդակի վրա, քան Թուրքիայում։ Ռուսաստանը կուլտուրապես շատ ավելի զարգացած էր, քան Թուրքիան։ Ռուսական առաջավոր պետություն ու կուլտուրան ներգործում էին ոչ միայն Թուրքիայի, այլ նույնիսկ եվրոպական մի շարք երկրների վրա։ Ռուսաստանում արդեն ձևակերպվել էր պրոլետարական պրոլետարիատը, որն ուներ իր առաջնորդը՝ բոլշևիկների կուսակցությունը, մինչդեռ Թուրքիայում այն նոր էր սաղմնավորվում, իսկ առաջնորդող կուսակցություն սակավին չուներ։ Կարելի է նշել Ռուսաստանի և Թուրքիայի միջև եղած նաև մի շարք այլ բնդհանուր և սարբերիչ գծեր։ Սակայն բավարարվենք այդքանով։

Քանի որ Հայաստանը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետության տակ էր, այդ պատճառով երկու պետությունների միջև եղած նմանություններն ու սարբերությունները նրա վրա պետք է դնեին իրենց կնիքը։ Նախ՝ նշենք այն բնդհանուր գծերը, որոնք դոյություն ունեին սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի և ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանի սպրատային անժիմների միջև։

39 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 15, էջ 268—269։
1 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 6, էջ 462։
2 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 6, էջ 511։
3 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 19, էջ 228։

Հայաստանի երկու մասում էլ հողի վերապրյալ տերերը պետությունը, կալվածատերերն ու կրոնական հաստատություններն էին։ Հողատերերը իրենց տիրույթները տալիս էին գյուղացիներին օգտագործելու միայն այն պայմանով, որ վերջիններս նրանց օգտին կատարեին որոշ ծառայություններ։ Ֆեոդալական ռենտայի երեք ձևերը՝ աշխատավճարայինը, արդյունավճարայինը և դրամավճարայինը գոյություն ունեին ինչպես Արևմտյան, նույնպես և Արևելյան Հայաստանում։

Գյուղացիներն ապրում էին պետական, կալվածատիրական, վանքապատկան-մետիքապատկան և սեփական հողերի վրա։

Պետական հողերի վրա ապրող գյուղացիները հարկեր ու տուրքեր էին վճարում պետությանը, կալվածատիրական հողերի վրա ապրողները՝ կալվածատերերին, իսկ կրոնական հաստատությունների հողերի վրա ապրող գյուղացիները՝ այդ հաստատություններին։ Սակայն կալվածատիրական ու վանքապատկան-մետիքապատկան գյուղացիները, բացի կալվածատերերից ու վանքերից, հարկեր ու տուրքեր էին վճարում նաև պետությանը։ Հետևաբար, ինչպես Արևելյան, նույնպես և Արևմտյան Հայաստանում ամենածանրը կալվածատիրական և վանքապատկան-մետիքապատկան գյուղացիների դրությունն էր։

Ռուսական բարն ու ֆեոդալական տուրքերը Հայաստանի երկու մասում էլ պաշտպանում էին ֆեոդալների դասակարգը, ավելի կամ պակաս չափով ձգտում էին խոչընդոտել Հայաստանում արտադրողական ուժերի զարգացումը ու հավերժացնել գյուղացիության շահագործման միջնադարյան եղանակները։ Նրանք հայ գյուղացիության սոցիալական հարատևահարմանը զուգակցում էին նրա ազգային հալածանքներով։

Գլխավոր և հիմնական արգելակիչ գործոնները ինչպես Արևելյան, նույնպես և Արևմտյան Հայաստանի տնտեսության զարգացման համար հանդիսանում էին մի կողմից՝ ճորտատիրական կարգերը կամ նրանց մնացորդները, իսկ մյուս կողմից՝ իմպերիալիստական պետությունների ու ցարիզմի գաղութային քաղաքականությունը։

Հայաստանի երկու մասում էլ գյուղացիները պայքարում էին իրենց շահագործողների ու ճնշողների դեմ՝ թե՛ պասիվ և թե՛ ակտիվ եղանակներով։ Նրանց սոցիալական պայքարը սերտորեն զուգակցվում էր ազգային ազատագրական խնդիրներով։

Բայց չնայած այդ ընդհանրություններին, Արևմտյան Հայաստանում ապրարային հարաբերությունները և տնտեսության զարգացումը, Արևելյան Հայաստանի համեմատությամբ, ունեին նաև մի շարք առանձնահատկություններ։

Ի տարբերություն Արևելյան Հայաստանի, որտեղ տիրապետում էր պետական հողատիրությունը, Արևմտյան Հայաստանում տիրապետում էր կալվածատիրական հողատիրությունը։ Առաջինում գերակշռում էին կալվածատիրական մանր, իսկ երկրորդում՝ խոշոր և միջին տնտեսությունները։

Արևմտյան Հայաստանում հողատերերը մեծ մասամբ հանդիսանում էին իրենց հավատակից հայատակների թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր առաջնորդները, ունեին իրենց դինված ջոկատները, հավաքում էին աշխարհազոր և հաճախ վարում միջֆեոդալական կռիվներ, իսկ Արևելյան Հայաստանում նրանք այդպիսի ֆունկցիաներ չունեին, զուրկ էին դինված ջոկատներից և միջֆեոդալական կռիվներ վարելու հնարավորություններից։ Առաջինում ֆեոդալների մեծ մասը քրդեր էին, որոնք ապրում էին ոլխավորապես գյուղերում և անտեսապես կապված էին, իսկ երկրորդում նրանց մեծ մասը ադրբեջանցիներ էին, ապրում էին քաղաքներում և ապրանքա-կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով տնտեսապես քայքայվում էին։

Ինչպես Արևելյան, նույնպես և Արևմտյան Հայաստանում հողատերերի մեծամասնությունը սեփական տնտեսություն չէր վարում։ Բայց ի տարբերություն Արևելյան Հայաստանի, որտեղ սեփական տնտեսություն վարող հողատերերը զուգակցում էին հարկադիր աշխատանքը վարձու աշխատանքի հետ, Արևմտյան Հայաստանում նրանք ոչ այնքան զուգակցում էին շահագործման այդ երկու ձևերը միմյանց հետ, որքան վերապահում էին դեպի պրիմիտիվ աշխատավճարումները։

Հայաստանի երկու մասում էլ ագանները, ֆեոդալական ռենտան առանալիս, գործադրում էին արտատնտեսական հարկադրանքի տարբեր ձևեր, բայց նրա արևելյան մասում գործադրում էին առավելապես կիսօրաբուժյուններ, իսկ արևմտյան մասում դրա հետ միասին նաև ճորտատիրություններ, այն էլ այնպիսի առանձին ձևերով, որ հաճախ համարյա չէր տարբերվում սորկությունից։

Ի տարբերություն Արևելյան Հայաստանի, որտեղ գյուղացիների մեծ մասը ապրում էր պետական հողերի վրա և վարելահողից օգտվում համաչափական կարգով, դրանք պարբերաբար բաժանելով իրար միջև, Արևմտյան Հայաստանում նրա մեծ մասն ապ-

րում էր կալվածատիրական հողերի վրա, իսկ վարելահողերից օգտագործում ծխական հոնահարկով[5]։ Երկրորդում գյուղացիները կարող էին վաճառել, ձրիբել կամ գրավ դնել իրենց հողակտորները, իսկ առաջինում նրանք զուրկ էին այդ իրավունքներից։

Հայաստանի երկու մասում էլ կային նահապետական—երկրագործ և բոշվոր, կամ կիսաբոշվոր-անասնապահ գյուղացիներ։ Բայց նրա արևելյան մասում բոշվորների կամ կիսաբոշվորների թիվը փոքր էր, իսկ արևմտյան մասում՝ մեծ։ Եվ քանի որ նահապետական հարաբերությունները բոշվորների ու կիսաբոշվորների մոտ ավելի շատ էին պահպանվել, քան նահապետական-երկրագործների մոտ, ուստի Արևմտյան Հայաստանում այդ հարաբերությունների մնացորդներն ավելի առատ էին, քան Արևելյան Հայաստանում։

Հայաստանի երկու մասում էլ օգտվում էին գյուղատնտեսության հնամյա գործիքներից։ Բայց նրա արևելյան մասում դրանք նկատելի արագությամբ արտադրվում էին նոր, կատարելագործված գործիքներով, իսկ արևմտյան մասում՝ շարունակում էին մնալ համարյա անփոփոխ։

* * *

Անցդարձանալով գյուղացիների ունևորության հարցին, պետք է նշել, որ Արևելյան Հայաստանում նրանք անհամեմատ ավելի ուժեղ էին, քան Արևմտյան Հայաստանում։ Թրանում համոզվելու համար բերենք նրանց հողատրության և անասունների մասին նյութեր ավելացնելը։ 1890-ական թվականներին Արևելյան Հայաստանում, բուն մի աղբյուրի, գյուղատիրական լուրջ քանակություն անասուններ (գնահատումներով)[6]։

Բայց մի այլ աղբյուրի, նույն ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի գյուղատիրական լուրջ քանակություն անասունների միայն

[5] Վ. Փափազյանը 1889 թ. գրում էր, որ Արևմտյան Հայաստանում «հասարակական հողեր գոյություն չունեն» («Մշակ», 1889, նոյեմբերի 29)։ Նույն բանն էր Հայաստանում նաև Լ. Մարգարյանը, որը հիշատակում էր թե «համայնական հողատիրության, ինչպիսին է Ալեքսանդրապոլի գավառում և Կարսի երկրում, Տաճկաստանում բոլորովին չկա» (Լ. Մարգարյան, Այգ Քյուրքաց Հայաստանին, Բիֆլիս, 1890, էջ 71—72)։ Բայց չնայած դրան, Արևմտյան Հայաստանում համայնքը բոլորովին չէր անհետացել։ Գյուղացիները, ինչպես արդեն ասվեց, շարունակում էին օգտվել արտադարձերից ու մարգագետիններից համայնական կարգով։ Բացի դրանից, համայնքը պահպանվում էր նաև որպես հարկերի բաշխման ու հավաքման կազմակերպություն։

[5] Տե՛ս «Материалы по вопросу о распространении действий крестьянского поземельного банка на Закавказский край», СПб, 1904, стр. 112—113.

Գավառները	Գնահատական գյուղացիները	Կալվածատիրական գյուղացիները
Երևանի	11,6	4,9
Ալեքսանդրապոլի	15,8	—
Նախիջևանի	18,9	11,9
Նոր Բայազետի	22,9	13,7
Մուրմուրի	9,5	8,9
Շարուրա-Դարալագյազի	19,4	7,4
Իջևանի	10,1	7,5
Միջին	15,3	8,3

պետական, գերազանցապես վարելահող ուներ հետևյալ չափով (դեսյատին)[6]։

Գավառները	Գնահատական գյուղացիները	Կալվածատիրական գյուղացիները
Երևանի	13,8	4,3
Ալեքսանդրապոլի	15,9	—
Նախիջևանի	19,5	12,9
Նոր Բայազետի	22,9	14,1
Մուրմուրի	10,7	9,1
Շարուրա-Դարալագյազի	19,2	7,1
Իջևանի	11,8	7,1
Միջին	16,0	8,8

Մենք գտնում ենք, որ ինչպես առաջին, նույնպես և երկրորդ աղբյուրներում գյուղացիների հողակտորները չափական պաշտոնյաների կողմից հարկային հաշվառումների նպատակներով մեծացված են և իրականությանը ավելի մոտ ենք համարում հետևյալ տվյալները[7]։

Գավառները	Գյուղատիրական յուրաքանչյուր շունչ ունկնիկ
Ալեքսանդրապոլի	0,55 դես.
Իջևանի	0,63 դես.
Երևանի	0,80 դես.
Նոր Բայազետի	0,56 դես.
Երևանի նահանգի լեռնային մասում	0,65 դես.
Կարսի մարզում	1,11 դես.

[6] Տե՛ս «Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края», Тифлис, 1899, стр. 326—327, приложение № 4, стр. 19—25.

[7] Տե՛ս **С. Заваров**, «Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области», Тифлис, 1893, стр. 251.

Եթե ընդունենք, որ Արևելյան Հայաստանում գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն բաղկացած էր միջին հաշվով 7—8 հոգուց, ապա յուրաքանչյուր տնտեսություն կունենա՝

Այգեպանդրագործի գավառում	3,83 գես.—4,40 գես. վարելահող
Էջմիածնի գավառում	4,41 գես.—5,04 գես. վարելահող
Երևանի գավառում	5,60 գես.—6,40 գես. վարելահող
Նոր Բայազետի գավառում	3,92 գես.—4,48 գես. վարելահող
Երևանի Նահանգի լեռնային մասում	4,55 գես.—5,88 գես. վարելահող
Գոգթի մարզում	7,77 գես.—8,88 գես. վարելահող
Միջին հաշվով	5,0 գես.—5,73 գես. վարելահող

Իսկ Արևմտյան Հայաստանում գյուղացիական յուրաքանչյուր տնտեսության XX դարի սկզբին, ինչպես տեսանք, միջին հաշվով ուներ՝

Կարնո վիլայեթում	1,5 հեկ. վարելահող
Մարդինի վիլայեթում	1,9 հեկ. վարելահող
Սեբաստիայի վիլայեթում	2,4 հեկ. վարելահող
Վանի վիլայեթում	3,3 հեկ. վարելահող
Տիգրանակերտի վիլայեթում	4,0 հեկ. վարելահող
Բայազետի վիլայեթում	8,3 հեկ. վարելահող
Միջինը	3,5 հեկ. վարելահող

Հետևաբար, եթե Արևելյան Հայաստանում գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն միջին հաշվով ուներ 5—5,7 դես., ապա Արևմտյան Հայաստանում՝ 3,5 հեկ.[8] վարելահող:

Անցնենք այժմ տնտեսությունների զլխաքանակին: Ա-դոն նշում էր, որ XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի ներքոհիշյալ շրջաններում գյուղացիական տնտեսություններն ունեցել են[9].

Շրջանները	Գյուղերի քանակը	Տնտեսությունների քանակը	Անասնատեսակ			Բուրթաքանչյուր անասնության ունի		
			լծկան անաս.	կաթնատու անաս.	ոչխար	լծկան անասուն	կաթնատու անասուն	ոչխար
Մահուտ	18	256	201	320	3450	0,8	1,2	13,5
Այծվաղուտ	23	761	1270	688	5270	1,7	0,9	7.0
Մուշում	9	282	160	700	629	0,6	2,5	2,1
Աբնիկում	4	135	236	453	—	1,7	3,3	—
Ընդամենը	54	1434	1867	2161	9340	1,3	1,5	6,5

8 1 դեսյատինը=1,093 հեկտարի:

9 Ա-դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 342—343 (աղյուսակը կազմված է մեր կողմից):

Ա-դոն դրում էր, որ այդ տվյալները բնորոշ են Արևմտյան Հայաստանի համարյա բոլոր շրջանների համար: Ահա նրա խոսքերը. «Մի կողմ թողնելով այն մի քանի գավառները, որոնք իրենց տքնատնական պայմաններով բացառություն են կազմում, մնացյալ գավառների համար մեր բերած տվյալները կարելի է ընդհանուր չափ համարել»[10]:

Համեմատության համար անհրաժեշտ է վերցնել Արևելյան Հայաստանի այնպիսի շրջանները, որոնք իրենց բնա-կլիմայական և տնտեսական պայմաններով մոտ են կանգնած Ա-դոյի նշած շրջաններին: Այդպիսի շրջաններ մենք համարում ենք Ալեքսանդրապոլի գավառի Շորաղբյուրի գավառամասը, որը համընկնում է Արհահի, Ալեքսանդրի ու Մոկսի հետ և Երևանի գավառի ցածրադիր մասը, որը համընկնում է Մուշի հետ: 1880-ական թվականներին Արևելյան Հայաստանի այդ շրջաններում գյուղացիներն ունեին[11].

Շրջանները	Գյուղերի քանակը	Տնտեսությունների քանակը	Անասնատեսակ			Բուրթաքանչյուր անասնության ունի		
			լծկան անաս.	կաթնատու անաս.	ոչխար	լծկան անասուն	կաթնատու անասուն	ոչխար
Շորաղբյուրի գավառամաս	77	5437	20448	40806	113768	3,7	7,5	20,9
Երևանի գավառամաս (ցածրադիր մասը)	55	5428	7492	12886	34506	1,3	2,3	6,3
Ընդամենը	132	10865	27940	53692	148274	2,5	4,9	13,6

Այդպիսով, եթե Արևմտյան Հայաստանում գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն ուներ միջին հաշվով 1,3 լծկան, 1,5 կաթնատու և 6,5 ոչխար, ապա Արևելյան Հայաստանում՝ համապատասխան 2,5, 4,9 և 13,6, այսինքն՝ համարյա երկու անգամ ավելի:

10 Ա-դո, նշված աշխատությունը, էջ 344:

11 Տե՛ս «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», Тифлис, 1886, т. III, стр. 136—137, 484—485.

Սակայն այդ ավյալներն բնդհանուր են, նրանց մեջ չեն երևում գյուղացիության տնտեսական տարբեր խմբերը։ Բերենք տրվյալներ նաև այդ խմբերի մասին[12]։

Տնտեսությունների տիպերը	Արևմտյան Հայաստանում			Արևելյան Հայաստանում		
	անասնաքանակը	բանող անասունների պրոխարանակը	յուրաքանչյուր մեկին հաշվով գալիս է	անասնաքանակը	բանող անասունների պրոխարանակը	յուրաքանչյուր մեկին հաշվով գալիս է
Միջակ	2	4	2	5	25	5
Հարուստ	2	16	8	4	75	18

Այդ ավյուսակը նույնպես ցույց է տալիս, որ Արևելյան Հայաստանի գյուղացին ավելի քան երկու անգամ շատ ուներ բանող անասուն, քան Արևմտյան Հայաստանի գյուղացին։

Ծիշտ խոսելու համար, մեր նյութերը հնարավորություն չեն տալիս համեմատելու նաև մյուս անասնատեսակների գլխաքանակը։ Բայց պետք է, որ արևելահայ գյուղացին այդ բնագավառում ևս ուներ առավելություն։ Դրա օգտին մասամբ խոսում են հետևյալ փաստերը. 1880-ական թվականներին Մուշի ամենամեծ Ջեռուխ, Ծղոտ և Երզնկայի ամենամեծ Ագարակ գյուղերի միջակ գյուղացիներն ունեին 2-ական կով[13], մինչդեռ նույն ժամանակաշրջանում Ախթամարպատի գավառի Թիրթարթ գյուղում՝ 3 կով, նոր Բայազետի Ղուրլի գյուղում՝ 4 կով, Երևանի գավառի Արդնի գյուղում՝ 5 կով, Էջմիածնի գավառի Արարքա-Քաշքանդ գյուղում՝ 2 կով և այլն[14]։

Անդրադառնանք այժմ հարկերին։ Արևմտյան Հայաստանում գյուղացին ավելի շատ պետական հարկեր ու տուրքեր էր վճարում, քան Արևելյան Հայաստանում։ Հաշվումները ցույց են տալիս, որ 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում յուրաքանչյուր գյուղացիական բնտանիք միջին հաշվով միայն պետական

12 Տե՛ս «Մուրճ», 1899, № 6, էջ 628—631. А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920), Ереван, 1959, стр. 117. (Այդ ավյուսակը կազմված է մեր կողմից)։

13 Տե՛ս «Մուրճ», 1899, № 6, էջ 628։

14 Տե՛ս «Материалы...», т. I, стр. 67, 352, т. III, стр. 126, 347.

հարկ վճարում էր մոտ 41 ռուբ. 60 կոպ., այն դեպքում, երբ Արևելյան Հայաստանում նա վճարում էր ընդամենը 15—20 ռուբ.[15]։

Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարությունը քրիստոնյաներին չէր զորակոչում, բայց դրա փոխարեն նրանցից հարկ էր վերցնում, ճիշտ այնպես, ինչպես ռուսական կառավարությունը Արևելյան Հայաստանում մահմեդականներին չէր զորակոչում, բայց դրա փոխարեն նրանցից հարկ էր վերցնում։ Բայց առաջինը յուրաքանչյուր քրիստոնյա տնտեսությունից վերցնում էր 10—16 ռուբ., այն դեպքում, երբ երկրորդը յուրաքանչյուր մահմեդական տնտեսությունից վերցնում էր տնգամ մեկ ռուբլուց պակաս։ Բացի դրանից, թուրքական կառավարությունը դինվորական հարկը վերցնում էր ինչպես նորածիններից, նույնպես և զառամյալ ծերերից, մինչդեռ ռուսական կառավարությունը այն վերցնում էր միայն 18-ից մինչև 55 տարեկան ազամորդկանցից[16]։

Ինչ վերաբերում է ֆեոդալական ռենտային, ապա Արևելյան Հայաստանում գյուղացիները, որպես որդյունավճար ռենտա, հողատերերին տալիս էին իրենց բերքի $^1/_{10}$-ը կամ $^4/_{30}$-ը, իսկ Արևմտյան Հայաստանում՝ այնքան, ինչքան ուզն էր պահանջում, այսինքն՝ ավելի շատ։ Նրանք դրա հետ միասին հողերի վարձակալության համար առաջներում վճարում էին առավելապես դրամավճարով, իսկ երկրորդում՝ արդյունավճարով։

Ելնելով այն բանից, որ բնավճարը գյուղացիների վրա համարյա ամենուրեք ավելի ծանր էր նստում, քան դրամավճարը, պետք է ենթադրել, որ Արևմտյան Հայաստանում գյուղատիրության ֆեոդալական շահագործումը Արևելյան Հայաստանի համեմատությամբ նույնպես խիստ էր։ Վ. Ի. Լենինը, հենվելով Կարիշևի տեղեկությունների վրա, ցույց տվեց, որ «երբ բնդհանուր կանոն հողի բնավճար վարձակալությունը (այսինքն՝ ոչ թե փողով, այլ կիսրաբ կամ աշխատավճարային վարձակալությունը) ամենուրեք ծանր է դրամականից և այն էլ դժոխորեն ծանր՝ երբեմն կրկնակի չափով»[17]։

Հայաստանի երկու մասում էլ գյուղացիները, ինչպես ասվեց, բացի սոցիալական ճնշումից ենթարկվում էին նաև ազգային ու

15 Տե՛ս А. Бадалян. Налоговое обложение крестьян Армении в конце XIX века (Известия АН Армянской ССР, общественные науки, № 10. 1958, стр. 57).

16 Տե՛ս Полк. Як. Д. Лазарев. Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1895, стр. 9—10. «Մշակ», 1892, Հունիսի 10։

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 104։

կրոնական ճնշման, բայց ի տարբերություն նրա արևելյան մասի, արևմտյան մասում այդ ճնշումը ավելի ուժեղ էր և արտահայտվում էր ամենատարբեր ձևերով։ Այստեղ գոյություն չուներ բնակչության, հատկապես հայ բնակչության անձի և գույքի ապահովություն, որը հարկադրում էր արևմտահայ գյուղացուն թողնել հայրենիքը և արտագաղթել։ Այդ պատճառով էլ եթե Արևելյան Հայաստանում հայ բնակչությունը աճում էր, ապա Արևմտյան Հայաստանում՝ նվազում։

* * *

Անցնելով Հայաստանի տնտեսության և արտադրահարաբերությունների, մասնավորապես ագրարային հարաբերությունների մեջ տեղի ունեցած փոփոխություններին, պետք է ամենից առաջ արձանագրել, որ նրա երկու մասն էլ տնտեսապես զարգանում էին միմյանցից, հարստանալով կապիտալիստական խոշոր պետությունների արդյունաբերության պահանջներին։ Արևելյան Հայաստանը արտահանում էր գլխավորապես բամբակ, իսկ Արևմտյան Հայաստանը՝ անասուն և անասնապահական մթերքներ։ Բայց ի տարբերություն առաջինի, որտեղ բացի բամբակագործությունից զարգանում էին նաև խաղողագործությունը, բանջարաբուծությունը և գյուղատնտեսության մի շարք այլ ճյուղեր, առավ էր գալիս կապիտալիստական արդյունաբերության, երկրորդում գյուղատնտեսությունը մեծ մասամբ քայքայվում էր, իսկ արդյունաբերության մեջ առանձացած մի շարք ձեռնարկություններ հաճախ փակվում էին։

Եթե Արևելյան Հայաստանում ապրանքային արտադրությունը ընդգրկել էր իր մեջ երկրի բոլոր շրջանները և հասարակական բոլոր խավերը, ապա Արևմտյան Հայաստանում կային շատ շրջաններ, որոնք տակավին հետու էին կանոնված շուկայական հարաբերություններից։ Հետևաբար, ի տարբերություն Արևելյան Հայաստանի, Արևմտյան Հայաստանում նեղքին շուկան ավելի նեղ էր։ Եթե Արևելյան Հայաստանում կատարվում էին խճուղիներ, երկաթուղիներ, բեռների տեղափոխումը կատարվում էր ֆարթոններով ու վագոններով, ապա Արևմտյան Հայաստանում խճուղիները հատ ու կենտ էին, երկաթուղի բոլորովին չկար, իսկ բեռների տեղափոխումը կատարվում էր հնամյա սայլերով ու գրաստներով։ Ա-դոն արձանագրում էր, որ երբ Ռուսաստանից մտնում եր Թուրքիա, զգում եք, որ միջոցը բոլորովին փոխվեց. ապրտեղ չեք լսում երկաթուղու սուլոցը, այդտեղ չկան կառքեր և կառապաններ, այդտեղ չեք գտնի նաև շատ ու քիչ տանելի ճանապարհներ ու կայարաններ։ Եռգեմելենային փոխարինում է ձին, կառքերին՝ յորին, իսկ բեռնակիր ֆուրգոններին՝ էշերի և ուղտերի քարավանները... Եվ ընկած գավառներն ու լեռնոտ շրջանները այդ հարմարություններից էլ զուրկ են»[18]։

Նա այնուհետև շարունակում էր. «Մեկ քաղաքից դեպի մյուսը գնալու համար պետք է ապասել օրերով, երբեմն և շաբաթներով, մինչև որ ուղեկիցներ կգտնվեն, առանձնապես ձի վարձել և ուղեկից վիրցնել քե դժվար է և քե անասելի բանկ... Ճանապարհորդելու միակ հնարավոր միջոցը քարավանների հետ միանալն է, իսկ քարավանները պատահում են շարաթը մեկ, հաճախ երկու շաբաթը մեկ անգամ»[19]։

Եթե Արևելյան Հայաստանում թույլատվում էին ֆեոդալական և զարգանում կապիտալիստական հարաբերությունները, ապա Արևմտյան Հայաստանում ֆեոդալական հարաբերությունները ոչ միայն չէին թույլատվում, այլև զարգանում ու ամրապնդվում էին։

Արևելյան Հայաստանի գյուղում ունեցվածքային շերտավորումը պատմական պայմանների բերումով մերձվեց գասակարգային շերտավորման և գոյություն ունեցող հիմնական հակասության կողքին (այն է՝ հակասության կալվածատերերի և ամբողջ գյուղացիության միջև) առաջ եկավ նաև մի այլ կարևոր նշանակություն ունեցող հակասություն՝ գյուղի կուլակության և պրոլետարական ու կիսապրոլետարական տարրերի միջև։ Մինչդեռ Արևմտյան Հայաստանում, շնորհիվ տիրապետող տնտեսական ու քաղաքական ռեժիմի, գյուղացիության ունեցվածքային շերտավորումը պրոլետարացման ոչ քե գնալ նրա դասակարգային շերտավորումը, այլ մասամբ՝ ազգաջնջման։ Այդ պատճառով էլ արևմտահայ գյուղում գոյություն ուներ համարյա մեկ հիմնական հակասություն՝ հողատերերի և ամբողջ գյուղացիության միջև։

Հայաստանի երկու մասում էլ տեղի էր ունենում ամենիշխան արտադրողների անջատումը իրենց արտադրության միջոցներից, գյուղացիության ունեզրկումը, ընդ որում այդ պրոցեսը նրա արևմտյան հատվածում ավելի արագ ու մասսայաբար էր կատարվում, քան արևելյան հատվածում։ Բայց ի տարբերություն արևելյան հատվածի, որտեղ գյուղացիության ունեզրկումը տեղի էր ունենում դիֆերենցված ապրանքային արտադրության զարգացման հետևանքով, արևմտյան հատվածում այն կատարվում էր քուրքական կառավարության հայահալած քաղաքականության հետևանքով։

18 Ա-դո, նշված աշխատությունը, էջ 256։

19 Նույն տեղում, էջ 259։

Արևելյան Հայաստանում արտադրության միջոցներից զրկված գյուղացիները դիմում էին ազատավարձու աշխատանքի և համալրում քաղաքային ու գյուղական պրոլետարիատի շարքերը, մինչդեռ Արևմտյան Հայաստանում նրանք մեծ մասամբ վերատին կիսաճորտացվում ու ճորտացվում էին ազաների ու բեյերի կողմից։

Ի տարբերություն Արևելյան Հայաստանի, որտեղ կապիտալիստական հարաբերությունները մեծ թույլ էին զարգացած, այնուամենայնիվ, մոտենում էին երկրի անտեսական ու քաղաքական կյանքին տոն տալու աստիճանին, Արևմտյան Հայաստանում նրանք միայն հանդես էին գալիս ապրատիկ ձևերով՝ հիմնականում քաղաքում, այն էլ արդյունաբերության ոչ բոլոր ճյուղերում և շատ հեռու էին երկրի անտեսական ու քաղաքական կյանքին տոն տալու վիճակից։

Հայաստանի երկու հատվածները միմյանցից տարբերվում էին նաև կուլտուրապես։ Եթե վերցնենք գպրոցներն ու գրագիտությունը որպես կուլտուրայի զարգացման չափանիշներ, չի կարելի չնկատել, որ դրանք Արևելյան Հայաստանում ավելի էին տարածված, քան Արևմտյան Հայաստանում։ Ազատ բնակիչները, հատկապես քրդերն ու ասորիները, խարխափում էին հետամնացության, մասսայական անգրագիտության ու տգիտության մեջ։ Բազմաթիվ գյուղերում չկար նույնիսկ ծխական գպրոց[20]։

Ա-դոն փորձելով ցույց տալ Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ընդհանուր հետամնացությունը արևելահայերից, գրում էր. «առաձգակությը շատ ու շատ կա է մնացել Կովկասի հայությունից։ Հաճախ մարդ միանգամայն դժվարանում է որևէ համեմատություն դնել այդ երկու ժողովուրդների մեջ, չնայած որ Կովկասի մի քանի շրջանների հայ ժողովուրդը գաղթել է Տաճկաստանի հայաբնակ գավառներից։ Օրինակ՝ ինչ համեմատություն Հին Բայազետի և Նոր Բայազետի կամ Ալաշկերտի և Դարաչիչակի ժողովուրդների մեջ, չնայած որ Դարաչիչակի և առանձնապես նոր Բայազետի ժողովրդի խոշոր մասը գաղթել է Հին Բայազետից և Ալաշկերտի գյուղերից 1828 թ. ռուս-տաճկական պատերազմին։ Նրա փորձում եք համեմատել այդ նույն ժողովրդի երկու տարբեր քաղաքական պայմանների տակ գտնվող մասերը իրար

[20] Հ. Առաքելյանը 1903 թ. գրում էր. «Մուշի 104 գյուղերից մեկն 32-ը գպրոց ունեն, իսկ ամբողջ գավառներ նույնիսկ գպրոց չունեն։ Հետաքրքրական է, որ նրանցից մեկը լինի Եղեգիս, նրա տանը, որ Թուրքիայի հայ ազգաբնակության հետ մի չորրորդ մասը ուսում է ստանում» («Մշակ», 1903, մայիսի 21)։

հետ, նոր տեսնում եք, թե տաճկահայը մտամիտական ազնա տարբերի և վայրագ կուրդերի փոխադրելությունների շնորհիվ որքան ետ է մնացել, որքան խավար է մնացել ռուսահայերից»[21]։

Արևմտյան Հայաստանի տարբեր շրջանները անտնտեսական զարգացման տեսակետից նույնպես ունեին իրենց առանձնահատկությունները։ Այն շրջանները, որոնք հեռու էին գտնվում առևտրական ուղիներից և կապվածված էին նահապետական ու ճորտատիրական կապանքներով ավելի հետամնաց էին, քան այն շրջանները, որոնք գտնվում էին առևտրական ուղիների վրա, թեև էին ծանրաբեռնված նահապետական և ճորտատիրական կարգերով կամ ընդհանրապես ազատ էին դրանցից։ Օրինակ՝ Վանի, Բազեշի և Տիգրանակերտի վիլայեթները, որտեղ տարածված էին նահապետական հարաբերությունների բազմաթիվ մնացորդներն ու ճորտատիրությունը, անտնտեսապես ավելի հետամնաց էին, քան Կարնո և Խարբերդի վիլայեթները։ Ա-դոն գրում էր, որ Արևմտյան Հայաստանի «վիլայեթների բոլոր գավառներն իրենց անտնտեսական դրությամբ միանման չեն և նրանց մեջ կան այնպիսիները, որոնք ունեն համեմատաբար լավ վիճակ, ինչպես օրինակ, Էրզրումի դաշտը, ուր հարստահարությունների այնպիսի չափերի չեն հասել, ինչպես մեր ասաց բերած չորս գավառներում (խոսք՝ Մոկսի, Այգեվանքի, Մուշի և Արճակի—Ա. Հ.)»[22]։ Նա այնուհետև նշում էր. «Կան գավառներ էլ, որոնք անտնտեսապես ավելի էլ ետ են գնացել, քան նույնիսկ հիշյալ չորս գավառները։ Վերցրեք, օրինակի համար Սասունը, Աբեղեշը, Նորդուզը և Խոշաբը. այս տեղերում ժողովուրդը, շնորհիվ հազար ու մի պայմանների, տնտեսապես ավելի էլ վատ դրության մեջ է գտնվում»[23]։

Բնորոշ է, որ վերոհիշյալ գործոնները ազդում էին անգամ քաղաքների զարգացման վրա։ Եթե համեմատելու լինենք Արևմտյան Հայաստանի գլխավոր քաղաքները միմյանց հետ, պետք է նշենք, որ Կարինը և Խարբերդը ավելի էին զարգացած, քան Վանը, Բիթլիսը կամ Մուշը։ Առաջին երկուսը մյուսների համեմատությամբ ունեին բարձր տնտեսություն, թեև մեծ տներ ու փո-

[21] Ա-դո, նշված աշխատություն, էջ 346—347։

[22] Նույն տեղում, էջ 344։

[23] Նույն տեղում։

զոցներ և կուլտուր-կենցաղային առավելություններ։ 1889 թ. «Մշակի» ըղձակիցը գրում էր. «Էրզրումը համեմատելով թուրքայ մյուս քաղաքների հետ (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքների հետ—Ա. Հ.) դրախտ կարելի է անվանել։ Կարեկցում հատուկ է մարդասիրությունը։ Ես տեսել եմ այնպիսի տներ, որոնց տախտակները լվանալուց և քերելուց մաշվել էին»[24]։

Բայց այլ էր Մուշը։ Այս քաղաքն ուներ անկանոն փողոցներ, իրար վրա թափված տներ, որոնք կառուցված էին հողից և ցեխից։ «Քանի ասած քանը այտեղ գոյություն չունի. ինչ գառիվայրի կողքերին սեղմված, միմյանց կպած, ինչպես սարսափահար ոչխարի հոտը, կուտակված են տները. ով մի ինչ տեղ ձեռք է ձգել, հենց այդտեղ էլ շինել է իրար վրա երկու ծածկ և մեկը մտել. և այդպիսի նեղվածքը հարկադրել, հնարավոր է դարձրել փողոցի մեջ կանգուն եկեղեց, լվացք անելը և նույնիսկ երիտասերին լողացնելը»[25]։

Վ. Փափազյանը բնագծում էր կարինցի և վանեցի կանանց միջև եղած տարբերությունը. «Էրզրումում կինը խոսում է, նրան խոսեցնես, ծիծաղում է, նրան ծիծաղեցնես, խմում է և ուտում, նրան առաջարկես, և իր կարծիքն էլ հայտնում է, նրան վիճես. նա մտե է դուխ երեսը բաց, փողոցի մեջտեղից, գրոսնում է քաղաքից դուրս... գիտե հագնվել բանկացին կոսյնարով, գույնզգույն շրջազգեստներով, սամայրի մուշտակով... Էրզրումցի կինը շատ էլ սիրում է նկատաժողիություն, խնջույր, հարսանիք... Իսկ խնդե վանեցի կինը ո՛չ խոսում է, նրան խոսեցնես, այլ դլխով և լուրյամբ պատասխանում է կամ փախչում, ոչ ծիծաղել գիտե, ո՛չ խմել և ուտել, ո՛չ կարծիք հայտնել մարդկանց առեղ։ Նա մտե է գալիս երևան այնպես ծածկած, որ կարծես պարսիկ կին լինի. փողոցի պատերի տակից քալելով է անցնում, մարդկանց ճանապարհ է տալիս՝ պատին կրպչելով, գրոսնում է միայն մարդկանցից հետու տեղերը, իր պարտեզի ծառերի տակը և միշտ վախվխելով, քե իրան կտեսնի մի տղամարդ, ո՛չ խոսել գիտե, ո՛չ ծխել և ո՛չ իսկ պարել՝ մարդկանց առչև»[26]։

Բայց չնայած այդ տարբերություններին, Արևմտյան Հայաստանը ընդհանրապես հետամնաց երկիր էր, ավելի հետամնաց, քան թուրքական կայսրության կենտրոնական և եվրոպական շրջաններբ

24 «Մշակ», 1889, հունիսի 13։
25 Ա-գո, նշված աշխատությունը, էջ 109։
26 Վ. Փափազյան. Երկեր, հ. 3, էջ 416—417։

* * *

Արևմտյան Հայաստանի դուրս բերումը հետամնացությունից կախված էր տիրապետող ուժերի ոչնչացումից և ազգարարին հարցի լուծումից։ Նվ հայ հասարակական-քաղաքական ասպետներ հռանքները հղնելով դրանից տարբեր ելք էին առաջարկում այդ տմատնական հարցերի, մասնավորապես ազգարարին հարցի լուծման համար։

Ռևոլյուցիան-դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչ Մ. Նալբանդյանը գտնում էր, որ հողը պետք է վերցնել հարուստներից և բաժանել գյուղացիներին։ Նա սկզբում Գերցենի նման պաշտպանում էր լիբերալների այն հայացքները, համաձայն որոնց հողային հարցը կարելի է լուծել կառավարության միջամտությամբ, նրա ձեռնարկած միջոցառումներով։ Սակայն տեսնելով, որ «Ամարդուն համար վերնից եկած ազատություններ... ցողից ավել չէ»[27], նա գրում էր. «Եվե, վազգոր, թեյը գործի շղթվի, ստրուկը յուր հողով հանգիստ կատարելապես ազատ չլարոզվի, և այս կերպով այն կնճիռը չլուծվի, ստրուկը կայինով կվճռե գործը»[28], այլ խոսքով՝ Նալբանդյանը Գերցենի լիբերալիզմից մոտենում էր Չերնիշևսկու ռևոլյուցիոն դեմոկրատիզմին։

Առաջ քաշելով կալվածատիրական կամ ֆեոդալական հողատիրության լիկվիդացման հարցը, Մ. Նալբանդյանը միաժամանակ ուրվագծում էր ապագա հասարակության տնտեսական գործունեության նա գտնում էր, որ հասարակության մեծ մասը պետք է զբաղվի երկրագործությամբ, իսկ փոքր մասը՝ իրացնի նրա արտադրած արդյունքները, այսինքն՝ վաճառականությամբ։ Բայց որպեսզի հասարակության մեջ կրկին չառաջանան աղքատությունն ու ինչտությունը, սոցիալական անհավասարությունը, անհրաժեշտ էր համարում պաշտպանել համայնական հողատիրությունը, արգելել հողի առն ու վաճառքը, նրա կենտրոնացումը մասնավոր մարդկանց ձեռքերում։

Ուրիշ խոսքով՝ Նալբանդյանը, ինչպես նշում է Ա. Գ. Հովհաննիսյանը, պաշտպանում էր Գերցենի կարծիքը հողային համայնքի մասին, գտնելով, որ այն է վիճակի է փրկելու դյուղացիությունը մասսայական պրոլետարականացումից[29]։

27 Միխայիլ Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու. Երևան, 1940, հ. 3, էջ 56։
28 Նույն տեղում, էջ 61։
29 Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը. Երևան, 1956, գիրք երկրորդ, էջ 284—285։

Մինչեւ Նալբանդյանի գաղափարները արեւմտահայ իրականության մեջ պրոպագանդում էր նրա հեռավոր Հարութիւն Սրվանձյանը: Նա 1862 թ. Նալբանդյանի «Երկրագործութիւնից» անմիջապես հետո հրատարակեց «Ոչ որ այսօր հող չունի, վաղը հայ չունի» հրապարակախոսական հոդվածը, որի մեջ կրկնում էր Նալբանդյանի այն մտքերը, որ հասարակության հիմնական աղբյուրը հանդիսանում է երկրագործությունը, որ հասարակության մեծ մասը պետք է զբաղվի երկրագործությամբ, իսկ փոքր մասը՝ վաճառականությամբ և այլն: Նա գրում էր. «Եթե խոստովանինք, այս, որ վաճառականությունը և արվեստները անհրաժեշտ են և մեծապես պատեհ ազգի մը հարստությանը, բարօրությանը և երջանկությանը. սակայն եթե ազգին փորթագույն մասը անով պարապելով, մյուս մեծագույն մասն ալ ամուր նստած ըլլա հողի վրա, և անով զբաղեր. հողով՝ որ անապատ աղբյուր մ՚է սուրբ, մարդկային և զգայուն վաստակի մը ...այն ազգը, որ հող ու երկիր չունի, քով երբեք չհուսա, որ պիտի հարստանա»[30];

Հ. Սրվանձյանը դեմ էր կալվածատիրական հողատիրությանը, գրելով. «Ի՛նչ հարկավոր է մեզի դաս մը ազնվական կոչվածներու անհուն հարստության տեր ըլլալը», նեղ «միլիոնավորներու կյանքը կախված է միմիայն երկրագործութենեն. մինչդեռ հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անհողազուրկի իրավունք մ՚է»[31]: Բայց թե ինչ ձեով պետք էր ոչնչացնել կալվածատիրական հողատիրությունը, նա, դժբախտաբար, չէր պատասխանում այդ հարցին:

Հայ լիբերալները նույնպես գտնում էին, որ Արեւմտյան Հայաստանում գյուղացին պետք է ունենա քիչ թե շատ կանոնավոր անասնության վարելու համար անհրաժեշտ բանակությամբ հող: Բայց ի տարբերություն ազգային-դեմոկրատների, որոնք գյուղացուն հողով բավարարելու ճանապարհը տեսնում էին պետական ու կալվածատիրական միջնադարյան հողատիրության ոչնչացման մեջ, լիբերալները այն տեսնում էին գյուղացիների կողմից փող կուտակելու և պետությունից կոլեկտիվ կամ անհատական կարգով հող գնելու մեջ: Սակայն նկատելով, որ գյուղացիները փող կուտակելու հնարավորություն չունեն, լիբերալները ստացարկում էին նրանց համար ստեղծել գյուղական բանկեր: Այսպես, հայ լիբերալիզմի ներկայացուցիչ Գր. Արծրունին գրում էր. «Թե տեսե-

30 Հ. Սրվանձյան, Հրապարակախոսություն, Երեւան, 1960, էջ 249:
31 Նույն տեղում, էջ 251:

ության բարվոքման, թե՛ երկրագործական գործիքների կամ մեքենաների ձեռք բերելու, թե՛ հավաքական ուժերով նոր հողեր հանձնական իրավունքով գնելու համար՝ գյուղացիներին դրամ է հարկավոր: Սակայն որտեղից պետք է վերցնեն նա այդ դրամը, վաշխառուներից,— այն ժամանակ գյուղացիների ամբողջ ուժը կատարյալ կապանքի, վաշխառուին տված բարդ տոկոսների պատճառով: Իսկ գյուղական բանկեր գոյություն չունեն մեզանում. չկան բանկեր երկար ժամանակյա կրեդիտով, որոնցից գումարներ փոխ առնելով՝ գյուղացիները կարող լինեն քանի մի մեքենաներ և գործիքներ ձեռք բերել, կամ համայնական իրավունքով հող գնել. չկան կարճ ժամանակյա կրեդիտ մատակարարող բանկեր, որոնց մեջ ամենից շատ պետք ունի մեր գյուղացին, որպեսզի բավականություն տա իր բնական կարիքներին, տերմեր առնե, կով կամ ձի գնե, իր տան տնտեսության պակասը լրացնե: Առ այժմ նա, գյուղացին, գլխավորապես կարճ-ժամանակյա կրեդիտի կարիք ունի»[32]:

Ազգային պահպանողականների դիրքը հողային հարցի լուծման գործում հիմնականում չէր տարբերվում հայ լիբերալների դիրքից: Նրանք նույնպես այդ հարցի լուծման բանալին փնտրում էին գյուղական բանկեր հիմնելու և պետությունից հող գնելու մեջ: Այսպես, «Մեղու»-ն գրում էր. «Կարելի է ասել, որ ինչպես սորիության [Ճարտարի ազատագրումը—Վ. Ռ.] անհատներին ազատությունն ավեց բարոյապես, այնպես էլ այդ բանկերի հիմնարկությունը տնտեսական ու նյութական ազատություն կտան գյուղացվոց»[33]:

Բայց ի տարբերություն լիբերալների, որոնք դեմ էին Արեւմտյան Հայաստանում կալվածատիրական հողատիրության ոտնձգմանը (անկախ կալվածատիրոջ ազգային պատկանելիությունից) և պրոպագանդում էին մանր գյուղացիական հողատիրություն[34], ազգային պահպանողականները դեմ չէին, որ այնտեղ հայ ունևորներն ու կապիտալիստները հող գնեին պետությունից, զանազան խոշոր հողատերեր, իսկ հետո իրենց սերտ կապերի մի մասը վերամաս-

32 «Մշակ», 1892, նոյեմբերի 14:
33 Վ. Հ. Ոշականի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երեւան, 1956, էջ 33:
34 Գ. Արծրունին գրում էր. «Մի հայ հարուստ, որ ահագին կալվածներ կունենա, ավելի լավ չի վարվի հայ գյուղացու հետ, քան մի բյուրոկրատ կամ Թուրք հասարակաբիրչ բեկ», որ Արեւմտյան Հայաստանում հող գնելը, «այն ժամանակ միայն օգտավետ կարող էր համարվել, երբ երկիրը բաժանված լիներ հարյուր հազար անբերի մեջ, բաժանված լիներ անթիվ մանր տնտեսությունների վրա» («Մշակ» 1880, նոյեմբերի 25):

ունեն դյուղացիներին։ «Մեղուն 1880-ական թվականներին հայ հասարակության ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, որ Արևմտյան Հայաստանում «ժամանակն էլ հարմար է այժմ և ձեռնտու հող գնելու համար։ Հողն էժան է։ Քոչ հարուստներն այժմ գնեն, իսկ հետո կարող են ավելի բանկ գնով հայ դյուղացիներին վաճառել այն»[35]։

Բացի դրանից, ի տարբերություն լիբերալների, ազգային-պահպանողականները ձգտում էին անխախտ թողնել հայ վանական-եկեղեցական հողատերությունը և այդ հողատերության վերացման մասին ամեն մի առաջարկություն համարում էին մեղսագործություն։ Նրանք կոմունիզից էին վախենում։ Հայաստանի գյուղի կապիտալիստական զարգացմանը, ուզում էին այնտեղ մտցնել կապիտալիստական գյուղատնտեսություն, բայց դրա հետ մեկտեղ գեմ էին ճորտատիրական կյանքի վերացմանը։

Գնահատելով ազգային պահպանողականների անհետևական ձգտումները, Վ. Հ. Ոշականին գրում է, թե նրանք «բուրժուական էին իրենց բովանդակությամբ», բայց նրանց վրա «իրենց շոշափելի կնիքն էին դրել հայ պահպանողականների կղերական հայացքները, այդ պատճառով էլ նրանց բոլ էության բուրժուական դաղափարները սովորաբար նման են դալիս ֆեոդալական-կղերական հնաոճիով պարուրված և նրանք հայ բուրժուական հոսանքների մեջ իրոք դրավում են ամենասև թևը, դեռ շատ բանում հրաժարված չլինելով հնից՝ կիսաֆեոդալականից ո՛չ միայն անհետևության, այլև բաղաքականության առումով»[36]։

Կղերա-ազգայականները չէին նկատ ֆեոդալական հարաբերության վերացման հարցը, բայց գտնում էին, որ պետք է կանոնավորել այդանների ու դյուղացիների միջև եղած հարաբերությունները, առնոշելով անձի և դույքի ապահովություն։ Ալպաս, Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի երեսփոխան Հմայակ եպիսկոպոսը նշում էր. «Մեր պահանջածը աւրիշ բան չէ, բայց եթե կյանքի, ինչքի և պատվո ապահովություն»[37]։ «Նախ փրկինք մեր դավառացի եղբայրները կյանքը,—նշում էր երեսփոխան Վ. Մանուկյան էֆենդին,—խնդն անիծեմ այն հողուն, որուն վրա պիտի մեռնեմ»[38]։

Երեսփոխանները իրենց նպատակին հասնելու միջոցը փընտրում էին Բուրքական կառավարությանը դիմելու և նրան խնդրագրեր ուղարկելու մեջ։ Եվ նրանք տարիներ շարունակ բազմաթիվ խնդրագրեր ուղարկեցին սուլթանին։ Սակայն վերջինս նրանց խնդրագրերը սովորաբար թողնում էր անհետևանք։

Կղերա-ազգայական հոսանքի կողմնակիցները ցնծությամբ ընդունեցին 1908 թ. հեղափոխության լուրը և գովաբանեցին սահմանադրությունը, նույնիսկ այն ժամանակ, երբ հեղափոխությունից անցել էր մոտ երկու տարի, բայց շոշափելի արդյունքներ դեռ չկային։ 1910 թ. «Բազմավեպ» իր առաջնորդողներից մեկում ոգևորված Վարդան Հացունու հոդվածը՝ «Սահմանադրությունը և Բուրքահայ մամուլը» վերնագրով։ Հեղինակը գրում էր. «Սահմանադրությունն հղոր իներով հասավ գործնել մեղ՝ ինչ-որ բռնակալություններ կատարած էր։ Եվ մենք փարեցանք այդ բարերարին բոլոր մեր էությամբ և այն լեցուց մեր կյանքը, մեռ միտքը և մեր էջերն յուրմով միայնե»[39], նա այնուհետև կոչ էր անում հայկական բերքերին՝ գրելու, շատ գրելու սահմանադրության մասին, նշելով. «Սահմանադրությունը եկավ բարեբացնելու զմեզ, ոչ թե ավելի իջեցնելու»[40]։

Ճիշտ է, կղերա-ազգայականները 1908 թ. հետո պահանջում էին նաև վերադրձնել հայ դյուղացիներից բռնագրաված հողերը, սակայն երբեք չէին փորձում իրենց նպատակներն ու միջոցները ագրարային հարցի լուծման ուղղությամբ։ Օրինակ, Գևորգ Տեր-Կարապետյանը՝ հակառակ հայ դյուղացիների կենսական շահերի, գրում էր. «Հայ հողագործները հողերու համարիացում կամ ամասական բնդհանուր հողատերության ու ագարակներու ջնդում չէ, որ իր պահանջեն, երբե՛ք»[41]։ Հայ ժողովուրդը «կը բողոթ միայն նախնիքներեն իր անմիջեի անիրականության եղած և սակայն բռնակալ շրջանին հատակ անորակելի ընչումներով ու կեղեքումներով իրմեն խլվածներուն համար։ Այս է ահա իր պահանջը և իր արդար դատը»[42]։

Արևմտյան Հայաստանում ագրարային հարցի լուծման մասին իրենց ծրագրերն առաջարկեցին նաև հայ հոսանքական բաղաքական կուսակցությունները, որոնք սակայն եկան XIX դարի վերջին և XX դարի սկզբին։ Այսպես, մանր բուրժուական դասակցական

35 Վ. Հ. Ոշական, նշված աշխատությունը, էջ 21։

36 Նույն տեղում, էջ 195։

37 «Ասեհագրություններ ազգային ժողովոս, 1909, փետրվարի 27, էջ 225։

38 «Ասեհագրություններ ազգային ժողովոս, 1908, էջ 56։

39 «Բազմավեպ», 1910, էջ 1։

40 Նույն տեղում, էջ 2։

41 Գևորգ Տեր-Կարապետյան, Հողային հարցը Հայաստանի հասնանգների մեջ, Կ. Պոլիս, 1911, էջ 5։

42 Նույն տեղում, էջ 6։

կուսակցությունը ագրարային հարցի լուծումը տեսնում էր գյուղացիական համայնական հողատիրության պահպանման մեջ։ Այդ կուսակցությունը գտնում էր, որ համայնական հողատիրությունը հնարավորություն կտա հողը պարբերաբար վերաբաժանելու գյուղացիական առանձին տնտեսությունների միջև և արդիականորեն նրանց դասակարգային շերտավորումը։ Դաշնակցական կուսակցության գաղափարախոսները գրականության մեջ նշելով, որ Անդրկովկասում, այդ թվում նաև Արևելյան Հայաստանում, պահպանվել է համայնական հողատիրություն, ցավում էին սակայն, որ Արևմտյան Հայաստանում այն չի պահպանվել։ Ատոմը (Ա. Շահրիկյանը), նկատի ունենալով Արևմտյան Հայաստանը, գրում էր. «Մեր երկիրն այն դժբախտ երկիրներեն է, ուր վաղուց անհետացեր է համայնական հողերու գոյությունը»[43]։

Վ. Ի. Լենինը, վերլուծելով III պետական դումայի ագրարային հարցի վերաբերյալ եղած նյութերը, դաշնակցականների ծրագիրը դնում էր էսեռների ծրագրի կողքին և այն անվանում կուլտղղային ու ռեակցիան, քանի որ այդ ծրագրով «առաջ է հոդի ամենալայն մասնավորացման, երա առավել ազատ ու հեշտ անցումը տնտեսատիրոջից դեպի տնտեսատերը, կապիտալի առավել ազատ և հեշտ ներթափանցումը հողագործության մեջ»[44]։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ անհրաժեշտ է բռնագրավել կալվածատիրական հողերը և բաժանել դրանք գյուղացիական մանր տնտեսությունների միջև։ Իհարկե, դա ագրարային հարցի վերջնական լուծումը չէր, բայց Ռուսաստանում պատմական տվյալ ժամանակաշրջանում կապիտալիզմի զարգացման տեսակետից մանր տնտեսություններն ավելի առաջադիմական էին, քան ֆեոդալական խոշոր լատիֆունդիաները։

1902 թ. Վ. Ի. Լենինը գրում էր. «Ընդհանրապես ասած, մանր սեփականությունը պաշտպանելը ռեակցիոն է, որովհետև այն ուղղվում է խոշոր կապիտալիստական տնտեսության դեմ..., իսկ տվյալ դեպքում մենք ուզում ենք պաշտպանել մանր սեփականությունը ո՛չ թե հենց բնդհանուր կապիտալիզմի, այլ բնդհանուր հեղափոխության, —տվյալ դեպքում մանր գյուղացիության պաշտպանությամբ մենք հսկայական զարկ ենք տալիս դասակարգային պայքարի զարգացմանը։ Հիրավի, մի կողմից մենք դրանով վերջին փորձն ենք անում հրահրելու գյուղացիների դասակարգային (դասային) բնազդության մնացորդներն ընդդեմ հեղափոխական-կալվածատիրոջ։ Մյուս կողմից մենք մաքրում ենք ճանապարհը գյուղում բուրժուական դասակարգային հակամարտության զարգացման համար, որովհետև այդ հակամարտությունն այժմ սաղված է հեղափոխության մնացորդների կողմից բոլոր գյուղացիների իբր թե ընդհանուր ու միասնական ճնշվածությամբ»[45]։

Թե XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Ռուսաստանում խոշոր կալվածատիրություններ ունակցիոն էր, ապա Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում այն ավելի ունակցիոն էր, որովհետև կալվածատերերն այնտեղ իրենց տնտեսությունը վարում էին ավելի պրիմիտիվ, միջնադարյան եղանակներով, արդիականի երկրի անտեսական ու քաղաքական զարգացումը, ոչնչացնում էին ամեն ինչ, բայց չէին ստեղծում ոչինչ։

Հայ սոցիալ-դեմոկրատները դաշնակցական և բուրժուական մյուս կուսակցությունների դեմ պայքարելիս, ինչպես այլ հարցերում, նույնպես և ագրարային հարցում դեկավարվում էին Վ. Ի. Լենինի դրույթներով։

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Արևմտյան Հայաստանում, ինչպես միջնադարում, նույնպես և XIX դարի սկզբին տիրապետում էր թուրքական ռազմա-ֆեոդալական սիստեմը, իսկ գյուղացիները գտնվում էին հիմնականում կախյալ, հողատեր և մասամբ ազատ վիճակում։ XIX դարի 30—40-ական թվականներին սուլթանները վերացրին ֆեոդալական այդ սիստեմը և բնաջնջեցին դերբեյլիներին։ Դրա հետևանքով զգալիորեն մեծացավ ֆեոդալական կախումից ազատ գյուղացիների թիվը։ Այնուհետև նրանք Արևելյան պատերազմից հետո, ընդհատ մինչև ռուս-թուրքական պատերազմը, հրատարակեցին հողային ու այլ օրենքներ, որոնց իրագործումը կարող էր ճանապարհ բացել երկրի կապիտալիստական զարգացման համար։

Սակայն սուլթանները մեծ մասամբ չկենսագործեցին այդ օրենքները, քանի որ պաշտպանում էին շահագործող վերնախավի շահերը։ Նրանք ֆեոդալական հողատիրության մի ձևը՝ ռազմա-լե-

43 Ատոմ, Գնատական վերանորոգություններն ու հողային հարցը, Կ. Գոլիս, 1910, էջ 42։

44 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 514։

45 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 158—159։

նային սիստեմը պարզապես փոխարինեցին մի այլ, համեմատաբար զարգացած ձևով՝ կալվածատիրական հողատիրությամբ և ֆուլլարների ազատների ու բեյլերի դանդաղ ճանապարհներով նորից տիրելու գյուղացիական հույներին։

Ֆեոդալական հողատիրությունն Արևմտյան Հայաստանում ամրապնդելու և ընդարձակելու գործում թուրքական սուլթաններից ամենաառաջնակցին դերը խաղաց Աբդուլ-Համիդը։ Սա ի տարբերություն իր նախորդների, ռուս-թուրքական պատերազմից հետո, նպատակ դրեց ֆիզիկապես բնաջնջել հայ ժողովրդին։ Այդ հրեշավոր ծրագրի իրագործման միջոցներից մեկը սեռալ ֆեոդալների դասակարգը նորանոր ուժերով համալրելու և նրանց տնտեսապես հզորացնելու մեջ։ Աբդուլ-Համիդն ուղղակի խրախուսում և օգնում էր ազատներին ու բեյլերին՝ բռնագրավելու գյուղացիների, հատկապես հայ գյուղացիների հողերը և ուժեղացնելու նրանց ազգային ու կրոնական հալածանքները։

Եվ ազատներն ու բեյլերը, հովանավորելով սուլթանի կողմից, ռուս-թուրքական պատերազմից ու հատկապես 1890-ական թվականների հայկական կոտորածներից հետո, նոր եռանդով շարունակեցին բռնագրավել գյուղացիների հողերը և արտաքսել կամ հարստացնել ու կիսաճորտացնել նրանց։ Դրա հետևանքով Արևմտյան Հայաստանում ամրապնդվեցին ու զարգացան ֆեոդալական կարգերը։

Ըստ երևույթին սխալ չի լինի, եթե նշենք՝ որ այդ կարգերի զարգացումն ու ամրապնդումը՝ կապված թուրքական կառավարության ներքին քաղաքականության և հայ ժողովրդի ազգային ու ազատագրական շարժումների հետ, անցել են չորս շրջան։

1. 1856—1877—1878 ԲԲ., այսինքն՝ Քանզիմաթի երկրորդ շրջանից կամ հայ ազգային-ազատագրական շարժման զարթոնքից մինչև ռուս-թուրքական պատերազմը կամ հայ ազգային ազատագրական շարժման վերելքը։

2. 1877—1878—1896 ԲԲ., այսինքն՝ հայ ազատագրական շարժման վերելքից մինչև նրա պարտությունը կամ հայկական մասսակոչի շարունը։

3. 1896—1908 ԲԲ., այսինքն՝ հայկական մասսակոչի շարունդերից մինչև թուրքական բուրժուական հեղափոխությունը և հայ ազգային ազատագրական շարժման ակտիվացումը։

4. 1908—1915 ԲԲ., այսինքն՝ հայ ազգային-ազատագրական շարժման ակտիվացումից մինչև առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայերի համատարած բնաջնջումը։

Այդ շրջաններից յուրաքանչյուրը բնորոշվում է ֆեոդալների դասակարգի հարաբերական ուժեղացումով և աշխատավոր գյուղացիության տնտեսական կախվածության ու շահագործման սաստկացումով։ Ճիշտ է, 1908 թ. հեղափոխությունից անմիջապես հետո ստեղծվեցին ֆեոդալական շահագործման մեղմացման համար որոշ պայմաններ, բայց երիտասարդ թուրքերի վարած ազգային ու պարտային քաղաքականության հետևանքով այդ պայմանները, կարճ ժամանակից հետո, նորից վերացան։

Սակայն XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանում հատատված ֆեոդալական կարգերը էապես տարբերվում էին միջնադարյան հարաբարական կարգերից։ Այդ տարբերությունը նկատվում էր ինչպես կալվածատիրական, նույնպես և գյուղատիրական տնտեսություններում։

Ի տարբերություն միջնադարի, երբ ազատներն ու բեյլերը հանդիսանում էին իրենց տիրույթների ժամանակավոր կամ ժառանգական տերերը, XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին նրանք արդեն հանդիսանում էին իրենց տիրույթների լիիրավ սեփականատերերը։ Ճիշտ է, Թուրքիայի ինչպես այլ շրջաններում, նույնպես և Արևմտյան Հայաստանում հողի վերագրյուն սեփականատերը շարունակում էր հանդիսանալ պետությունը, բայց 1858 թ. ապրիլի 21-ի հողային օրենքից հետո, նրա սեփականատիրության իրավունքն արդեն ֆիկտիվ նշանակություն ուներ։

Ի տարբերություն միջնադարի, երբ ազատների տնտեսությունն հիմնականում ինքնաբավ բնույթ ուներ, XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին այն որոշ չափով արդեն ներգրավվել էր շուկայական հարաբերությունների մեջ։ Ազատների և բեյլերի մի մասն սկսում է զբաղվել առևտրա-վաշխառուական գործունեությամբ, հաճախ վերագործառնելով արիմխիով աշխատավճարներին և ստացած մթերքների որոշ բաժինը ուղարկելով վաճառքի[1]։

Կալվածատիրական հողատիրության ընդարձակման ու ամրապնդման հետևանքով ուժեղանում էր գյուղացիության տնտեսական կախվածությունն ու շահագործումը։ Ազատներն ու բեյլերը ա-

1 Մենք չենք տեսնում, որ ֆեոդալներից շատերը զբաղվում էին առևտրա-վաշխառուական գործունեությամբ։ Նայ մեծատարած Հայաստանում (տե՛ս Ս. Ն. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1964 թ. հ. 2, գլ. 3-րդ)։ Սակայն դրանք գերազանցապես հայերն էին։ Քուրդ ֆեոդալները սկսեցին զբաղվել առևտրա-վաշխառուական գործունեությամբ առավելապես XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին։

զատ գյուղացիներին գարձնում էին կիսաազատներ, իսկ կիսաազատներին՝ ճորտեր։ Նրանք բռնագրավում էին գյուղացիների հողերը, որի շնորհիվ աճում էր հողազուրկ և սակավահող գյուղացիների թիվը։ Այս գյուղացիները հարկադրված վարձակալում էին ագանների ու բեյերի հողերը և ընկնում նրանցից անձնական տարբեր ատիճանի կախվածության մեջ։ «Հողի կարիքը,— գրում է Վ. Ի. Լենինը,— առաջ է բերում տարբական հարաբերությունների արտասովոր բազմազան ձևեր այդ հողի վրա։ Ամենուրեք և միշտ ...գյուղացիները՝ վարձով հող վերցնելն ըստ էության հանդիսանում է կապվածատիրական տնտեսության աշխատավճարային սխտեմ,— ագայի համար աշխատողներ ձեռք բերելու ճորտատիրական միջոց»[2]։

Կիսագրություն, անշուշտ, նոր երևույթ չէր։ Ասիայի ինչպես շատ երկրներում, նույնպես և Արևմտյան Հայաստանում այն գոյություն ուներ վաղուց։ Բայց XIX դարի վերջին քաոտրում և XX դարի սկզբին գարդանում է կիսագրության հատկապես այն ձևը, երբ հողազուրկ գյուղացիները աշխատում էին ագանների տնտեսության մեջ հենց իրենց՝ ագանների գործիքներով։ Այս երևույթը ոչ այլ ինչ է, բայց նրա ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմ տանող բազմաթիվ անցումային ձևերից մեկը։ Սակայն եվրոպական պետություններում գաղութային ուժեղ ճնշման և թուրքական կառավարության աջակցության հետևանքով այդ ձևը կոնսերվացվեց և չհասավ կապիտալիզմին։

Նրա մինչև XIX դարի երկրորդ կեսը՝ ագանները ու բեյերը հանդիսանում էին միակ թուրքական բռնապետության հենարանը, ապա XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, Թուրքիայի կիսագաղութի վերածման հետ զուգընթաց, նրանք գարձան նաև իմպերիալիստական պետությունների հենարանը։ Այդ պետությունները թուրքական սուլթանի հետ միասին հովանավորում էին ագաներին ու բեյերին և օգտագործում նրանց՝ աշխատավոր մասսաներին հարստահարելու համար։

Հայտնի է, որ իմպերիալիստական պետությունները գաղութներում և կիսագաղութներում կիրառում են գյուղացիության շահագործման երկու մեթոդ. մի դեպքում նրանք նպաստում են տեղական ֆեոդալներին՝ բռնագրավել գյուղացիների հողերը և իրենց համար հայթայթել՝ հողազուրկ կամ սակավահող գյուղացիներին միջնադարյան եղանակներով շահագործելու ճանապարհով։ Մյուս դեպքում իմպերիալիստները պահում են գյուղացիական մանր տնտեսությունները, բայց հարկադրում նրանց արտադրել արտահանման համար անհրաժեշտ մթերքներ։

Արևմտյան Հայաստանում իմպերիալիստները թուրքական կառավարության միջոցով կիրառեցին աշխատավոր գյուղացիության շահագործման ու հարստահարման ինչպես առաջին, նույնպես և երկրորդ եղանակները։ Նրանք մասնավորապես Արևմտյան Հայաստանը դլխավորապես անասունների և անասնամթերքների արտահանման գծով, թողնելով գյուղատնտեսության այդ ճյուղն էքստենսիվ վիճակում։

Ինչպես առաջներում, նույնպես և XIX դարի երկրորդ կեսում ու XX դարի սկզբում Արևմտյան Հայաստանում ֆեոդալական հարաբերությունները ամրոզջապես կաշկանդված էին նահապետական հարաբերությունների մնացորդներով։ Բայց, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, երբ նահապետական հարաբերությունները տակավին կայուն էին, կամ բայրաչվում էին համարյա աննկատ, XIX դարի վերջին քաոտրում և XX դարի սկզբին նրանք արդեն բայրաչվում էին բավական արագ տեմպերով։

Իհարկե, նահապետական հարաբերությունների քայքայումը պայմանավորված էր առաջին հերթին ֆեոդալական հարաբերությունների զարգացումով։ Բայց այդուհանդերձ ֆեոդալիզմն իր էությամբ հետադիմական նշանակություն ուներ Արևմտյան Հայաստանում, քանի որ տնտեսական դեգրադացման հատկանիշն էր, խոչընդոտում էր երկրի արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների զարգացմանը, քայքայում էր տնտեսությունը և սասակացնում աշխատավոր մասսաների սոցիալական ու ազգային ճնշումները։

Չնայած թուրքական կառավարության ռեակցիոն վարքագծին, իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականությանը և ֆեոդալական կարգերի բացասական ներգործությանը, այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանում կատարվեցին տնտեսական որոշ տեղաշարժեր։ Ֆ. Էնգելսը, խոսելով տնտեսական ու քաղաքական ուժերի փոխադարձ ազդեցության ու ներգործության մասին, գրում է. «...Վերջիվերջո տնտեսական շարժումը որպես անհրաժեշտ մի բան, իր համար ճանապարհ է հարթում անթիվ ու անհամար պատահականությունների միջով»[3]։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 103—104։

3 Կ. Մարքս, Ընտիր երկեր, երկու հատորով, Երևան, 1941, հ. 1, էջ 427—428։

XIX դարի 60—70-ական թվականներին ապրանքային արտադրությունը, տնտեսապես բարգավելով արհեստավորներին ու մանր ապրանք արտադրողներին, Արևմտյան Հայաստանի արդյունաբերության որոշ ճյուղերում առաջ բերեց մանուֆակտուրային ձեռնարկություններ։ Շիշա է, այդ ձեռնարկությունները երկրի անտեսական կյանքում մեծ դեր չէին խաղում և հաճախ ունեին ապրատիկ բնույթ, այնուամենայնիվ ազդարարում էին կապիտալիստական տարրերի առաջացումը։ «Մանուֆակտուրան,— գրում է Կ. Մարքսը,— ի վիճակի չէր ո՛չ ընդգրկելու հասարակական արտադրությունը նրա ամբողջ ծավալով, ո՛չ էլ այն հեղաշրջելու բուն հիմքից։ Որպես մի ճարտարապետական զարդ նա բարձրանում էր այն տնտեսական շենքի վրա, որի լայն հիմքը քաղաքային արհեստն ու գյուղական կողմնակի զբաղմունքներն էին»[4]։

Հետագա տասնամյակներում, 1880—1890-ական թվականներին, ապրանքային արտադրությունն Արևմտյան Հայաստանի արդյունաբերության որոշ ճյուղերում հանդիպեցրեց գործարանի առաջացմանը, որի հետևանքով կապիտալիզմի տարրերն ավելի ակնբախ դրսևորվեցին։ Սակայն դրանք, այնուամենայնիվ, չկարողացան պատռել ֆեոդալական ամուր կեղևը և ընդգրկել արտադրության բոլոր բնագավառները։ Ընդհակառակը, կառավարության վարած քաղաքականության և իմպերիալիստական պետությունների կողմից սահմանած կիսագաղութային ռեժիմի հետևանքով կապիտալիստական տարրերն արատամղվում էին։

Արևմտյան Հայաստանը հետամնացությունից դուրս բերելու համար անհրաժեշտ էր բնաջնջել քաղաքական տիրող ռեժիմը, միջնադարյան ֆեոդալական հողատիրությունը, իմպերիալիստական գաղութային լուծը և ստեղծել դեմոկրատական կարգեր։ Անհրաժեշտ էր բռնագրավել բերքի ու ապրանքի հողերը և դրանք բաժանել գյուղացիներին, այլ կերպ ասած՝ լուծել երկրում ագրարային և ազգային հարցերը։ Այդպիսի արմատական միջոցառումների իրագործումը լայն պայմաններ կստեղծեր արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների զարգացման համար, նոր ուժով կծավալեր գասակարգային հակամարտությունները և կբարձրացներ աշխատավորության նյութական բարեկեցության մակարդակը։

Սակայն երիտասարդ Թուրքերը, անցնելով իշխանության գլուխ, չկատարեցին այդ ամենը։ Նրանք շարունակեցին Աբդուլ-Համիդի ներքին, մասնավորապես ազգային քաղաքականությունը և, օգտագործելով առաջին համաշխարհային պատերազմի ահեղը, բնաջնջեցին արևմտահայ բնակչությանը։

[4] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, էջ 389։

РЕЗЮМЕ

Армения на протяжении веков подвергалась нападениям иноземных захватчиков. В XVI веке (1555) она была разделена между Персией и Турцией. Первая из них получила Восточную, а вторая — Западную Армению. В результате русско-персидской войны 1828—1829 годов Восточная Армения была присоединена к России, а Западная продолжала оставаться под владычеством Турции.

Турецкое правительство неоднократно меняло административное деление Западной Армении, и в конце XIX века разделило ее на шесть вилайетов—Эрзерумский (Каринский), Ванский, Битлисский (Багешский), Диарбекирский (Тигранакертский), Харпутский (Харбердский) и Сивасский (Себастийский). В свою очередь, каждый из этих вилайетов был разделен на санджаки, санджаки—на казы, казы—на нахие, а нахие—на сельские общества; на все административные должности были назначены магометане, за исключением должности сельских старшин христианских селений.

Население Западной Армении состояло из армян, курдов, турок, айсоров, персов, чеченцев, греков и т. д. Первое место по численности занимали армяне, затем курды и турки. Другие же народности составляли ничтожное меньшинство. Но в результате национальной политики турецких султанов, в частности Абдул-Гамида, число армян в Западной Армении резко уменьшилось (если, например, в 1860—1870 годах насчитывалось приблизительно 2 500000, то в начале XX века—1 403 000 человек обоего пола), число же курдов и турок

увеличилось. Несмотря на это, армяне и в начале XX века составляли **относительное** большинство населения упомянутых вилайетов.

Турецкие правители в союзе с империалистическими державами с конца XIX века понятие «Армения» стали подменять «Курдистаном» и этим путем старались снять с обсуждения международной дипломатии армянский вопрос. Но они не могли ввести в заблуждение передовое человечество, которое симпатизировало армянам, борющимся за освобождение своей Родины.

Общественный строй Западной Армении, как и других районов Османской империи, был феодальным. Военно-ленная система, которая являлась характерной чертой турецкого феодализма, имела широкое распространение и выражалась в Западной Армении в форме деребейства.

В середине XIX века, в частности в 30—40-х годах, в связи с провозглашением Танзимата, турецкие султаны упразднили военно-ленную систему, а следовательно, и деребейство, и установили помещичье землевладение в форме чифтлика. Эта политика султанов сыграла прогрессивную роль в развитии аграрных отношений и экономики страны, так как резко уменьшилось число землевладельцев и в значительной мере увеличилось число крестьян, свободных от феодальной зависимости. Армянский просветитель Хачатур Абовян, касаясь этих событий, писал: «Христиане, в особенности несчастный армянский народ и **несториане** (т. е. айсоры.—**А. А.**) были рабами (курдских родоначальников—деребеев) в настоящем смысле этого слова. Но в последнее время их злодеяния и ужасы ликвидированы благодаря турецкой организованной военной власти, в особенности благодаря турецкому герою **Рашид-паше**, который уничтожил тысячи из них, а других заставил вести оседлый образ жизни как в городах, так и в деревнях»[1].

В последующие годы были сделаны важные шаги в направлении буржуазного развития аграрных отношений. 21 апреля 1858 года был издан закон, согласно которому все земли страны делились на пять категорий: одна из них могла переходить в другую и даже стать частной собственностью отдельных людей. Крестьянам разрешалось после выкупа (тапу) продавать, закладывать свои участки, дарить, передавать их по наследству и т. д.

[1] **Х. Абовян.** Сочинения, Ереван, 1958, т. 8, стр. 248 (на арм. языке).

21 мая 1867 года Абдул-Азиз особым законом принудил крестьян выкупить свои участки, уплачивая 15% своего годового дохода, а в 1873 году обязал окончательно расплатиться с долгами.

Конечно, эти мероприятия правительства были вызваны фискальными целями и могли способствовать развитию буржуазных отношений как в городе, так и в деревне. Но в Западной Армении в последней четверти XIX века развивались не буржуазные, а полукрепостнические и крепостнические отношения. Это объяснялось рядом причин, главной из которых была национальная политика турецкого правительства.

Султан Абдул-Гамид после русско-турецкой войны 1877—1878 гг. поставил перед собой цель—физически уничтожить армянское население, которое, помогая во время войны русским, надеялось с их помощью освободиться от турецкого порабощения. Кровавый султан, чтобы достигнуть цели, счел нужным, прежде всего, укрепить свою деспотическую опору в Западной Армении—класс феодалов. Не доверяя армянской зажиточной прослойке, он пополнил класс феодалов главным образом курдскими родоначальниками. Султан поощрял этих родоначальников на захват земель армянских крестьян и на порабощение их владельцев. Захват армянских земель курдскими родоначальниками принял массовый характер с 80-х годов и в особенности после армянских погромов 90-х годов. В 1900 году русский вице-консул из Вана сообщал: «События последних двух лет (т. е. погромы 1894—1896 гг.—**А. А.**) поставили многие армянские селения, в особенности в отдельных округах, прямо в подчиненное положение местным курдам»[2].

Ага и беи, помимо откровенного захвата, присваивали земли крестьян также путем купли и продажи, ростовщичества, приобретения тапу и т. д. Они могли без особого труда при-

[2] **В. Т. Маевский.** Ванский вилайет. Военно-статистическое описание, Тифлис, 1901, стр. 188.

сванвать любые крестьянские участки не только потому, что пользовались поддержкой правительства, но и потому, что имели значительное число воинов, занимали должности, а там, где не занимали их, имели большое влияние на должностных лиц.

В результате всего этого в последней четверти XIX века в Западной Армении помещичье землевладение расширялось, а крестьянское, наоборот, сокращалось. Резко увеличилось число безземельных крестьян, о чем свидетельствуют следующие данные: в Харпутской казе они составляли около 74%; на Мушской равнине—80%; в Булаииках—85% всего крестьянства и т. д.

В. И. Ленин, возражая против положения народников о том, что освобождение крестьян в России в 1861 году без земли будто бы способствовало быстрому развитию капитализма, писал: «В действительности обезземеление крестьян в 1861 году означало в большинстве случаев создание не свободного рабочего в капиталистическом производстве, а **кабального** (т. е. фактически полукрепостного или даже почти крепостного) **арендатора** той же «барской», помещичьей земли. В действительности «наделы» 1861 года означали в большинстве случаев создание не свободного самостоятельного земледельца, а **прикрепление к земле** кабального арендатора, фактически вынужденного отбывать ту же барщину в форме обработки своим инвентарем помещичьей земли за выпас, за выгон, за луга, за необходимую пахотную землю и т. п.»[3].

Именно это ленинское положение подтвердилось в западноармянской действительности. Ага и беи, захватывая земли крестьян, стали эксплуатировать их не по-капиталистически, а по-крепостнически. В некоторых районах они прикрепляли безземельных крестьян к земле и лишали их права свободного перехода. М. Ковалевский отмечал: «Армянам запрещен был не только отъезд в Европу, но и переход из одной области в другую»[4]. Если же крестьянин пытается переселиться без разрешения землевладельца и властей, то, как писал русский

[3] **В. И. Ленин.** Сочинения, т. 17, стр. 86.

[4] Вестник Европы. СПб, 1913, т. 6, кн. 12, стр. 299.

генеральный консул из Эрзерума, «его бьют, подвергают тщательному обыску, разным расспросам, таскают в течение нескольких дней из одного места в другое, сажают в тюрьму и беспощадно обирают»[5]. Характерно, что ага и беи вмешивались и в личные дела своих крестьян. В некоторых районах они продавали их, пользовались правом первой ночи, издевались над ними самым жестоким образом и убивали, ни перед кем не отвечая за это. Крепостничество в этих районах приняло такие грубые формы, что оно, по-существу, мало чем отличалось от древнего рабства. В отличие от ряда восточных стран, где крепостнические отношения существовали фактически, в Западной Армении они существовали как фактически, так и юридически.

Ага и беи в других районах эксплуатировали безземельных крестьян как кабальных арендаторов. Между ними и крестьянами сложились самые разнообразные формы кабальных отношений. Иногда землевладелец давал землю, а безземельный крестьянин, или «мараба»,—труд и сельскохозяйственные орудия; землевладелец давал землю и семена, а мараба—рабочий скот, орудия и труд; землевладелец давал землю, рабочий скот и орудия, а мараба—только свой труд; землевладелец давал деньги в долг, а мараба—работал на него за проценты и т. д.

Следует отметить, что мараба, наряду с работами, установленными по договору, выполнял в пользу землевладельца и ряд других работ, которые не предусматривались договором. Мужчины пахали и засевали те участки владельца, которые не передавались в аренду, перевозили урожай с поля на гумно, мололи его, а женщины стирали и чинили одежду владельца и членов его семьи, доили коров, готовили масло, сыр и т. д.

Ага и беи в некоторых местах эксплуатировали безземельных крестьян как вольнонаемных батраков, но это случалось очень редко: в их хозяйстве вольнонаемный труд не имел существенного значения. Характерно, что землевладельцы иног-

[5] Архив внешней политики России, ф. «Политархив», 1889—1894, д. 1630, л. 90—91.

да превращали вольнонаемных в ломашних рабов и поступали с ними, как с животными. Они считали их своей собственностью и поэтому не отвечали за свои поступки перед властями.

Наряду с этими формами эксплуатации труда, существовали и другие. Ага и беи организовывали походы и грабили крестьян, отнимали у них что могли или захватывали столько, сколько хотели. Они осенью спускались с гор и всю зиму со своими семьями, воинами и животными зимовали в армянских селениях за счет их жителей. Крестьяне были обязаны содержать их, в противном случае могли лишиться не только всего имущества, но и жизни. Ведь «гости» были вооружены, а крестьяне лишены средств защиты, «гости» были организованы, а крестьяне разбросаны по небольшим деревням. Зимовка у оседлых жителей, вытекавшая из кочевого или полукочевого образа жизни эксплуататорской верхушки, называлась «кишлагутюн».

Ага и беи часто выставляли себя «защитниками» крестьян от посторонних нападений и вынуждали их за это платить им дань. Явление это называлось «хафирутюн» и практиковалось главным образом в районах Сасуна, Муша, Хизана, Мокса, Шатаха, Бришена и др.

Если во время крепостничества и испольщины ага и беи получали с крестьян феодальную ренту, то во время набегов, кишлагутюна и хафирутюна—дань. К. Маркс еще в 1853 году, говоря о турках, писал: «В зависимости от местности и разных обстоятельств, турок бывает рабочим, крестьянином-арендатором, мелким земельным собственником, купцом, феодальным землевладельцем, стоящим **на самой низкой и варварской ступени феодализма** (подчеркнуто нами — А. А.)»[6]. Многие из феодалов в Западной Армении продолжали оставаться на этой стадии феодализма не только во второй половине XIX, но и в начале XX века.

Однако феодальные отношения, утвердившиеся в интересующий нас период, отличались от феодальных отношений средневековья. Это отличие проявилось как в помещичьем, так и в крестьянском хозяйстве.

[6] **К. Маркс и Ф. Энгельс.** Сочинения, т. 9, стр. 6.

В отличие от прежних времен, когда господствующей формой феодального землевладения была военно-ленная система, в интересующий нас период в Западной Армении такой формой было уже помещичье землевладение. Правда, государство оставляло за собой право верховного собственника земли, но это право было лишь юридическим и даже фиктивным.

В прежние времена курдское феодальное хозяйство было самодавлеющим, в рассматриваемый же нами период оно в некоторой степени втягивалось в товарно-денежные отношения. Ряд крупных землевладельцев регулярно продавал сельскохозяйственные и животноводческие продукты. В 1906 году русский вице-консул Р. И. Термен сообщал из Вана, что в санджаке Хекяри «многие из шейхов очень богаты. Они имеют обширные поместья, капиталы и, кроме того, занимаются торговлей»[7]. В этом районе торговлей сельскохозяйственными продуктами, особенно табаком, отличался Мехмед Сатык, который, по сведениям одного из очевидцев, «получал в год дохода от 5000 до 6000 турецких лир»[8]. Одна из особенностей включения помещичьего хозяйства Западной Армении в товарно-денежные отношения заключалась в том, что ага и беи продавали не столько продукты сельского хозяйства, сколько скот и продукты скотоводства.

В отличие от прежних времен, когда владельцы, как правило, не вели хозяйства и получали феодальную ренту с крестьян в форме продуктов сельского хозяйства, в интересующий нас период часть землевладельцев вела хозяйство, возвращаясь к примитивным формам ренты—отработкам. Подсчеты показывают, что у этих землевладельцев отработочная рента составляла более 45% всей феодальной ренты.

В прежние времена землевладельцы были опорой только турецкого деспотизма, в рассматриваемый период они были опорой также империалистических государств. Они помогали этим государствам порабощать и эксплуатировать трудящихся Западной Армении. Империалистические же государства в

[7] **Р. И. Термен.** Отчет о поездке в санджак Хекяри Ванского вилайета, в 1906 г., стр. 137.

[8] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912, л. 25.

свою очередь сохраняли и укрепляли феодальные отношения как в Турции, так и в Западной Армении.

В отличие от прежних времен, когда крестьянское хозяйство было самодавлеющим, в интересующий нас период оно также выходило уже за рамки натурального хозяйства и в некоторой степени втягивалось в товарно-денежные отношения. Продажа продуктов помещиками и крестьянами имела диаметрально противоположные цели: первые продавали в силу обилия, в целях расширения своего хозяйства, вторые же—из-за нужды, для уплаты государственных налогов и ростовщических процентов.

Раньше эксплуатация крестьянства была сравнительно умеренной, в описываемый период она усилилась и приняла самые жестокие формы.

Среди крестьянства было, конечно, имущественное неравенство. Подсчеты показывают, что в начале XX века по наделыному землевладению бедняки составляли 30%, середняки—41%, а богатые—29%. Почти такой же была картина имущественного неравенства и по рабочему скоту: бедняки составляли 38,1%, середняки—41,9%, а богатые—20,0%. Однако в силу существующих конкретных условий это имущественное неравенство не доходило до классовой дифференциации. Почти повсюду в Армении происходило массовое обнищание и разорение крестьянства. Поэтому как во второй половине XIX, так и в начале XX века в западноармянской деревне существовало почти одно главное классовое противоречие — противоречие между феодалами и всем крестьянством в целом.

Характеризуя помещичье землевладение как господствующую форму феодального землевладения, нельзя однако забывать, что наряду с ним в Западной Армении продолжали существовать также и другие формы феодального землевладения — государственная и мечето-монастырская. Правда, эти формы землевладения вытеснялись помещичьим землевладением и их удельный вес был незначительным в общем феодальном землевладении, но в эксплуатации крестьянства правительство и духовенство почти не уступали помещикам.

Государство взыскивало с крестьян налоги за землю, всякого рода строения, за мелкий и крупный скот, за неслужение

в армии, вероисповедание, деторождение, продажу земли, скота, различных изделий, за стоянку скота на городских улицах и т. д. Наряду с этими оно заставляло крестьян выполнять такие повинности, как сооружение дорог, мостов, административных зданий, перевоз чиновников и военных боеприпасов с одного места на другое.

Подсчеты показывают, что государство с каждого крестьянского двора взыскивало в год в среднем примерно 41 рубль 60 копеек, т. е. почти столько, сколько взыскивали помещики. Конечно, эти подсчеты учитывали лишь так называемые законные поборы, но вряд ли будет преувеличением, если мы скажем, что примерно столько же составляли и незаконные поборы, которые взыскивались с крестьян сборщиками, подрядчиками, их помощниками и полицейскими. Эти лица во время сбора налогов всячески издевались над крестьянами. Они арестовывали крестьян, заключали в тюрьмы, избивали и позорили их. Вот что сообщали по этому поводу из разных районов Западной Армении в 70—90-х годах. «Все податные чиновники и сборщики (а их много, по отдельному лицу для каждого вида податей, личных, на недвижимость, на овец, на табак и пр.) при посещении селений приводят с собой свиту слуг и солдат, которые со своими людьми содержатся на счет селения, обременяя таким образом жителей очень тяжелыми добавочными расходами»[9]. Или:

«Красная феска и хорошо знакомый костюм турецкого солдата вызывают общую панику. Женщины укрываются в самых потаенных местах, чтобы спастись от позора; мужчины собираются в домах и напрасно защищают свою собственность от захвата»[10].

Турецкое правительство, не считаясь с возможностями крестьян, особенно после русско-турецкой войны 1877—1878 годов, почти из года в год увеличивало подати и повинности. Многие из крестьян оказывались буквально не в силах уплачивать их, в результате чего за ними накоплялись громадные

[9] **М. П. Роллен Жекмен.** Армения, армяне и трактаты. М., 1896, стр. 263.
[10] Там же, стр. 142.

недоимки. Почти повсюду крестьяне жаловались на тяжесть сборов и недоимок. Они говорили: недоимки достигли уже таких размеров, что для их уплаты не хватит денег, вырученных от продажи не только всего имущества, но и их детей.

Турецкое правительство неравномерно распределяло подати и повинности среди населения. Руководствуясь своими классовыми и националистическими принципами, оно не облагало ими землевладельцев или облагало их в ничтожной мере; крестьян-христиан облагало более тяжелыми повинностями, чем магометан. Несмотря на эту разницу, налоговая тяжесть правительства падала на плечи трудящихся крестьян всех национальностей.

Наряду с государством и феодалами, крестьян Западной Армении эксплуатировало также магометанское и христианское духовенство. Магометанское духовенство взыскивало с крестьян, проживающих на вакуфных землях, одну десятую часть урожая и заставляло их отбывать разные повинности. Христианское же духовенство заставляло крестьян один день в году работать со своим инвентарем в монастырских имениях, а также уплачивать в определенном количестве подать пшеницей, ячменем, маслом, сыром, яйцами, молоком и т. д. Крестьяне наряду с этим должны были платить также за каждое рождение, крещение и венчание — словом, за все религиозные обряды.

Во время сбора податей как магометанское, так и христианское духовенство злоупотребляло своими правами. Современники указывали на ряд фактов, свидетельствующих об этом. Связавшись с турецкими властями и курдскими беями, духовные лица грабили крестьян, преследовали всех тех, кто оказывал сопротивление, и жестоко наказывали их.

Следует отметить, что в интересующий нас период иностранные капиталисты, турецкие власти, местные землевладельцы и духовенство составляли союз против трудящихся крестьян Западной Армении и подвергали их не только социально-экономическому, но и национально-религиозному угнетению. В мире трудно было отыскать такой уголок, где владетели так издевались бы над подвластным им населением и так

оскорбляли бы его человеческое достоинство, как в Западной Армении.

Наряду с феодальными отношениями, в Западной Армении продолжали сохраняться и патриархальные. Они сохранялись у всех народов, но больше всего у курдов. Видимо это было обусловлено их образом жизни — кочевым и полукочевым скотоводством и слабым развитием товарно-денежных отношений. Курды разделялись на племена, племена—на тайфы, а последние—на более мелкие единицы. Племена имели своих вождей, которые были окружены знатью и обладали как светскими, так и духовными функциями.

Курдские полукочевые и кочевые общины, с одной стороны, напоминали древние родовые общины, а с другой — отличались от них. Если члены древней родовой общины были связаны исключительно кровными связями, сообща владели скотом и пастбищами, производство материальных благ и их распределение было у них совместное, то в курдской общине наряду с членами, связанными между собой кровными связями, были также члены, которые не имели таких связей. Все члены общины владели скотом как частной собственностью, а производство материальных благ и их распределение носили у них частный характер. Курдская община, подобно сельской, представляла собой переходную ступень от коллективной собственности к частной. Но в отличие от сельской общины, где пахотные земли периодически распределялись между ее членами, курдская община не знала этих переделов.

У курдов, кроме племенных и общинных организаций, существовали также такие элементы патриархальных отношений, как тотемизм, кровная месть, многоженство, похищение женщин и т. п.

Патриархальные отношения у айсоров представляли почти такую же картину, что у курдов, так как айсоры также жили полукочевым скотоводством в горах Хекяри.

Что же касается армян, то патриархальные отношения у них проявлялись главным образом в наличии больших семей, называемых гердастанами. Очевидцы констатировали конкретные факты о том, что под одной крышей совместно жило 40,

70, 100 и даже 150—200 душ, связанных между собою родственными узами.

Конечно, в Западной Армении феодализм переплетался с патриархальными формами отношений и в средние века, но, в отличие от прежних времен, в интересующий нас период эти отношения уже разлагались сравнительно быстрыми темпами. Разложение было особенно явным у курдов, когда некоторые из родоначальников переходили от полукочевого или кочевого скотоводства к оседлому земледелию и крестьян, подвластных им, прикрепляли к земле.

Касаясь вопроса о капитализме, следует отметить, что еще в 60—70-х годах XIX века в городах Западной Армении появились некоторые его элементы, но в последующие десятилетия в результате колониальной политики империалистических держав и националистической политики турецкого правительства они не развивались. Наоборот, в ряде мест многие предприниматели, убедившись в невыгодности своего начинания, закрывали свои заведения, в силу чего элементы капиталистических отношений были сведены на нет. Правда, в некоторых случаях наблюдалось и обратное явление, когда предприниматели расширяли свои предприятия и даже переходили от мануфактурной формы организации труда к фабричной, но такие случаи были очень редки и представляли собой оазисы в пустыне.

